ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ
ՍԱՄՎԵԼՅԱՆ

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ 1980-2010 ԹԹ.

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

КАРИНЭ САМВЕЛЯН

# СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ИРАКЕ (1980-2010)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
2012

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

KARINE SAMVELYAN

# THE SOCIAL-POLITICAL SITUATION IN IRAQ (1980-2010)

YEREVAN
"GITUTIUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A 98306

ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ
## (1980-2010 թթ.)

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 32.001:93/99
ԳՄԴ 66.01+63.3
Ս 178

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գրիգոր Ղարիբյան

ՍԱՄՎԵԼՅԱՆ Կ.Խ.
Ս 178 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ (1980-2010 ԹԹ.)/Եր., «Գիտություն» հրատ., 2012, 200 էջ:

Սույն մենագրությունը ամփոփում է հեղինակի երկար տարիների գիտական հետազոտությունների շարքից՝ Իրաքի 1980-2010 թթ. ընդգրկող ժամանակահատվածի հասարակական-քաղաքական կյանքին բնորոշ առավել ուշագրավ իրադարձությունների վերլուծությունը, մանրամասն անդրադառնալով նաև ՄԱԿ-ի գործունեությանը այդ երկրում:

Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, տնտեսագետների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

ISBN 978-5-8080-0965-3
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրաքի նորագույն պատմության էջերը եղել և մնում են գիտական և հասարակական հետաքրքրությունների, հետևաբար նաև արևելագիտական անդրադարձների, վերլուծությունների առանցքում: Արաբական այս ինքնատիպ երկիրը՝ Իրաքը, ապրեց և ապրում է անկախության համար մղվող պայքարի դժվարին ու հակասական ժամանակահատվածներ: Իրաքի հասարակությունը, երկրում դեմոկրատական ավանդույթների և ինստիտուտների բացակայության պայմաններում, ակտիվորեն ներգրավվեց, համախմբվեց, մաքառեց հանուն անկախության ձեռքբերման և հանրապետական կարգերի ամրապնդման:

Իրաքի առաջադիմական ուժերի գործողությունների հետևողականության շնորհիվ ձևավորվեց նաև դեմոկրատիայի թեև սահմանափակ ու փխրուն, սակայն տվյալ երկրին հատուկ, հասարակական-քաղաքական ալեբախումներով պայմանավորված որոշակի կառուցվածք ու տիպ, ինչը ներառում է հասարակական կազմակերպությունների գործունեությունը, մամուլի դերը, սոցիալ-տնտեսական վերափոխումների ընթացքն ու դրանց ներկայացվող հիմնական պահանջները: Սույն գրքի հեղինակը իր նախորդ գիտական մենագրություններում և բազմաթիվ հոդվածներում մանրամասն ներկայացնում է Իրաքի ներքաղաքական, հասարակական ու տնտեսական զարգացումները, իրավիճակը, հետևողական ու մանրազնին վերլուծություններով առանձնացնում է 1945-1980 թթ. ընդգրկող ժամանակահատվածի առավել ցայտուն և կարևոր իրադարձություններն ու պատմական շրջադարձերը, զարգացումները, ինքնատիպությունը, երևույթները՝ աղբյուրագիտական բազմազան ու բազմալեզու նյութի (հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն), նաև արխիվային տվյալների հիման վրա:

Թերևս գիտական աշխատանքի այս երկարամյա փորձը թելադրում է նաև գիտական հետևողականություն Իրաքի

նորագույն պատմության առավել ցայտուն իրադարձությունների հետազոտության ընթացքում:

1980-1988 թթ. ութ երկար ու ծիգ տարիներ տևած իրանա-իրաքյան պատերազմը երկու երկրներին էլ բերեց ավեր ու նորանոր մարդկային կորուստներ, սոցիալ-տնտեսական վերափոխումների իրականացման ծրագրերից բեկումնային շեղումներ, նաև ստեղծելով լարված ու վտանգավոր իրադրություն տարածաշրջանում: Բնականաբար, խաղաղասիրությունը և պատերազմական գործողությունների դատապարտումը հավասարապես հասցեագրվեց պատերազմող երկու կողմերին էլ՝ և՛ Իրանին, և՛ Իրաքին:

Հեղինակի համար գիտական հրատապ թեմաներ դարձան "Իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա պատերազմի առաջին տարիներին (1980-1984թթ.)" և "Իրանա-իրաքյան պատերազմի հասարակական-քաղաքական արձագանքները":

1990-ական թվականներից սկսած պատմության ողջ ընթացքը Իրաքում լարված և որոշ դեպքերում քաղաքական անկանխատեսելի իրադարձությունների շրջան է՝ 1990թ. Իրաքի ներխուժումը Քուվեյթ, ամերիկա-իրաքյան ռազմական հակամարտությունը իր բոլոր հետևանքներով, 2003թ. մարտին Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումը և դրան հաջորդող հասարակական-քաղաքական իրավիճակը երկրում բազմաբնույթ բարդ խնդիրների հանգույցներով:

Հեղինակը կարևորում է Իրաքում հասարակական կարծիքի ձևավորման հարցը՝ կապված վերը նշված իրադարձությունների հետ, բեկումնային և անցումային ժամանակահատվածում, այն դարձնելով ընդգծված և հետաքրքիր վերլուծության նյութ: Գրքում ներկայացվում է նաև Իրաքում օրինաստեղծ գործընթացների վերլուծությունը, քանի որ դրանք հասարակության շրջանում խմորվելով հանգուցալուծվեցին 2005 թ. վերջին եռամսյակում՝ 2005թ. օգոստոսի 28-ին Իրաքի նոր Սահմանադրության հանրաքվեի անցկացումը և դրա ընդունումը հոկտեմբերի 15-ին, ինչպես նաև երկրի Ազգային ժողովի ընտրությունները՝ դեկտեմբերի 15-ին:

Իրաքի նման ինքնատիպ և նման իրավիճակում հայտնըված երկրի հանդեպ գիտական հետաքրքրությունը թելադրում է ուշադրության կենտրոնում պահել տնտեսության տեղաշարժերը նույնպես: Հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ են առնվել Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ընդունած Իրաքին վերաբերող փաստաթղթեր, որոշումներ սկսած 1998 թ. մինչև 2010 թ., որոնք լույս են սփռում ոչ միայն Իրաքի ներքին ու արտաքին տնտեսական քաղաքականության հարցերին, այլ նաև օգնում պատկերացնել հասարակական-քաղաքական իրադրությունը, միջազգային անդրադարձները:

Առանձին թեմա է նաև ամերիկյան զորքերի դուրսբերումը Իրաքից: Հեղինակը այդ տեղեկությունները քաղել է ՄԱԿ-ի հրատարակություններից, ինչպես օրինակ՝ "Press Release, Security Council, Resolutions and Statements of the Security Council" և այլն:

Այս գիրքը անցել է երկար ճանապարհի և փորձագիտական և հրատարակչական առումներով: Հեղինակը զուգակցել է գիտադասախոսական աշխատանքը՝ մասնագիտական բուհերի ուսանողներին հաղորդակից դարձնելով Արաբական արևելքի, այդ թվում Իրաքի ժամանակակից խնդիրներին, նաև զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում:

2008թ. նոյեմբերի 5-6-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում հանդես է եկել զեկուցմամբ՝ "Իրանա-իրաքյան հարաբերությունները արդի փուլում":

"Հասարակական-քաղաքական իրադրությունն Իրաքում (1980-2010 թթ.)" վերնագրով սույն մենագրության հիմնական շարադրանքը մաս առ մաս 1996-2009 թթ. լույս է տեսել «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարով, որը գիտական տարեգիրք է, իր տեսակով և գիտական ընդգրկումներով եզակի հրատարակություն:

Հեղինակը իր շնորհակալությունն է հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդին և

նշված մատենաշարի խմբագրական խորհրդին, քանի որ երկար տարիներ այդ տարեգիրքը հիանալի հնարավորություն է ստեղծել, նաև խթան հանդիսացել նման մակարդակով հրատարակելու թեմատիկ գիտական հետազոտությունների իրականացման արդյունքում ստեղծված սեղմ աշխատությունները*:

Սույն գրքի հեղինակին տվյալ թեմայով հրատարակված որևէ գիտական աշխատություն Իրաքի մասին հայտնի չէ:

---

* Կարինե Խաչիկի Սամվելյանի արևելագիտական աշխատությունների լրիվ ցանկը տե՛ս էջ192-195:

# ВВЕДЕНИЕ

Страницы новейшей истории Ирака были и остаются в центре научных и общественных интересов, следовательно также стержнем исследований и обозрений востоковедов.

Эта специфическая страна Арабского востока в борьбе за свою независимость прошла и переживает трудные и противоречивые периоды своей истории. Общественность Ирака в условиях отсутствия традиций демократии, активно включалась, объединялась, боролась за приобретение независимости и укрепление республиканского режима. Благодаря последовательности действий прогрессивных сил Ирака сформировалась также определенная структура, модель демократии: хотя ограниченная и шаткая, но тем не менее характерная этой стране, обусловленная общественно-политическими переломами, и включает деятельность общественных организаций, роль печати, безусловно, ход социально-экономических преобразований и основное содержание этих начинаний.

Автор этой книги в своих предыдущих научных монографиях и в многочисленных статьях подробно представляет внутриполитические, общественные и экономические аспекты, обстановку, последовательно и тщательно анализирует, выделяя более важные и наглядные события, исторические переходы, явления, их развитие и специфику: на основе источниковедческого многообразного материала не только на армянском, русском, английском, но и на арабском языках, включая также архивные материалы.

Многолетний опыт научной работы диктует автору также научную последовательность в ходе исследования более ярких и насыщенных событиями этапов новейшей истории Ирака.

Восьмилетняя ирано-иракская война (1980-1988 гг.) причинила этим двум воинствующим странам разрушения, все новые человеческие жертвы, переход от курса социально-экономических преобразований, создавая напряжение и опасную обстановку в регионе. Следовательно, миролюбивые призывы и осуждения военных действий были адресованы обеим сторонам: и Ирану, и Ираку.

Для автора этой книги стали первоочередными следующие темы - "Влияние ирано-иракской войны на социально-экономическое состояние Ирака в первые годы войны (1980-1984 гг.)"; "Общественно-политические отголоски ирано-иракской войны".

Исторический ход развития Ирака начиная с 1990 г. представляет цепь напряженных, порой непредвиденных политических событий: в 1990 г. вторжение Ирака в Кувейт, американо-иракский военный конфликт со всеми последствиями, свержение режима Садама Хусейна в марте 2003 г. и последующая общественно-политическая обстановка с узловыми задачами для страны.

Автор считает важным вопрос формирования общественного мнения в Ираке в связи с вышеупомянутыми событиями, на переломных и переходных этапах, уделяя внимание как на тему для отдельного интересного исследования.

В данной книге представлено также изучение законотворческих процессов, так как общественно созревая эти процессы наглядно проявились в течение 2005 г.: 28 августа 2005 г. в Ираке проходил референдум новой Конституции, 15 октября Конституция была принята, а 15 декабря 2005 г. состоялись выборы в Народное собрание страны. Научный интерес к такой стране, как Ирак, требует должного внимания, а также интерес к сдвигам в области экономики.

Автор использовал материалы принятые Организацией Объединенных наций (ООН) об Ираке, документы,

решения, начиная с 1990 г. до 2010 гг., которые помогают изучению вопросов внешней и внутренней политики Ирака, для представления общественно-политической обстановки, включая международные аспекты проблем.

Автор выделяет также вопрос вывода американских войск из Ирака, как отдельную тему. Многие важные сведения черпаны из первоисточников, опубликованных ООН, как например, "Press Release, Security Council, Resolutions and Statements of the Security Council" и т.д.

Данная монография опробирована также в издательском плане. Автор одновременно в лекционном порядке приобщал студентов специализированных вузов к насущным вопросам Арабского востока, в том числе Ирака, а также докладами выступал на международных научных сессиях.

5-6 ноября 2008 г. в связи с 50-летием Института востоковедения национальной академии наук Армении (ИВ НАН РА) автором был представлен доклад "Ирано-иракские отношения на данном этапе".

Основное содержание монографии "Общественно-политическая ситуация в Ираке (1980 -2010 гг.)" по разделам, продолжительно с 1996-2009 гг. издавалось в сборнике "Страны и народы Ближнего и Среднего Востока", что является научным ежегодником: по своему содержанию и научному назначению уникальное издание. Этот ежегодник служит вдохновляющим фактором для издания в сжатой форме научных трудов*.

Автор приносит свою благодарность Ученому совету ИВ НАН РА и редакционной коллегии.

Автору данной книги неизвестно изданное научное исследование об Ираке по этой теме.

---

* Полный список, опубликованных востоковедческих научных трудов Каринэ Хачиковны Самвелян смотри стр.192-195.

# INTRODUCTION

The pages of the modern history of Iraq are in the centre of the scientific and the public interest.

Iraq is the specific country of the Arab East, experienced the difficult and contrary stages of history, in the struggle for independence. The people of Iraq in the conditions of absence institute of democratic traditions was active, united and struggled for independence and the strengthening the Republic system. Owing to ssuccessive actions of the progressive forces was formed the structural model of the democration: although limited and unsteady, but nevertheless special for that country, with the social political turning, and including activity of public organizations, part of press and certainly, the course of the social economic reforms; with the basic demands.

The Author of this book in the previouse scientific books and in the numerous articles in detail introduced the internal, public and economic aspects, situation, analysed consecutive and tho'rough, distinguished more actually and graphically events, historical transitions, appearances, development and specific factors on the basic historical original numerous material in Armenian, Russian, English only that also in Arabian and the archives documents.

The Author of this book has experience of long standing scientific research and consistent for the interesting and more urgent stages of the modern history of Iraq.

The eigthyear Iran-Iraqi war (1980-1988) caused devastation and many sacrifices of people for two countries martial, the turn of the programme cosial-economic reforms and created strained and dangerous situation in that region. Consequently the peaceable appeals and censures were addressed for two countries – Iran and Iraq.

The Author of this book researched also following themes: "The impact of the Iran-Iraqi war on the social-economic life of Iraq during

the first years of the war (1980-1984)", "The social-political responses of the Iran-Iraqi war".

The historical course Iraq's development at once from 1990 year in chain of stained, sometimes unforeseen political events: in 1990 year Iraq's intrusion into Kuwait, Americano-Iraq military war conflict and all consequences, in March 2003 year overthrow Sadam Husein's regime and social-political situation in country with the problems difficult and hard.

The Author considered the importance of problem form public opinion in Iraq about abovementioned political events during the turning-points and fractures.

This book introduced also study of law-building process; in Iraq during 2005 year.

The scientific interest to Iraq included also alterations in the field of economic.

The Author introduced with resolutions and statements of the Security Council United Nations for information media and other materials about Iraq dated in 1990-2010 years, for present social-politic situation including international aspects of problems foreign and internal Iraq's politics.

The Author also distinguished the problem evacuation of American troops from Iraq – as separate theme.

"Press Release, Security Council, Resolutions and Statements of the Security Council United Nations" included important information for this scientific research.

This book is the result, speciality discussion. The Author also teacher and gave lectures about actual problems of Arab East, including Iraq, also participated in number international scientific sessions.

In 5-6 November 2008 year, in connection with 50 years of Institute of Oriental Studies National Academy of Sciences Republic of Armenia, during the scientific session author gave lecture "Iran Iraq relations during at present stage".

The principal contents of this monography "The social-political situation in Iraq (1980-2010) published partly during 1996-2010 years in year-book". The countries and peoples of the Near and Middle East":

in unique scientific edition and is a enthusiasm factor for publish in short form scientific articles.

The Author gratefuled toscientific council and editorial council of this year-book.

This book is a first scientific publication* about the Iraq in this period.

---

* The complete list of published scientific books and articles about East of Karine Chachik Samvelian see p. 192-195

ԳԼՈՒԽ I

## ԻՐԱՆԱ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԻՐԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1980-1984 ԹԹ.)

Իրանա-իրաքյան պատերազմի գիտական տեսադաշտը ընդգրկուն թեմա է, որի շրջանակում է նաև պատերազմող երկրների տնտեսական կյանքը, պատերազմի անդրադարձը բնակչության սոցիալական վիճակի վրա, աշխատավորության հիմնական կազմի և կառուցվածքի կրած փոփոխությունների նկարագիրը, հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների երևակումը: Այս տեսանկյունից Իրաքի նշված ժամանակահատվածին գիտական անդրադարձը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Ակնբախ է, որ իրանա-իրաքյան պատերազմը ուներ նաև տնտեսական գործոն, քանի որ պատերազմող երկու երկրներն էլ նավթ արտահանողներ են: Այս առումով հետաքրքիր է «Թայմս» թերթի հրապարակումներից հետևյալ մեջբերումը՝ «Իրադրությունը վատթարացնում է այն հանգամանքը, որ իրաքյան նավթի արտահանումը նվազեցված է՝ հասցնելով մինչև Իրանի նավթի մեկ երրորդին, և երևում են իրաքյան զինվորների բարոյական-հոգեբանական ընկճված վիճակի երևույթներ, իսկ նրանք պաշտպանությունը իրականացնում են անապատի դաժան պայմաններում»[1]:

Իրաքյան կառավարության ներկայացուցիչը հայտարարել էր, որ «սա նաև տնտեսական պատերազմ է: Իրանը կրճատել է մեր նավթի արտահանումը, այդ պատճառով էլ մենք կկրճատենք նրա արտահանումը»[2]:

Այս իրավիճակը 1983 թվականին էր, և արդեն երեք տարի շարունակվող պատերազմը մոտ չէր իր ավարտին, 1983թ. հուլիսի վերջին, երբ Իրանը իրագործեց իր հերթական խոշոր հարձակումը, Իրաքի արտգործնախարարը հայտարարեց, թե այս պատերազմը առնվազն երկուսից երեք կամ ավելի տարիներ հեռու է իր ավարտին մոտենալուց[3]:

Իրանի ռազմաքաղաքական ստրատեգները ելնում էին իրենց երկրի բնակչության թվական առավելությունից, որը Իրաքի բնակչության համեմատությամբ եռակի ավելի էր, ուներ 2,5 անգամ իր թվակազմով մեծ բանակ[4]:

Պատերազմում արդեն զոհվել էր 200 հազ. մարդ, 300 հազ. մարդ վիրավորվել կամ գերի էր ընկել[5]:

1983թ. սեպտեմբեր ամսվա տվյալների համաձայն, Իրաքի նավթի արտահանումից ստացված եկամուտները նվազել էին մեկ քառորդով, իսկ արտասահմանյան արժույթի չափը պատերազմի սկզբի 30 մլրդ դոլարից մնացել էր ընդամենը 4 մլրդ դոլար: Իրաքի կապիտալ ներդրումների բոլոր ծրագրերը սառեցված էին:

Աշխատավարձերի չափը խիստ նվազեցված էր, որը չէր բացառում նաև կառավարական աստիճանավորների և ռազմական բնագավառի զինծառայողների աշխատավարձերի զգալի նվազումը: Այսպես, կառավարական պաշտոնյաների և զինվորական սպաների աշխատավարձը 20 տոկոսով կրճատված էր, իսկ վճարումները արտասահմանյան կապալառուներին չէին իրականացվում:

Արժեզրկումը կազմում էր 50 տոկոս: Հայտնի է նաև, որ Իրաքը իրականում պատերազմ էր վարում ապառիկ միջոցներով, փոխառություններ ստանալով Պարսկական ծոցի տարածաշրջանի արաբական երկրներից, ընդ որում այդ ընդհանուր գումարը կազմում էր 46 մլրդ դոլար, սրան գումարած նաև արտասահմանյան առավել խոշոր ապառիկ վարկեր: Այս առումով հատկապես գերազանցում էր Վարկերի արտասահմանյան արտահանման ապահովման ֆրանսիական վարչությունը, որը Իրաքին տրամադրել էր 4,5 մլրդ դոլար[6]:

Իրաքի տնտեսությունը պատերազմի տարիներին փրկելու նպատակով կառավարությունը դիմում էր ամենատարբեր միջոցների, այս թվում արտահանվող ապրանքի ծավալի ավելացման, ներմուծման կրճատման, ծախսերի կրճատման, ինչպես նաև երկարաժամկետ վարկերի վճարման պայմանները երկարաձգելու հնարանքների:

Ազգային արժույթի պահպանման փորձերը արդյունքի չէին հասցնում: 1983թ. տվյալներով դինարի պաշտոնական կուրսը կազմում էր 3,38 դոլար: Ինչպես սովորաբար նման դեպքերում տեղի է ունենում՝ բարգավաճում էր «սև շուկան», բարձրանում դոլարի կուրսը Իրաքում՝ եռակի և ավելի գերազանցելով պաշտոնական կուրսին: Միաժամանակ սահմանափակումներ էին մտցված արտասահմանյան երկրներ Իրաքից դրամական փոխանցումների, ինչպես նաև նոր պայմանագրերի կնքման հարցում, որի հետևանքով դիտվում էր Իրաքում աշխատող օտարերկրյա բանվորների մասսայական արտահոսք: Այդ բանվորների թիվը հազարների էր հասնում: Օտարերկրյա բանվորների ամենամեծ տոկոսը կազմում էին եգիպտացի բանվորները[7]: Պաշտոնական տվյալներով նրանց թիվը 1983թ. նվազեց 30 տոկոսով՝ կազմելով ընդամենը 1 մլն. մարդ:

Իսկ Ասիայի երկրներից այստեղ ժամանած և տնտեսության տարբեր ճյուղերում ընդգրկված բանվորներից մնաց աշխատելու մոտ կեսը:

Չնայած իրաքյան աղբյուրները իրանա-իրաքյան պատերազմի տարիներին հասկանալի պատճառներով բավական զուսպ գույներով էին ներկայացնում իրադրությունը, գերադասելով լռել երկրի ներքին տնտեսական ցուցանիշների մասին, սակայն ակնհայտ էր երկրի բնակչության տնտեսական վիճակի օրեցօր վատթարացումը և ծայրաստիճան կարիքը շատ ընտանիքներում: Այս առումով շվեյցարական «Նոյե ցյուրիխեր ցայթունգ» թերթը «Իրաքը պատերազմից երեք տարիներ անց» հոդվածում հետաքրքիր տվյալներ է բերում: Հոդվածում նշված է, որ Սադամ Հուսեյնը չկարողացավ իրականացնել իր այն խոստումը, թե Իրաքի տնտեսությունը պատերազմի պատճառով չի տուժի: Նշված է, որ եթե մինչ պատերազմի սկսվելը Իրաքն օրական արտահանում էր 3,4 մլն. բարել նավթ, ապա 1983 թվականին միայն 700 հազ. բարել[8]:

Իրաքի նման մի երկիր, որն ուներ նավթային մեծ պաշարներ՝ մոտ 59 մլրդ. բարել, ստիպված էր նավթապրանքներ ներմուծել: Նավթազտիչ գործարանները անգործության էին մատնված:



Ա-II 98306
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ըստ պաշտոնական տվյալների, իրանա-իրաքյան պատերազմը միայն Իրաքի վրա նստում էր օրական մեկ միլիարդ ամերիկյան դոլար[9]:

Երկրի նախատեսված կառույցների իրականացման համար չէին բավարարում ոչ միայն ֆինանսական միջոցները, այլ նաև բանվորական ուժը: Մոտ 1 մլն. իրաքցիներ գտնվում էին զինվորական ծառայության մեջ: Այնինչ անհրաժեշտ էին 2 մլն. բանվորներ արտասահմանյան երկրներից, որպեսզի հնարավոր լինի 14 մլն. ազգաբնակչություն ունեցող Իրաքի տնտեսության նորմալ գործունեությունը: Կային ձեռնարկություններ, որոնց ամբողջապես սպասարկում էին արտասահմանցիները: Բաղդադի միջազգային օդանավակայանը սպասարկում էին անգլիացիները, իսկ հոսպիտալներում աշխատում էին Անգլիայից և Իռլանդիայից ժամանած բուժանձնակազմեր[10]:

Հետաքրքիր է նաև հետևյալ տեղեկությունը ոսկու հանձնման մասին, որպես անհրաժեշտ միջոց՝ ուղղված քայքայվող տնտեսության վերականգնմանը: Սադամ Հուսեյնի ցուցումով Իրաքում կազմակերպված էր ոսկու հանձնում: Մի քանի ամիս շարունակ, հեռուստատեսությամբ ամեն երեկո նույն տեսարանն էին ներկայացնում, իսկ առավոտյան թերթերը լի էին տեղեկություններով այն մասին, թե որքան լայն մասսայականություն է կրում ոսկու հավաքը բնակչությունից Իրաքում: Այդ միտքը տվյալ ռեժիմին պարգևել էր Բաբելոնից մի խոշոր հողատեր, որը կտակել էր Իրաքի պրեզիդենտին իր ողջ կարողությունը և ոսկին: Այդ ժամանակվանից սկսած դիմում էին բոլոր սոցիալական խավերին պատկանող կանանց ու մայրերին՝ կոչ անելով պրեզիդենտին ու հայրենիքին գոհաբերել իրենց ոսկյա զարդերը, հաճախ՝ ողջ սեփական օժիտը: Ըստ մամուլի տվյալների, հավաքվել էր 30 տոննա ոսկի:

Այս նույն միջոցառումը սկսել էր տարածվել նաև արտասահմանյան ֆիրմաների վրա, որոնց հասկացնում էին, թե նախկինում Իրաքից ստացած հարուստ եկամուտների փոխարեն, այսօր անհրաժեշտ է սատար կանգնել երկրի քայքայվող տնտեսությանը[11]:



[library stamp]

Երկրի ազգաբնակչության ընդհանուր վիճակից անմասն չէր կարող մնալ նաև ազգային բանակը. «Բանակը իր վրա է կրում պատերազմի բոլոր զրկանքները»:

Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնը ժողովրդին և բանակին ոգևորելու համար հայտարարեց, թե «Դժվար ժամանակները ամենաառաջին ուսուցիչն են մարդու համար, ժողովուրդների համար, ինչպես նաև հեղափոխական շարժումների համար»[12]:

1982թ. հունիսի 27-ին Բաղդադում տեղի ունեցավ Բաաս կուսակցության 9-րդ կոնֆերանսը, որն ընթացավ գաղտնի պայմաններում, ելնելով իրանա-իրաքյան պատերազմի ստեղծած մթնոլորտից և քաղաքական խնդիրներն ու իրադրությունը հակառակորդին հայտնի չդարձնելու մտավախությունից:

Այդ կոնֆերանսը հիմնականում քննության ենթարկեց իրանա-իրաքյան պատերազմի անցած շրջանն իր հետևանքներով ու հետագա ընթացքով: Ինքնափառաբանման արտահայտությունները անպակաս են այս և այդ նույն տարիների այլ քաղաքական ելույթներից. «Այդ թշնամիներն են ապրում երևակայական հույսերով: Նրանք չգիտեն, թե ինչ է իրենից ներկայացնում Իրաքը, թե ովքեր են իրաքցիները, և թե ինչ են իրենցից ներկայացնում Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցությունը և Հուլիսյան հզոր հեղափոխությունը»[13]:

Նշենք մեկ այլ փաստաթուղթ՝ նախագահ Սադամ Հուսեյնի հարցազրույցը ֆրանսիական լրագրողներին, 1982թ. ապրիլի 1-ին[14]:

Երկրի նախագահին ուղղված հարցերի ոլորտում էին նաև ներքին կյանքի նկատմամբ հետաքրքրությունը. «Արդյոք դուք այն կարծիքի՞ն եք, որ պատերազմը, որը մղվում է Իրաքի և Իրանի միջև, պատերազմ է երկու կուսակցությունների միջև, որոնցից մեկը գիտական է, մյուսը՝ կրոնական: Ինչպիսի՞ թիվ են կազմում արաբ կամավորները: Ինչպիսի՞ն է կամավորների մասնակցությունը վերջին մարտերում»:

Պատերազմի մեջ գտնվող երկրի նախագահը բավական դիվանագիտական պատասխաններ է տալիս. «...Դուք գիտեք,

որ Իրաքը մի երկիր է, որի ազգաբնակչության թիվը կազմում է 14 միլիոն մարդ: Նրա տարածքը և աշխարհագրական հնարավորությունները հայտնի են ձեզ: Ամենագլխավորը՝ նրա նոր կարգերով է պայմանավորված, թե մարդն ինչպես է ապրում և թե ինչպես է իրեն զգում: Դուք հավանաբար պատկերացնում եք Իրաքում տիրող դրությունը մինչև 1968 թվականի հեղափոխությունը»[15]:

Ընդգծելով, որ այդ հեղափոխությունից առաջ ամեն ինչ վատ վիճակում էր, երկրի ղեկավարը ներկայացնում է Իրաքի առաջընթացը Բաաս կուսակցության իշխանության ներքո, 1968թ. սկսած: «Հուսով ենք, որ դուք կծանոթանաք Իրաքին ավելի հանգամանորեն, ինչպիսին այն դարձել է այժմ, գիտական և տեխնիկական, սոցիալական ու մշակութային առաջընթացի շնորհիվ, նկատի ունենալով տղամարդկանց և կանանց վիճակը գործարաններում, դաշտերում, մնացած վայրերում, մշակույթի, երաժշտության, խղճի, երեխաների վարքագծի բնագավառի և այլն: Այդ ամենը մեր ստեղծածն է և ոչ թե արտասահմանի:

Այս ողջ առաջընթացը Հուլիսյան հեղափոխության արգասիքն է»[16]:

Իրաքը, այնուամենայնիվ, ուներ իր ներքին քաղաքականության լայն ծրագիրը, որի հիմնական լծակը տնտեսական քաղաքականությունն էր: Արդեն 1984թ. Իրաքի ներքին քաղաքական ու տնտեսական ծրագրերում մեծ տեղ էր հատկացվում նավթի պաշարների նպատակային օգտագործմանը՝ բարելավելու պատերազմի ընթացքում ջլատված տնտեսությունը: Նախատեսվում էր նոր նավթամուղերի շինարարությունն ու գործարկումը, որոնց արտադրանքը, ըստ նախնական տվյալների, պետք է կազմեր օրական ավելի քան 6 մլն. բարել նավթ[17]:

Իրաքի բնակչության մեջ ավելի ու ավելի էին հասունանում պատերազմը շուտափույթ ավարտելու տրամադրությունները:

Հակապատերազմական տրամադրություններն Իրաքում լայն թափ ստացան հատկապես պատերազմի չորրորդ տա-

րում, քանի որ արդեն ակնառու էին իրանա-իրաքյան պատերազմի թողած ծանր հետևանքները:

Ուշագրավ է 1984թ. հուլիսի 12-ին Բաղդադում կայացած միջազգային կոնֆերանսը՝ «Միջազգային խաղաղության և անվտանգության համար վտանգավոր իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները» թեմայով: Ովքե՞ր էին այդ կոնֆերանսի մասնակիցները և կազմակերպիչները: Դրանք աշխարհի տարբեր երկրներից Իրաք ժամանած մասսայական, հասարակական և արհմիութենական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների հասարակական-քաղաքական գործիչներ էին:

Պահանջը մեկն էր՝ վերջ տալ այս անհեռանկնար պատերազմին, խաղաղ ճանապարհով լուծելով կոնֆլիկտը՝ հաշվի առնելով երկու երկրների շահերը և ելնելով տարածաշրջանում ստեղծված բարդ ու վտանգավոր իրադրությունից:

Քաղաքական կուսակցություններից՝ Եգիպտոսի Ազգային առաջադիմական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Մոհի ադ-Դինը կոչ արեց դադարեցնել բոլոր կապերը և համագործակցությունը Իրանի հետ, դրանով նրան ստիպել՝ վերջ տալու պատերազմին: «Արաբական ժողովուրդները երբեք չեն հաշտվի արաբական հողի օկուպացման հետ», - հայտարարեց նա:

Խաղաղության կոչերով հանդես եկան Պաղեստինի ազատագրության կազմակերպության ներկայացուցիչները: Եգիպտոսի Ազգային-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Ալ-Զայաթին առաջարկեց ստեղծել մշտական գործող կոորդինացիոն կոմիտե, որի գործունեությունը կոչված էր նպաստելու իրանա-իրաքյան պատերազմի ավարտին:

Հետաքրքիր է ընդգծել պատերազմող մյուս երկրի՝ Իրանի ընդդիմադիր շարժման մասնակցությունը այս կոնֆերանսին:

Այդ շարժման գաղափարախոսներից Հ.Մասլին, որը ներկայացնում էր Իրանի աշխատավորության դեմոկրատական շարժումը, դատապարտեց իր երկրի վարչակարգը՝ պատերազմը շարունակելու մեղադրանքով, այդ քաղաքականու-

թյունը որակելով որպես սեփական ժողովրդի դեմ մասսայական սպանդ: Միաժամանակ հիմնական մեղքը Իրանի ներկայացուցիչը բարդեց Իրանի «Մուսուլման եղբայրներ» խմբավորման վրա, վկայելով թե այդ ժամանակ երկրում գործում էին այդպիսի խմբավորումներ:

Ինչպես հայտնի է, իրանա-իրաքյան պատերազմն ավարտվեց 1988թ., կողմերից և ոչ մեկն էլ չհասավ հաղթանակի: Սակայն այն շատ խոր հետք թողեց երկու երկրների հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի վրա:


**THE IMPACT OF THE IRAN-IRAQI WAR ON THE SOCIAL-ECONOMIC LIFE OF IRAQ DURING THE FIRST YEARS OF THE WAR (1980-1984)**

The Iran-Iraqi war had certain impact on the social-economic life of Iraq. The article deals with the analysys of the economic conditions of the Iraqi people, economic situation in Iraq as well as the internal policy of the Iraqi government.


## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. "The Times", 6.IX.1983.
2. Նույն տեղում:
3. "The Hindustar Times", Delly, 22. IX.1983.
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում, "The Times", London, 1-15.II.1984:
6. Նույն տեղում:
7. Տե՛ս "Neue Züricher Zeitung", 20.XII.1981:
8. Նույն տեղում, 21.IX.1983:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:

12. Խիտաբ ալսեիդ ալրաիս Սադամ Հուսեյն Ֆի ալզիքրա ալրաբիա աշարա ալսավրա ալսաբա աշարա թամուզ ալմաջիդա 1982, Բաղդադ, 1982, էջ 33-34 (արաբ):
13. Նույն տեղում, էջ 19:
14. Հադիս ալսեիդ ալրաիս Սադամ Հուսեյն իլա րիջալ ալսիաֆա ալֆրանսիին ֆի 4.I.1982, Բաղդադ, 1982 (արաբ):
15. Նույն տեղում, էջ 16:
16. Նույն տեղում, էջ 18:
17. Նույն տեղում:

ԳԼՈՒԽ II

## ԻՐԱՆԱ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Իրանա-իրաքյան պատերազմը սկսվեց 1980թ. սեպտեմբերի 4-ին և ավարտվեց ութ տարի անց, 1988թ. օգոստոսի 20-ին, կողմերից և ոչ մեկին չբերելով հաղթանակ:

Այս անմիտ ու անհեռանկար պատերազմը խոր հետք թողեց և՛ Իրանի, և՛ Իրաքի հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում:

Իրանա-իրաքյան պատերազմի ավարտից տարիներ են անցել, սակայն գիտական հետաքրքրությունն ու կարևորությունը թեմայի առումով՝ դեռևս ակնհայտ է: Որպես պատմական իրադարձություն՝ իրանա-իրաքյան պատերազմը հետազոտողներին բելադրում է բազմակողմանի մոտեցումներ, որոնց թվում նաև միջազգային արձագանքները հօգուտ խաղաղ գոյակցության:

Հարկ է նշել նաև, որ հասարակական-քաղաքական ներգործությունները, արձագանքները ներկայումս նույնքան գիտական արժեք են ներկայացնում, քանի որ լիովին ուսումնասիրված չեն:

«Իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա պատերազմի առաջին տարիներին (1980-1984թթ.)» հոդվածում համառոտակի անդրադարձել ենք 1984թ. հուլիսի 12-ին Բաղդադում կայացած միջազգային կոնֆերանսի նշանակությանը: Այն ընթացավ «Միջազգային խաղաղության և անվտանգության համար վտանգավոր իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները»[1] խորագրի ներքո:

Ուշագրավ է, որ այս միջոցառումը կայացավ Բաղդադում, պատերազմի ընթացքում, տարբեր երկրներից Իրաք ժամանած արհմիութենական կազմակերպությունների, մասսայականություն վայելող հասարակական կազմակերպությունների և քա-

դաքական կուսակցությունների ուժերով ու նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նշենք եգիպտոսի Ազգային առաջադիմական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Մոհի էդ Դինին, Պաղեստինի ազատագրության կազմակերպության ներկայացուցիչներին, եգիպտոսի Ազգային դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Ալ-Զայաթու առաջարկը՝ ստեղծելու մշտական գործող կոորդինացիոն կոմիտե: Այդ ապագա կոմիտեն իր գործունեությամբ պետք է նպաստեր իրանա-իարքյան պատերազմի շուտափույթ ավարտին:

Վերը նշված կոնֆերանսի կարևորությունը ցայտուն փաստ է, որին անդրադառնում ենք այս թեմայի լուսաբանման ընթացքում: Կարևոր է և ուշագրավ, որ Իրաք էր ժամանել և ակտիվ մասնակցություն ցուցաբերել նաև Իրանի ընդդիմադիր շարժման ներկայացուցիչներից Հ.Մասլին, որը Իրանի աշխատավորության դեմոկրատական շարժում կազմակերպության ներկայացուցիչն էր: Նա դատապարտեց իր երկրի վարչակարգը, պատերազմը շարունակելու մեղադրանքով, միաժամանակ այդ քաղաքականությունը որակելով որպես սեփական ժողովրդի դեմ ուղղված մասսայական սպանդ: Հ.Մասլին հիմնական մեղքը բարդեց Իրանի «Մուսուլման եղբայրներ» խմբավորման վրա, վկայելով, թե այդ ժամանակ երկրում գործում էին նաև նման առաքելությամբ խմբավորումներ:

Ուշագրավ է այն փաստը, որ իրանա-իրաքյան պատերազմի դատապարտման գործում իր ավանդն ունի նաև Իրաքի հասարակական-քաղաքական գործիչ Արա Խաչատուրը, որը երկրի արհմիութենական շարժման մասնակիցն ու ջատագովն է, տարբեր տարիների՝ սկսած 1960թ. ղեկավարել է Իրաքի արհմիությունների համընդհանուր ֆեդերացիան, լինելով նրա գլխավոր քարտուղարը, ինչպես նաև այդ կազմակերպության գործադիր կոմիտեի ղեկավարը և զբաղեցրել նաև այլ պաշտոններ[2]:

1984թ. Բաղդադում արաբերեն, առանձին գրքով հրատարակվեց նրա հուշերի ընտրանին «Անձնական դիտարկումներ

Իրաքի բանվորական արհմիությունների գործունեության մասին» վերնագրով[3]:

Արա Խաչատուրը հատկապես անդրադառնում է Իրաքի աշխատավորության ծանր վիճակի դրդապատճառներին ու տալիս հիմնավորումներ: Նա գրում է՝ «Պատերազմը ավելի բարդացրեց իրավիճակը, որն առանց այն էլ ծանր էր: Պատերազմի ավելի քան չորս տարիների ընթացքում աշխատուժը կրեց որակական լուրջ փոփոխություններ: Նրա կազմը, կառուցվածքը, մասնագիտական հատկանիշները, որակը և քանակը որոշելը դարձավ ավելի դժվար քան մինչ պատերազմը:

Ոչ միայն արտադրության ոլորտի որակյալ մասնագետները, այլև Իրաքի ողջ հասարակության ամենատարբեր ներկայացուցիչներ, որոնք ի վիճակի էին զենք վերցնել, չարժվեցին պատերազմի քուրան: Աշխատավորության ընտրանին ստիպված էր պտտեցնել պատերազմի և ավերի անիվը, փոխանակ նյութական բարիքներ ստեղծելու»[4]: Բնական է, որ աշխատավորները հայտնվեցին իրենց համար նոր կարգավիճակում՝ երկու երկրների համար էլ կորստաբեր պատերազմի դաշտում:

Հեղինակը հատկապես շեշտում է, որ իրանա-իրաքյան պատերազմի ծանր հետևանքներից մեկն էլ այն հասարակական վերաբերմունքն էր, որ ստեղծվեց աշխատուժի նկատմամբ: Իրաքցի բանվորը գնում էր մեռնելու, իսկ նրա փոխարեն, կազմակերպված կերպով, աշխատուժը համալրվում էր արտասահմանցի աշխատավորների հոսքով՝ Սիրիայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Պարսկաստանից: Զգալի թիվ էին կազմում նաև թայվանցի և պաղեստինցի բանվորները[5]:

Հետաքրքիր է նաև անդրադարձը Իրաքի ազգաբնակչության սոցիալական կտրվածքին: Հեղինակը 1980-1984թթ. ընդգրկող ժամանակահատվածը բնութագրում է որպես հասարակական առաջընթացը ետ պահող, երկիրը սոցիալ-տնտեսական վերափոխումների ուղուց շեղող դաժան փորձություն:

1985թ. ապրիլի 22-ից-25-ը գումարվեց խալամական ժողովրդական երկրորդ համագումարը[6]: Ուշադրության կենտրո-

նում իրանա-իրաքյան պատերազմի դատապարտումն էր և խաղաղության պաշտպանությունը:

Մեր տվյալները այս՝ այսինքն պատերազմի առաջին կեսի մարդկային զոհերի թվի մասին հակասական են, սակայն մի բան պարզ է, որ արդեն1983թ. զոհերի թիվը կազմում էր 200 հազ., իսկ 300 հազար մարդ վիրավորվել կամ գերի էր ընկել[7]:

Իրանա-իրաքյան պատերազմի կորստաբեր նշանակությունը գիտակցվում էր Իրաքի հասարակական-քաղաքական շրջաններում: Այդ են վկայում պատերազմին վերաբերող փաստական նյութերը, քանի որ Բաղդադը ջերմեռանդ ընդառաջում էր իր երկրում խաղաղության նշանաբանով պատերազմը դատապարտող միջոցառումների անցկացմանը:

Համաձայն հավաստի աղբյուրների, Իրանը գնալով ավելի լայնորեն էր պատերազմի մեջ շպրտում զինվորական գործին վատ պատրաստված ֆանատների՝ «մարդկային ալիքների» հարձակումների մեթոդներին ապավինելով: Որոշ դեպքերում Իրանի դպրոցների աշակերտներ, որոնց հավատացնում էին, որ յուրաքանչյուր զոհված իրանցի կհայտնվի դրախտում, դասարաններին լրիվ կազմով ուղարկվում էին ռազմաճակատ: Այս տվյալները վերաբերում են պատերազմի առաջին կեսին՝ 1983-1984թթ.:

Համագորը գտնում ենք Իրաքում, որի հաստատումն են երկրի նախագահի՝ Սադամ Հուսեյնի ճառերը, ուղերձները իր ժողովրդին, կանանց, ծերերին:

Դիմելով երիտասարդությանը, Իրաքի ղեկավարը նշում է. «ես ծեր անունից եմ դիմում Թեհրանի ղեկավարներին, որ Իրաքի սպաները և նրա զինվորները, և մեր ցամաքային զորքերը, և օդային ուժերը, և ծովային նավատորմի ուժերը, և ազգային բանակի մարտիկները, և Իրաքի ծերունիները, և Իրաքի տղամարդիկ, Իրաքի կանայք, Իրաքի երիտասարդությունը, Իրաքի երեխաները, նրանք բոլորը այսօր կանգնած են կեռ թրի նման, հայրենիքի սահմանների վրա, որպեսզի ոչնչացնեն ագրեսիայի բոլոր փորձերը, ինչպես նրանք վարվեցին անցյալ փառապանծ օրերի ընթացքում»[8]:

«Այս օրերին հատկապես ողջունում եմ մեր հիանալի որդիներին՝ ուսանողներին՝ որոնք տենչում են զենք վերցնել, բայց մենք նրանց ասացինք, որ շարունակեն պարապմունքները մինչև ամառային արձակուրդները, իսկ այդ ժամանակ մենք նրանց հրացաններ կբաժանենք: Եվ ահա այսօր նրանք նախապատրաստական զինվորական ճամբարներում են և պատասխանատու դիրքերում ամուր ու հպարտ պահում են հրացանները, Զինված ուժերի և ժողովրդական բանակի, իրենց եղբայրների հետ մեկտեղ պաշտպանում են թանկագին հայրենիքը»:

Ֆրանսիական լրագրողների հետ հարցազրույցում Սադամ Հուսեյնը անդրադառնում է հակառակորդի բանակի կազմին՝ «երկու օր առաջ իրանցիները հայտարարեցին, որ Դիզֆուլում և Շոշում նրանց կազմում մարտնչել են իրանցի տասնչորսամյա քաղաքացիներ: Դա ևս մի ապացույց է, որ նրանք մարտնչում են հետամնաց ուղեղներով, անցնում են միֆական ուսումնառություն, փոխանակ օրենքներին ու կյանքին տրամաբանորեն վերաբերվելու»[10]:

Ֆրանսիական լրատվական միջոցները՝ ֆրանսիական մամուլի կենտրոնական գործակալությունը, «Նուվել օբսերվաթուար», ֆրանսիական հեռուստատեսության առաջին և երկրորդ ծրագրերը, «Ֆիգարո» և «Ֆրանց սուար» թերթերը, ֆրանսիական ռադիոն և «Փարիզյան լիբերե» լրագրողների նախապատրաստման կենտրոնը, «Ասիա և Աֆրիկա» ամսագիրը, ֆրանսիական մամուլի գործակալության ներկայացուցիչները և «Մերձավոր Արևելքում խաղաղության ընկերության» նախագահը 1982թ. ապրիլի 1-ին Բաղդադում, հարցերի թվում ներկայացրին նաև հետևյալը՝ «Արդյո՞ք Իրաքը աջակցում է Խոմեյնու վարչակարգի ընդդիմադիրներին: Ի՞նչ կասեք Իրանին ցուցաբերված խորայելական օգնության մասին:

Կարո՞ղ եք հանգամանալի մեզ բացատրել այդ օգնության մանրամասները, հատկապես սպառազինության ոլորտում»[11]:

Արտասահմանյան առաջադիմական մամուլը բազմիցս նշում էր, որ Իրանի ժողովրդական կուսակցությունը (ԹՈՒԴԵ),

ելնելով Իրանի ժողովրդի շահերից և ընդհանուր իրադրությունից, որը ստեղծվել էր տարածաշրջանում, արդեն պատերազմի սկզբնական շրջանից սկսած, դատապարտում էր նրա զարգացումը և կոչ անում անհապաղ դադարեցնել այն որպես կործանարար գործողություն երկրի համար:

Գերմանական հեղինակավոր ամսագրերից «Բլեթթեր Ֆյուր դոյչե ունդ ինտերնացիոնալ պոլիտիկ» ամսագիրը գրում էր. «Այդ պատերազմի ընթացքը ուղղված չէ ո՛չ հօգուտ Իրանի, ո՛չ էլ Իրաքի ժողովուրդների, այստեղ շահող դուրս եկան միայն Պենտագոնն ու Իսրայելը»[12]:

Արևմտաեվրոպական երկրների մամուլում տեղ էին գտնում նյութեր, որոնք պարզորոշ ընդգծում էին արաբական երկրների հակասական վերաբերմունքը Իրաքին և Իրանին, պատերազմող երկու երկրներին. «Յումանիթեն» գրում էր, որ այդ պատերազմը «ծառայում է արաբների մասնատմանը»[13]:

Միաժամանակ պատերազմական մթնոլորտը նպաստում էր Մերձավոր Արևելքում նոր թեժ կետեր ստեղծվելուն: Նշենք, որ 1982թ. հունիսին Իսրայելը ներխուժեց Լիբանան, որը գրեթե միաժամանակ էր, կամ համընկնում էր իրանա-իրաքյան ռազմաճակատում «Ռամադան» անվանումով արյունահեղ գործողությունների զարգացմանը:

Այդ օրերին «Ինդիան էքսպրես» թերթը գրում է, որ իրանա-իրաքյան պատերազմը Լիբանանում ծավալված ագրեսիայից կարող էր ուշադրությունը շեղել և արաբներին ավելի մասնատել[14]:

Այս իրադրությունը ընկալվում էր նաև արաբական մյուս երկրների կողմից, որոնք ընդգրկված չէին իրանա-իրաքյան պատերազմում:

Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը իր հարցազրույցներից մեկում նշում է՝ «խաղաղությունը տարածաշրջանում կարող է հիմնվել Միացյալ ազգերի կազմակերպության որոշումների վրա, որոնք կճանաչվեն միջազգային հանրության կողմից: Մենք արդեն բազմիցս հայտարարել ենք, որ ընդունում ենք այդ բանաձևը»[15]: Այդ նույն հարցազրույցի ընթացքում նաև նշվում է՝ «Հաշվի առնելով, որ Իսրայելը ծրագրում է հետագա

էքսպանսիոնիստական քայլեր, ընդհուպ մինչև «Մեծ Իսրայելի» ստեղծումը, որը կտարածվի Նեղոսից մինչև Եփրատ, ինչը սիոնիստական շարժման ներկայացուցիչները Առաջին համաշխարհային պատերազմից հետո հասցեագրեցին Փարիզի խաղաղասիրական կոնֆերանսին հատուկ մեմորանդումով, որով առաջարկվում էր Լիտանի գետի ակունքները, ներկայիս հարավում, ընդունել որպես Իսրայելի տարածքի մի մասը, դրանից կարելի է եզրակացնել, որ Իսրայելը գործնականորեն ձգտում է անեքսիայի ենթարկել Լիբանանի հարավային մասը»[16]:

«... Պատերազմը Իրաքի դեմ, դա նրանց (նկատի ունի Իրանին – Կ.Ս.) հիմնական նպատակն է, և Իրաքի օկուպացումը ճանապարհ է դեպի Լիբանան, հետևաբար անհրաժեշտ է, որ արաբ ազգը թույլ տա Խոմեյնուն գրավել Իրաքը, որպեսզի նա և Բեգինը միմյանց ձեռք թոքվեն Լիբանանում, կամ միգուցե մեկ այլ արաբական երկրում: Այո, դա է նրանց պահանջը, և դա է նրանց իրական ծրագիրը, և սա է այդ կուրսի բնական հետևանքը, որին հետևում է Խոմեյնին այն րոպեից, երբ իշխանությունը ստանձնեց»[17]:

Ի դեպ Լիբանանից նույնպես աշխատուժի զգալի հոսք էր սկսվել Իրաք, հենց պատերազմի առաջին տարիներից «...ավելի քան 250 հազ. լիբանանցիներ աշխատում են արաբական այլ երկրներում: Դրանք որակյալ և լավ, այսինքն բարձր վարձատրվող մասնագետներ են: Բանկերը ծաղկում են, քանի որ նրանք տնօրինում են այն գումարներին, որը կուտակվում է լիբանանցիների այդ հատվածի աշխատանքով: էմիգրացիան դարձել է երկրի «արդյունաբերությանը» նպաստող հիմնական ճյուղերից մեկը: Այս հանգամանքը պայմանավորում է ևս մեկ լուրջ կառուցվածքային փոփոխություն հասարակության կազմում: Եթե նախկինում լիբանանյան կենցաղսպասարկման ոլորտը իր աշխատուժը օգտագործում էր իր երկրում՝ Լիբանանի կարիքները հոգալով, ապա այսօր տնտեսության այդ բնագավառի մասնագետները երկրից մեկնում են Իրաք, Պարսկական ծոցի պետություններ կամ Սաուդյան Արաբիա և այնտեղ են առաջարկում իրենց ծառայությունները: Լիբանանում 1981-1982թթ. սկսեցին բացվել մի քանի մասնավոր

դպրոցներ, հանպատրաստի տեխնիկական մասնագիտական ծրագրերով, որոնք ուսուցանում էին երիտասարդ լիբանանցիներին, նկատի ունենալով երկրից նրանց մեկնելու հեռանկարները:

«Իմ բոլոր ուսանողները մեկնել են, - պատմում է մի պրոֆեսոր, փողոցում հանդիպելով Էր-Ռիյադից արձակուրդներին տուն վերադարձած ուսանողի բարևին պատասխանելուց անմիջապես հետո: (Այսինքն սա ամենացավոտ խնդիրներից մեկն է):

Նրանք բոլորը պետք է սկսեն նրանից, որ փող վաստակեն արտասահմանում: Նրանցից ոմանք ավելի ուշ վիճակի են լինում փողը կուտակել մեր երկրում կամ Եվրոպայում: Պարսկական ծոցի երկրներում նրանց ավելի բարձր են վճարում: Նրանք ապրում են համեստ ու խնայողաբար: Չէ որ այնտեղ շատ չես վաստակի, եթե չաշխատես: Ահա թե ինչու են գնալով ավելի նորանոր բանկեր բացում»[18]:

Հոդվածագիրն ավելացնում է նաև, որ «դա վերջին հաշվով պայմանավորում է այն փաստը, որ լիբանանյան քրիստոնյաները հրաժարվեցին իրենց երկրից առանձնանալ, հենվել Իսրայելի վրա և ստեղծել սեփական մինի պետություն: Չէ որ նման քաղաքականությունը կհանգեցնի նրան, որ այլևս չեն կարողանա մեկնել նավթով հարուստ երկրներ: Իսկ եթե այդ կապը, կամ հնարավորությունը խախտվի, ապա նրանք իրենց ամբողջում սովից կմահանան»[19]:

Այս մեջբերումը հետաքրքիր փաստ է, քանի որ Իրաքում պատերազմից շատ ժամանակ չէր անցել (1980թ. սեպտեմբեր), և արդեն առաջին պլանում Իրաքն էր, որը աշխատուժի զգալի կարիք ուներ:

Եվ եթե լիբանանցի մասնագետները ստիպված էին հեռանալ իրենց երկրից երկարաձգվող պատերազմի պատճառով, ապա եգիպտացի բանվորների համար նույն Իրաքը գործազրկությունից փրկվելու մի նոր վայր էր: Բավական է նշել, որ իրանա-իրաքյան պատերազմի տարիներին Իրաքում հայտնվեցին մոտավորապես երկու միլիոն եգիպտացի բանվորներ, այն տեղերում աշխատելու համար, ուր աշխատողները բանակ էին

զորակոչվել և պատերազմի դաշտում էին: Ըստ որում, այս երկու միլիոն թիվը բազմիցս շեշտվում էր պատերազմի ընթացքը լուսաբանող տեղեկատվական աղբյուրներում:

Որքան էլ որ ներկա թեմայի շրջանակից դուրս է, սակայն տեղին ենք համարում ավելացնել, որ այդ աշխատատեղերը դրախտավայրեր չէին, անգամ ոմանց համար ճակատագրական եղան, քանի որ խոսքը վերաբերում է արագ բոցավառվող նավթամթերքների արտադրության ոլորտին, ինչպես նաև զինամթերքի արտադրությանը, ռազմական կոմպլեքսին, որոշ նյութերի պահեստավորմանը և այլն:

Ինչպես հայտնի է, իրանա-իրաքյան պատերազմի ութ տարիների ընթացքում Եգիպտոսը պաշտպանում էր Իրաքին, իսկ երբ նրանք Հորդանանի և Եմենի հետ մեկտեղ հիմնեցին արաբական համագործակցության խորհուրդ, այդ երկու արաբական երկրների՝ Իրաքի և Եգիպտոսի փոխհարաբերություններն ավելի սերտ բնույթ կրեցին: Սակայն 1989թ., արդեն պատերազմի ավարտից հետո, մամուլում հանդիպում են տարբեր հրապարակումներ՝ բարդույթների նստվածքով, Իրաքի և Եգիպտոսի փոխհարաբերություններում, որոնց հիմքում Եգիպտոսի բանվորների աշխատավարձի, առողջության, արտադրամասերում դժբախտ պատահարների, անխուսափելի վնասվածքների, վքարների, անգամ զգալի զոհերի մասին մտահոգություններ էր:

Եգիպտական որոշ լրատվական աղբյուրներ վկայում են, որ արդեն 1989թ. ամռանը երկու միլիոն եգիպտացի բանվորների կեսը, այսինքն մեկ միլիոնը ստիպված էր վերադառնալ Եգիպտոս, քանի որ Իրաքում, պատերազմից հետո, բանակից զորացրվածները, վերադարձածները պետք է գրավեին իրենց նախկին աշխատատեղերը, կամ եթե ոչ, ապա պետք է աշխատանք գտնեին: Հետևաբար, Իրաքի կառավարությունը պատերազմի ավարտին անհրաժեշտ համարեց որոշակի սահմանափակումներ մտցնել, Իրաքից դեպի Եգիպտոսի բանկերը ֆինանսական փոխադրումները նվազեցնելու նպատակով:

Տեղին ենք համարում նաև ճշել այս հրապարակումը պատերազմող մյուս երկրի՝ Իրանի մասին «Լուրջ ֆինանսատնտեսական ճգնաժամ» վերնագրով[20]:

«Արդյո՞ք այդ լուրջ ֆինանսատնտեսական ճգնաժամը, որ ապրում էր Խոմեյնու վարչակարգը, այն պատճառով է, որ զինվորների և կրոնական գործիչների միջև առկա են տարաձայնություններ նաև պատերազմական լայնածավալ հարձակման շուրջ, ինչի մասին Թեհրանում արդեն մի քանի շաբաթ առաջ հայտարարել են»:

Այդ ճգնաժամը բացատրվում է մի քանի պատճառներով: Բնական է, պատերազմով և ռազմական տեխնիկայի գնումներով, ինչպես նաև այլ տեխնիկայի գնումներով, ինչպես նաև այդ տեխնիկայի համար անհրաժեշտ պահեստամասերի ծեռքբերումով, որոնց համար շատ թանկ գին է վճարվում, ինչպես նաև կառավարման պատճառով, որը իրեն չի արդարացնում, ազգայնացված ձեռնարկությունների կուտակված դեֆիցիտով, ներմուծվող արտասահմանյան ապրանքների աճով լայն սպառման ապրանքների ոլորտում, որը հետևանք է երկրի ներքին քաղաքականության՝ տնտեսական ազգային արտադրության, նրա կրճատման, սահմանափակման հետևանքով:

Իսկ այդ նույն ժամանակ, Իրաքում բավական սուր էր դրված նաև ներքին երկպառակտությունների հնարավորության վտանգը: Թեև պատերազմական գործողություններն ընթանում էին հիմնականում ճահճուտներում և հարավային սահմանի անապատում, Իրաքի կառավարությունը, ինչպես նախկինում, լրջորեն մտահոգված էր, որ Իրանը անսպասելի հարձակումներ կարող է ձեռնարկել քուրդ խռովարարների օժանդակությամբ:

Այդ մտավախությունը բացատրվում էր ուժերի տեղաբաշխմամբ՝ իրաքյան զինուժը տարածվել էր լիուլի ամբողջ սահմանի երկարությամբ՝ 700 մղոն: Իրաքյան վերջին երկու պահեստային զորամասերը ուղարկվել էին դեպի հարավային տարածք, և այլևս պահեստայիններ չկային, պատրաստ ուղարկելու Իրաքի հյուսիսային սահմանները՝ ռազմական գործողություններ սկսվելու դեպքում:

Ի դեպ, Իրաքի քրդերին աջակցում էին ոչ միայն իրանցիները, այլև այլախոհ շիաներ Իրաքից: Մի քանի քրդական գյուղերում, ուր Բարզանուն հավատարիմ էին, բոլոր տղամարդկանց հավաքեցին պատժելու կամ համակենտրոնացման ճամբարում պահելու համար: Այդ է վկայել մի դիվանագետ:

Սադամ Հուսեյնը միաժամանակ ստեղծեց նոր դաշինք՝ համաձայնության գալով քրդական ձախ ուղղության ղեկավար Ջալալ աթ-Թալաբանու (Բարզանու կլանի հակառակորդի) հետ: Իրաքի կառավարությունը աթ-Թալաբանուն տվեց մեծ արտոնություններ և կրճատեց Սուլեյմանիայի ծայրամասերի քրդաբնակ շրջաններում իրաքյան զինվորական հսկողությունները, միջամտությունները:

Թեև առանձնակի լայնածավալ ռազմական գործողություններում քուրդ խռովարարները չեն մասնակցել, նկատի ունի Բարզանու ղեկավարությամբ վերջին ժամանակները, սակայն նրանք շարունակում են Թեհրանին օգնել մատակարարման բնագավառում: Հետաքրքիր է նաև այս տեղեկությունը՝ «Աթ Թալաբանին ցանկանում է օգտագործել նավից ստացված եկամուտները՝ բարելավելու համար կենցաղային, բնակարանային պայմանները և կրթության անբավարար վիճակը: Սակայն իրականում, Իրաքի կառավարությունը չցանկացավ հրաժարվել նավից ստացված եկամուտների մեկ մասից, երբ երկրի տնտեսությունը լճացած էր, քանի որ անհրաժեշտ էր Իրանի հետ ձգձգվող ու շատ թանկ նստող պատերազմը կրել իր ողջ բեռով»[21]:

Աթ-Թալաբանին հույս ուներ, որ պատերազմական իրավիճակում անկայուն իրադրությունը հարավային ճակատում Իրաքի կառավարությանը կստիպի գնալ որոշ զիջումների և քրդերի հետ կնքել առավել շահեկան համաձայնագրեր:

Չցանկանալով ստեղծել անբարենպաստ նախադեպեր, Իրաքի նախագահը ձգտում էր զոհաբերել ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է, որպեսզի հանգիստ լինի քրդերի կողմից աջակցության հարցում՝ բավարար խաղաղություն պահպանելու հյուսիսային ճակատում, և ոչ ավել:

Գալով իրանա-իրաքյան պատերազմի տարիներին երկրի ներքին քաղաքական ու տնտեսական կյանքին, ապա Սադամ Հուսեյնը անհանգստացած էր նաև շիաների աղքատ, ընչազուրկ համայնքների հնարավոր խռովության վտանգից:

Նրանք ապրում էին երկրի հարավում, ուր տեղաբաշխված էին երկրի ամենախոշոր նավթահորերը: Իրաքի կառավարությունը ստիպված էր գնալ զիջումների, 1980թ. սկսած, այսինքն պատերազմի հենց սկզբից, երբ առանձնացվեցին բավական խոշոր միջոցներ, շիաներով բնակեցված այս շրջաններին: Սակայն այդ ամենը դարձյալ բավարար չէր և չէր համապատասխանում այն եկամուտներին, որոնք ստացվում էին այն շրջաններից արտահանվող նավթի պաշարներից, ուր շիաները մեծամասնություն էին կազմում բնակչության թվաքանակում[22]:

Իրանա-իրաքյան պատերազմը պայմանավորեց նաև միջազգային նոր իրադրություն տարածաշրջանում, նոր խնդիրներ, և պատերազմի ծանր հետևանքները երկու երկրների համար էլ խոչընդոտեցին սոցիալ-տնտեսական ծրագրերի նպատակային իրականացմանը:

## THE SOCIAL-POLITICAL RESPONSES OF THE IRAN-IRAQI WAR


The Iran-Iraqi war had certain impact on the social-political life of Iraq and Iran. Among the significant social-political factors of regional importance was the problem of the peace.

The article deals with the analyses of the social-political consequences of the Iran-Iraqi war, the absurd character of this conflict, destroying the two countries.


## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Կ.Սամվելյան, Իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա պատերազմի

առաջին տարիներին (1980-1984), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 16, Երևան, 1996, էջ 71:
2. К.Х.Самвелян, Рабочий класс Ирака в борьбе за упрочение республиканского строя и демократию, Ереван, 1979, с. 50-51.
3. Արա Խաչատուր, Մին թաջարիբ շախսիյա ֆիլ ամալ ալնիկ-դաբի ալումմալ ֆիլ Իրակը, Բաղդադ, 1984 (արաբ.):
4. Նույն տեղում, էջ 58:
5. Նույն տեղում:
6. Վակդաի ալմուքամար ալ խլամի, 1985 (արաբ.):
7. "The Times", 1-15.II.1984.
8. Президент Саддам Хусейн в Национальный день, по случаю 14-ой годовщины июльской революции, Багдад, Дар ал-Мамун, с. 49.
9. Նույն տեղում, էջ 47:
10. Интервью президента Саддама Хусейна с французскими журналистами, 1.IV.1982. Дар ал-Мамун, Багдад, с. 23.
11. Նույն տեղում, էջ 16:
12. "Blätter für Deutsche und International Politik", II.1984.
13. "Humanite", II-III, 1984.
14. Տե՛ս "Indian Express", III.1984.
15. "The Washington Post", 14.VIII.1983.
16. Президент Саддам Хусейн в Национальный день..., с. 28.
17. Նույն տեղում, էջ 26:
18. "Neue Züricher Zeitung", 22. XII. 1981.
19. Նույն տեղում:
20. "Monde", 12. VII. 1984.
21. "The Washington Post", 27. III. 1984.
22. Նույն տեղում:

## ԳԼՈՒԽ III

## ՄԱԿ-Ի ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ ԻՐԱՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից ընդունած Իրաքին վերաբերող փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ են դրվում հայերեն լեզվով՝ նկատի ունենալով այս թեմայի կարևորությունը և արդիականությունը: Այն լույս է սփռում Իրաքի նորագույն պատմության վերջին երկու տասնամյակների իրադարձությունների և շրջադարձերի վրա, օգնում ամբողջականորեն պատկերացնել այդ երկրի ոչ միայն քաղաքական, այլ նաև սոցիալ–տնտեսական իրավիճակը:

ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջազգային այդ կազմակերպությունը հետևողական է իր գործունեության ընթացքում: Ժամանակագրական հաջորդականությամբ հավաքված է փաստաթղթերի բավական ստվար փաթեթ, որը պարունակում է տեղեկատվական հարուստ ու հետաքրքիր տվյալներ:

ՄԱԿ-ի ընդունած որոշումներն Իրաքի մասին անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն Իրաքի արտաքին և ներքին քաղաքականության համատեքստում, այլև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում միջազգային կազմակերպությունների կուտակած փորձը և գործունեությունը ներկայացնելու տեսանկյունից:

Իրաքի հանդեպ պատժամիջոցների կիրառումը և նրանց որոշակի մասի վերացումը առաջվա նման մնում է միջազգային կարևորության հարցերի շրջանակում: Իրաքի հետ կապված այդ հարցերով զբաղվում են շատ երկրներ, այդ թվում ԱՄՆ–ը և Մեծ Բրիտանիան: Փաստորեն դա առիթ է, որպեսզի ՄԱԿ–ում քննարկումների ժամանակ ի հայտ գա այդ կազմակերպության Անվտանգության խորհրդի, արաբական երկրների, նաև բոլոր շահագրգիռ երկրների ու կողմերի վերաբերմունքը Իրաքի հանդեպ պատժամիջոցների վերացման հարցում:

2000 թվականից շրջանառության մեջ դրվեց «խելամիտ սանկցիա» որակումը Վաշինգտոնի կողմից: Այդ «խելամիտ» վերաբերմունքը Իրաք առաքվող հումանիտար օգնության բո-

լոր ապրանքների վրայից սահմանափակումների վերացման առաջարկությունն է: Այս առաջարկությամբ հատուկ նախագծով հանդես եկավ նաև Մեծ Բրիտանիան: Նախագծում հումանիտար օգնության առաքումը պայմանավորվում էր ուժեղացնելով հսկողությունը Բաղդադի վրա, զենքի ծռքբերմանը, ինչպես նաև կրկնակի նշանակության ապրանքների գնելն ու ներմուծելը արգելելուն խիստ հետամուտ լինելով[1]:

2001 թվականի փետրվարին ԱՄՆ-ի պետքարտուղար Քոլին Փաուելը անցկացրեց մի շարք կոնսուլտացիաներ, բացատրելով ամերիկյան կողմի «խելամիտ սանկցիաների» առավելությունը: Այդ կոնսուլտացիաներին Իրաքը ոչ միայն չմասնակցեց, այլև նախօրոք հայտնեց իր անհամաձայնությունը: Իրաքի արտգործնախարար Թարիկ Ազիզը դիմել էր Ռուսաստանի Դաշնությանը՝ անհրաժեշտության դեպքում իր վետոյի իրավունքը գործի դնելու խնդրանքով՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի առաջարկը Իրաքի դեմ պատժամիջոցների ռեժիմի փոփոխության քննարկման ժամանակ[2]:

Համաձայն միջազգային նորմերի, եթե ՄԱԿ-ի անդամ երկրներից որևէ մեկը կրում է երրորդ երկրի նկատմամբ սանկցիաներ կիրառելու հետևանքով անհատույց վնասներ, ապա իրավունք ունի դիմել քննարկելու հարցի կարգավորումը:

Մոսկվան սկզբունքորեն ընդառաջեց իրաքյան կողմին: Հարկ է նշել, որ դիվանագիտական մակարդակով Բաղդադի կողմից ստորագրվել են ռուսական ընկերությունների գերակայության մասին մի շարք դիրեկտիվներ:

2000 թվականին Ռուսաստանի Դաշնության հետ Իրաքի կոնտրակտների արժեքը կազմել է 1 մլրդ. 200 մլն. ԱՄՆ դոլար: Ռուսաստանը ստացել է 5, 5 մլրդ. ամերիկյան դոլարի արժողությամբ իրաքյան նավթ:

Հետաքրքիր փաստ է, որ պատժամիջոցների ռեժիմի վերացումից հետո նախատեսվում է մի շարք օբյեկտների կառուցում և վերակառուցում, որի համար կծախսվի 40–50 մլրդ. ամերիկյան դոլար:

Իրաքի դեմ կիրառվող սանկցիաներից որոշակիորեն տուժել են նաև Հնդկաստանը և Հորդանանը: Հնդկաստանը, ստորագրելով «Նավթ հացահատիկի դիմաց» փաստաթուղթ, այդ սանկցիաների հետևանքով կրել է 30 մլրդ. ԱՄՆ դոլարի վնաս: Թեև Հորդանանին թույլատրվում է ներմուծել օրական 75 հազար բարել իրաքյան նավթ, իրականում այդ թիվը զգալիորեն ավելի մեծ է: Հորդանանը, զրկված լինելով սեփական բնական ռեսուրսներից, Իրաքի հետ առևտուրը դիտում է որպես տնտեսության համար կարևորագույն ազդակ և պայման:

Գալով Իրաք – Հորդանան տնտեսական կապերին, ուշադրավ են 2001 թվականի մայիս–հունիս ամիսների զարգացումները այդ բնագավառում:

2001 թվականի հունիսին Բաղդադում իր աշխատանքները սկսեց տնտեսական միասնության ընդհանուր արաբական խորհրդի 73–րդ նստաշրջանը: Այս միջոցառմանը մասնակցում էին տնտեսության, արդյունաբերության և առևտրի նախարարներ՝ արաբական տասը երկրներից: Այն առաջին անգամ անց է կացվել 1991 թվականին: Այսպիսի ներկայացուցչական կազմով միջարաբական ֆորումի անցկացումը Իրաքի մայրաքաղաքում, իրոք որ երևույթ էր: Երկու օր տևած այս նստաշրջանի մասնակիցները քննարկեցին արաբական պետությունների տնտեսության ինտեգրացման և համաարաբական ընդհանուր շուկայի ստեղծման հարցերը:

Այդ նստաշրջանը կոչված էր որոշում ընդունել Իրաքի, Սիրիայի, Եգիպտոսի և Լիբիայի միջև միացյալ ազատ առևտրի գոնա ստեղծելու մասին:

Արաբական տարբեր երկրներից պատգամավորները ժամանեցին Բաղդադ հորդանանյան ինքնաթիռով:

Հորդանանի կառավարությունը ստացել էր ՄԱԿ–ի՝ Իրաքին վերաբերող սանկցիաների հատուկ կոմիտեի թույլատվությունը՝ Բաղդադ կանոնավոր չվերթեր իրագործելու մասին[3]:

Թուրքիայի համար նույնպես ստեղծված էր նպաստավոր հնարավորություն: Նրա վնասը Իրաքի հանդեպ պատժամիջոցներից կազմում է 35–36 մլրդ. դոլար: Ներկայումս Թուրքիայի

տարեկան շահույթը Իրաքի հետ առևտրից կազմում է 2 մլրդ. դոլար[4]:

Ինչ վերաբերում է ամերիկյան կողմի վերաբերմունքին, ապա սանկցիաների կարևորությունը ընդգծվում էր նաև ԱՄՆ-ի վարչակարգի կողմից: ԱՄՆ-ի նախագահ Բուշը հաստատում էր, որ չի պատրաստվում Իրաքին ազատել պատժամիջոցներից, թեև ամերիկյան ընկերությունները ձգտում են ձեռք բերել իրաքյան նավթ: Ասոշիէյթդ Պրես գործակալության համաձայն Սպիտակ տանը կայացած բրիֆինգի ժամանակ Բուշը հերքել է փոխնախագահ Դիկ Չեյնիի՝ 2001 թվականի ապրիլին կատարած այն հայտարարությունը, որ իբր տնտեսական սանկցիաները, որոնք ընդունված են և գործում են Լիբիայի, Իրանի և Իրաքի դեմ, հնարավոր է վերացվեն Միացյալ Նահանգների կողմից այդ պետությունների էներգետիկ ռեսուրսների օգտագործման անհրաժեշտությունից դրդված[5]:

Գալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած սանկցիաների բովանդակությանը, անհրաժեշտ է ժամանակագրական անցում կատարել դեպի Իրաքի նորագույն շրջանի արտաքին հարաբերությունների առավել ուշագրավ իրադարձությունները, անդրադառնալով Իրաք–Իրան և Իրաք–Քուվեյթ փոխհարաբերությունների ընթացքին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության մեջ կոնֆլիկտային թեժ կետերի շուրջ բանակցությունների անցած ուղուն:

Իրանա–իրաքյան պատերազմը սկսվեց 1980 թվականի սեպտեմբերի 4–ին և ավարտվեց ութ տարի անց, 1988 թվականի օգոստոսի 20–ին՝ կողմերից և ոչ մեկին չբերելով հաղթանակ: Այս անմիտ ու անհեռանկար պատերազմը խոր հետք թողեց և՛ Իրանի, և՛ Իրաքի հասարակական–քաղաքական և սոցիալ–տնտեսական կյանքում[6]:

Իրանա–իրաքյան պատերազմի ավարտից տարիներ են անցել, սակայն, ինչպես գտնում են հետազոտողները, այդ պատերազմի հետևանքների ծանրությունը Իրաքի և Իրանի վրա այնքան ակնհայտ է, որ հետագա տարիներին, երկու երկրների միջև սահմանային տարբեր կոնֆլիկտների առիթով, այն նշվում է որպես խիստ վտանգավոր սպառնալիք, որին

երբեք չպետք է վերադառնալ: Այսպես, 2001 թվականի գարնանը Իրաքի արևելյան մասի վրա Իրանի կողմից հրթիռակոծումների կապակցությամբ Իրաքի ղեկավարության ներկայացուցիչը նախազգուշացրեց Իրանի ղեկավարությանը, որ այդ հրթիռակոծումները հղի են երկու պետությունների միջև պատերազմի վերսկսման վտանգով, մի պատերազմ, որը տևեց 1980–1988 թթ.[7]: Խոսքը վերաբերում է Իրաքի արևելյան մասում բազավորված Իրանի «ժողովրդական մարտիկներ» զինված խմբավորումների ապստամբ ջոկատների հրթիռակոծմանը Իրանի կողմից, որի ընթացքում զոհվել էր 3 և վիրավորվել 19 մարդ: Իսկ, ըստ Բաղդադի հայտարարության, Իրաքի հակաօդային պաշտպանությանը հաջողվել է կործանել Իրանի ռազմաօդային ուժերի հետախուզական, առանց օդաչուի կառավարվող ինքնաթիռը[8]:

Այս դրվագը ևս ցույց է տալիս նման շարժառիթների ունեցած բացասական հետևանքները պատժամիջոցների վերացման ուղղությամբ գործընթացների վրա:

ՄԱԿ–ի ռազմական հարցերով դիտորդական խմբի ընդունած փաստաթղթի նյութերում պարզորոշ նշված է` «Գրեթե ութ տարի տևած պատերազմից հետո և դրան հաջորդող տարիների դիվանագիտությունը իրենց վրա վերցրին Իրանի և Իրաքի ղեկավար առաջին դեմքերը, համաձայնվելով հրադադարի և ուղղակի անմիջական բանակցությունների»: UNIIMOG–ը ավարտեց իր վերահսկողության առաքելությունը 1991 թվականին, երկու կողմերից ստանալով նրանց պարտավորության համաձայնությունը` զորքերը վերադարձնել միջազգային ընդունված սահմանները: Այդ առաքելությունը տևեց 1988 թվականի օգոստոսից մինչև 1991 թվականի փետրվար[9]:

1991 թվականին ստեղծվեց ՄԱԿ–ի Իրաք–Քուվեյթ դիտորդական խումբը` այդ երկու երկրների` Իրաքի և Քուվեյթի, սահմանների վերահսկման նպատակով:

Այդ դիտորդական խմբի` UNIKOM–ի ընդունած փաստաթղթում վավերագրված է` «ռազմական գործողությունները դադարեցնելուց հետո, ինչը նախաձեռնել է ՄԱԿ–ի անդամ պետությունների կոալիցիան, կասեցնելու համար Իրաքի ներխու-

ժումը Քուվեյթ և հաստատելով խաղաղություն, վերականգնելու անվտանգությունը տարածաշրջանում, Անվտանգության խորհուրդը 1991 թվականին հիմնեց UNIKOM–ը՝ իրականացնելու իր դիտորդական առաքելությունը Իրաք–Քուվեյթ սահմանի երկայնքով, ապառազմականացնելով այս գոտին, զսպելու, կանեցնելու սահմանի խախտումները և որևէ ռազմական գործողության դեպքում անհապաղ զեկուցելու պայմանով» [10]:

Ընդ որում կարևոր է նշել, որ ՄԱԿ–ի ընդունած փաստաթղթերի ուսումնասիրությունը հետաքրքիր նյութ է պարունակում նաև բնակչության սոցիալ–տնտեսական վիճակի մասին:

Այսպես, 1994 թվականին ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը առաջարկում էր չեղյալ հայտարարել 1993 թվականի մայիսի 27–ին ընդունած թիվ 833 բանաձևը՝ նկատի ունենալով առանձին քաղաքացիների և նրանց ունեցվածքի հետ կապված հանգամանքների մտահոգությամբ Իրաքի նախագահի 1994 թվականի փետրվարի 22–ի նամակը (S 1994/240): Խոսքը վերաբերում է Քուվեյթի տարածքում մնացած Իրաքի քաղաքացիներին և նրանց ունեցվածքի Իրաքի և Քուվեյթի միջև միջազգային նորմերով ընդունված սահմանաբաժանմանը:

Կողմերը համաձայնության եկան փոխհատուցումների վճարումը իրականացնել Իրաքի նախագահի 1994 թվականի փետրվարի 22–ի նամակում նշված սկզբունքների հիման վրա, այսինքն՝ դրամական փոխանցումները կարող են ուղարկվել առանձին քաղաքացիների, ովքեր գտնվում են Իրաքում: Դա համապատասխանում է ՄԱԿ–ի կանոնադրության VII գլխի դրույթներին[11]:

Միաժամանակ, պահանջվում էր եռ կանչել Իրաքի զորամիավորումները, որոնք տեղակայված էին Իրաքի հարավային հատվածում Քուվեյթի հետ ունեցած սահմանի ուղղությամբ[12]:

1994 թվականի հոկտեմբերի 15–ին, 3438 նիստի արձանագրության համաձայն, ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը անդրադառնում է մի շարք, նախկինում ընդունված բանաձևերի՝ 78 (1990) 29 նոյեմբերի 1990, 686 (1991) 2 մարտի 1991, 687 (1991), 3 ապրիլի 1991, 689 (1991) 9 ապրիլի 1991, 833 (1993) 27 մայիսի 1993 և հատկապես 678 (1990) § 2, դրանք

ճանաչելով ուժը կորցրած: Այս որոշումների և բանաձևերի խումբը մեկ անգամ ևս հաստատում է տարածաշրջանում խաղաղության գործընթացի ողջ բարդությունն ու հետևողականությունը ՄԱԿ–ի գործողություններում, որպես աշխատատար շարունակություն մեկ ընդհանուր շղթայի օղակներում: Որոշվում է ուշադրություն դարձնել սեփական զորքերը ընդդեմ իր հարևանների օգտագործելու Իրաքի սպառնալիքներին և պահանջներին: Պաշտոնապես ճանաչել, որ Իրաքի կողմից որևէ ռազմական կամ պրովոկացիոն ակցիա ընդդեմ իր հարևանների սպառնալիք է ներկայացնում տարածաշրջանում խաղաղությանն ու անվտանգությանը:

Անվտանգության խորհուրդը ողջունում է ստեղծված ճգնաժամից դուրս գալու ուղղությամբ բոլոր դիվանագիտական և կողմնակի այլ ջանքերը: Որոշվում է Իրաքին ետ պահել իր հարևանների և Միացյալ ազգերի կազմակերպության նկատմամբ սպառնալիքների և պիարեկշության դեպքում: Ընդգծվեց, որ Իրաքը պետք է սույն որոշումը ընդունի ողջ պատասխանատվությամբ և ամբողջապես, նկատի ունենալով լուրջ հետևությունները, որի բացակայության դեպքում կիրականացվեն սույն բանաձևի պահանջները:

Ընդունել ի գիտություն, որ Իրաքը կհայտնի իր պատրաստակամությունը դրական կերպով լուծելու վիճելի հարցերը, կճանաչի Քուվեյթի սուվերենությունը և նրա սահմանները՝ ի հաստատումն 833 (1993) բանաձևի, ընդգծելով, որ Իրաքը պետք է որոշակիորեն վստահություն ներշնչի լիակատար և պաշտոնական սահմանադրական կարգի համաձայն, հարգելով Քուվեյթի անկախությունն ու սահմանները, ինչը պահանջում են 687 (1991) և 833 (1993) բանաձևերը[13]:

Որոշվեց նաև վերահաստատել ՄԱԿ–ի անդամ բոլոր պետությունների պարտավորությունը Քուվեյթի և Իրաքի սուվերենության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության հանդեպ:

Վերահաստատվեց այդ հայտարարությունը՝ 1994 թվականի հոկտեմբերի 8–ին (S /1994/ PRST / 158) [14]:

Անվտանգության խորհուրդը ուշադրություն է դարձրել Քուվեյթի մշտական ներկայացուցչի 1994 թվականի հոկտեմբերի 6–ի (S/ 1994/ 1137) նամակին, որով ծանուցվում էր Իրաքի զինվորական հեղափոխական խորհրդի 1994 թվականի հոկտեմբերի 6–ի հայտարարության մասին:

Որոշվում է նոտա հղել նաև Իրաքի մշտական ներկայացուցչություն 1994 թվականի հոկտեմբերի 10–ի նամակի կապակցությամբ (S /1994/ 1149), ուր հայտնվում է, որ Իրաքի կառավարությունը որոշել է ետ քաշել զորքերը, որոնք վերջերս տեղակայվել էին Քուվեյթի հետ սահմանի ուղղությամբ[15]:

Միացյալ ազգերի կազմակերպության կանոնադրության 7–րդ գլխի դրույթների համաձայն, ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը որոշում է.

1. Դատապարտել Իրաքի ռազմական ներկայությունը Քուվեյթի սահմանի ուղղությամբ:

2. Պահանջել, որ Իրաքը անհապաղ ավարտի բոլոր զորամիավորումների դուրսբերումը Իրաքի հարավից, վերադարձնելով իրենց նախնական դիրքերը:

3. Պահանջվում է, որ Իրաքը դարձյալ չօգտագործի իր ռազմական կամ այլ ուժեր թշնամական կամ պրովոկացիոն նպատակներով սպառնալու իր այս կամ այն հարևանին կամ Իրաքում Միացյալ ազգերի կազմակերպության գործողություններին:

4. Պահանջվում է հետևապես, որ Իրաքը իր զորամիավորումները չչարժի դեպի հարավ, համաձայն վերը նշված § 2–ի, իրականացնելու համար որևէ գործողություն, ինչը կավելացնի իր ռազմական գերակայությունը երկրի հարավում:

5. Պահանջվում է, որ Իրաքը համագործակցի ամբողջապես Միացյալ ազգերի կազմակերպության հատուկ հանձնաժողովների հետ:

6. Որոշվում է այս խնդրում ցուցաբերել ակտիվություն[16]:

1994 թվականի հունվարի 18–ին, համաձայն 687 (1991) բանաձևի § 21–ի, ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի անդամները անցկացրին ոչ պաշտոնական խորհրդակցություն: Բոլոր

ներկաների կարծիքները լսելուց հետո խորհրդի նախագահը եկավ այն եզրակացության, որ չկա համաձայնություն, ինչը անհրաժեշտ պայմաններ կստեղծի վերափոխելու սանկցիաների ռեժիմը[17]:

Իրաքի կողմից Քուվեյթի սուվերենության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության, ինչպես նաև միջազգային սահմանի ճանաչման հարցերը լսվեցին նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 16-ի 3459 նիստում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահը Իրաքի արտգործնախարարի կողմից, 12 նոյեմբերի 1994*, ստանում է Իրաքի հեղափոխական խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 200 որոշումը՝ նախագահ Սադամ Հուսեյնի ստորագրությամբ: Դա Իրաքի Ազգային ժողովի կողմից նոյեմբերի 10-ին ընդունված դեկլարացիան էր, որը հաստատում էր Իրաքի դիրքորոշումը Քուվեյթի պետության անկախության, տարածքային ամբողջականության, Իրաքի հանրապետության և Քուվեյթի պետության միջև միջազգային սահմանների մասին ընդունված Միացյալ ազգերի կազմակերպության, Իրաք-Քուվեյթ սահմանի դեմարկացիոն հանձնախմբի կողմից՝ համաձայն Անվտանգության խորհրդի բանաձևի՝ 833 (1993):

Անվտանգության խորհուրդը ողջունեց այս զարգացումը, որի մասին նրա նախագահը գրավոր տեղյակ պահեց Իրաքի մշտական ներկայացուցչությանը (1994 թ. 16 նոյեմբերի, (S /1994 / 1297):

Անվտանգության խորհուրդը նշել էր, որ Իրաքի այս որոշումը դիտվում է նշանակալի քայլ և ներդրում՝ ուղղված Անվտանգության խորհրդի բանաձևերի կատարմանը:

Վերը նշված նամակում Անվտանգության խորհրդի նախագահը տեղեկացնում է Իրաքի կառավարությանը, որ Ան-

---

* Դրա նմանօրինակ հաղորդագրությունը հասցեագրված էր գլխավոր քարտուղարին, խնդրանքով որ այն շրջանառության մեջ դրվի որպես անվտանգության խորհրդի փաստաթուղթ և շրջանառության մեջ է՝ S (1994) 1288 նշանով[18]:

վտանգության խորհրդի անդամները կհետևեն Իրաքի այդ քայլերի իրականացմանը և դրանց արդյունավետությանը: Նրանք կշարունակեն հսկողության տակ պահել Իրաքի գործողությունները՝ համապատասխան Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերի:

Իրաքին վերաբերող ՄԱԿ-ի ընդունած սանկցիաների շարքում կարևոր են իրաքյան նավթի և նավթամթերքների արտահանմանը վերաբերող որոշումները: Այս հարցը ուղղակիորեն կապված է ազգաբնակչության կենսամակարդակի, երկրի տնտեսության վիճակի հետ:

Համաձայն 1995 թվականի ապրիլի 14-ի նիստի 3519 արձանագրության, Իրաքի նավթի և նավթամթերքների արտահանման հարցը միաձայն ընդունվեց հետևյալ բովանդակությամբ.

Անվտանգության խորհուրդը լրջորեն մտահոգված լինելով Իրաքի ազգաբնակչության սննդի և առողջապահական հարցերի ներկա իրավիճակով և ապագայի էլ ավելի վատթարացման հեռանկարով, համոզված է և անհրաժեշտ է համարում, որպես հումանիտար օգնության ժամանակավոր գործոն նախաձեռնել և իրականացնել մի շարք միջոցառումներ:

Կարգադրված էր ճևավորել պարտավորություններ բոլոր անդամ պետությունների կողմից, հստակեցնելով Իրաքի սուվերենությունը և տարածքային ամբողջականությունը ընդունած երկրների մասնակցությունը:

Համաձայն Միացյալ ազգերի կանոնադրության VII գլխի որոշվեց՝

1. Թույլատրել պետություններին, չնայած 3 (ա), 3 (բ) և 4, 661 (1990) բանաձևի և դրան հաջորդող բանաձևերի, որոնք արգելում են նավթի և նավթամթերքների արտահանումը, թույլ տալ արտահանել իրաքյան նավթ և նավթամթերքներ, ներառելով ֆինանսական և այլ կարևոր բաղադրամասեր կազմող գործընթացները, որոնք ուղղակիորեն կապված են արտահանման հետ: Դրանից բացի արտահանման արժեքը չպետք է

գերազանցի մեկ միլիոն (հազար միլիոն) ամերիկյան դոլարին, յուրաքանչյուր 90 օրվա ընթացքում[19]:

Այդ նպատակի իրականացման համար նավթն ու նավթամթերքները վաճառքի հանել ըստ հետևյալ պայմանների՝

ա) հանձնախումբը հավանություն է տալիս 661 (1990) բանաձևի համաձայն ապահովագրել հստակ յուրաքանչյուր գործարք: Ըստ այս բանաձևի՝ նրա դրույթները և պայմանները ընդունելուց հետո, դիմումը կամ հայտարարությունը հաստատվում է Իրաքի կառավարության կողմից:

Իրաքյան նավթ և նավթամթերք գնելու մասին յուրաքանչյուր առաջարկություն պետք է արտահայտի ընդարձակ տեղեկություն վաճառքի գնի մասին՝ շուկայական հավաստի արժեքը, ինչպես նաև արտահանման վայրը, բաց նամակով՝ ապառիկ վճարողունակությունը, քանակը, հաշվետվությունը՝ հաստատված նախագահի կողմից, կցելով բանաձևի իրականացման նպատակի և այլ, գործին ուղղակի վերաբերող ֆինանսական կամ այլ բաղադրյալ գործարքների ակտեր:

բ) Նավթի կամ նավթամթերքի յուրաքանչյուր վաճառքի դիմաց վճարումը լրիվ անմիջականորեն վաճառողից պետությանն է անցնում՝ հաշվետու լինելով գլխավոր քարտուղարի կողմից հաստատված փաստաթղթով (բանաձևի իրականացմանը օժանդակելու նպատակով)[20]:

Պարզ է, որ այս պայմանները նման էին ավազի մեջ մի քանի կաթիլ ջրի և չէին կարող բավարար հիմքեր ապահովել շարքային իրաքցու հոգսը թեթևացնելու հարցում:

ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ անցել են բավական բարդ ճանապարհ: Դրանք ժամանակավոր բնույթ էին կրում, քանի որ պայմանավորված էին քաղաքականության դրսևորումներով և հետագա զարգացումներով:

## THE SANCTIONS OF UNITED NATIONS AGAINST IRAQ

Among The Significant Social–Political Factors Of Regional Importance Was The Problem Of The Peace.

The article deals with the analyses of the social–political consequences of the Iran–Iraqi war and the Iraq–Kuwait conflict (recognition of Kuwait's sovereignty).

It includes the examination of resolutions and Statements of Security Council of United Nations, concerning the economic sanctions against Iraq and its results.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Великобритания представляет план по ослаблению режима санкций в отношении Багдада. "Независимая газета", 18. V. 2001, стр. 6,
2. Նույն տեղում:
3. "Независимая газета", 7. VI. 2001, ïз 6:
4. Նույն տեղում, 18. V. 2001, էջ 6:
5. "Известия" 21. IV. 2001, стр. 7.
6. Տե՛ս Կարինե Սամվելյան, Իրանա–իրաքյան պատերազմի հետևանքները Իրաքի սոցիալ–տնտեսական վիճակի վրա պատերազմի առաջին տարիներին (1980–1984), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVI, Երևան, 1996, էջ 66–74; Կարինե Սամվելյան, Իրանա–իրաքյան պատերազմի հասարակական–քաղաքական արծագանքները, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVIII, Երևան, 1999, էջ 55–65:
7. "Известия", 21. IV. 2001, стр. 7.
8. Նույն տեղում:
9. United Nations peacekeeping – 50 years. Published by the United Nations Department of Public Information DPI / 1999–98–93337– September 1998–5 M).
10. Նույն տեղում:

11. Press Release, Security Council, Resolutions and Statements of the Security Council, 1994, էջ 12.
12. Նույն տեղում, էջ 97:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում, էջ 98:
17. Նույն տեղում, էջ 138:
18. Նույն տեղում, էջ 192:
19. Press Release Security Council, Resolutions and Statements of the Security Council, 1995, էջ 25.
20. Նույն տեղում:

# ՄԱԿ-ը ԵՎ ԻՐԱՔԻ ԴԵՄ ԱՄՆ-Ի ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած Իրաքին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1991թ. մինչև 2003 թ. ընկած ժամանակահատվածին բնորոշ է խաղաղության հաստատման, տարածաշրջանում անվտանգության ապահովման հետևողական առաջելությունը:

1991 թ. ստեղծված UNIKOM-ը* ՄԱԿ-ի շրջանակում իր դիտորդական գործունեությամբ բավարար հիմք հանդիսացավ համապատասխան սանկցիաների ընդունման համար: ՄԱԿ-ի 2000թ. ընդունած որոշումները աչքի են ընկնում ծրագրերի ժամկետների երկարաձգմամբ[1]:

1980-1988թթ. իրանա-իրաքյան պատերազմը, 1990թ. օգոստոսին Իրաքի ներխուժումը Քուվեյթ թելադրում էին համապատասխան քայլեր ուղղված Իրաքի տնտեսության դեմ: Այդ սանկցիաների նպատակը Իրաքին հետագա ռազմական գործողություններից ետ պահելն էր, ինչպես նաև որոշակի ուժային հավասարակշռության ապահովումը տարածաշրջանում:

Հատկապես բնութագրական է տնտեսական գործոնի կարևորումը այդ ժամանակահատվածում: Նավթի և Նավթամթերքների վաճառքին թելադրվող պայմանները, «նավթ պարենի դիմաց» ծրագիրը, Իրաքի արտաքին քաղաքականության դրսևորումներին ի պատասխան, ՄԱԿ-ի գործունեության շարունակական մասն էին կազմում[2]:

ՄԱԿ-ի անունից գործող սոցիալական և տնտեսական բնագավառի տարածաշրջանային հանձնաժողովներից Արևմտյան Ասիայի գործերով հանձնաժողովի կենտրոնը, մինչև 2003թ. պատերազմական իրադարձությունները, գտնվում էր Բաղդադում[3]:

Չպետք է անտեսել, որ Իրաքի տնտեսությունը լրջորեն տուժել էր նախ իրանա-իրաքյան պատերազմից: Խարխլված

տնտեսությունը վերականգնելը պահանջում էր առնվազն 230 մլրդ ԱՄՆ դոլար: Անգամ եթե յուրաքանչյուր դոլարը հատկացվեր տնտեսության վերակառուցմանը, վերականգնողական աշխատանքների նպատակին, դարձյալ կպահանջվեր գրեթե երկու տասնամյակ: Արդեն իրանա-իրաքյան պատերազմական գործողությունների ավարտից մեկ տարի անց Իրաքի նավթից ստացված 18 մլրդ դոլար շահույթը բավարար չէր անգամ ընթացիկ ծախսերը հոգալու համար: Քաղաքացիական ոլորտի ներմուծման ծախսերը 12 մլրդ դոլարի շրջանակում էին, որից 3 մլրդ դոլարը հատկացվում էր սննդամթերքին, իսկ ռազմական նպատակով ներմուծվող ապրանքների արժեքը գերազանցում էր 5 մլրդ դոլարը: Ավելացնենք, որ Իրաքի պարտքը, որը անհրաժեշտ էր վերադարձնել, կազմում էր 5 մլրդ դոլար: Արտասահմանյան բանվորներին հատկացումները հասնում էին 1 մլրդ դոլարի: Սադամ Հուսեյնի վարչակարգին տարեկան անհրաժեշտ էր ևս 10 մլրդ դոլար, ընթացիկ դեֆիցիտը հավասարակշռելու համար[4]:

Քուվեյթ ներխուժման առանցքում նույնպես գլխավոր նպատակը տնտեսական շարժառիթն էր:

Հայտնի է, որ OPEC-ի որոշ անդամներ, հատկապես Քուվեյթը և Արաբական Միացյալ էմիրությունները, շարունակում էին զգալի կերպով բարձրացնել իրենց քվոտաները, դրանով իջեցնելով նավթի համաշխարհային ընդունված գները[5]:

Այդ իրավիճակի և Իրաքի անհանգստությունների ապացույցն է նաև այն, որ 1990թ. փետրվարին Քուվեյթ կատարած աշխատանքային այցելության ժամանակ Իրաքի նավթային արդյունաբերության նախարար Իսամ Աբդել Ռահիմ ալ Հալաբին փորձում էր համոզել հաշվի առնել տարվա սկզբին OPEC-ի սահմանած նավթային նոր քվոտաները: Այդ նույն առաքելությամբ նա այցելեց նաև ար-Ռիադ: Իսկ ժնևում 3 ամիս անց, նա կարևորում էր ընդունված օրական 22 մլն բարելի սահմանը պահպանելը և ջանում համոզել նավթի գինը բարձրացնել մինչև 18 ԱՄՆ դոլար, մեկ բարելի դիմաց[6]: Դրա հաստատումն է այն փաստը, որ արդեն Իրաքի հանդեպ պատժամիջոցների ընդունումից հետո ՄԱԿ-ի անդամ

պետություններից մի քանիսը, այդ թվում Ֆրանսիան և Ռուսաստանը, հանդես էին գալիս այդ սանկցիաների մեղմացման օգտին: Սակայն որոշ վերլուծաբանների կարծիքով, ԱՄՆ-ը սանկցիաների հարցում այն տեսակետին էր, որ Իրաքի վերադարձը նավթային շուկա բացասաբար կանդրադառնար Սաուդյան Արաբիայի շահերին: Վերջինիս տնտեսությունը լրջորեն տուժել էր Իրաքի դեմ ռազմական գործողությունների նպատակով 55 մլրդ դոլար տրամադրելու պատճառով[7]:

Մինչ Իրաքի վարչակարգը զբաղված էր իր երկրի վրա ծանրացած տնտեսական պատժամիջոցների պայմաններում տեղավորվել ստեղծված իրադրության մեջ, գլխավոր շեշտը դնելով ներմուծվող և արտահանվող ապրանքների շրջանակը հնարավորինս լայնացնելու վրա, սաստկացավ ճակատագրական մեղադրանքը ԱՄՆ-ի կողմից, այն է՝ մարդկությանը սպառնացող զանգվածային բնաջնջման զենքերի արտադրությունը Իրաքին հասցեագրելը: Այս առումով ուշադրության արժանի փաստաթուղթ է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1999թ. դեկտեմբերի 17-ի թիվ 4084 որոշումը[8], համաձայն որի ստեղծվեց նոր հանձնաժողով: 39 կետերից բաղկացած այս փաստաթուղթն ընդունվեց միաձայն, ձեռնպահ մնացին Չինաստանը, Ֆրանսիան, Մալազիան, Ռուսաստանի Դաշնությունը:

Այս նպատակով հետագայում ստեղծվեցին նոր հանձնախմբեր, և մարդկության առջև Իրաքը ներկայացվեց որպես հույժ կասկածելի և վտանգավոր երկիր, քանի որ խոսքը վերաբերում էր զանգվածային բնաջնջման երևակայական զինապահեստներին և այլն: ՄԱԿ-ի տեսուչների հետ Իրաքի վարչակարգի աշխատանքը ցավոտ և երկարաժամկետ բանակցությունների շղթա է: Այն այդպես էլ իր ավարտին չհասավ:

Եվ քանի որ, հատկապես ԱՄՆ-ի կողմից գնալով ահագնանում էր Իրաքի դեմ ռազմական գործողությունների վտանգը, լարված պայմաններում հայտնվեց նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում՝ 2002թ. սեպտեմբերի 12-ի իր ելույթում հատուկ ընդգծեց, որ միայն ՄԱԿ-ը կարող է որոշում ընդունել Իրաքի դեմ ռազմական ուժ գործադրելու վերաբեր-

յալ: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը ՄԱԿ-ի ամբիոնից խոսում էր անգամ իր երկրի ինքնապաշտպանության մասին, և խնդիրը տեղափոխվեց բոլորովին այլ դաշտ՝ ամերիկա-իրաքյան ռազմական կոնֆլիկտի հասունացման հեռանկարով: Քոֆի Անանը, հավատարիմ մնալով ՄԱԿ-ի կանոնադրությանը, պնդում էր, որ «Միջազգային խաղաղությանը և անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում ոչինչ չի կարող փոխարինել ՄԱԿ-ի որոշումների օրինականությանը»: Միաժամանակ նա ավելացրեց՝ «եթե որևէ երկիր հաճախ է դիմում միջազգային հաստատություններին, հարգելով ընդունված արժեքները և իր վրա վերցնելով համապատասխան պարտավորություններ, ապա մյուս երկրները նույնպես կվստահեն և կհարգեն նրան», քանի որ նույնիսկ ամենահզոր պետությունները «միջազգային կազմակերպություններում մյուս պետությունների հետ» պարտավոր են համագործակցել: Քոֆի Անանը բազմիցս պնդում էր, որ «Իրաքի խնդիրը լուծվելու է ՄԱԿ-ի կողմից...»[9], և իր աշխատանքը նպատակաուղղել էր, որպեսզի Իրաք վերադառնան ՄԱԿ-ի զինվորական տեսուչները, և աշխարհը համոզվի ներկայացված տվյալների հարցում: 1990թ. Իրաքի Քուվեյթ ներխուժումից հետո ընկած ժամանակահատվածում ՄԱԿ-ը հետևողական կերպով իրականացնում էր Իրաքի վրա ռազմական վերահսկողությունը հանձնախմբերի միջոցով:

Սակայն ՄԱԿ-ի նշված ժողովից ընդամենը երեք օր անց, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմական օդանավերը հերթական անգամ ռմբակոծեցին Իրաքի հարավը: «Տեղական ժամանակով 9:35-ին ամերիկյան և բրիտանական օդանավերը խախտեցին մեր օդային տարածքը: Քուվեյթում տեղաբաշխված ռազմակայաններից նրանք 38 թռիչք կատարեցին»,– հայտարարեց Իրաքի զինված ուժերի մամլո քարտուղարը երկրի պաշտոնական լրատվական գործակալության թղթակցին, նշելով, որ «Դխիջարի մարզում ռմբակոծվել են քաղաքացիական և ռազմական շինություններ»:

Ֆլորիդայի նահանգի Տամպա քաղաքում ԱՄՆ-ի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը հաստատեց այդ

տեղեկությունները, ավելացնելով, թե օդային գրոհները «Իրաքի վերջին գործողությունների պատասխանն են»: Թե ինչ «գործողություններ» էին վերագրվում Իրաքին, այդպես էլ հայտնի չդարձավ, քանի որ այդ շրջանում, հիմնականում, ՄԱԿ-ի զինվորական տեսուչներին Իրաք թողնել-չթողնելու մասին խաղաղ բանակցություններ էին տարվում Իրաքի վարչակարգի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջև: Ըստ Ռոյթեր գործակալության, ամերիկա-բրիտանական ռազմաօդանավերը ճշգրիտ նշանակության զենք են օգտագործել Բաղդադից 260 կմ հարավ ընկած Թալիլ քաղաքի հակաօդային պաշտպանության կայանների դեմ[10]:

Այս կարգի ռազմական գրոհները Իրաքի վրա ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից՝ հատկապես Մեծ Բրիտանիայի աջակցությամբ, գնալով համախակի բնույթ էին կրում, իսկ սեփական վարչակարգից Իրաքն «ազատագրելու» կոչերը լրագրողներից վեր էին ածվում շրջադարձային գործողությունների: Աշխարհի շատ երկրներում, այդ թվում հենց ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում տեղի ունեցող լայնածավալ բողոքի ցույցերն ու ընդվզումներն ի զորու չեղան կասեցնելու նրանց ռազմական ծրագրեր իրականացնել Իրաքում:

2003թ. մարտի 20-ին Մոսկվայի ժամանակով առավոտյան ժամը 4-ին լրացավ ԱՄՆ-ի կողմից Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնին առաջադրված վերջնագրի ժամկետը: Ամերիկյան կողմը սանձազերծվող պատերազմը որակեց «Ազատություն Իրաքին» նշանաբանով: Դրա նախօրեին, 2003թ. մարտի 19-ին, գիշերը Նյու Յորքում կայացավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստը: Միջազգային հանրությունը ջանում էր ամեն գնով կասեցնել սպասվող պատերազմը Իրաքում և ետ պահել Բուշին իր որոշումից: ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի հինգերորդ նավատորմի հրամանատար Թիմոթի Քիթինգի համոզմամբ «ազատությունն» Իրաքում կբևածի «երկու օրվա ընթացքում»[11]:

Այդ առիթով ուշագրավ է ֆրանսիական ազդեցիկ շաբաթաթերթ «L'Express» 2003թ. մարտի 20-ի համարում տպագրված «Խաղաղության ամերիկյան տարբերակը անհանգըս-

տացնում է Արևելքին» հոդվածը, որի հեղինակն է մեկնաբան Վինսեն Գյուժոն[12]: Ֆրանսիացի մեկնաբանը այն կարծիքին է, որ Վաշինգտոնի փորձերը՝ տարածաշրջանի երկրներին պարտադրել արևմտյան տարբերակի դեմոկրատիա, որպեսզի իշխանության գան ԱՄՆ-ի նկատմամբ լոյալ քաղաքական ուժեր, հազիվ թե հաջողվեն: «Ազատ և արդար» ընտրությունների արդյունքում իշխանությունը կարող է հայտնվել իսլամական կուսակցությունների ձեռքում: Այդ պատճառով էլ ամերիկացիները մինչև այժմ միշտ նախընտրում էին գործ ունենալ, ավելի շուտ, լուսավորված բռնակալների հետ, քան ռիսկային խաղեր խաղալ ընտրությունների հետ»[13]:

Միաժամանակ նշվում է հերթական հարվածների ենթակա երկրների ցանկը՝ «Պատերազմն Իրաքում դեմոկրատիա հաստատելու ընդամենը երկրորդ փուլն է արաբա-մահմեդական աշխարհում ԱՄՆ-ի լայնածավալ ծրագրերում: Առաջինը իրականացվեց Ավղանստանում, հետո հերթը կհասնի Իրանին, ևս մեկ երկրի, որը մտնում է «չարիքի առանցքի մեջ»: Դրանից հետո կհետևեն՝ Սաուդյան Արաբիան, Սիրիան և Պաղեստինյան ինքնավարությունը»[14]:

Իրաքի դեմ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից պատերազմի հենց առաջին օրը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը ելույթ ունենալով իր երկրի ուժային նախարարների առջև, դատապարտեց այդ պատերազմը, այն որակելով որպես «քաղաքական մեծ սխալ»: Այդ ելույթում նշվեց, որ անպատասխան մնաց այն «կարևոր հարցը» թե արդյո՞ք Իրաքը ունի զանգվածային բնաջնջման զենքեր, եթե այո, ապա ինչ միջոցների օգնությամբ և ինչ ժամկետներում պետք է դրանք վնասազերծել: «Իրաքը մինչև պատերազմը վտանգ չէր ներկայացնում ո՛չ իր հարևանների և ո՛չ էլ տարածաշրջանի համար»,– նշեց Պուտինը, ավելացնելով, որ տասնամյա տնտեսական էմբարգոյի հետևանքով, Իրաքը ռազմական և տնտեսական տեսանկյուններից թույլ է, և քանի որ փորձագետները հաջողությամբ աշխատեցին, վտանգը ավելի նվազեց:

Չի կարելի թույլ տալ, «Որ միջազգային իրավունքի փոխարեն բռունցքի իրավունքը գործի, համաձայն որի ուժեղը միշտ իրավացի է և կարող է անել ամեն ինչ, իր միջոցները ընտրելիս չընդունելով որևէ սահմանափակումներ»[15]:

Ռուսաստանի Դաշնության նախագահի մամլո ծառայության, այդ առիթով տարածած հայտարարության մեջ ասվում է, որ Պուտինը Բուշին հայտնեց նաև իր տեսակետը, որ «Միացյալ ազգերի կազմակերպությունը և Անվտանգության խորհուրդը ցանկացած իրադրության դեպքում պետք է խաղան գլխավոր դերը՝ Երկրագնդի վրա խաղաղության պահպանման և կայունության գործում»[16]:

Այդ առումով բազմիցս հիշատակվում էր ՄԱԿ-ի Խարտիան և միջազգային իրավունքը, որոնց նորմերի հետ խորը հակասության մեջ էր ԱՄՆ-ի վարած քաղաքականությունն Իրաքում:

Ընդ որում, նման մտահոգություններով հոդվածներ տպագրեցին նաև Գերմանիայում հրատարակվող "Frankfurter Allgemeine Zeitung" և "Die Weit" պարբերականները:

ՄԱԿ-ի կանոնադրությունը արգելում է ուժի սպառնալիքը կամ նրա կիրառումը ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այդպես էլ այլ դրսևորումները, համարելով անհամատեղելի ՄԱԿ-ի նպատակների հետ (կետ 4, հոդված 2)[17]:

Դրանով ամրացված է պետությունների տարածքային անձեռնմխելիության սկզբունքը, ինչը կարևոր նշանակություն ունի: Առաջին՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը վերջնականապես և անշրջելիորեն արգելում է ուժի կիրառումը տարածքային անձեռնմխելիության դեմ: Երկրորդ՝ կանոնադրությունը հանդիսանում է ամենաբազմակողմ միջազգային պայմանագիրը և համապատասխանաբար ամրացված է տարածքային անձեռնմխելիության սկզբունքը որպես միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունք բոլոր պետությունների համար[18]:

Ուրեմն, ինչպե՞ս բացատրել, հենց միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարումը, որի ականատեսը դար-

ձավ մարդկությունը 2003թ. մարտ-ապրիլ ամիսներին, ի դեմս ԱՄՆ-ի սանձազերծած պատերազմի Իրաքի դեմ:

«Կարևոր փաստաթուղթ հետպատերազմյան Իրաքի վերակազմավորման և ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ» վերնագրով հոդվածի հեղինակն է պրոֆ. Նիկոլայ Յովհաննիսյանը[19]: Դա «Իրաքում ԱՄՆ-ի հետկոնֆլիկտյան քաղաքականության ղեկավար սկզբունքները» փաստաթուղթն է, որը համատեղ նախապատրաստել են ԱՄՆ-ի Ջեյմս Բեյքերի քաղաքականության ինստիտուտը և Արտաքին քաղաքականության խորհուրդը, և որը դրվել է պրեզիդենտ Ջորջ Բուշ կրտսերի սեղանի վրա:

Յոդվածագիրը հիշեցնում է, որ Ջեյմս Բեյքերն ԱՄՆ-ի պետական քարտուղարն էր 1988-1992թթ., Ջորջ Բուշ ավագի նախագահության շրջանում: Այդ ինստիտուտը ԱՄՆ-ի կարևոր և հեղինակավոր ուղեղային կենտրոններից մեկն է, որի տնօրենն է Էդվարդ Ջերեջյանը: Յոդվածում նշված է՝ «Փաստաթղթի ծանոթությունը և առանձին հատվածների վերլուծությունը ցույց են տալիս, որ դա ընդգրկում է անվտանգության, Իրաքի վերակառուցման և կառավարման, տնտեսության վերականգման և մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի առանցքային հիմնախնդիրները, որոնց կիրառումը Բուշի կառավարության կողմից պետք է նոր իրադրություն ստեղծի ինչպես Իրաքում, այնպես էլ տարածաշրջանում, իսկ ավելի լայն առումով՝ աշխարհում»[20]:

Յետաքրքիր փաստ է, որ ամերիկա-իրաքյան հարաբերությունների հետագա ընթացքը հաստատում է վերը նշված փաստաթղթի որոշ հանգուցային սկզբունքների իրականին մոտ լինելը: Յոդվածում նշված է՝ «Նախատեսվում է Իրաքի պատերազմից անմիջապես հետո կամ անցման առաջին շրջանում ստեղծել արտակարգ՝ անցումային կառավարություն, որը պետք է ունենա իրաքցի խորհրդականներ: Անցումային երկրորդ փուլում պետք է կազմավորվի միջազգայնորեն և ՄԱԿ-ի կողմից վերահսկվող Իրաքի կառավարություն, իսկ երրորդ՝ ավարտական փուլում պետք է ստեղծվի ինքնիշխան Իրաքի կառավարություն»[21]:

Իրաքյան վարչակարգի տապալումն Իրաքում վերջակետ չի կարող դնել ամերիկա-իրաքյան կոնֆլիկտին: Վերը նշված փաստաթղթի կետերը հաջորդաբար ի հայտ են գալիս:

2003թ. ապրիլի 15-ին Ուր քաղաքի մոտակայքում, որը համարվում է բիբլիական Աբրահամի ծննդավայրը, տեղի ունեցավ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների նշանաբանով հավաք: Իսկ դրա նախօրեին ԱՄՆ-ի պետքարտուղար Քոլին Փաուելը հայտարարեց, որ նավթը կծառայի Իրաքի ժողովրդին և նրա սեփական բարօրությանը: Մոտավորապես 58 երկրներ արդեն ցանկություն են հայտնել մասնակցելու Իրաքի վերականգնման ու վերակառուցման աշխատանքներին: Միաժամանակ նշվեց, որ ԱՄՆ-ը ձգտում է համագործակցել նաև ՄԱԿ-ի հետ[22]:

Եվրամիության Իրաքում գործող հումանիտար առաքելության ղեկավար Պոլ Նելսոնը 2003թ. մայիսին հայտարարեց, որ այդ երկրին տրվող հումանիտար օգնությունը պետք է գտնվի ՄԱԿ-ի հսկողության ներքո, այլ ոչ թե ԱՄՆ-ի: Նա, ավարտելով իր երկօրյա այցը Իրաք, քննարկեց հումանիտար օգնության առաքման այն հնարավորությունները, որոնց միջոցով կարելի կլինի շրջանցել ամերիկյան գործակալությունները: Նրա այցելության ծրագրում բոլորովին տեղ չէր գտել Իրաքում ԱՄՆ-ի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի հետ բանակցություններ վարելու հնարավորությունը: Եվրամիությունը ծրագրում է Բաղդադում մոտ ժամանակներս բացել հումանիտար առաքելության բաժանմունքը, որը հիմնականում կզբաղվի առողջապահության և ջրի սանիտարական մաքրության հարցերով[23]:

Ուշագրավ են նաև կադրային փոփոխությունները Բաղդադում, Իրաքի ամերիկյան ժամանակավոր վարչակազմում, որոնք կատարում էր Բուշը: Ամերիկյան զանգվածային լրատվամիջոցները հաղորդեցին, որ Վաշինգտոն է վերադարձել Բաղդադի «քաղաքապետ», հայտնի դիվանագետ Բարբարա Բոդինը: Մայիսի 12-ին Բաղդադ էր ժամանել Իրաքում ԱՄՆ-ի ժամանակավոր վարչակազմի նոր ղեկավար Փոլ Բրեմերը, որը փոխարինելու էր նորանշանակ կառավարիչ, գեներալ Ջեյ Գարներին: Այս պաշտոնափոխությունների պատճառը Իրաքում

տիրող իրադրության վատթարացումն էր: Բնականոն կյանքը չի վերականգնվել: Մերթ ընդ մերթ տեղի են ունենում փոխհրաձգություններ: Մայրաքաղաքի էլեկտրամատակարարումը կվերականգնվի 2 ամսից ոչ շուտ: Նոր վարչակազմի աշխատանքը ընդամենը երեք շաբաթվա կենսագրություն ունի, սակայն արդեն տեղեկացնում են, որ Բաղդադից հեռանալու են «տեղեկատվության նախարար» Մարգարետ Թիթուայլերը, «արդյունաբերության և հանքային ռեսուրսների նախարար» Թիմ Քարնին, ինչպես նաև ժամանակավոր վարչակազմի երկու ներկայացուցիչներ՝ Դևիդ Դանֆորդը և Ջոն Լիմբերտը[24]:

Պատահականություն չէ, որ ԱՄՆ-ը զիջումներ է անում Իրաքի հարցում: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկմանն է դրվել Իրաքին վերաբերող բանաձևի նոր նախագիծ: ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Նեգրոպոնտեն Բիբիսիի թղթակցին հայտարարել է. «Մենք հնարավոր ամեն ինչ արեցինք, որպեսզի բանաձևի այս նախագծում առավելագույնս հաշվի առնվեն Անվ անդամ բոլոր երկրների արտահայտած ցանկությունները»: Նա ավելացրել է, որ տվյալ նախագիծը «վերջնական տարբերակ» է: Նոր նախագծով նաև առաջարկվում է 6 ամսով երկարաձգել ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը, մինչդեռ նախորդ տարբերակում նախատեսվում էր 4 ամսում այն աստիճանաբար կրճատել:

Փաստաթղթի նախորդ տարբերակում «օկուպացիոն ուժերի» ներկայության համար նախատեսված էր 12 ամիս, որը կարող է երկարաձգվել, եթե Անվ-ն այլ որոշում չկայացնի:

ԱՄՆ-ը նաև համաձայնվում է վերանայել ՄԱԿ-ի տեսուչների մանդատը: Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսաստանը պնդում են, որ միջազգային տեսուչները պաշտոնապես հաստատեն Իրաքի զինաթափումը՝ նախքան հակաիրաքյան պատժամիջոցների վերացումը:

Իրաքի պարտքերի հարցը նույնպես լուծում կստանա բազմակողմ այնպիսի կազմակերպությունների շրջանակում, որոնցից է վարկատուների Փարիզյան ակումբը[25]: Այս նոր նախագիծը ընդունվեց, սակայն սրանով բնավ չի ավարտվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի առաքելությունը և դերը

Իրաքի հասարակական-քաղաքական և տնտեսական բնագավառներում:

Բավական է նշել, որ Իրաքում 2003թ. մայիսի վերջին լուծարվել են պաշտպանության նախարարությունը, տեղեկատվության նախարարությունը, երկրի Ազգային գվարդիան: Իսկ ամերիկյան բանակը Իրաքում մտադիր է մնալ դեռևս, առնվազն, երկու տարի[26]:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում տեսչական խմբի ղեկավար Հանս Բլեքսը 2003թ. հունիսի 5-ին ներկայացրեց իր գլխավորած խմբի ստուգումների մասին վերջնական եզրակացությունը՝ «Երեքուկես ամիս տևած մեր ստուգումների արդյունքում չենք հայտնաբերել զանգվածային ոչնչացման որևէ զենք: ... Այսուհանդերձ, չի կարելի ասել, որ Իրաքում չկան նման զենքեր: Կան հարյուրավոր տեղամասեր, որոնք մեր կողմից դեռևս ստուգված չեն»[27]:

Իրաքում մարդու իրավունքների, երկրի կյանքում կանանց մասնակցության, երեխաների իրավունքների պաշտպանության, մերձակա շրջապատի բնապահպանության և այլ խնդիրների հետ մեկտեղ, ՄԱԿ-ը ստիպված է լինելու նաև որոշակի վերափոխումներ կատարել իր կազմակերպության ներսում, իրաքյան վերջին իրադարձություններից հետո: Իրաքյան ճգնաժամը, իրոք որ, թելադրում է, որոշակի բարեփոխություն ՄԱԿ-ի շրջանակում[28]: Հատկանշական է նաև, որ ՄԱԿ-ի դերի կայունացումը անհրաժեշտ է անդամ պետություններից յուրաքանչյուրին, այդ թվում նաև ԱՄՆ-ին:

**THE UNITED NATIONS AND THE PROBLEM OF MILITARY OPERATIONS BY THE USA AGAINST IRAQ.**

The article deals with the analyses of the role of United Nations in social-political and economic life of Iraq in period of 1991-2003 years.

It included the examination of resolutions and statements of Security Council of United Nations, concerning the economic sanctions against Iraq and its results.

Among the significant social-political and economic factors of regional importance is the role of United Nations in Iraq after the overthrow the regime of Saddam Hussein.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


- UNIKOM – United Nations Iraq Kuwait Observer Mission

1. Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 137-146:
2. Տես՝ Press Release Security Council, Resolutions and Statements of the Security Council, 1996; 1997; 1998.
3. Р.Дж.Фельтхэм, Настольная книга дипломата, пер. с англ. Минск, 2000, с. 104.
4. Робин Дж. Апдейк, "Саддам Хусейн", полит.биогр., Ростов на Дону, 1999, с. 365.
5. Նույն տեղում, էջ 372:
6. Նույն տեղում, էջ 373:
7. Նույն տեղում, էջ 504:
8. Press Release Security Council, Resolutions and Statements of the Security Council, 1999, p. 86-92.
9. «Ազգ», 13. IX. 2002, էջ 5:
10. Նույն տեղում, 17, IX, 2002, էջ 5:
11. "Известия", 20. III. 2003, с. 1.
12. Տես "Деловой экспресс", 22. III. 2003, с.8.
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում, էջ 9:
16. Նույն տեղում:
17. Курс Международного права, М., Наука, 1989, с. 105.
18. Նույն տեղում, էջ 106:

19. «Ազգ», 29 III, 2003; "Новое время" 19. IV. 2003.
20. Նույն տեղում, էջ 4:
21. Նույն տեղում:
22. "Известия", 29. IV. 2003, с. 4.
23. Նույն տեղում, 8. V. 2003, էջ 4:
24. «Ազգ», 13. V. 2003, էջ 5:
25. Նույն տեղում, 21. V. 2003, էջ 5:
26. "Известия", 24. V. 2003, с. 4.
27. «Ազգ», 6. VI. 2003, էջ 1:
28. "Известия", 14. V. 2003, էջ 4:

ԳԼՈՒԽ V

## ՄԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ (2003թ. ՄԱՐՏ – 2004թ. ՀՈՒՆԻՍ) ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Սույն վերնագրով աշխատությունը նպատակաճղված է շարունակելու «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարում տպագրված նախորդ երկու աշխատություններում[1] արտահայտված թեզերն ու զարգացումները:

Ուսումնասիրվող թեման ունի իր գիտական հետաքրքրությունը և միաժամանակ բարդությունները: Թեմայի կատարման ժամանակահատվածում Իրաքում տեղի ունեցան քաղաքական բուռն զարգացումներ՝ 2003թ. մարտին ԱՄՆ-ի կողմից Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնին ներկայացվեց վերջնագիր, ապա հաշված օրերի ընթացքում տապալվեց Իրաքի բաասական վարչակարգը, և երկրում ստեղծվեց բոլորովին նոր իրադրություն իր բոլոր հետևանքներով:

Վերադառնալով Իրաքում ՄԱԿ-ի գործունեությանը կարևոր է նշել, որ չնայած քաղաքական ալեբախումներին, հետագա զարգացումները գալիս են հաստատելու միջազգային այդ կարևոր կազմակերպության անհրաժեշտությունը[2]:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հրապարակած փաստաթղթերի ուսումնասիրությունը, Իրաքում ներքին իրավիճակը և ամենագլխավորը՝ ԱՄՆ-Իրաք հարաճուն լարված զարգացումները թելադրում էին առանց այն էլ ժամանակավոր սանկցիաների գնահատականը:

Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումը և ԱՄՆ-ի գերակայությունը Իրաքում փաստորեն ի զորու չեղան երկրում դեմոկրատիայի ջահեր վառել: Նշենք, որ Իրաքը այն յուրահատուկ երկրներից է, ուր ի սկզբանե բացակայել են դեմոկրատիայի ինստիտուտները: Այդպիսի ավանդույթներ Իրաքը երբեք չի ունեցել: Ուրեմն՝ միջազգային կազմակերպությունները, ներկա դեպքում ՄԱԿ-ը, կանգնած են լուրջ դժվարությունների առջև և միաժամանակ, իրոք, Իրաքն ունի նրա գործունեության

լայն և հիմնավոր անհրաժեշտություն: Սրանով է պայմանավորված մեր այն տեսակետը՝ որ «Իրաքում մարդու իրավունքների, երկրի կյանքում կանանց մասնակցության, երեխաների իրավունքների պաշտպանության, մերձակա շրջապատի բնապահպանության և այլ խնդիրների հետ մեկտեղ, ՄԱԿ-ը ստիպված է լինելու նաև որոշակի վերափոխումներ կատարել իր կազմակերպության ներսում, իրաքյան վերջին իրադարձություններից հետո: Իրաքյան ճգնաժամը իրոք որ, թելադրում է, որոշակի բարեփոխություն ՄԱԿ-ի շրջանակում: Հատկանշական է նաև, որ ՄԱԿ-ի դերի կայունացումը անհրաժեշտ է անդամ պետություններից յուրաքանչյուրին, այդ թվում նաև ԱՄՆ-ին»[3]:

ՄԱԿ-ի գործունեությունը Իրաքում սերտորեն փոխկապակցված է Իրաքի և միջազգային հանրության վերաբերմունքի ու նաև այդ կազմակերպության անդամ պետությունների վարած քաղաքականության հետ[4]:

Իրաքում ՄԱԿ-ի գործունեության խնդրում նույնպես ոչ պակաս կարևոր նշանակություն ունի հասարակական կարծիքի ձևավորումը, նրա ուշադրությունը, որից անմասն չէ նաև գիտական ոլորտը:

Իսրայելի և Մերձավոր Արևելքի ինստիտուտի ղեկավար, Ռուսաստանյան հրեական կոնգրեսի նախագահ Եվգենի Սատանովսկին համոզված է, որ «Մերձավոր Արևելքի դեմոկրատացումը հյուծախտ է»:

Նրա կանխատեսումը այն հարցի կապակցությամբ, թե արդյո՞ք ամերիկացիները Իրաքից ժամանակից շուտ կհեռանան, հետևյալն է՝ «եթե անգամ ամերիկացիները ետ նահանջեն, ապա՝ **նախապես կազմակերպված կանոնակարգով** (ընդգծումը՝ Կ.Ս.): Ամերիկացիները, ինչպես ինձ է թվում, մոտակա ապագայում Իրաքից չպետք է դուրս գան: Առաջինը՝ որովհետև դա կնշանակեր արաբական աշխարհի համար ռազմական գործողությունների անհապաղ փոխադրում ամերիկյան տարածքի վրա»[5]:

Որոշ պատմական զուգահեռներ անցկացնելով ԽՍՀՄ-ի Աֆղանստան մտնելու հետ, նա շարունակում է՝ «Ամերիկա-

ցիները մտան Իրաք այնպես, ինչպես որ մտան, և դա սխալ է: Նրանք այնտեղ բազմաթիվ սխալներ գործեցին: Բայց եթե նրանք այնտեղից գնան, իրավիճակը չհասցնելով կայունության որոշակի մակարդակի, դա կլինի խոշորագույն սխալ Ամերիկայի համար»:

Անդրադառնալով ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետագա վարկանիշին, նա նշում է՝ «Բանակի հեռացումը Իրաքից ընդունակ է գրոյի հավասարեցնել Բուշի վարկանիշն ավելի հավանական կերպով, քան մնացած ամեն ինչ»[6]:

Այսպիսով, քաղաքական տեսաբանը գտնում է, որ Վաշինգտոնի քաղաքականությունը այս հարցում տակտիկական քայլերի շարան է, որը տանում է ռազմավարական ձախողման[7]:

Եվգենի Սատանովսկու կարծիքով՝ «Պատերազմը կշարունակվի: Իրաքի կայունացումը կձգձգվի տասնամյակներով»[8]:

Ուշադրությունից չի վրիպում «նախապես կազմակերպված կանոնակարգ» արտահայտությունը, որը հաստատում է նախապես ծրագրավորված գործողությունների առկայությունը և փաստը:

2004թ. հունվարի 13-ից լրատվական տեղեկատվության ծառայության շրջանակում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պրեսռելիզը, ուր ամփոփված են 2003 թվականին գործունեության առանցքում ընդունված կարևոր որոշումներն ու դիմում-հայտարարությունները:

Հատկապես ուշագրավ է 2003թ. մարտի 28-ին միաձայն անցած Իրաքի «նավթ՝ պարենի դիմաց» ծրագրի կարգավորումներին վերաբերող որոշումը[9]: Հարցը նրանում է, որ շտապ կերպով, լարված իրավիճակում ընդունվել են կարևոր համապատասխանեցումներ նախկինում եղած ծրագրային կետերին, քանի որ ինքնին ժամանակահատվածը արդեն խոսում է իրադրության մասին:

Անվտանգության խորհուրդը գտնում է, որ Ժնևի IV կոնվենցիայի «55-ի որոշման համաձայն, որը վերաբերում է քաղաքացիական անձանց պաշտպանության խնդրին պատերազ-

մի ընթացքում և ընդունված է 1949թ. օգոստոսի 12-ին, ամբողջապես մնում է ուժի մեջ և օկուպացիոն իշխանությունը պարտավորություն ունի ազգաբնակչությանը պարենամթերքով և բժշկական օգնությամբ ապահովելու հարցում: Իշխանությունը պետք է ներկայացնի ընդարձակ հաշվետվություն, նշելով անհրաժեշտ սննդամթերքների անվանումների ցանկը, մարդկանց հիվանդության մանրամասն պատմությունը՝ բժշկական ծնով և այլ հոդվածներ, եթե գրավված տարածքի ռեսուրսները բավարար չեն:

Համոզված լինելով, որ ազգաբնակչության հրամայական կարիքները շարունակվում են ապահովվել, և Իրաքի ժողովրդին տրվող հումանիտար նպաստը երկրի ներսում ամենուրեք գտնվում է համապատասխան հիմքի վրա, այնուամենայնիվ մարդկանց կարիքների աճը, որպես հումանիտար նպաստի ծնով բավարար օգնություն, չափվում է բուն Իրաքի ժողովրդի կողմից, քանի մարդ է երկիրը լքում ռազմական գործողությունների պատճառով[10]:

Կարևորը այն է, որ տվյալ նիստի ժամանակ ուշադրության առնվեցին բազմաթիվ սանկցիաներ, որոնք ընդունվել էին մինչ այդ ՄԱԿ-ի կողմից Իրաքի դեմ: Հիմնական շեշտը դրվեց իրաքյան ժողովրդի հումանիտար օգնության ապահովման վրա, այնքան ժամանակ, քանի դեռ երկրում դրա կարիքն ունի ազգաբնակչությունը[11]: Այդ փոփոխությունները վերաբերում էին 661 (1990) 6 օգոստոս 1990, 986 (1995) 14 ապրիլ 1995, 1409 (2002) 14 մայիս 2002 և 1454 (2002) 30 դեկտեմբեր 2002 որոշումներին:

Ի գիտություն ընդունվեց նաև գլխավոր քարտուղարի 2003թ. մարտի 17-ին ընդունած որոշումը, ետ վերցնելով Միացյալ ազգերի կազմակերպության և միջազգային նշանակության աշխատակիցների այն պարտավորությունները, որոնք պետք է ի կատար ածեին «նավթ՝ պարենի դիմաց» ծրագիրը իր նախկին տեսքով և բովանդակությամբ (այսուհետև «Ծրագիր»), սահմանված՝ 986 (1996) որոշման համաձայն:

Ընդգծված է ահաբեկչության դեմ պայքարի նպատակով բոլոր ջանքերի գործադրման անհրաժեշտությունը, աջակցու-

թյունը տվյալ ժամանակում ազգային պարենամթերքի սպառման զամբյուղի բաշխման ցանցի աշխատանքին:

Անվտանգության խորհուրդը կարևորում է Իրաքի ժողովրդի իրավունքների նկատմամբ հարգանքը՝ տնօրինելու սեփական քաղաքական ապագան և վերահսկելու երկրի սեփական բնական ռեսուրսները:

Իրաքի սուվերենության և տարածքային անձեռնմխելիության նպատակով ՄԱԿ-ը իր աշխատանքներում ընդգծում է բոլոր անդամ պետությունների կոլեգիալության իրավունքի ապահովումը[12]:

Հատուկ կետերով թվարկվում են այն բոլոր պարտավորությունները, որոնք բխում են Միացյալ ազգերի VII խարտիայի բովանդակությունից և պահանջներից, միջազգային նորմերին համապատասխան, հատկապես Ժնևի կոնվենցիայի և Հաագայի կանոնադրության շրջանակում.

1. Ապահովել իշխանությունների վերաբերմունքը Իրաքի ժողովրդի քաղաքացիական առաջնահերթ կարիքներին, հավասարապես՝ Իրաքում և նրա սահմաններից դուրս: Ընդ որում ուղերձը հասցեագրված է բոլոր կուսակցություններին՝ հանդես բերելու խիստ հետևողականություն:

2. Կոչ է արվում միջազգային հանրությանը նաև ապահովելու հումանիտար աջակցություն Իրաքի ժողովրդին Իրաքում և նրա սահմաններից դուրս, խորհրդակցելու խնդրին առնչվող պետությունների հետ և սպառիչ ու շարունակաբար արձագանքելու սպասվող հումանիտար օգնությանը, այդ նպատակով դիմելով Միացյալ ազգերի կազմակերպությանը, ինչպես նաև աջակցելու Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և հումանիտար միջազգային այլ կազմակերպությունների գործունեությանը:

3. Պաշտոնապես ընդունել, որ Իրաքին լրացուցիչ միջոցներ են անհրաժեշտ դիմակայելու բացառիկ, ոչ սովորական իրավիճակում, հետևաբար տեխնիկական բնույթի և ժամանակավոր միջոցները պետք է լինեն ծրագրված, որոնք կիրագործվեն ֆոնդային և ոչ ֆոնդային համաձայնագրերով՝ կնքված Իրաքի կառավարության կողմից, Իրաքի ժողովրդին

հումանիտար օգնություն ցուցաբերելու նպատակով: Համաձայն այս բանաձևի՝ ներառել նաև բոլոր տեսակի նպաստների վճարումը, այդ թվում նաև փախստականներին և ժամանակավոր տեղահանվածներին նպաստներով ապահովումը:

4. Գլխավոր քարտուղարին և նրա գլխավորությամբ գործող ներկայացուցչական կազմին լիազորել վերցնել պարտավորություն որպես առաջին քայլ, և անհրաժեշտություն՝ համակարգելու հետևյալ միջոցառումները.

Համապատասխանաբար՝ 12 կետերով նշված են բոլոր հնարավոր տարբերակները և անհրաժեշտ քայլերը:

Հատկապես հետաքրքիր է 7-րդ կետը, որտեղ նշված է, որ ներկա որոշմամբ ամբողջապես բոլոր դիմումները պետք է ներկայացվեն « Նավթ՝ պարենի դիմաց» ծրագրից դուրս, պետք է դիտարկվեն և քննարկվեն Միացյալ ազգերի գործակալության ծրագրերի և ֆոնդերի, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների և ոչ կառավարական կազմակերպությունների (NGOs) կողմից, որոնք կտեսակավորեն, կամ կօգտագործեն, կիրականացնեն Իրաքում արտակարգ հումանիտար օգնության տրամադրումը, ինչպես նաև կհոգան բժշկական սարքավորումների, առողջապահական ծառայություններին, պարենամթերքի բաշխման և ապահովման հարցերը: Վերջիններս պետք է քննվեն պիտանելիության առումով, կոմիտեի կողմից, որը կգործի շուրջօրյա, առանց ընթացակարգի առարկությունների[13]:

Կոմիտեի գործողությունները հաստատված են 661 (1990) որոշման համաձայն՝ հսկելու և մանրազնին իրականացնելու § 4-ի համապատասխան բոլոր կետերը:

Ինչ վերաբերում է գլխավոր քարտուղարի հարցումներին, կոմիտեն համապատասխանեցնելու Իրաքի ներկա վիճակին, կապված ժամանակակից պահանջների հետ, առաջարկվում է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կպահանջվեն և խորհրդակցեն տվյալ կոմիտեի հետ՝ կարգ ու կանոն հաստատելու կնքվող համաձայնագրերի հարցում, բեռների պիտանելիության, ինչպես նաև սննդամթերքի, դեղորայքի բարո-

ռակությունը, ջրի սանիտարական վիճակը, մատակարարման հարցերը հոգալու համար[14]:

Որոշվեց նաև, որ § 4-ում ներկայացված պայմանները ժամանակավոր են և կարող են ուժի մեջ լինել 45 օրվա ընթացքում, հաշված ընդունման օրից, և կարող են ապագայում երկարացվել, վերանայվելով խորհրդի կողմից[15]:

Ընդհանրապես իր ողջ բովանդակությամբ ՄԱԿ-ի ընդունած այս փաստաթուղթը հիմնարար է Իրաքի ժողովրդի համար՝ ծանրագույն հանգամանքներում դիմակայելու պատերազմական աղետի արհավիրքներին:

Նույն՝ 2003 թվականի ընթացքում այս ծրագիրը ենթարկվեց որոշ փոփոխությունների՝ կապված ներքին իրավիճակի զարգացումների հետ, սակայն գլխավոր նպատակը՝ օգնության, աջակցության առանցքը մնաց նույնը: Փաստորեն ՄԱԿ-ի ընդունած երբեմնի պատժամիջոցները Իրաքի հանդեպ մնացին երկրի պատմության նախորդ անցած էջերում:

2003թ. ապրիլի 24-ին նույնպես 4743 նիստում միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումը, համաձայն որի 1472 (2003) որոշման § 4-ում պետք է հիշատակվի, որ այն ուժի մեջ է մինչև 2003թ. հունիսի 3-ը և կարող է ըստ հետագա հանգամանքների, վերանայվել խորհրդի կողմից[16]: Այս որոշումը լրացում էր 2003թ. մարտի 28-ի որոշման ժամկետը երկարաձգելու մասին:

Եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2003թ. ապրիլի 24-ի ընդունած որոշումը հիմնականում սոցիալ-տնտեսական բնույթ էր կրում, ապա հետագա փաստաթղթերի ուսումնասիրությունը հաստատում է Իրաքի հարցի շուրջ քաղաքական խնդիրներում այս կազմակերպության դերի ակտիվացումը:

2003թ. մայիսի 22-ին ՄԱԿ-ի 4761 նիստին մասնակցեցին Անգոլան, Բուլղարիան, Կամերունը, Չիլին, Ֆրանսիան, Գերմանիան, Գվինեան, Մեքսիկան, Պակիստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Իսպանիան, Միացյալ Թագավորությունը, Միացյալ Նահանգները: Չմասնակցեց Սիրիան: Իսկ ընդունված որոշումը անցավ միաձայն: Այն ներառում էր 27 կետ, որոնք

վերաբերում են Իրաքի հետագա զարգացումներին և մասնակից պետությունների պարտավորություններին[17]:

Ընդգծվեց Իրաքի ժողովրդի իրավունքը ազատ կերպով որոշելու իր սեփական քաղաքական ապագան և վերահսկողություն սահմանելու իր սեփական բնական ռեսուրսների նկատմամբ, ողջունելով բոլոր կուսակցությունների կոլեգիալությունը, համատեղելու իրենց աջակցությունը՝ ստեղծելու տվյալ իրավիճակին համապատասխան մարմին, ինչը անհրաժեշտ էր:

Հույս հայտնվեց, որ իրաքյան ղեկավարությունը արագ կկայանա:

Որոշվեց ապահովել անհրաժեշտ հարգանք Իրաքի հնագիտական, պատմական, մշակութային և կրոնական ժառանգության հանդեպ և շարունակել պահպանության տակ վերցնել հնագիտական, պատմական, մշակութային և կրոնական վայրերը, թանգարանները, գրադարանները և հուշարձանները:

Նիստի մասնակիցները ողջունեցին Միացյալ ազգերի կազմակերպության նախագահի կողմից Իրաքում իր հատուկ ներկայացուցչի նշանակումը:

Նրանք հավանություն տվեցին Իրաքի ժողովրդի առաջին քայլերին նոր իրավիճակում, նկատի ունենալով 2003թ. ապրիլի 15-ի Նասիրիայի և 2003թ. ապրիլի 28-ի Բաղդադի արած դիմում-հայտարարությունները:

Ուշադրության առնվեց Կենտրոնական բանկի յոթ ինդուստրիալ պետությունների խմբի ղեկավարների և ֆինանսների նախարարների կողմից 2003թ. ապրիլի 12-ի ընդունած դիմումը, որով անդամները ընդունեցին, որ կարիք կա բազմակողմանիորեն աջակցելու Իրաքը վերականգնելու և զարգացնելու գործին, այդ նպատակով նշելով Միջազգային ֆինանսական ֆոնդի և Համաշխարհային բանկի օգնության կարիքը:

Ուշադրության առնվեց 2003 թ. մայիսի 8-ի դիմումը ստացված Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչների պալատից, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորությունից և Հյուսիսային Իռլանդիայից՝ ուղղված

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահին (S/2003/538), և ընդունվեցին հատուկ իրավասություններ, պատասխանատվություններ և պարտավորություններ միջազգային իրավունքի ներքո այդ պետությունների կողմից, որպես օկուպացիոն ուժեր և միացյալ հրամանատարություն ("Authority" – իշխանություն)[18]:

Որոշվեց աջակցել, որ յուրաքանչյուր պետություն, որը օկուպացիոն ուժերից չէ, բայց տվյալ ժամանակ աշխատում է այդ դաշտում կամ ապագայում կաշխատի, կարող է գտնվել միացյալ հրամանատարության ներքո:

Մասնակիցները ողջունեցին անդամ պետությունների պատրաստակամությունը՝ աջակցելու Իրաքում կայունություն և անվտանգություն հաստատելու գործին, ներդնելով անձնական, տեխնիկական և այլ միջոցներ իշխանության ներքո[19]:

Այս փաստաթղթում մանրամասն շարադրված է ՄԱԿ-ի խարտիայի VII գլխի դրույթներին համապատասխան այն որոշումների ցանկը, որոնք պետք է իրագործվեն Իրաքում[20]:

Փաստորեն, ակնհայտ է օկուպացիոն ուժերի կողմից համագործակցության միտումը, քանի որ Իրաքում տիրող կացությունը թելադրում էր վերանայել մինչ այդ նրանց կողմից վարվող քաղաքականությունը:

2003թ. օգոստոսի 14-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 4808 նիստով հաստատվեց ՄԱԿ-ի՝ Իրաքին օգնություն ցուցաբերող ներկայացուցչությունը:

Անդամ 14 պետությունների մասնակցությամբ, բացակա էր միայն Սիրիան, միաձայն որոշվեց հիմնել Միացյալ ազգերի կազմակերպության՝ Իրաքին օգնող ներկայացուցչություն, աջակցելու գլխավոր քարտուղարին իրագործելու իր մանդատը 1483 որոշման համաձայն, համապատասխան 2003թ. հուլիսի 15-ի իր զեկույցի բովանդակության, պարտավորություն կրելով 12 ամիս ժամանակով, որպես սկզբնական ժամանակահատված[21]:

2003թ. օգոստոսի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ՝ դատապարտելով նախորդ օրը Բաղդադում, Միացյալ ազգերի կազմակերպու-

թյան շտաբ-կայանի դեմ հարձակումը, որի արդյունքում եղան բազմաթիվ զոհեր և տուժածներ՝ միջազգային անձնակազմի և Իրաքի ժողովրդի շրջանում: Անվտանգության խորհուրդը, ցավակցելով բոլոր տուժածներին և նրանց ընտանիքներին, միաժամանակ հայտնում է իր վճռականությունը համապատասխան անվտանգության միջոցներ ձեռնարկելու և շարունակելու իր գործունեությունը՝ «օգնելու Իրաքի ժողովրդին խաղաղություն և արդարություն հաստատելու իր երկրում, կերտելու իր սեփական քաղաքական ապագան»[22]:

Այս պահանջով՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հանդես եկավ, դիմելով Իրաքի ժողովրդին, թվարկելով այն բոլոր տեռորիստական հարձակումները, որոնք իրականացվել են Իրաքում 2003թ. ընդհանրապես, և ոչ միայն ՄԱԿ-ի աշխատակիցների դեմ, դրանք որակելով որպես «հարձակում ուղղված Իրաքի ապագայի դեմ»[23]:

Պետք է մատուցել արժանին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին և նրա գլխավոր քարտուղար Քոֆի Անանին, որ չնայած դժվարագույն, բարդ իրավիճակին, ՄԱԿ-ը նրա գլխավորությամբ հետևողական և արդյունավետ աշխատանք կատարեց Իրաքում՝ հանդես բերելով հեռատեսություն և նոր պայմաններում գործելու վճռականություն:

ՄԱԿ-ի դեմ այս հարձակումից և այլ ոտնձգություններից հետո ՄԱԿ-ը իր աշխատանքային հունից դուրս չեկավ: Գումարվել են հետաքրքիր նիստեր, որոնց արձանագրությունները, ընդունած որոշումները վերաբերում են Իրաքի քաղաքացիների իրավունքներին, տնտեսական ոլորտին, 2004թ. հունիսի 30-ին սպասվող՝ Իրաքի անցումային կառավարությանը իշխանության փոխանցմանը, ՄԱԿ-ի Իրաք-Քուվեյթ դիտորդական առաքելության մանդատի ավարտին, նաև «նավթ՝ պարենի դիմաց» ծրագրի ավարտին, Միջին Արևելքում խաղաղության ապահովման խնդիրներին և այլն:

Շատ կարճ ժամանակահատվածում՝ 2003թ. մարտ – 2004թ. հունիս, ակնհայտ է հասարակական կարծիքի ձևավորումը հօգուտ Իրաքի, որից անմասն չէ ՄԱԿ-ը:

«Բաղդադում ՄԱԿ-ի շենքի մոտ օգոստոսյան տեռորիստական գործողության առաջին վայրկյանից սկսած ինձ անհաղթահարելի կերպով ձգում էր Իրաքը: Ժամանակին ես հրատարակել եմ "Washington Post"-ում բաց նամակ նախագահին, որտեղ իմ անհամաձայնությունն եմ հայտնել նրա քաղաքականության հանդեպ: Մեր ներխուժումից հետո երկիր, ես իմ դիրքորոշումը հաստատեցի հայտարարությամբ, որի համար նույնպես վճարեցի իմ անձնական միջոցներից: Ես ցանկանում էի ձայնել ավելի համոզիչ, ինչը հնարավոր է միայն փաստերը ձեռքին:

Ես պետք է վերադառնայի Իրաք, ես զգում էի, որ դա իմ պարտքն է ամերիկյան զինծառայողների հանդեպ և Իրաքի քաղաքացիական բնակչության հանդեպ»:

Եվ այսպես «Օսկար» միջազգային կինոփառատոնի տղամարդու լավագույն դերի համար 2004թ. մրցանակակիր Շոն Պենը, որը 2003թ. եղել էր Իրաքում, Սադամ Հուսեյնի նախագահության օրոք, նորից է մեկնում այդ երկիրը՝ արդեն ՄԱԿ-ի դեմ տեռորիստական գործողությունից հետո, հրատարակելով հետաքրքիր մանրամասներ պատերազմական վիճակում գտնվող Իրաքից[24]:

Նա գրում է՝ «Երբ ես ժամանեցի ռազմական և խաղաղ լրագրության ինստիտուտ, այնտեղ դասախոսություն էր իրաքցի երիտասարդ լրագրողների համար: Ես լսում էի, ինչպես պիթսբուրգյան "Tribune"-ի թղթակցուհին խոսում էր մասսայական հուղարկավորությունների թեմայով, որպես մոդել ռեյական հուղարկավորությունների ստեղծման մասին:

Երբ նա այդ բառերը արտասանեց, իրաքցի ունկնդիրներից մեկը ուժեղ ծիծաղեց՝ «Ողջ այս երկիրը – մասսայական դամբարան է: Մենք ապրում ենք եղբայրական մեծ գերեզմանոցում»:

«Իմ նախկին ուղևորության ժամանակ ես եղա «ալ-Մանսուր» հիվանդանոցում և ինձ շատ հետաքրքրեց տեսնել, թե օկուպացիոն իշխանությունը ինչպես է բարելավել մանկական առողջապահությունը: Բոլորովին էլ, ո՛չ: Հիվանդանոցը ամբողջապես կեղտի մեջ է, դեղորայքը՝ քիչ, բժիշկները և մնացած

բժշկական անձնակազմը չեն բավարարում, փոխներարկման արյուն նույնպես չկա: Այստեղ մարդ չի ցանկանա բերել մինչև անգամ թափառող շանը, այնինչ, հենց այստեղ են ապրում և բուժվում սպիտակարյունությամբ հիվանդ երեխաները: Այդ հիվանդությամբ տառապող այդքան շատ երեխաների նման թվաքանակ աշխարհում ոչ մի տեղ գոյություն չունի»[25]:

«Սա օկուպացված երկիր է: Մաքառող երկիր է: Մեկ տարի առաջ ոչ մի իրաքցի ինձ հետ խոսելիս, ղեկավար «Բաաս» կուսակցության գծից տարբերվող կարծիքներ չէր հայտնում, իսկ այսօր շատերը ասում են, որ օկուպացիան չի կարող ազատություն բերել: Եվ որ նրանք չեն վստահում իրենց գործերին միակողմանի միջամտությանը: Բոլորը հավաստում են, որ դիմադրական շարժումը օրեցօր դառնում է ավելի ուժեղ և կազմակերպված»:

Հետաքրքիր է, որ կինոդերասանը մանրամասն թվարկում է բոլոր այն ուժերին, որոնք ներկայացնում են իրաքյան հասարակայնության տարբեր շերտերն ու հոսանքները:

Հեղինակը շեշտելով արաբական մենթալիտետի նշանակությունը, բերում է համոզիչ տվյալներ: Միաժամանակ նշում է, որ հենց Բաղդադում ամենից ցայտուն է երևում, որ պատերազմը նույնպես բիզնես է:

Մի իրաքցի փողոցում նրան հարցրել է՝ - Ձեր զորքերը եկել են մեր ժողովրդին Սադամից ազատելու, թե՞ նավթը ազատելու մեր ժողովրդից:

Այնուհետև նկարագրում է բենզինի մեծ հերթերը քաղաքում: Բենզինի համար մարդիկ օրերով հերթ են կանգնում[26]: «Բաղդադի կենտրոնական կոմունիկացիոն աշտարակի ծռմռված երկաթյա և բետոնե ավերակները հիմա վկայում են միայն ամերիկյան բանակի հզորության մասին: Ես կանգ եմ առնում մեր ռազմական «Շոկ և բրիծ» կամպանիայի այդ հուշարձանը լուսանկարելու համար»[27]:

Իրաքում ԱՄՆ-ի, նշված ժամանակահատվածում, վարած քաղաքականության որոշ հարցերի մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Ամերիկայի հայտնի հրապարակախոսներից Ֆարիդ Զակարիան, որը նաև «News Week» բերքի

գլխավոր խմբագիրն է: Նրա մենագրությունը՝ «Ազատության ապագան՝ ոչ լիբերալ դեմոկրատիան մեզ մոտ՝ տանը և արտասահմանում» 2003թ. գարնանը համարվեց բեսթսելլեր, ակնթարթորեն սպառվելով:

2004թ. մայիսին «Известия» թերթի հարցերին նա պատասխանեց Նյու-Յորքում իր հյուրի՝ ռուս գիտնական Վլադիսլավ Ինոզեմցևի հետ զրույցի ընթացքում:

- Ինչպիսի՞ն է ձեր կանխագուշակումը Իրաքում իրավիճակի զարգացման մասին հարցին, նա պատասխանել է՝ - Մինչ դեմոկրատիայի, ազատության և այլն ձեռքբերումը, դուք պետք է հասնեք հասարակական կարգուկանոնի: Իրաքում, դժբախտաբար դա ժամանակավոր կոալիցիոն ադմինիստրացիայի կողմից, իսկ ամենագլխավորը՝ Պենտագոնի և Բուշի ադմինիստրացիայի կողմից, անտեսված էր: Այժմ անհրաժեշտ է հասնել Իրաքի և արտաքին աշխարհի միջև խաղաղության: Որպեսզի ոչ միայն ԱՄՆ-ը, այլև ուրիշ երկիրները կարողանան օգնել Իրաքին դեմոկրատիա կառուցել: Որպեսզի նրանք կոալիցիայի զորքերին չհամարեն օկուպացիոն ուժ:

Սակայն այդ երկրի շանսը իսկական դեմոկրատիայի հասնելու համար շատ փոքր է, քանի որ մենք վերին աստիճանի շատ սխալներ ենք գործել, Իրաքում ստեղծել ենք հակաամերիկյան մթնոլորտ:

... Ինձ ամենից առավել հուսահատեցնում է ԱՄՆ-ի վարած «ետպատերազմյան» քաղաքականությունը Իրաքում: Դա աղետաբեր է: Եվ միայն այժմ է սկսել խմբագրվել: Այնտեղ մենք քիչ զորք ունեցանք, մենք չգիտակցեցինք ՄԱԿ-ի ներգրավման անհրաժեշտությունը իրաքյան գործերում: Մենք հաշվի չառանք, որ ոչ միայն ԱՄՆ-ը, այլև ուրիշ երկրներն էլ կարող են իրենց հետաքրքրություններն ունենալ Իրաքում»[28]:

Ինչպես ցույց են տալիս նշված ժամանակահատվածում ՄԱԿ-ի գործունեության արդյունքները և հասարակական կարծիքը, ապա կարելի է անհրաժեշտ համարել այդ կազմակերպության դերի ընդլայնումը և հետագա ակտիվացումը:

2004թ. հունիսի 28-ին Բաղդադի ժամանակով ժամը 10:26-ին, քաղաքացիական օկուպացիոն ադմինիստրացիայի

ղեկավար Պոլ Բրեմերը Իրաքի նոր ղեկավարներին հանձնեց «լրիվ սուվերենություն փոխանցելը» պաշտոնապես ամրագրող փաստաթղթերի փաթեթը[29]:

Արարողությունը կայացավ Բաղդադի «կանաչ գոտում», ուր գտնվում էր կոալիցիոն ուժերի շտաբը, իսկ մինչև վերջերս այստեղ էր տեղավորված նաև Իրաքի ժամանակավոր կառավարող խորհուրդը: Բրեմերը հրապարակեց կարճ հայտարարություն՝ «Համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1546 բանաձևի, ժամանակավոր կոալիցիոն ադմինիստրացիան դադարեցնում է իր գործունեությունը հունիսի 28-ին: Դա նշանակում է օկուպացիայի վերջ և ազգային կառավարության կողմից լրիվ սուվերենության ձեռքբերում: Մենք ողջունում ենք Իրաքի քայլերը, որոնց նպատակն է իր իրավական տեղը գրավել ազատ ժողովուրդների շրջանում»:

«Սա պատմական օր է, երջանիկ օր է, որին սպասում էր մեր ողջ ժողովուրդը, - պատասխան խոսքում ասաց Իրաքի «ժամանակավոր» նախագահ Գազի ալ Յավարը: - Մենք շնորհակալություն ենք հայտնում դաշնակիցներին: Իմացեք՝ վերադարձ անցյալին մենք թույլ չենք տա»[30]:

Նույն օրը ժամը 12:30-ին Պոլ Բրեմերը, որը 13 ամիս աշխատել էր այս երկրում «պրոկուրատոր» (գործերի հավատարմատար), Իրաքից հեռացավ ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի C-130 ինքնաթիռով[31]:

Ուշագրավ է, որ Իրաքում իշխանության փոխանցումը կայացավ նախապես նշված ժամկետից՝ հունիսի 30-ից, երկու օր շուտ՝ հունիսի 28-ին: Պատմական այս իրադարձության շուրջ մամուլում արտահայտված կարծիքներում կարևորվում է ՄԱԿ-ի դերը[32]:

# THE ACTIONS OF THE UNITED NATIONS IN IRAQ (MARCH 2003-JUNE 2004) AND THE FORMATION OF THE PUBLIC OPINION

The article deals with the analyses of the achievements of the active role of the United Nations in Iraq in period of March 2003 – June 2004.

It included the examination of Resolutions and Statements of the Security Council of the United Nations: Adjustments to Iraq-'oil-for-food' programme, Establishment of UN Assistance Mission for Iraq, Call for return of power to Iraqi people and etc.

The very important factor in this period is the formation of the public opinion: to help the people of Iraq to form a representative government based on the rule of law.

The United Nations should play a vital role in the reconstruction of Iraq and the restoration and establishment of national and local institutions for representative governance. Lifting of sanctions on Iraq is very important step in the activity of the United Nations.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 137-146, Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXII, Երևան 2003, էջ 119-128:
2. Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI,էջ 145:
3. Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXII, Երևան, 2003, էջ 127:

4. Նույն տեղում, էջ 125: Տե՛ս Նիկոլայ Յովհաննիսյան, Կարևոր փաստաթուղթ հետպատերազմյան Իրաքի վերակազմավորման և ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ, «Ազգ», 29.III.2003, էջ 4, "Новое время", 19.IV.2003.
5. Տե՛ս Демократизация Ближнего Востока – это маразм, "Независимая газета", 28.V.2004, с. 10.
6. Նույն տեղում:
7. Տե՛ս նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. S/RES/1472 Adjustments to Iraq oil-for-food' programme, United Nations, Press Release Security Council, SC/7976, 13 January 2004, Resolutions and Statements of the Security Council, 2003, p. 28.
10. Նույն տեղում:
11. Տե՛ս նույն տեղում, էջ 29:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում, էջ 30:
15. Նույն տեղում, էջ 31:
16. Նույն տեղում, S/RES/1476, էջ 35:
17. Տե՛ս S/RES/1483, Lifting of sanctions in Iraq. United Nations, Press Release, Security Council, Resolutions and Statements of the Security Council, 2003, p. 46-51.
18. Նույն տեղում, էջ 46:
19. Նույն տեղում, էջ 47:
20. Նույն տեղում, էջ 47-51:
21. Նույն տեղում, էջ 73:
22. S/PRST/2003/13, United Nations, Press Release..., p. 116:
23. S/RES/1511, United Nations, Press Release..., p. 88.
24. Репортаж от Шона Пенна, 4 дня войны в Ираке, "Premiere" N 88, апрель 2004, с. 44.
25. Նույն տեղում, էջ 46:
26. Նույն տեղում, էջ 47:
27. Նույն տեղում, էջ 46:
28. "Известия", 5. V. 2004, с. 5.

29. Նույն տեղում, 29.VI.2004, էջ 1, Георгий Степанов, Пол Бремер передал иракцам "полный суверенитет".
30. Նույն տեղում:
31. Նույն տեղում:
32. Տե՛ս նույն տեղում, էջ 1, 5, Георгий Мирский, Американцы передали власть иракцам на два дня раньше, чем обещали.

...

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՄԱԿ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ (2004Թ. ՀՈՒՆԻՍ – 2005Թ. ՕԳՈՍՏՈՍ)

Սույն աշխատության առանցքում նաև ՄԱԿ-ի գործունեության լուսաբանումն է՝ Իրաքում ստեղծված սոցիալ-քաղաքական բարդ ու դժվարին իրադրության պայմաններում: Նշված ժամանակահատվածը՝ 2004թ. հունիս – 2005թ. հոկտեմբեր, ներառում է երկրի համար շրջադարձային և կարևոր պատմական իրադարձություն. 2004թ. հունիսի 28-ին պաշտոնապես Իրաքում իշխանությունը փոխանցվեց երկրի նոր ղեկավարներին:

Քաղաքական զարգացումների հետագա ընթացքը հանգուցալուծվեց Իրաքի նոր Սահմանադրության նախագծի փաթեթով: Իրաքի խորհրդարանականները երկար և թունդ քննարկումներից հետո 2005թ. օգոստոսի 28-ին, կիրակի օրը վերջապես հավանության արժանացրին նոր Սահմանադրության նախագիծը, որի հանրաքվեն նշանակվեց 2005թ. հոկտեմբերի 15-ին, շաբաթ օրը:

Հետաքրքրական և արաբական երկրների պատմության նորագույն շրջանի համար ոչ պակաս կարևորություն է ներկայացնում հետևյալ հարցադրումը՝ միջազգային այնպիսի հեղինակավոր կազմակերպություն, ինչպիսին Միավորված ազգերի կազմակերպությունն է /ՄԱԿ/, գործունեության ինչպիսի ուղի որդեգրեց և ինչպես այն իրականացրեց Իրաքում, նախկին վարչակարգի փլուզումից հետո:

Դեռևս 2003թ. մարտի 6-ին «Ազգ» օրաթերթում Իրաքի հարցի շուրջ հրապարակումների շարքում էր նաև ՄԱԿ-ի գործունեության մասին բավական հետաքրքիր անդրադարձ, «ՄԱԿ-ը մշակում է Իրաքի հետպատերազմյան կառուցվածքի ծրագիր», վերնագրով:

Ըստ այդ հրապարակման «...ծրագրի 60 էջանոց պատճենը հայտնվել է Լոնդոնի «Թայմսի» տրամադրության տակ:

Դրա մշակումն անցյալ ամսվանից հույժ գաղտնի պայմաններում իրականացնում են ՄԱԿ-ի 6 աշխատակիցներ՝ գլխավոր քարտուղարի տեղակալ Լուից Ֆրեչեթի ղեկավարությամբ»[1]:

Մինչ այդ ծրագրի բովանդակությանն անդրադառնալը, նշենք, որ արդեն իսկ դրա վերնագիրը վկայում էր Իրաքում սպասվող ԱՄՆ-ի կողմից ռազմական գործողությունների իրականացման անխուսափելիությունը, ըստ որում «պատերազմ» որակումով: Համաձայն այդ ծրագրի, Իրաքում Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումից 3 ամիս անց ՄԱԿ-ը մասնակից էր դառնալու երկրի ինքնակառավարման համակարգի ստեղծմանը: Հետաքրքիր է, որ անգամ տակտիկական նրբանկատություն էր արտահայտված, այն է՝ «ՄԱԿ-ը մտադիր չէ լիովին իր հսկողության տակ առնել երկրի կառավարումը, իրաքյան նավթը, պաշտոնյաների հուսալիության ստուգումը կամ ԱՄՆ-ի օկուպացման պայմաններում ընտրությունների անցկացումը: Փոխարենն Իրաքում կարող է ստեղծվել օգնության առաքելություն, որը կօժանդակի նոր կառավարության կազմավորմանը»[2]:

Եվ քանի որ նշված ծրագիրը հետաքրքիր է ոչ միայն քաղաքական տեսանկյունից, այլ նաև սոցիալ-տնտեսական քաղաքական տեսանկյունից, այլ նաև սոցիալ-տնտեսական հեռահար կառուցողական նպատակաուղղվածությամբ, ապա թերևս Իրաքին նախատեսվող «օգնության առաքելությունը» արտահայտված է բոլոր հնարավոր դրսևորումներով: Այսպես՝ «Ըստ ՄԱԿ-ի աղբյուրների, ծրագիրը կգործի նույնիսկ այն դեպքում, եթե ԱՄՆ-ը պատերազմ սկսի առանց Անվտանգության խորհրդի /ԱԽ/ նոր բանաձևի ընդունման: Ծրագրի հեղինակները ՄԱԿ-ին հանձնարարում են նշանակել համահեղինակները ՄԱԿ-ին հանձնարարում են նշանակել համակարգող, որը կազմակերպության հատուկ ներկայացուցիչը կդառնա հետպատերազմյան Իրաքում:

Այդ պաշտոնի ամենահարմար թեկնածուն հակամարտությունների հարթման գծով ՄԱԿ-ի հատուկ լիազոր Լախդար Բրահիմին է, որն Ալժիրի նախկին արտգործնախարարն է: Բրահիմին է, որն Ալժիրի նախկին արտգործնախարարն է: Աֆղանստանում նա արդեն մասնակցել է նոր կառավարության կազմավորմանը: 68-ամյա Բրահիմիի դուստրը CNN-ի լրագրող է և ներկայումս աշխատում է Բաղդադում»[3]:

Հատկանշական է, որ անգամ անհանգստության և դժգոհության տրամադրություններ են արտահայտվել մամուլում: Այսպես՝ «Թայմսը» նշում է, որ Իրաքը ՄԱԿ-ի օրինական անդամ է, ուստի նրա ապագա կառավարության հարցի քննարկումը սկսելով, ՄԱԿ-ի ղեկավարները խախտում են կազմակերպության կետերից մեկը, որն արգելում է միջամտել անդամ երկրների ներքին գործերին»[4]:

«Ազգ» օրաթերթը նշված հրապարակման մեջ անդրադարձ է կատարում նաև Իրաքի համար շատ կարևոր «Նավթ պարենի դիմաց»՝ ծրագրին, վկայակոչելով «Ֆայնենշլ թայմս»-ի մեջբերումը, թե. «ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան գրում են ՄԱԿ-ի բանաձևի նախագիծ, որը սահմանում է Իրաքի հետպատերազմյան կյանքին ՄԱԿ-ի «մասնակցության սկզբունքները»: Մասնավորապես նախատեսվում է փոփոխել «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը, ինչը թույլ կտա Իրաքին մարդասիրական օգնություն ցույց տալ Սադամ Հուսեյնի տապալումից հետո»[5]:

Վերը նշվածին ավելացնենք նաև, որ այդ օրերին Իրաքի շուրջն արդեն ամերիկյան բազմահազարանոց զորք էր տեղակայված, և ԱՄՆ-ը բոլորովին պարտադիր չհամարեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից նոր բանաձևի ընդունումը:

Մանավանդ որ ՄԱԿ-ի կողմից ընդունված մի որևէ բանաձև ԱՄՆ-ի համար «ցանկալի էր, բայց ոչ անհրաժեշտ»:

Ինչպես հայտարարել էր Սպիտակ տան մամլո քարտուղար Արի Ֆլեյշերը մամլո ասուլիսում, ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը պարզ հասկացրել է, որ բանաձև լինի թե ոչ, ԱՄՆ-ը մտադիր է զինաթափել Սադամ Հուսեյնին:

Այսօր, Սադամ Հուսեյնի վարչակարգը Իրաքում տապալվելուց հետո, ՄԱԿ-ի գործունեությունը Իրաքում ստանում է առավել պատասխանատու շեշտադրություն և տակտիկական տեսանկյունից նոր պայմաններում աշխատելու ունակության դրսևորում:

Կարևորն այն չէ, թե նախօրոք ծրագրված էր, թե ոչ հետագա գործունեությունը Իրաքում, ի դեմս նման կարևոր միջազգային կազմակերպության, ինչպիսին ՄԱԿ-ն է: Եվ, եթե զուգահեռներ ենք անցկացնում, հօգուտ ինչ-որ նախնական

ծրագրի կամ սոցիալ-տնտեսական բնույթի հեռահար «պայմանավորվածությունների», ապա դրանք նույնպես հաստատում են ՄԱԿ-ի կարևորությունը միջազգային հարաբերություններում:

Տեղին է նկատել, որ Իրաքը ՄԱԿ-ի կազմում է ընդգրկվել 1945թ. դեկտեմբերի 21-ին: Տարբեր տարիների միջազգային հանրությանը ներկայանալով իր ակտիվ կեցվածքով՝ 1981թ. ՄԱԿ-ի երեսունվեցերորդ հերթական նստաշրջանի, նաև 1982թ. տասներկուերորդ հերթական սեսիայի, նույն թվականի յոթերորդ և իններորդ սեսիաների Գլխավոր ասամբլեիայի նախագահն էր Իսմաթ Քիթթանին: Ի դեպ, տարբեր տարիների Իրաքի ներկայացուցիչը ՄԱԿ-ում զբաղեցրել է նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի փոխնախագահի արոռը, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրաքը ունեցել է ոչ մշտական անդամներ, մինչև 1991թ. իր անդամները ունենալով ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում[6]: Թեև Իրաքը ամերիկյան ռազմական գործողությունների արդյունքում իր տապալված վարչակարգով և փլուզված տնտեսությամբ կանգնած է բոլորովին այլ խնդիրների առջև, սակայն ՄԱԿ-ը իր ճկուն ծրագրերով ներկայանում է նոր պայմաններում աշխատելու ունակությամբ:

2005թ. ապրիլին Իրաքի խորհրդարանը ընտրեց երկրի նոր նախագահ: Հատկանշական է, որ Իրաքի առաջին դեմք ընտրվեց ազգությամբ քուրդ քաղաքական գործիչ, Քուրդստանի հայրենասիրական միության նախագահ Ջալալ Թալաբանին: Այդ ընտրությունը կայացավ 2005թ. հունվարին տեղի ունեցած երկրի խորհրդարանական ընտրություններում ձայների մեծամասնությունը ստացած առաջատար խումբ կազմող շիաների և քրդերի միջև ընթացող բանակցությունների արդյունքում: Նա 2003թ. հուլիսից մինչև 2004թ. հունիսը ամերիկյան օկուպացիոն ադմինիստրացիայի ստեղծած Իրաքում ժամանակավոր ղեկավար խորհրդի նախագահության անդամ էր:

Իրաքում 2003թ. հունվարին կայացած խորհրդարանական ընտրություններում Քուրդստանի հայրենասիրական միու-

թյունը և նրանց նախկին ընդդիմախոսները՝ Քուրդստանի դեմոկրատական կուսակցությունը հանդես եկան միասնական բլոկով, ազգային խորհրդաժողովում ստանալով 75 ձայն:

Իրաքի նորընտիր նախագահ Ջալալ Թալաբանու տեղակալներ ընտրվեցին շիա Աբդել Մահդին, որը նախկինում ժամանակավոր ադմինիստրացիայի կազմում էր, զբաղեցնելով ֆինանսների նախարարի աթոռը և սուննի՝ Գազի ալ-Յավարը, որը մինչ այդ Իրաքի «ժամանակավոր» նախագահն էր: Իրաքում նախագահական խորհրդի այս երեք անդամներն էլ կոչված էին ընտրել երկրի նախարարների խորհրդի ղեկավար, այսինքն վարչապետ և ձևավորելու նոր կառավարություն: Այդ թեկնածությունը հաստատվեց 2005թ. ապրիլի 8-ին, շիամահմեդական Իբրահիմ ալ-Ջաֆարի օգտին[7]:

Ուշադրության արժանի է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի գնահատականը այս ընտրություններին:

«Իրաքում վերջերս կայացած ընտրությունների հաջողությունը ստեղծում է բարենպաստ իրադրություն: Ժամանակավոր փուլի հաջող ավարտը շատ մեծ նշանակություն ունի:

Ես լի եմ վճռականությամբ հասնել նրան, որ ՄԱԿ-ը ամեն հնարավորը օգտագործի օգնելու համար Իրաքի ժողովրդին ավարտելու այդ գործընթացը»: «...այսօր համաշխարհային հանրությունը ընդունում է, որ բոլորի համար կարևոր է ընդհանուր խնդիրը՝ Իրաքի առաջընթացը ելման կետից՝ հաջողությամբ ավարտված ընտրություններից, խաղաղ, բարգավաճ և դեմոկրատական ապագային»: «Մինչև իսկ վերջերս ինչած անհամաձայնությունների արձագանքները կարող են շրջվել նոր հնարավորություններով: Չնայած այն, որ ՄԱԿ-ը չէր տալիս իր համաձայնությունը Իրաքում սկզբնական էտապի որոշ գործողությունների համար, այժմ նրա համար ապահովում է անհրաժեշտ վստահություն և մերձեցում իրաքյան խմբերին, որոնք պետք է համաձայնվեն միանալ քաղաքական նոր գործընթացին, խաղաղության վերահաստատման նպատակով: Այսօր հենց այդ ժամանակն է օգտվելու նման առավելությունից»[8]:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը առանձնակի կարևորում է իրաքցիների որոշում ընդունելու քաջությունը, ժամանակի պահանջը սթափ գնահատելը: «Ոչ ոք չի կարող անտարբեր մնալ իրաքցիների ցուցաբերած խիզախության հանդեպ, որոնք եկան ընտրական տեղամասեր: ՄԱԿ-ը հպարտանում է այն աջակցությամբ, որը կարողացավ ցուցաբերել՝ զարգացնելու ընտրությունների քաղաքական բազան, ինչպես նաև տեխնիկական նախապատրաստման գործում: Մենք օգնեցինք մշակել ընտրությունների մասին օրենք և ձևավորել ընտրական անկախ հանձնաժողով, որը իրականացրեց ընտրությունների անցկացման վերահսկողությունը: ՄԱԿ-ի հանձնախումբը, որը կազմված էր ավելի քան 50 աշխատակիցներից, օգնեց հանձնաժողովի աշխատանքին Բաղդադում, Ամմանում և Նյու Յորքում: ՄԱԿ-ը նախապատրաստեց հանձնաժողովի անդամներին և թվով մի քանի հարյուր այլ աշխատակիցների, որոնք զբաղված էին ընտրություններով, նրանք էլ իրենց հերթին ուսուցանում էին  ևս հազար մարդու, և այդ գործընթացում նույնպես մենք նրանց օգնություն և աջակցություն ցուցաբերեցինք»[9]:

Իրաքի համար հետպատերազմյան այս շրջանում անչափ կարևոր է Սահմանադրության գործընթացը: Այն անցնում է լարված և իրարամերժ մոտեցումների պայմաններում: Դիտորդները նշում են, որ Իրաքի սուննիներին մտահոգում են ոչ թե Սահմանադրության այս կամ այն հոդվածին, բովանդակությանն առնչվող խնդիրները, այլ իշխանությունից զրկվելու փաստը: Սուննիները չեն կարողանում հաշտվել շիաների և քրդերի ղեկավար դիրքերի հնարավորության հետ: Մինչև իսկ սուննիների ներկայացուցիչները քաղաքական հեռանկարներ են փորձում ներկայացնել, այն է՝ «Փորձելով Սահմանադրության նախագծի հարցում արժանանալ ԱՄՆ-ի աջակցությանը՝ սուննիների ներկայացուցիչները հայտարարում են, որ եթե ընդունվի Սահմանադրության այս նախագիծը, ապա Իրաքի շիարնակ հատվածը կհայտնվի Իրանի լիակատար ազդեցության տակ: Իսկ ահա ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշն արդեն իրաքցիներին կոչ է արել հանրաքվեի ժամանակ կողմ արտահայտվել Սահմանադրության ընդունմանը»:

«Մենք տեսնում ենք, որ Սահմանադրության հարցում սուննիները պառակտվել են, սուննիների մի մասը դեմ է արտահայտվել Սահմանադրության որոշ հոդվածներին: Դա նրանց իրավունքն է: Նրանք ազատ հանրության ազատ քաղաքացիներ են», - ասել է ԱՄՆ-ի նախագահը, որի կարծիքով առավել կարևորն այն է, որ երկրի բնակչության մեծամասնությունը ներքաշվի սահմանադրական գործընթացում և մասնակցի սահմանադրական քննարկումներին[10]:

Սուննիները մտավախություն ունեն, որ նավթի վաճառքից ստացվող շահույթը կարող է կենտրոնացվել շիաների և քրդերի ձեռքում և պնդում են, որ այդ շահույթը հավասարապես բաշխվի իրաքցի սուննիների, շիաների և քրդերի միջև: Միաժամանակ բողոքի ալիք է բարձրացրել Իրաքի նախկին նախագահ Սադամ Հուսեյնի Բաաս կուսակցության գործունեության կասեցումը և հետագա արգելքը հիմնական օրենքով, սահմանադրորեն:

Թեև Իրաքում բնակվող շիաները և քրդերը միասին կազմում են երկրի ազգաբնակչության 80%-ից ավելին, սակայն Սահմանադրության նախագիծը առաջին ընթերցմամբ մերժվեց և միայն երկար քննարկումներից հետո արժանացավ խորհրդարանի հավանությանը. նշենք նաև որ սուննիները այդպես էլ չենթարկվեցին գործադրվող ճնշումների ազդեցությանը և իրենց ստորագրությունը հրաժարվեցին դնել Սահմանադրության նախագծի տակ: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Իրաքի ամենաքիչը երեք նահանգներում ընտրողների երկու երրորդի դեմ արտահայտվելու դեպքում Սահմանադրությունը կարող է հայտնվել ծախողման լուրջ վտանգի տակ: Մանավանդ, որ սուննիները շարունակում են մասնակցել Իրաքի քաղաքական գործընթացներին:

Մինչ այդ, Իրաքում ուժեղացվում է ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը: Հոկտեմբերի 15-ին Իրաքում կայանալիք Սահմանադրության հանրաքվեն և դեկտեմբերին նախատեսված համընդհանուր ընտրությունները կազմակերպել դիմավորելու նպատակով Պենտագոնը ուժեղացնում է Իրաքում ամերիկյան զորքերի դիրքերը:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի կարգադրությամբ 2005թ. օգոստոսից Իրաք են ուղարկվում 82-րդ օդադեսանտային դիվիզիայի 1500 զինծառայողներ: «Ռոյթեր» գործակալությունը նշում է, որ նրանք կմիանան Իրաքում արդեն տեղաբաշխված ամերիկացի 138 հազար զինծառայողներին և այնտեղ կմնան մոտ 4 ամիս:

Գործակալության տվյալներով Իրաքում ամերիկյան զորքի թվակազմը կարող է հասնել 160 հազարի: Ուղարկվող նոր զորախմբերը կոչված են զսպելու Իրաքում ահագնացող բռնությունների ալիքը, ինչպես նաև վնասազերծելու ահաբեկչական վտանգի հայտնի օջախները: Այդ նոր զորախմբերի Իրաք մեկնումից առաջ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը Այդահոյի նահանգի Նամպա քաղաքում ազգային գվարդիայի զինծառայողների և նրանց ընտանիքների առջև ելույթ ունենալով հայտարարեց, թե ԱՄՆ-ն ավարտելու է Աֆղանստանում և Իրաքում սկսած իր գործը:

«Քանի դեռ նախագահ եմ, մենք կմնանք Աֆղանստանում և Իրաքում, կպայքարենք ահաբեկչության դեմ և կհաղթենք».– ընդգծեց Բուշը, որի խոսքերը մեջբերում է RFI ռադիոկայանը[11]:

Փաստորեն հաստատվում է 2005թ. մայիսի 18-ին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի երկրորդ նախագահական ժամկետի գլխավոր խնդրի իր իսկ պատկերացման մասին վարկածը, ինչի մասին նա մանրամասն տեղեկացրեց Վաշինգտոնում միջազգային հանրապետական ինստիտուտում ունեցած ելույթի ժամանակ: Այստեղ հանդես գալով, նա նշել է, որ իր պաշտոնավարման անցյալ տարիների փորձը իրեն համոզել է, որ վարչակարգերի տապալումը զինված ներխուժման միջոցով ավելի քիչ արդյունավետ է, եթե ուշադրություն դարձնենք և հաշվի առնենք այդ երկրի և հասարակության հետագա վերակառուցման անհրաժեշտությունը, համեմատած տնաբույծ հեղափոխությունների հետ:

ԱՄՆ-ի նախագահի այս ելույթում շատ հետաքրքիր տվյալներ են ամփոփված: Պարզվում է, որ տնաբույծ հեղափոխության հիմքում ժողովրդական ապստամբությունները ավելի էժան են նստում: Այսպես, Աֆղանստանում և Իրաքում

2001թ. սկսած Վաշինգտոնը ծախսել է մինչև 300 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ այդ նույն ժամանակահատվածում դեմոկրատիայի թավշյա աջակցության նպատակով՝ ընդամենը 4,6 մլրդ դոլար: Նա առանձնակի նշել է, որ նման հեղափոխությունները ձեռնտու են նրանով, որ չեն պահանջում վերստին ստեղծել պատերազմի հետևանքով ավերված պետական ղեկավարման կառուցվածքները[12]:

Այս անդրադարձը հաստատում է նման կարգի այն լուրջ խնդիրները, որոնք ծառացել են ԱՄՆ-ի իշխանությունների առջև Իրաքում:

Իրաքում ԱՄՆ-ի վարած պատերազմի հետևանքով ավերված պետական ղեկավարման կառուցվածքների վերականգնման դժվարությունների մասին է խոսում Իրաքում սահմանադրական գործընթացի պատկերը:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի վկայությամբ և կանխատեսումներով՝ Իրաքը չի խաղաղվի ևս 12 տարի: Նրա կարծիքով՝ Իրաքում ընդդիմությունը կշարունակվի դեռևս 5-ից 12 տարի, սակայն ապագայում պատերազմը կվարեն արդեն ոչ թե ամերիկյան և արտասահմանյան ուրիշ երկրների զորքերը, այլ տեղական զինված ուժերը: Պարտիզանների գործողությունները կարող են ակտիվանալ տարվա վերջին նախատեսված Սահմանադրության ընդունման և երկրի մշտական կառավարության ստեղծման նախաշեմին:

Բռնության հնարավոր որևէ ճողփյուն կանխելու նպատակով, ԱՄՆ-ի զինված ուժերի հրամանատարությունը ծավալել էր ակտիվ երկխոսություն սուննի մարտիկների հետ:

Այս խոստովանությունը հաստատել է նաև ամերիկյան զորքերի կենտրոնական հրամանատարության ղեկավար՝ գեներալ Ջոն էբզեյդը:

Փաստորեն, ընդդիմության ուժերի հետ երկխոսությունը հանդիսանում է այն կամպանիայի մի մասը, որի նպատակն է սեպ խրել իրաքյան ապստամբների և արտասահմանցի վարձկանների միջև:

Միջազգային զանգվածային լրատվամիջոցներով նույնպես տեղեկություն է հաղորդվել այն մասին, որ ամերիկյան

ռազմական ուժերը դեռևս 2005թ. հունիսին կրկնակի անգամ հանդիպել են Իրաքի սուննի ապստամբների ներկայացուցիչների հետ:

«Ֆոկս-նյուս» հեռուստաալիքի կազմակերպած հարցազրույցում Ռամսֆելդը այս հարցի շուրջ հայտարարել է, որ իրականում «շփումները բավական շատ են եղել» և պարզաբանել է, որ իրենց խնդիրն է ներգրավել իրենց շուրջը այն մարդկանց, որոնք պատրաստ են աջակցել քաղաքական գործընթացին Իրաքում: Նա նշել է, որ նման գործողությունների նպատակն է անցկացնել հստակ սահմանազատում ընդդիմության ուժերի ջոկատների, որոնք վարում են սովորական մարտական գործողություններ և այն մարտիկների միջև, որոնք պայթյուններ են կազմակերպում, մահապարտ ահաբեկիչներ են[13]:

Իրաքում մահապարտ ահաբեկիչների գործողությունների արդյունքում 2005թ. միայն մայիս-հունիս ամիսների ընթացքում զոհվել է 1,2 հազ. մարդ[14]:

Այս տվյալները պատահական չեն, քանի որ 2005թ. հունվարին անցկացված խորհրդարանական ընտրություններից հետո, օկուպացիոն ուժերի և ապստամբների միջև մարտերը Իրաքում նոր ուժով ծավալվեցին:

Վկայակոչելով ամերիկյան զինվորական հրամանատարության պաշտոնական ներկայացուցչին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում էր, որ Իրաքում ամեն օր մոտ 70 ահաբեկչություն է իրականացվում: Դրանց մեջ կան բազմաթիվ իրաքցի խաղաղ բնակիչներ, կանայք և երեխաներ: Մեծ թիվ են կազմում նաև զոհված ամերիկացի զինծառայողները: Միայն մայիսին Իրաքում զոհվել են 77 ամերիկացի զինծառայողներ:

Հակաիրաքյան պատերազմի սկզբից ի վեր սպանված ամերիկացիների թիվը հասել էր 1658-ի: Վիրավորների թիվը գերազանցել էր 12630-ը: 2005թ. մայիսի տվյալներով Իրաքում տեղաբաշխված ամերիկացի զինծառայողների թիվը կազմում էր 139 հազ.: Այդ նույն ամսվա ընթացքում Իրաքում զոհվել են նաև 600-ից ավելի իրաքցիներ, ինչպես նոր բանակի զինծառայողներ և ոստիկաններ, այնպես էլ խաղաղ բնակիչներ[15]:

Բնական է, որ Իրաքի սուննի մահմեդականները ձգտում էին ավելի լայն մասնակցություն ունենալ երկրի Սահմանադրության խմբագրական աշխատանքներին, ինչը այդպես էլ նրանց չհաջողվեց:

2005թ. մայիս-հունիս ամիսներին հաղորդվում էին Իրաքի հյուսիս-արևմուտքում շարունակվող մարտերի մասին: Ամերիկյան հրամանատարությունը հայտարարել է, որ Սիրիայի սահմանի մոտ իրաքցի ապստամբների դեմ ծավալված գործողությունների ընթացքում հունիսի 8-ին, չորեքշաբթի օրը սպանվել են 4 ամերիկացիներ, ձերբակալվել են 70 կասկածյալներ: Իսկ Ֆրանսպրեսի տվյալներով, այդ նույն շրջանում առևանգվել են 22 իրաքցի զինծառայողներ: Նրանք գերի են տարվել Ռավա քաղաքի մոտակայքում գտնվող իրաքյան բանակի ռազմակայանից ոչ հեռու, անհայտ զինյալների հարձակման հետևանքով: Նշված է, որ բոլոր այդ պատանդները շիա մահմեդականներ են[16]: Ինչը վկայում է, որ դա կարող էր լինել սուննիների ձեռքի գործը:

Իրաքի Նոր Սահմանադրության հաստատման նախաշեմին, ԱՄՆ-ի նախագահ Բուշը խոստովանել էր, որ Ամերիկան առաջիկա ժամանակներում կարող է բախվել Իրաքի ընդդիմադիրների առավել դաժան հակազդեցությանը: «Մեր երկիրը Իրաքում իրականացնում է բարդ առաքելություն, և մենք կարող ենք սպասել ավելի կատաղի ընդդիմադրության առաջիկա շաբաթների և ամիսների ընթացքում»,– ասել է նա ամերիկյան ռադիոյով իր երկրի ժողովրդին հասցեագրված ուղերձում:

Եվ, կարծես, ի հաստատումն Բուշի այս կանխատեսումների, Իրաքի հյուսիսում Մոսուլ քաղաքի ոստիկանական շտաբում տեղի ունեցած հերթական պայթյունը երկար սպասել չտվեց: Արդյունքում երեք մարդ զոհվեց, 14 մարդ ստացավ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, հաղորդում էր «Ռեյթեր» գործակալությունը[17]:

Նման մահաբեր գործողությունները Իրաքում այդ ժամանակահատվածի համար դարձան հատկանշական երևույթ: Այսպես, հուլիսի 11-ին Իրաքում, Բաղդադից հյուսիս-արևելք գտնվող Ջալիս քաղաքի մուտքի բլոկպոստի վրա իրականաց-

րած ահաբեկչական գործողության արդյունքում զոհվեցին 8 իրաքցի զինծառայողներ: Նման հարձակումները այդ շաբաթվա հանգստյան օրերին խլեցին ավելի քան 50 մարդու կյանք[18]:

Միաժամանակ սահմանադրական գործընթացներում ընդդիմադիրների պայքարը հանգեցրեց Իրաքում գործող դիվանագիտական ծառայողների խոցելիությանը: 2005թ. հուլիսի 5-ին Իրաքում Բահրեյնի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը ստացավ վնասվածքներ՝ անհայտ մարդկանց զինված հարձակման հետևանքով: Դեպքը կատարվեց էլ-Մանսուր հեղինակավոր շրջանում, ուր տեղակայված են դիվանագիտական առաքելություններ և արտասահմանյան ընկերությունների գրասենյակներ: Նույն օրը հրաձգության հարվածների ենթարկվեց Պակիստանի դեսպանատան ներկայացուցիչը[19]:

Իրաքում 2005թ. հուլիսի սկզբին Եգիպտոսի դեսպան Իհաբ Շերիֆը առևանգվեց գրոհայինների կողմից: Նրան մեղադրեցին ամերիկացիների հետ գործակցելու մեջ և մահապատժի ենթարկեցին: Հուլիսի 21-ին Բաղդադում առևանգվեցին ալժիրցի 2 դիվանագետներ:

Մեկնաբանների կարծիքով, իրաքցի գրոհայինները դիվանագետներին թիրախ են դարձնում միջազգային ընկերակցության կողմից Իրաքի նոր կառավարության ճանաչմանը խանգարելու նպատակով: Ընդ որում շատ հարձակումներ իրականացվում են քաղաքացիական վայրերում՝ այսպես, ականատեսների վկայությամբ, ալժիրցի դիվանագետների առևանգումը իրականացվել է Բաղդադի արևմտյան մասում գտնվող ռեստորաններից մեկի մուտքի մոտ: Առևանգիչները ռեստորանին մոտեցել են երկու ավտոմեքենաներով[20]:

Պակաս կարևոր չեն երկրի քաղաքական զարգացումների տեսանկյունից նաև ներքին անհամաձայնությունները, որոնք շատ դեպքերում ստանում էին զինված հակամարտությունների արտահայտում: Հայտնի է, որ Իրաքի ղեկավարությունը պաշտպանում էր շիաների «Բադրի կազմակերպությանը», իսկ վերջինս էլ մեղադրվում է բազմաթիվ սուննիների սպանության մեջ: Թեև 2005թ. մայիսի վերջից հունիսի սկիզբը

առևանգվել են 22 իրաքցի զինվորներ, Իրաքի Նախագահ Ջալալ Թալաբանին և վարչապետ Իբրահիմ ալ-Ջաֆարին հանդես են եկել շիաների «Բադրի կազմակերպության» պաշտպանությամբ:

CNN հեռուստաընկերությունը մեջբերում էր Թալաբանիի այն խոսքերը, թե շիա գրոհայինները և քրդերի զինված կազմավորումները Իրաքի ազատագրման հերոսներ են և երկրի հավատարիմ զավակներ[21]:

Փաստորեն Իրաքի ղեկավարությունը ներկայացնում էր այն ուժերին, որոնք իր հիմնական հենարանն են և որոնք կյանքի են կոչել հենց այդ իշխանությանը: Մանավանդ որ «Բադրի կազմակերպությունը» որպես քաղաքական շարժում ընդամենը երկու տարվա կենսագրություն ունի: Սակայն չմոռանանք, որ անցյալում այն կոչվում էր «Բադրի բրիգադներ», լինելով Իրաքի իսլամական հեղափոխության գերագույն խորհրդի զինված թևը՝ որպես շիա իրաքցիների ամենաազդեցիկ կազմակերպություն:

Նախագահ Թալաբանին մերժել է «Բադրի կազմակերպությանը» հասցեագրված մեղադրանքները, դրանք համարելով անհիմն ամբաստանություն: Միաժամանակ Իրաքի նոր նախագահը՝ շիաներին և քրդերին շնորհակալություն է հայտնել նախկին նախագահ Սադամ Հուսեյնին ցույց տված դիմադրության համար, ինչը նպաստեց այդ վարչակարգի տապալման նպատակի իրագործմանը: Նշվում էր, որ այդ կազմակերպությունն ուզում է էական դեր խաղալ Իրաքի անվտանգության ապահովման գործողություններում, իսկ սուննիները ձգտում են ավելի լայն մասնակցություն ունենալ երկրի Սահմանադրության խմբագրման աշխատանքներում[22]:

Այդ խմորումները Իրաքի նոր Սահմանադրության ընդունման նախաշեմին կազմում էին իրադարձությունների մի ամբողջ շղթա՝ գնալով դժվարացնելով նաև երկրի իրավապահների աշխատանքը: Մամուլում հաճախակի են դառնում տեղեկությունները գրոհայինների հարձակումների մասին զինծառայողներով տեղակայված վայրերում, որոնք ուղեկցվել են ծանր հետևանքներով:

2005թ. հուլիսի 19-ին Իրաքի տարբեր շրջաններում իրականացված մի քանի հարձակումների արդյունքում զոհվել է ավելի քան 15 մարդ՝ հիմնականում ոստիկաններ և զինծառայողներ: Միաժամանակ, տեղեկություն է տպագրված նաև այն մասին, որ Իրաքում ԱՄՆ-ի ռազմական ուժերի հրամանատարությունը հրաման է տվել ձերբակալել Քուրդստանի բանվորական կուսակցության առաջնորդներին[23]:

Այդ նույն մթնոլորտը շարունակվեց նաև հաջորդ օրերին: 2005թ. հուլիսի 20-ին Բաղդադում զինակոչային տեղամասի մոտակայքում իրականացված ուժեղ պայթյունի հետևանքով զոհվել է ամենաքիչը 10 մարդ, և 20-ը ստացել են վնասվածքներ:

Սուննիները, որոնք մասնակցում էին Իրաքի նոր Սահմանադրության նախապատրաստման հարցերով ստեղծված հատուկ հանձնաժողովի նիստերին, ստիպված էին հեռանալ այդ հանձնաժողովից, քանի որ հենց այդ օրերին՝ 2005թ. հուլիսի 19-ին, երեքշաբթի օրը իրենց երկու գործընկերները սպանվեցին անհայտ մարդասպանների արձակած հրազենային կրակոցներից[24]:

Ընդհանրապես, այս ժամանակահատվածը մի յուրօրինակ քննություն էր ոչ միայն Իրաքի համար թե ինչպես է փլուզված երկիրը վերաբերվում իր սեփական խնդիրներին, նաև կոալիցիոն ուժերի համար, որոնք հայտնվեցին աննախադեպ իրադրության մեջ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների համար, առաջին հերթին ՄԱԿ-ի, որը անդամ պետությունների հետ գործ ունի:

Տեսադաշտում պարզ պատկեր է, թե ինչպես Իրաքի Սահմանադրությունն ընդունելու փաստը որոշակի կատալիզատորի դեր կատարեց կոալիցիոն գլխավոր ուժերի համար:

Պատահական չէ, որ Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին մեղադրում էր վարչապետ Իբրահիմ ալ-Ջաֆարիին իշխանությունը ուզուրպացնելու մեջ: Քուրդստանի լրատվաիշխանությունը ... կան գործակալության տարածած հայտարարության մեջ, որի հեղինակն է նախագահ Թալաբանին, վարչապետ ալ-Ջաֆարիի հասցեին ասվում է, որ նա որպես երկրի կառավարության

ղեկավար խախտում է շիաների և քրդերի միջև իշխանության տարանջատման մասին իր լիազորությունները: Թալաբանին, լինելով ազգությամբ քուրդ, մեղադրում էր վարչապետին՝ մի շարք ազդեցիկ նախարարական պաշտոնները իր յուրային շիաների միջև բաշխելու շարժառիթով[25]:

Այդ նույն ժամանակահատվածում գնալով ավելի հաճախակի էին դառնում սեփական ուժերը վերագնահատող խոստովանությունները կոալիցիոն ուժերի կողմից:

Ինչպես հաղորդում էր «Նյու Յորք թայմսը», Պենտագոնի ղեկավարությունը մտադիր էր 2006թ. գարնանը Իրաքում տեղակայված իր զինծառայողների թիվը նվազեցնել 20-30 հազարով: 2005թ. օգոստոսի տվյալներով՝ ըստ այդ հրապարակման, Իրաքում ԱՄՆ-ի բանակի զինվորների թիվը 138 հազար էր: Իսկ 2005թ. դեկտեմբերին երկրում նախատեսված Ազգային ասամբլեայի ընտրությունների անցկացման առիթով այդ թիվը ժամանակավոր կավելանա, և ամերիկյան ավելի քան 160 հազար զինվորներ կտեղակայվեն Իրաքում[26]:

Մեծ Բրիտանիան նույնպես մտադիր էր իր զորքերի գերակշռող մասը դուրս բերել Իրաքից: Համաձայն «Սանդեյ մեյլ» բրիտանական թերթի լրագրողների հայթայթած գաղտնի փաստաթղթի, որը կրում է «Իրաքում իրադարձությունների զարգացման տարբերակներ» վերնագիրը, Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարար Ջոն Ռիդը վարչապետ Թոնի Բլերին հորդորում է առաջիկա երեք ամիսների ընթացքում Իրաքից վերադարձնել 8500 բրիտանացի զինվորների, իսկ մնացյալ 3000 զինծառայողներին դուրս բերել հաջորդ 6 ամսվա ընթացքում:

Այդ գաղտնի փաստաթղթում նշվում է նաև, որ բրիտանական զորքն Իրաքից հանելու որոշումը խաչ կքաշի ամբողջ կոալիցիայի վրա: Քանզի Մեծ Բրիտանիայից հետո Իրաքը կարող են թողնել ԱՄՆ-ի գլխավոր դաշնակից նաև այլ երկրներ:

Հիշյալ փաստաթուղթը առաջին իրական ապացույցն էր, որ բրիտանացիները որոշել են Իրաքում լքել ամերիկացիներին:

«Մտադիր ենք 2005թ. հոկտեմբերին իրաքցիներին հանձնել ալ-Մուտանայի և Մայսանի նահանգների վերահսկողությունը: Բրիտանացիների վերահսկողությանը ենթակա մյուս երկու նահանգներն իրաքցիներին կհանձնվեն 2006թ. ապրիլին», - նշված է փաստաթղթում[27]:

Այս նշված պետությունների օրինակին հետևելու միտում ուներ նաև Իտալիան, դատելով Շոտլանդիայում 2005թ. հուլիսի 8-ին ավարտված «Մեծ ութնյակի» գագաթաժողովում Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի այն հայտարարությունից, համաձայն որի՝ նույն տարվա սեպտեմբերից իր երկիրը սկսելու է Իրաքից 300 իտալացի զինծառայողների դուրս բերումը, վերջնական որոշումն այդ մասին վերապահելով «անվտանգության պայմաններից» կախվածության գործոնին[28]:

Հենց այդ նույն օրերին տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ տասնմեկ բրիտանական զինծառայողներ պետք է կանգնեն դատարանի առջև իրենց կատարած հանցագործությունների մեղադրանքով, որոնք իրականացրել են Իրաքում 2003թ. զինծառայության ընթացքում: Այդ հանցագործությունների թվում է նաև երկու անմեղ մարդկանց սպանություն, քաղաքացիական անձանց կազմից[29]:

2005թ. հոկտեմբերին Իրաքի Սահմանադրության ընդունման հանրաքվեից քիչ անց նախատեսված Իրաքի նախկին նախագահ Սադամ Հուսեյնի դատավարությունը նույնպես որոշակի հանգուցալուծումների առիթ տվեց: Նրա փաստաբան Իսսամ Գազզաուին հայտարարել է, որ իրենք մասնակցում են ոչ լիարժեք դատական պրոցեսի: Սադամ Հուսեյնին մեղադրում են մի շարք հանցագործությունների մեջ:

«Իզվեստիա» թերթի թղթակցի այն հարցին, թե «Ինչու՞ է դատավարությունը սկսվում հենց այդ ժամանակ: Չէ որ ամերիկյան ադմինիստրացիայի ներկայացուցիչները դեռ քիչ առաջ հավաստիացնում էին, որ Սադամի դատավարությունը չպետք է իր ժամանակացույցով համընկնի Իրաքի Սահմանադրության հանրաքվեի հետ, որը պետք է ավարտվի օգոստոսի կեսերին: Ամերիկացիները մտավախություն ունեին, որ Սադա-

մի դատավարությունը կառաջացնի միջկրոնական բախումներ: Ստացվում է, որ դրանից այլևս չե՞ն երկյուղում»: Սադամ Հուսեյնի փաստաբան Իսսամ Գազզաուին պատասխանել է՝ «Այդ ամենը մեծ հանելուկ է, չեմ կասկածում, այդ թվում նաև հենց իրենց՝ դատավորների համար: Գլխավոր խնդիրը Սադամ Հուսեյնի գործով Հատուկ տրիբունալի լրիվ կախվածությունն է ամերիկացիներից, այնպես որ ոչ միայն վերջնական որոշումները, այլ անգամ այդ տրիբունալի գործողությունների ծրագիրը մնում են անկանխատեսելի»[30]:

Այդ հարցազրույցը «Իզվեստիա» թերթում տպագրվել է 2005թ. հուլիսի 20-ին, դրանից հետո որոշ փոփոխություններ եղան կապված Իրաքի Սահմանադրության նախագծի քննարկումների ժամկետի հետ, քանի որ առաջին քննարկմամբ այն մերժվեց: Սակայն նշված հարցադրումը և դրա պատասխանը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Մանավանդ որ իրականում դեռ մինչև 2005թ. օգոստոսի վերջը Իրաքի Սահմանադրության կազմողները վիճում էին պետության կառավարման, իսլամի դերի, կանանց իրավունքների և նավթի վաճառքից ստացվող շահույթի բաշխման հարցերի շուրջ: Օգոստոսի 15-ին նախատեսված նախագծի հաստատումը օգոստոսի 28-ին այդպես էլ բավարար չափով չգոհացրեց երկրի բոլոր շահագրգիռ ուժերին:

«Նոր Հիմնական օրենքում կարտացոլվեն և՛ շիաների, և՛ սուննիների, և՛ քրդերի կարծիքները: Իրաքում վերջապես դեմոկրատիա կլինի, - հայտարարել է հատուկ հանձնաժողովում շիաների նախագահ Ալի ալ-Դաբբաղը: Նա ավելացրել է, որ նախկինում ամեն ինչ այլ ձևով էր ընթանում: Սադամ Հուսեյնը անձամբ էր գրել Սահմանադրությունը և ինքը ներկայացնում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը մեկ դեմքով»[31]:

Իրաքի նոր Սահմանադրությունը թվով յոթերորդն էր լինելու Իրաքի վերջին 84 տարիների պատմության մեջ: Այդ Սահմանադրության նախագծի հաստատմանը կոչված սահմանադրական հատուկ հանձնաժողովի կազմը 71 հոգուց էր բաղկացած՝ 15 սուննիներ, 15 քրդեր, 28 շիաներ և մնացած 13-

ը՝ առանձին կուսակցությունների, շարժումների էթնիկ խմբերի ներկայացուցիչներ: Կանանց ընդհանուր թիվը հատուկ հանձնաժողովում 9-ն էր: Պարզվում է, որ կանայք Իրաքում ակտիվ վերաբերմունք են ցուցաբերում Սահմանադրության հարցերում:

«Նրանք մեզ մոտ ամենաակտիվն են: Ցանկանում են ստանալ այնպիսի իրավունքներ, ինչպիսիք ունեն Արևմուտքում գեղեցիկ սեռի ներկայացուցիչները», իրաքցի կանայք մտավախություն ունեն, որ նոր Սահմանադրությունը բացառապես կհենվի իսլամի նորմերի վրա: «Այդ դեպքում կանայք տղամարդկանց համեմատությամբ ավելի քիչ իրավունքներ կունենան, օրինակ՝ ժառանգության փոխանցման կամ ապահարզանի դեպքում», - ասել է Իսլամական իրավունքի բրիտանական ուսումնասիրության կենտրոնի փորձագետ, «Ֆեմինիզմը և իսլամը» գրքի հեղինակ Մաի Յամանին»[32] «Իզվեստիա» թերթի թղթակցին:

Մինչ Ջորջ Բուշի աղմինիստրացիան ստիպված էր սկսել նոր հետաքննություն կապված Իրաքում ամերիկյան զինվորականների չարաշահումների հետ, այս անգամ խոսքը Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնի լուսանկարների շարքի մասին էր, որոնք պատկերում էին նրան ԱՄՆ-ի հսկողության տակ գտնվող Բաղդադի մոտ տեղակայված բանտում[33].

Նախագահ Բուշը փորձել է դեպքի առիթով զարմացած հասարակությանը հանգստացնել, ասելով՝ «ես չեմ կարծում, որ այդ լուսանկարների հրապարակումը իրաքյան խռովարարներին կստիպի իրագործել նոր հանցագործություններ»: Ըստ Պենտագոնի ներկայացուցիչների, այդ լուսանկարները ունեն մեկ տարվա վաղեմություն՝ կատարված են մոտավորապես 2004թ. հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում: Սադամ Հուսեյնը այդ ժամանակահատվածում գտնվում էր ԱՄՆ-ի զինվորականության ձեռքում /նրան ձևականորեն էին հանձնել իրաքցիների հսկողությանը՝ 2004թ. հուլիսին/: Դա նշանակում է՝ նրա վրա տարածվում էր Ժնևյան կոնվենցիայի համապատասխան հոդվածը ռազմագերիների իրավունքների մասին,

համաձայն որի արգելվում է հրապարակել զերիների անձնական կյանքի մասին որևէ նյութ:

Դեպքի առիթով Բուշի առաջին հայտարարությունից երկու ժամ անց, Սպիտակ տան մամլո քարտուղարի տեղակալ Թրենթ Դաֆֆին ընդունեց, որ այդ լուսանկարների հրապարակումը ամերիկյան զինվորական կանոնադրության և Ժնևյան կոնվենցիայի կոպիտ խախտում է: «Ես կարծում եմ, որ մեզ կարող են սպասվել լուրջ հետևանքներ», - ասաց նա, շարունակելով, որ ամերիկյան նախագահը կատարվածը ծանր է ընկալել և պահանջում է անցկացնել ամենամանրամասն հետաքննություն[34]:

Այդ լուսանկարները միաժամանակ հայտնվել էին բրիտանական «Սան» և ամերիկյան «Նյու Յորք փոստ» թերթերի էջերում, որոնք պատկանում են նույն սեփականատիրոջը՝ մեդիա-մագնատ Ռուպերտ Մերդոկին:

ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հարմար առիթ էր փնտրում ամերիկացիներին հիշեցնելու, որ իրենց երկիրը գտնվում է պատերազմական վիճակում: «Մենք գտնվում ենք պատերազմական վիճակում և սա դրա վշտալի հետևանքն է», - ասաց նա Իրաքում 2005թ. օգոստոսին զոհված 14 ծովային հետևակայիններին հրաժեշտի արարողության առիթով իր ելույթում, Դալլասի մերձակայքում:

Ամֆիբիա զրահամեքենան պայթել էր Եփրատի հովտում ռազմական գործողություն իրականացնելիս, ճանապարհին տեղադրված ռումբից: Դա ամերիկյան զինուժի ամենամեծ կորուստներից էր. սկսած 2003թ. մարտից Իրաքում զոհված զինծառայողների թիվը հասնում էր 1820-ի[35]: Իրաքում զոհված ծովային հետևակայինների թիվը վերջին մեկ շաբաթում կազմում էր 21 մարդ: Իսկ զոհվածների մայրերը համոզված էին, որ իրենց որդիները իզուր են զոհվում և պատասխան էին պահանջում՝ «Իրաքը Ամերիկայի համար վտանգ չէր ներկայացնում, և մեր որդիները անհասկանալի է, թե հանուն ինչի են մեռնում», - ասում էր որդեկորույս Սինդի Շահանը Ջորջ Բուշի նախագահական տեխասյան ռանչոյի մոտ Կրոֆորդում կայացած իմպրովիզացված ցույցի ժամանակ, որի մասնակիցները

ամերիկյան զոհված զինծառայողների մայրերն էին[36]: Այդ արարողությունը համընկնեց ամերիկյան «Նյու Ուիկ» հանդեսի մի հրատարակմանը՝ հասարակական հարցման տվյալների մասին, համաձայն որի ամերիկացիների մեծամասնությունը՝ 61%-ը, չի սատարում Բուշի ռազմավարությանը Իրաքում: Սա Իրաքում ԱՄՆ-ի վարած պատերազմի սկզբից մինչ այդ ժամանակահատվածը, ամենացայտուն ցուցանիշն էր[37]:

* * *

Նշված ժամանակահատվածը Իրաքում քաղաքական բարդ հագեցվածությամբ թելադրում էր համապատասխան գործունեություն, ուրեմն և համապատասխան դիրքորոշում ՄԱԿ-ի համապատասխան կառույցների կողմից: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահի կողմից հաստատված փաստաթղթերի Իրաքին վերաբերող մասի հիմնական ասելիքը հետևյալն էր՝՝ ուժեղացնել աջակցությունը Իրաքին: Դրանցից մեկը ընդունված է 2004թ. մարտի 24-ի նիստի 4930 գրանցումով և կրում է՝ «Ուժեղ աջակցություն Միացյալ ազգերի հանձնախմբի կողմից Իրաքին ցույց տրվող օգնությունը անհապաղ իրականացնելու մասին որոշմանը» վերնագիրը[38], որը նաև դիմումի տեսք ունի:

Չաջորդը՝ ՄԱԿ-ի ԱԽ նախագահի կողմից հաստատված փաստաթուղթը, ընդունված է 2004թ. ապրիլի 27-ին կայացած 4953 նիստի արձանագրությամբ և կրում է «Ուժեղ աջակցություն Իրաքի հատուկ խորհրդականի ջանքերին» վերնագիրը[39]:

Ուշադրության արժանի այս կարևոր փաստաթղթերը, իրենց բովանդակությամբ լինելով միջանցիկ, չէին սահմանափակվում ընդունման ժամկետով և շարունակական բնույթ ունեցան: 2004թ. օգոստոսի 12-ին կայացած նիստի 5020 գրանցման համաձայն նշվում են նաև նախկին բանաձևերը՝ 1500 /2003/, 14 օգոստոսի 2003 և 1546 /2004/, 8 հունիսի 2004: Այս հիմքի վրա ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշում է

կայացրել երկարաձգելու Իրաքին ցույց տրվող իր կազմակերպության օժանդակության առաքելությունը, նկատի ունենալով, որ ՄԱԿ-ը կարող է ղեկավար դեր խաղալ Իրաքի ժողովրդին և կառավարությանը ցույց տրվող օգնությամբ ձևավորելու այնպիսի ինստիտուտներ, որոնք կներկայացնեն օրինակելի կառավարություն: Այդ բանաձևի համաձայն Իրաքին ցույց տրվող օգնության առաքելության մանդատը երկարաձգվեց ևս 12 ամսով, հաշված իր ընդունման ժամկետից մինչև 2005թ. օգոստոս[40]: Նշվածը՝ վերջնաժամկետ չէ: Շարունակվեց նաև Իրաքի համար կարևոր «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը, որը ամենից վիճահարույցն էր ՄԱԿ-ի համար իր հետևանքներով, որոնց մասին զանգվածային լրատվամիջոցները բազմիցս անդրադարձան[41]: Այսուհանդերձ՝ նշված ժամանակահատվածի առանցքում մնում է Իրաքի նոր Սահմանադրության ընդունումը, դրան նախորդող գործընթացներով: ՄԱԿ-ը այդ ընթացքում ցուցաբերել է հստակ դիրքորոշում: «Նոր Սահմանադրությունը, իհարկե, կլինի իրաքյան Սահմանադրություն, և իրաքցիները իրենք կորոշեն դրա ձևը: Խոսք անգամ լինել չի կարող իրաքցիների համար անընդունելի օտար գաղափարների և մոդելների մասին: Սակայն, եթե նրանք խորհուրդ հարցնեն /իսկ ես մտածում եմ, նրանք դրան կդիմեն/, մենք բավարար գիտելիքներ և փորձ ունենք, որոնցով կարող ենք կիսվել: Հոկտեմբերին, Սահմանադրության նախագծի համաձայնեցումից հետո, տեղի կունենա հանրաքվե, որը բոլոր իրաքցիներին հնարավորություն կտա արտահայտելու իրենց կարծիքը այդ առիթով: Մենք հույս ունենք, որ կարող ենք ընտրական հանձնաժողովի հետ համագործակցել հանրաքվեի կազմակերպման ընթացքում և դրան հաջորդող խորհրդարանական ընտրություններում այնպես, ինչպես մենք համագործակցեցինք նրա հետ վերջերս կայացած ընտրությունների նախապատրաստման ընթացքում և մինչև այժմ համատեղ աշխատում ենք արդյունքների մշակման և ստուգման վրա», - նշել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը:

Դեռևս 2005թ. մարտի սկզբին նա հրապարակել է հետևյալ տվյալները՝ ՄԱԿ-ի հաստատությունները, հիմնադրամ-

ները և ծրագրերը, ընդհանուր թվով՝ 23, համատեղ աշխատում են երկրի վերակառուցմանն ուղղված միջազգային օգնությունը համակարգելու գծով: ՄԱԿ-ը հավանություն է տվել և ֆինանսավորել է ընդհանուր թվով 46 նախագծի՝ 494 միլիոն ԱՄՆ-ի դոլար արժողությամբ: Նա նշել է նաև, որ կարևորը ոչ թե ՄԱԿ-ի աշխատակիցների թիվն է, այլ որ Իրաքում իրենց աշխատանքի մեծ մասը՝ հանձնախմբի ուսուցանում, կոնսուլտացիոն աշխատանք, համակարգում, ֆինանսական միջոցների հոսքերի սպասարկում և այլն, կարելի է իրագործել նաև երկրից դուրս, այսինքն պայման չէ Իրաքում գտնվելը[42]:

Սույն աշխատության մեջ օգտագործված նյութերի լուսաբանումը հաստատում է նաև, որ իրաքյան նավթի դերը գնալով ձեռք է բերում կարևոր նշանակություն ոչ միայն որպես տնտեսական գործոն, այլ նաև ԱՄՆ-Իրաք հակամարտության քաղաքական զարգացումներում ոչ պակաս բնութագրական չարժառիթ և կռվան: «Չիկագո Սան թայմս» թերթը տեղեկացնում էր, որ Կալիֆոռնիայում ռազմածովային բազայում 2005 թ. սեպտեմբերի 1-ի իր ելույթում Բուշը հայտարարել է, որ ամերիկյան զորքերը պետք է Իրաքում մնան երկրի նավթային հարստությունները ահաբեկիչներից պաշտպանելու համար: Բուշի խոսքերով, եթե ալ-Զարքաուին և Բեն Լադենը տիրանան Իրաքին, ապա այնտեղ ահաբեկիչների նոր հենակետ կստեղծեն, իսկ նավթը կօգտագործեն իրենց չարագույժ ծրագրերի ֆինանսավորման նպատակով[43]:

## THE POLITICAL SITUATION IN IRAQ
## (JUNE 2004 – AUGUST 2005)
## AND THE POSITION OF THE UNITED NATIONS

The article deals with the analyses of the political sphere in Iraq in period of June 2004 – August 2005. This period was very intensive in Iraq: the reconstruction of national and local institutions; the preparations for direct elections; the process of active debates about the problems of the new Constitution etc.

The United Nations role in Iraq in this period – important factor.

The actions of the Security Council of the United Nations in Iraq included the democratic methods for just solve the very difficult political problems for this phase. The decision about the extention of UN Assistance Mission for Iraq is very important step. The Security Council having considered the report of the Secretary-General of 5 August 2004 (S/2004/625) decides to extend the Mandate of the United Nations Assistance Mission for Iraq (UNAMI) for a period of twelve months from the date of this resolution. United Nations should play a leading role in assisting the Iraqi people and government in the formation of institutions for representative government.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Տե՛ս «ՄԱԿ-ը մշակում է Իրաքի հետպատերազմյան կառուցվածքի ծրագիր», «Ազգ», 6, III, 2003, էջ 5:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Տե՛ս Организация Объединенных Наций. Генеральная Ассамблея. A/59/100, Distr: General 15 June 2004, Russian Original: English, c. 300, 243, 244, 245, 274, 275, 280, 292.
7. Տես՝ "Известия", 8 IV, 2005, c. 6.
8. Кофи Анан, Начать с чистого листа, "Известия", 2. III. 2005, c. 4.
9. Նույն տեղում:
10. «Սուննիները կրկին դեմ են», «Հայկական ժամանակ», 30, VIII, 2005, էջ 7:
11. «Ազգ», 26, VIII, 2005, էջ 5:
12. "Независимая газета", 20–21.V. 2005, c.6.
13. Նույն տեղում, 28. VI. 2005,c. 8.
14. Նույն տեղում:
15. «Ազգ», 2. VI. 2005, էջ 5:

16. «Ազգ», 10. VI. 2005, էջ 5:
17. "Известия", 28. VI. 2005, с. 4.
18. "Независимая газета", 12. VII. 2005, с. 8.
19. Նույն տեղում, 6. VII. 2005, էջ 6:
20. «Ազգ», 23. VII. 2005, էջ 5:
21. Նույն տեղում, 10. VI. 2005, էջ 5:
22. Նույն տեղում:
23. "Независимая газета", 20. VII. 2005, с. 6.
24. Նույն տեղում, 21. VII. 2005, с. 6.
25. Նույն տեղում, 12. VII. 2005, с. 8.
26. "Известия", 8. VIII. 2005, с. 4.
27. «Ազգ», 12. VII. 2005, էջ 5:
28. Նույն տեղում:
29. "Независимая газета", 21. VII. 2005, с. 6.
30. "Известия", 20. VII. 2005, с. 1, 3.
31. Նույն տեղում, 11. VIII. 2005, с.4.
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում, 23. V. 2005, էջ 4:
34. Տե՛ս նույն տեղում:
35. Նույն տեղում, 5. VIII. 2005, էջ 6:
36. Նույն տեղում, 8. VIII. 2005, էջ 4:
37. Նույն տեղում:
38. S /PRST/ 2004/6, Strong support for decision to dispatch UN assistance team to Iraq, United Nations, Press Release, Security Council, SC/8293, 17 January 2005, Resolutions and Statements of the Security Council, 2004, p. 119.
39. Նույն տեղում, S /PRST/ 2004/11, Strong support for efforts of Special Adviser on Iraq, p. 124.
40. Նույն տեղում, S /RES/ 1557, Extension of UN Assistance Mission for Iraq, p. 73-74.
41. Տե՛ս "Известия", 24. III. 2005, с. 3; 1. IV. 2005, стр. 3; 18. V. 2005, с. 2.
42. Նույն տեղում, 2. III. 2005, էջ 4:
43. «Ազգ», 2. IX. 2005, էջ 5:

## ՄԱԿ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ՕՐԻՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ

Այս գրքի նախորդ մասում մասնակիորեն անդրադարձ է եղել նաև Իրաքի նոր Սահմանադրության նախագծի փաթեթին, որը այդ երկրի հասարակայնության հավանությանն արժանացավ 2005 թ. օգոստոսի 28-ին[1]:

Ինչպես ցույց տվեց իրաքյան իրականությունը, փաստորեն 2005 թվականը օրինաստեղծ կարևորագույն գործընթացների հանգուցալուծման տարեթիվ կարելի է համարել. այդ նույն թվականի հունվարին Իրաքի խորհրդարանական ընտրություններն էին, հոկտեմբերի 15-ին կայացավ նոր Սահմանադրության հանրաքվեն, իսկ դեկտեմբերի 15-ին անցկացվեցին երկրի Ազգային ժողովի ընտրությունները:

Հեղինակի նպատակն է ցույց տալ ՄԱԿ-ի մասնակցությունը և կատարած դերը երկրի համար կարևոր և շրջադարձային այնպիսի ժամանակահատվածում, որն ընդգրկում է վերը նշված իրադարձությունների շղթան:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը իր անմիջական աջակցությամբ դրական դեր է կատարում՝ նպաստելով օրենքի իշխանությանը և ժողովրդավարության ճանապարհին, իրաքցիների համար դժվար ու բարդ իրադրության պայմաններում: Եվ պետք է նշել, որ այս ուղղությամբ առաջին քայլերը բավական հետաքրքրություն են ներկայացնում նաև գիտական լուսաբանման տեսանկյունից:

Անդրադառնալով ՄԱԿ-ի՝ Իրաքին վերաբերող փաստաթղթերին, այս կազմակերպությունը կարևորում և առանձնացնում է 2005թ. փետրվարի 16-ի թիվ 5124 նիստի որոշումը, որտեղ ասվում է, որ Անվտանգության խորհուրդը շնորհավորում է Իրաքի ժողովրդին 2005 թ. հունվարի 30-ի ընտրությունների առիթով: Միաժամանակ տրվում է այդ ընտրությունների գնահատականը: Այն է՝ «Այս ընտրությունները ներկայացնում են Իրաքի համար պատմական պահը, հանդիսանալով դրական

քայլ քաղաքական անցումային շրջանում»: «Քվեարկության միջոցով իրաքցիները ցույց տվեցին իրենց վերաբերմունքը օրենքի իշխանությանը, մերժելով բռնությունը: Նրանք ձայն տվեցին ժողովրդավարությանը և հաստատեցին սեփական իրավունքը՝ վճռականությամբ իրենց խնդիրներին տեր կանգնելու գործում: Անվտանգության խորհուրդը շնորհավորում է Իրաքի ժողովրդին այս քայլի և ձեռքբերման առիթով՝ հաստատել իր իրավունքը ազատորեն որոշելու իր սեփական քաղաքական ապագան, և մաղթում է շարունակել առաջ ընթանալ իր ընտրած քաղաքական ճանապարհով:

Անվտանգության խորհուրդը շնորհավորում է այդ ընտրություններում նորընտիր կոալիցիաներին և առանձին անհատներին»[2]:

Նշվում է, որ ընտրությունները անցկացվեցին դժվարին պայմաններում, և Անվտանգության խորհուրդը ողջունում է Իրաքի ժողովրդի խիզախությունը, որը նա ցուցաբերեց, հաստատելով իր զորակցությունը ժողովրդավարությանը, հաշվի չառնելով ահաբեկիչներին: Անվտանգության խորհուրդը արձանագրել է տասնյակ հազարավոր իրաքցիների մասնակցությունը, ովքեր ներկայացել են որպես թեկնածուներ, ընտրություններում կատարել ադմինիստրատիվ աշխատանքներ, անձնապես ապահովել ընտրական ճշտված ցուցակների առկայությունը, նաև պահպանել ընտրությունների ընթացքը, ապահովելով անվտանգությունը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հատուկ նշանակություն է տալիս Իրաքի Անկախ ընտրական հանձնաժողովին՝ նրա ցուցաբերած համառության և ընտրությունների ադմինիստրատիվ աշխատանքը իրականացնելիս կազմակերպչական հմտության համար: Անվտանգության խորհուրդը հավանություն է տալիս գլխավոր քարտուղարին և Միացյալ ազգերի կազմակերպությանը, ընտրությունների նախապատրաստությունը հաջողությամբ անցկացնելու համար, ներառյալ կոնսուլտացիաները և լայն աջակցությունը իրաքցիներին: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի Իրաքի գծով հատուկ ներկայացուցիչ Աշրաֆ Գազիի անձնական ակտիվ մասնակցության հետ մեկ-

տեղ նշվում են նաև ՄԱԿ-ի Իրաքի գծով Օժանդակության առաքելությունը (UNAMI)*, հատկապես ընտրական խորհրդատու ղեկավար Կառլոս Վալենզուելայի, ՄԱԿ-ի ընտրությունների Օժանդակության բաժանմունքի (EAD)** և նրա տնօրեն Կարինա Պերելլիի աշխատանքը և դրական արդյունքները:

Անվտանգության խորհուրդը ուշադրություն է հրավիրում նաև Իրաքի Անվտանգության ուժերի և Իրաքում բազմազգ զինված ուժերի գովեստի արժանի դերին՝ ընտրությունների անվտանգությունն ապահովելու գործում:

Այդ ընտրություններն Իրաքի քաղաքական անցումային այս փուլում, գտնվելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1546 որոշման շրջանակում կարևոր քայլ հանդիսացան: Անվտանգության խորհուրդն Անցումային ժամանակավոր Ազգային ժողովի դերը գնահատում է բարեհաջող և իր գործը կատարած, անհրաժեշտ համարելով Իրաքի նոր ժամանակավոր կառավարության ձևավորումը որպես հաջորդ քայլ[3]: Նշենք, որ սա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի տված պաշտոնական գնահատականն է:

Փաստորեն այս փաստաթուղթը ծրագրային է, քանի որ հաջորդականությամբ թվարկվում են այն օրինաստեղծ գործողությունները, որոնք ի կատար ածվեցին և կայացան 2005 թվականի ընթացքում:

Նշված փաստաթղթում ասվում է՝ «Իրաքի Սահմանադրությունը նախագծվել է Անցումային Ազգային ժողովի գլխավորությամբ, որի վերջնաժամկետը կդրվի 2005 թ. հոկտեմբերի հանրաքվեով, որին կհաջորդեն 2005 թ. դեկտեմբերի համընդհանուր ընտրությունները՝ նոր Սահմանադրության պայմաններում: Անվտանգության խորհուրդը իր շարունակական աջակցությունն է հավաստիացնում Իրաքի ժողովրդին իր քաղաքական անցման, Իրաքի անկախության, սուվերենության, միասնության և տարածքային ամբողջականության ամրապնդման ապահովմամբ»[4]:

---

* UN Assistance Mission for Iraq - UNAMI
** UN Electoral Assistance Division - EAD

Ուշադրության արժանի է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան կառույցների մասնակցությունը Իրաքի հասարակայնության տարբեր շերտերի հետ աշխատանքներում՝ նպատակ ունենալով իրազեկել նրանց, որպեսզի մարդիկ համոզված լինեն, թե ինչ նպատակ է հետապնդում երկրի նոր Սահմանադրությունը, և իրենց տված ձայների հանրագումարը ինչպիսի դեր կխաղա այդ գործում:

«Կարևոր և խիստ անհրաժեշտ համարելով Իրաքի հասարակայնության բոլոր խավերի մասնակցությունը քաղաքական գործընթացներում, Անվտանգության խորհուրդը գտնում է, որ կարիք կա աջակցելու քաղաքական ուժերի անցման շրջանի այն հաջորդ քայլերին, որոնք բխում են սահմանադրական գործընթացից, լիովին ապահովելով ընտրողների մասնակցությունը, ընտրությունների թափանցիկությունը որպես անհրաժեշտ պայման: Խորհուրդը ողջունում է այն հայտարարությունները, որոնք արվում են Իրաքի լիդերների կողմից այս ուղղությամբ և հատկապես խրախուսում է Իրաքի ժամանակավոր կառավարությանը և Իրաքի ժամանակավոր Ազգային ժողովին, որոնք իրականացնում են հնարավորը՝ Իրաքի հասարակայնության բոլոր հատվածները լայնորեն ներգրավելու այդ գործընթացին, կոչ անելով քաղաքական երկխոսության և ազգային համաձայնության, հույս ունենալով, որ բոլոր իրաքցիները կներկայանան և ձայն կունենան քաղաքական գործընթացներում, որոնք ծավալվում են Իրաքի Սահմանադրության նախագծի շուրջ»[5]:

«ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կարևորում է SRSG-ի* - և UNAMI-ի ղեկավար դերը, որը արտացոլված է UNSCR** 1546 որոշման մեջ, ի աջակցություն Իրաքի սեփական շահերի, այն դիտելով Իրաքի կառավարության կողմից ստանձնած պատասխանատվության դրսևորում, ազգային երկխոսություն ծավալելու նպատակով և ազգային սահմանադրության նախագիծը ստեղծելու գործում կոնսենսուս ապահովելու համար: Այս

* Special Representative Secretary – General's – SRSG.
** United Nations Security Council Resolutions – UNSCR.

տեսանկյունից. Անվտանգության խորհուրդը անհրաժեշտ է համարում, որպեսզի ՄԱԿ-ը ինքն էլ պատրաստ գտնվի արագորեն աջակցելու միջազգային հանրությանը՝ խորհրդատվությամբ և տեխնիկական բնույթի աջակցությամբ օժանդակի իրականացնելու այս գործը»[6]:

Նշենք, որ Իրաքի նոր Սահմանադրության ընդունման գործընթացները ընթանում էին ընդդիմադիր ուժերի հետևողական հակազդեցության պայմաններում, երբ տեղ էին գտնում նաև ահաբեկչական գործողություններ և այլ բռնություններ ու ճնշումներ: «ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը խստորեն դատապարտելով ահաբեկչական գործողություններն Իրաքում, համարելով, որ դրանք չեն նպաստում երկրի քաղաքական և տնտեսական անցումային շրջանի շահերին, կոչ է անում բոլոր նրանց, ովքեր դիմում են բռնի ուժ գործադրելուն քաղաքական գործընթացը ձախողելու նպատակով, վայր դնել իրենց զենքերը և մասնակցել քաղաքական գործընթացներին: Այն նաև հավանություն է տալիս Իրաքի իշխանությունների դիրքորոշմանը, որոնք պատասխանատվություն են կրում բոլոր նրանց համար, ովքեր մերժում են բռնի ուժը և ձգտում են ստեղծել քաղաքական մթնոլորտ՝ ինչը կնպաստի ազգային համաձայնությանը և քաղաքական մրցակցությանը խաղաղ միջոցներով հասնելուն»[7]:

Կարևոր է ընդգծել նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համագործակցությունը Իրաքին մոտ կանգնած երկրների և ռեգիոնալ կազմակերպությունների հետ, ովքեր շահագրգիռ էին նպաստել այդ երկրում կարգ ու կանոն հաստատելու միտումներին՝ օրինաստեղծ ճանապարհով:

«Անվտանգության խորհուրդը ընդգծում է քաղաքական գործընթացներում Իրաքին մոտ կանգնած երկրների և տարածքային կազմակերպությունների աջակցությունը շարունակելու կարևորությունը՝ համագործակցելով Իրաքի իշխանությունների հետ, վերահսկելու Իրաքի սահմաններով տրանզիտը և այլ բնույթի օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը Իրաքի ժողովրդին՝ հանուն անվտանգության ապահով-

ման և երկրի բարգավաճման նրանց գործադրած ջանքերի իրականացման»[8]:

«ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի UNSCR-1546-ի համաձայն, խորհուրդը իր աջակցությունն է հայտնում ֆեդերալ, դեմոկրատական, պլյուրալիստական և ամբողջական Իրաքին, ուր հարգվում են մարդու իրավունքները: Այն ողջունում է միջազգային հանրությանը, Իրաքի ժողովրդին աջակցելու համար, որի նպատակն է խթանել և ավելացնել տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների Իրաքին ցույց տրվող օգնությունը, առաջիկայում իրագործելու քաղաքական անցման գործընթացները և ջանքեր գործադրել ազգային համաձայնության, տնտեսական վերակառուցման և կայունության օգտին, ինչպես նշված է UNSCR-ի 1546-ում»[9], - նշված է 2005թ. փետրվարի 16-ի 5124 նիստի ընդունած փաստաթղթում:

Փաստորեն երկուսուկես տարի էր անցել անգլո-ամերիկյան կոալիցիոն զորքերի Իրաք ներժուժումից: Եվ Իրաքի նոր Սահմանադրությունը պետք է ճանապարհ հարթեր այդ զորքերի իրենց երկրում գտնվելու պայմաններում: Խուճապային տրամադրությունները սովորական էին դարձել բնակչության շրջանում: Դրա սահմռկեցուցիչ օրինակներից է 2005թ. օգոստոսի 31-ի ահաբեկչական խուճապը, որի հետևանքով ամբոխի զոհը դարձան ավելի քան 600 ուխտավորներ: Շիա ուխտագնացների խաղաղ երթի ընթացքում խուճապի հետևանքով զոհվեց մոտավոր թվով 648 մարդ և հարյուրավոր մարդիկ վիրավորվեցին: Այս անգամ ողբերգության պատճառները զինված գրոհայինների գործողությունները չէին և ոչ էլ ահաբեկչական գործողություն էր իրականացված: Բազմահազարանոց ամբոխի ներսում ինչ-որ մեկը աղաղակել էր, որ ինքը տեսել է մահապարտ-ահաբեկիչների:

Իրաքի մայրաքաղաք Բաղդադում էին հավաքվել համարյա մեկ միլիոն ուխտավորներ՝ հարգելու շիաների յոթերորդ իմամ Մուսա ալ-Կազիմի հիշատակը: Օգոստոսի 31-ին նրանց մեծամասնությունը երթով շարժվեց ալ-Կազիմի շրջանում գտնվող «Ոսկե մզկիթ»: Հենց այն ժամանակ, երբ նրանք

անցնում էին Տիգրիս գետի վրայի կամրջով, ամբոխում, ըստ ոստիկանության տվյալների, լուր տարածվեց, որ այնտեղ՝ ուխտավայրում, գտնվում են շահիդ ինքնասպաններ: Տագնապից խելակորույս հավատացյալները ջանում էին հեռանալ կամրջից՝ ցանկացած հնարավոր միջոցներով: Առաջացած հրմշտոցի պայմաններում հարյուրավոր շիաներ զոհվեցին, մնացածներն էլ խեղդվեցին Տիգրիս գետի ջրերում, քանի որ կամրջի հենասյուները չդիմանալով ամբոխի ծանրությանը փլվեցին: Այս տեղեկությունը հայտնել է «Ալ-Ջազիրա» հեռուստաալիքը:

Այս ողբերգությունից երկու ժամ առաջ, հենց կամրջի վրա անհայտ անձինք կրակ էին բացել արկերից շիա մահմեդականների ուղղությամբ, որոնք հասցրել էին հավաքվել «Ոսկե մզկիթի» շուրջը: Դրա հետևանքով յոթ մարդ զոհվեց[10]:

Իսկ ամերիկյան զորքի թվակազմը գնալով ավելացվում էր:

Հոկտեմբերի 15-ին նախատեսված Իրաքի Սահմանադրության հանրաքվեի կապակցությամբ Պենտագոնը հավելյալ 14 հազար զինծառայող է ուղարկել Իրաք, դրանով ամերիկացի զինծառայողների թվակազմը դարձնելով 152 հազար: «Ազգ»-ը գրում է, որ Վաշինգտոնում այդ մասին լրագրողներին հայտարարել է անձամբ գեներալ Քարտեր Հեմը:

Այդ հավելումը զինուժով անսպասելի չէր և նախատեսված էր, քանի որ 2005թ. օգոստոսին ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը հրապարակավ արտահայտել էր այդ մտադրության մասին: Դրանով նախարարը զորավիգ էր ԱՄՆ-ի նախագահին, նրա հետևյալ հայտարարությունների ոգուն՝ «Քանի դեռ ես ԱՄՆ-ի նախագահն եմ, մենք կմնանք Աֆղանստանում և Իրաքում, կպայքարենք ահաբեկչության դեմ և կհաղթենք»: Այսպես է արտահայտվել Ջորջ Բուշը Այդահոյի նահանգում Ազգային գվարդիայի զինծառայողների և նրանց ընտանիքների առջև իր ելույթում[11]:

Իրաքն «ըստ երևույթին վերածվում է ճահճի», այս կարծիքն է հայտնել ԱՄՆ-ի նախկին նախագահ Բիլ Քլինթոնը՝ կանանց համար նախատեսված հանդեսներից մեկի իր հետ

հարցազրույցում: Միաժամանակ նա նշել է, որ Իրաքի և Վիետնամի պատերազմների գլխավոր տարբերությունն այն է, որ ընտրություններին մասնակցեց իրաքցիների կեսից ավելին, մինչդեռ «վիետնամցիները երբեք չօրինականացրին իրենց կառավարությունը»[12]:

Վերը նշված գնահատականը բավական խոսուն և խորքային է, քանի որ սեղմ ու լակոնիկ համեմատությամբ, տարողունակ ասելիք է պարունակում: Չասկանալի է, որ խոսքը 2005թ. հունվարին կայացած խորհրդարանական ընտրությունների մասին է:

Ինչ վերաբերում է Իրաքի նոր Սահմանադրության տեքստին, ապա այս փաստաթուղթը կազմված է Իրաքի երկու հիմնական համայնքների՝ շիաների և քրդերի ներկայացուցիչների կողմից, որոնք 2005 թ. հունվարին կայացած ընտրությունների ժամանակ հաղթանակ են տարել: Իսկ սուննիների համայնքի ներկայացուցիչները, որոնք Սադամ Չուսեյնի ղեկավարության օրոք առաջնակարգ դիրքեր էին զբաղեցնում, հրաժարվեցին այդ փաստաթղթի տեքստն ընդունելուց, ընդդիմանալով՝ Իրաքի ֆեդերատիվ կառուցվածքի մտավախությունից դրդված:

Քրդական համայնքի առաջարկած պետության անվանումը՝ այն է Իրաքի Ֆեդերատիվ հանրապետություն, չընդունվեց և մերժվեց: Սակայն քրդական համայնքին հաջողվեց սուննիների առաջարկը շրջափակել, այն էր, Իրաքն անվանել «արաբական աշխարհի մի մասը»: Երրորդ հոդվածում ասվում է, որ Իրաքը «իսլամական աշխարհի մի մասն է, նրա արաբական մասի քաղաքացիները հանդիսանում են արաբական աշխարհի մասը»: Միայն Քուրդիստանն է համարվում ֆեդերալ նահանգ (հոդ. 115), բայց Սահմանադրությունը հնարավորության տեղ է թողնում կազմավորելու նաև նոր ֆեդերալ տարածքներ իրենց ինքնուրույն սեփական օրենքներով և անվտանգության սեփական համակարգով: Քուրդիստանում 137 հոդվածի համաձայն, ուժի մեջ են մտնում այն օրենքներն ու որոշումները, որոնք հրապարակվել են սկսած 1992 թվակա-

նից, երբ այդ տարածքը ազատագրվեց Սադամ Հուսեյնի իշխանությունից[13]:

Սակայն, չմոռանանք Իրաքի նավթի գործոնը, որը կռվան է հանդիսանում ոչ միայն արտաքին հարաբերությունների որոշ շրջանակների համար, այլ նաև հենց բուն երկրի ներսում ընթացող խմորումների առանցքն է կազմում:

Իրաքի սուննիները գտնում էին, որ երկրի այդպիսի կառուցվածքը հղի է պետության փլուզման սպառնալիքով և ոտնահարում է արաբական սուննի համայնքի իրավունքները, նրան դնելով անհավասար պայմանների և անբարենպաստ վիճակի մեջ: Փաստորեն, սուննիները մտավախություն ունեն ապագայում Իրաքի հարավում շիաների տարածքի հնարավոր ծևավորման համար, ուր գտնվում է իրաքյան նավթի 80%-ը:

Այսուհանդերձ, կարևոր նախապայման է Իրաքի բոլոր համայնքների համար ամրագրված նոր Սահմանադրության 109 հոդվածը, որը հաստատում է, որ նավթը բոլոր իրաքցիների սեփականությունն է բոլոր նահանգներում, և նրանից ստացված շահույթը բաշխվում է դեմոգրաֆիկ սկզբունքին համապատասխան:

«Թեև հիմնականում Սահմանադրության դրույթները իրապես հակված են շիաների և քրդերի կողմը, այն տպավորությունն է ստեղծվում, որ սուննիները չափազանցնում են Իրաքի կազմալուծման վտանգը: Այս երկրի արաբական հատվածը չի կարող կտրուկ բաժանվել՝ «սուննիները կենտրոնում», «շիաները հարավում», հենց թեև այն պատճառով, որ օրինակ Բաղդադում, որը գտնվում է երկրի կենտրոնում, ապրում են մեկուկեսից երկու միլիոն շիաներ: Հոծ համայնքով ապրում են միայն քրդերը, հյուսիսում: Թվում է, որ սուննի ղեկավարները մտածված կերպով ավելի սրում են դաշնության խնդիրը, այն նպատակով, որպեսզի իրենց կողմնակիցներին դրդեն ծախողելու Սահմանադրության ընդունումը»[14]:

Պատմության ընթացքը և քաղաքական դաշտի ալեբախությունները Իրաքում ժամանակ առ ժամանակ սուր բևեռացման ցայտուն պատկերներ են ուրվագծում: Այսպես՝ Իրաքի շիա ազգաբնակչությունը, որը երկրի բնակչության ընդհանուր թվի

մոտ 60%-ն է կազմում, «հարյուրամյակներ շարունակ համարվել են «երկրորդ կարգի» մարդիկ, հասարակությունից տարանջատված: Միայն Սադամ Հուսեյնի սուննիական դիկտատուրայի տապալումից հետո նրանք զգացին, որ իրենց ժամը եկել է:

Շիաները օրինական ճանապարհով ձեռք բերեցին ձայների ճնշող մեծամասնություն Իրաքի արաբական հատվածում և ազդեցիկ դիրքեր գրավեցին երկրի Ազգային ժողովում ու կառավարության կազմում[15]:

Իրաքի նոր Սահմանադրության ընդունումով, այնուամենայնիվ, դրական քայլ է արձանագրվում նաև տնտեսության ոլորտում, իրաքյան նավթի խնդրով համաշխարհային շուկաների հետ հարաբերությունների հստակեցման առումով նույնպես:

Եգիպտոսի «Ալ-Ահրամ» քաղաքական և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի առաջատար գիտաշխատող Մագդի Սոբխիի տվյալներով՝ Բաղդադի փլուզման օրը, ԱՄՆ-ի փոխպրեզիդենտ Դիք Չեյնին հայտարարեց, որ 2003 թ. վերջին Իրաքը օրեկան կարտադրի 3 մլն բարել նավթ : Համաձայն որոշ մասնագետների հաշվարկների և կանխատեսումների, արդեն 2006 թ. սկզբին երկիրը պետք է, որ օրեկան 5 մլն բարել նավթ արտադրեր: Սակայն, իրականում իրաքյան նավթի հանույթը չարդարացրեց Վաշինգտոնի փայփայած հույսերը: Իրաքն այսօր՝ 2006 թվականին, ավելի քիչ նավթ է արտադրում, քան մինչև օկուպացիան: Նավթի հանույթը Իրաքում ընդամենը կազմում է 2 մլն բարել օրեկան, իսկ արտահանումը չի գերազանցում անգամ 1,5 մլն-ը: Միայն 2004 թ. կեսերին գրանցվեց նավթի հանույթի համեմատաբար բարձր մակարդակ՝ մոտավորապես 2,5 մլն բարել օրեկան:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վերը նշված դիտարկումների հեղինակի հետևյալ գնահատականի վրա՝ «Իրավիճակը բարդացնում են Իրաքի Սահմանադրության նախագծում որոշ հոդվածներ, որոնք կարգավորում են բնական ռեսուրսների օգտագործումը տարածքային սկզբունքով»[16]:

Այս միակողմանի նկարագրի ֆոնի համեմատությամբ, շատ ավելի իրատեսական է Վաշինգտոնի արտաքին քաղաքականության գծով խորհրդի Մերձավորարևելյան ֆորումի ղեկավար Ջուդիֆ Կիպպերի գնահատականը իրաքյան նավթի շուրջ որոշ դիտարկումներին միջազգային ասպեկտով և հեռանկարային անցումներով:

Նա այն միտքն է հայտնում, որ իրաքյան նավթի արտադրության նշանակությունը գնալով շարունակում է աճել, նկատի ունենալով նավթի գների բարձրացումը միջազգային շուկաներում, նշելով նաև Չինաստանի և Հնդկաստանի նման երկրների կողմից նավթի մեծ պահանջարկը և այն սթրեսային վիճակը, ինչը հատուկ է նավթային շուկային գլոբալ առումով:

Աչքաթող չի արվել նաև ԱՄՆ-ը ցնցած «Կատրին» փոթորկի հետևանքով վնասի չափը: «Նավթարդյունաբերության վերականգնման և արտադրության ավելացման համար, ինչը իր հերթին տալիս է լրացուցիչ եկամուտներ երկրի վերակառուցման համար, Իրաքին անհրաժեշտ է քաղաքական կայունություն և տնտեսական զարգացում: Պետությունը կարիք ունի ինվեստիցիաների, իսկ նրանք չեն հայտնվի, քանի դեռ խոշոր միջազգային նավթային ինվեստիցիաները և կոմպանիաները համոզված չեն լինի, որ իրենց ներդրումները և անձնակազմը անվտանգ պայմաններում են: Մոտակա ժամանակներս գլոբալ նավթային շուկան ստիպված է բավարարվել իրաքյան սև ոսկու սահմանափակ առաքումներով: Սակայն երկարաժամկետ հեռանկարում (կարող է արդեն 5-10 տարի անց) այդ երկրում նավթարդյունաբերության կանխատեսումը բարեհաջող է»[17]:

Հետաքրքրություն է ներկայացնում «Վաշինգտոնը սպասում է Իրաքի աջակցությանը» հոդվածը, որի հեղինակն է Ռոբերտ Ս. Դոյչը՝ ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի համար Իրաքի գծով կոնսուլտացիաներ վարող դիվանագետը: Նա է մշակել և իրականացրել Իրաքի, Իրանի, Լիբիայի և այլ երկրների դեմ ամերիկյան սանկցիաների ռեժիմները:

"Независимая газета" թերթին տված էկսկլյուզիվ հարցազրույցում նա պատմում է Իրաքի քաղաքական իրադրու-

թյան մասին, որից անբաժան չէ նաև իրաքյան նավթի շուրջ հետաքրքրությունը:

Այն հարցին, թե ինչ վիճակում է գտնվում Իրաքի նավթարդյունաբերությունը այժմ, նա պատասխանում է՝ «Երկրի բյուջեն համեմատաբար մեծ չէ, և նավթային սեկտորի մեջ այնքան էլ շատ ներդրումներ չեն թափանցել, այնպես, ինչպես պլանավորել էր կառավարությունը... Իրաքցիները դեռ պետք է այդ բնագավառին վերաբերող հստակ որոշումներ ընդունեն, և դա շատ կարևոր է, քանի որ նավթը ապահովում է երկրի եկամուտների մոտավորապես 80%-ը:

Ներկա պահին ոչ մի երկիր չի կարող Իրաքի նավթային սեկտորում ներդրումներ կատարել: Գործող օրենքը արգելում է արտասահմանյան ներդրումների մուտքը բազային նավթային ռեսուրսների ոլորտ: Իրաքցիները դեռևս պետք է առաջիկայում մտածեն, արդյո՞ք իրենց կառավարությունը ի վիճակի է զարգացնել նավթային սեկտորը իր ուժերով, թե արժե հետևել նավթի հանույթով զբաղվող շատ երկրների օրինակին և թույլատրել արտասահմանյան կապիտալի մասնակցությունը որոշակի բնագավառներում»[18]:

Մինչ մասնագետները իրաքյան նավթի շուրջ իրենց փորձագիտական հմտություններն էին գործի դնում շահավետ լուծումներ առաջարկելով իրենց երկրների քաղաքական ու տնտեսական ծրագրերի տեսանկյունից, Իրաքում 2005 թ. հոկտեմբերի 15-ը նշանավորվեց երկրի նոր Սահմանադրության հաղթարշավով, ինչը ոմանց համար նաև անսպասելի էր, անցանկալի: Արդեն հոկտեմբերի 19-ին, քվեարկությունից չորս օր անց, որոշված էր պաշտոնական արդյունքը մի առ ժամանակ հետաձգելուց հետո հայտարարել: Մանավանդ որ նախնական տվյալներով, երկրի հիմնական օրենքը արժանացել էր ազգաբնակչության մեծամասնության հավանությանը, բայց հենց այդ փաստը, ինչպես նաև ընտրողների աննախադեպ ներկայանալը ընտրություններին, շատերի մոտ այն կարծիքն էր ստեղծում, որ ձայները հաշվելու ընթացքում հնարավոր է տեղ գտած լինեն բազմաթիվ օրինախախտումներ[19]:

Հայտնի իրողություն է, որ Իրաքի նոր Սահմանադրության նախագծի օգտին հանրաքվեից առաջ հանդես էին գալիս գլխավորապես շիա քաղաքական գործիչները, որոնք մեծամասնություն են կազմում երկրի ժամանակավոր կառավարության կազմում: Սուննիների ներկայացուցիչները դեմ էին և մինչև օրս էլ դեմ են Սահմանադրության նախագծին:

Ֆրանսպրեսը նշում է, որ արդեն հինգշաբթի օրվանից՝ հոկտեմբերի 13-ին, իշխանություններն անվտանգության արտակարգ միջոցներ են ձեռնարկում՝ հանրաքվեի ծախողում քույլ չտալու նպատակով: Մանավանդ որ նախադեպը կար՝ 2005 թ. հունվարի 31-ին օրենսդրական ընտրությունների տապալմանը միտված ահաբեկչությունից զոհվեց 30 մարդ, թեև այդ ընտրությունները Իրաքում կայացան[20]: Գալով Սահմանադրության հանրաքվեին, պետք է նշել, որ երկրում կային բացահայտ ընդդիմադիր ուժեր, որոնք ջանում էին առանց այն էլ շիկացած մթնոլորտը ապակայունացնել:

Հոկտեմբերի 13-ին Բաղդադի հարավային արվարձաններում ոստիկանությունը ձերբակալեց «Ալ-դաիդայի» 65 անդամների: Հայտնաբերվեցին 17 ականված ավտոմեքենաներ, որոնք պայթեցվելու էին հենց հանրաքվեի օրը: Համաձայն այդ աղբյուրի՝ Իրաքի իշխանությունները և ամերիկյան զորքերը որոշել էին հանրաքվեի օրն արգելել ավտոմեքենաների երթևեկությունը:

Իրաքի սահմանները, Բաղդադի օդանավակայանը արդեն փակ էին, միջնահանգային տեղաշարժերն արգելված: Քաղաքներում զենք կրելը օրենքով պատժվում էր: Ֆրանսպրեսի տվյալներով, հոկտեմբերի 13-16-ը հայտարարված էին տոնական օրեր: Սահմանադրության մուտքը երկրի օրենսդրական դաշտ վեր էր ածվել համընդհանուր տոնահանդեսի, որի պատճառով դպրոցները, վարչական շենքերը և մեծ խանութները փակված էին, լինելով ոչ աշխատանքային օրերի շրջանակում[21]:

Չնայած սուննիների ուժեղ ընդդիմությանը, 2005 թ. հոկտեմբերի հանրաքվեն Իրաքում ավարտվեց գոհացուցիչ արդյունքով: Այդ մասին առաջին անգամ իրազեկվեց Բաղդադում

Իրաքի անկախ ընտրական հանձնաժողովի անդամ Ֆարիդ Այյարի կազմակերպած մամլո ասուլիսում, նրա հայտնած տվյալներով «հանրաքվեի ժամանակ Իրաքի Սահմանադրության նախագիծն ընդունվել է քվեների 78 տոկոսով»: Նրա տվյալների համաձայն՝ առավելապես սուննիաբնակ Սալլահեդդինի և Անբարի նահանգներում փաստաթուղթը մերժել է ընտրողների 2/3-ը: Բայց Նինվեի նահանգում, որի կենտրոնը նավթառատ Մոսուլ քաղաքն է, Սահմանադրության նախագիծը ստացել է քվեների 55,1%-ը:

Իրաքյան 18 նահանգների արդյունքները վկայում են, որ Սահմանադրության վերջնական նախագիծը ընդունված է[22]:

Ուշագրավ է, և Ֆրանսպրես գործակալությունը նույնպես նշում է, որ սուննիների համայնքի՝ Սահմանադրությանը ընդդիմանալու հիմքում սահմանադրության «մասնատիչ» բնույթն է, քանզի դրանով նախատեսվում է Իրաքում դաշնային պետության ստեղծում: Միաժամանակ, հնարավոր է համարվում արդեն տարեվերջին՝ դեկտեմբերի 15-ին, կայանալիք համընդհանուր ընտրությունների ժամանակ Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու տարբերակը[23]:

Ֆարիդ Այյարի խոսքերով, ընտրությունների արդյունքները «ստույգ են և անաչառ», քանի որ քվեների հաշվարկը կատարվել է «միջազգային չափանիշներին համապատասխան»:

Սպիտակ տունը հոկտեմբերի 15-ը որակել է Իրաքի համար «պատմական օր»: Հակաիրաքյան ռազմական կոալիցիայի գլխավոր երկրները՝ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ողջունել են Սահմանադրության ընդունումը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նույնպես խոսել է «պատմական իրադարձության» մասին: Իրաքում ՄԱԿ-ի ներկայացուցիչը հայտարարել է, որ քվեարկության արդյունքները «ցուցադրեցին իրաքցիների քաղաքական բնեռացման աստիճանը»[24]:

Այս իրադարձությունը դեռ երկար ժամանակ կմնա բազմակարծիք քննարկումների և դիտարկումների կիզակետում:

Ռոբերտ Դոյչի կարծիքով՝ իրաքյան Սահմանադրության հանրաքվեն հերթական քայլ հանդիսացավ Իրաքի քաղաքա-

կան գործընթացում, դեմոկրատական և կայուն, ներկայանալի կառավարություն ստեղծելու համար այդ երկրում:

Հունվարյան ընտրությունների հետ համեմատած, այս հանրաքվեին մասնակցելու նպատակով գրանցվել էր մեկ միլիոնով ավելի շատ ընտրող: Հնարավոր է, որ ամենամեծ ձեռքբերումը անվտանգության միջոցների կազմակերպումն էր՝ իրաքյան իրավապահ մարմինները ստանձնեցին այդ խնդիրը, և տեղամասերում հաշված թվով միջադեպեր տեղ գտան, այն դեպքում, երբ հունվարյան ընտրություններում, երբ Ազգային ժողովի կազմն էր ընտրվում, պատահարների թիվը մի քանի հարյուր էր կազմում:

Ցանկացած Սահմանադրություն կարող է փոփոխությունների ենթարկվել, համաձայն որոշակի ընթացակարգերի: Եվ դա վատ չէ: Իրաքցիները պետք է զարգացնեն ինստիտուտներ, որոնք կհամապատասխանեն իշխանության տարանջատման սկզբունքին, ինչպես նաև հակասականության և հակակշիռների զսպման սկզբունքին:

«Հուսով եմ, որ մենք ունենք հեռանալու ռազմավարություն: Չէ որ մենք չենք պատրաստվում հավերժ մնալ Իրաքում: Իհարկե, ես չեմ կարող ձեզ ներկայացնել մեր գրաֆիկը: Կարծում եմ, որ ով էլ հիմա կոնկրետ ամսաքվեր նշի, կսխալվի»: «Սակայն, իրաքյան իշխանությունները նույնպես ընդունում են այն դժվարությունները, որոնց մենք բախվում ենք: Նախագահ Ջալալ Թալաբանին, վարչապետ Իբրահիմ ալ Ջաֆարին, արտգործնախարար Խոշիյար Զիբարին աշնանը Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի սեսիայում հայտարարեցին, որ իրենց երկիրը հաջորդ տարի միջազգային աջակցության կարիք կզգա: ԱՄՆ-ը մտադիր է այդ աջակցությունը ցուցաբերել»[25]:

Այդ նույն ժամանակ անգլիացի լրագրող Գուին Դայերը գրում էր Իրաքում Սահմանադրության հանրաքվեի և 2000-րդ ամերիկացու սպանության մասին:

«Իրաքում թեև արդյունաբերություն չկա, որ ծաղկի, փոխարենը ծաղկում է պատմության ուղենիշների «արդյունաբերությունը»: Անցյալ շաբաթ նախկիններին ավելացան ևս եր-

կուսը՝ բոլորովին նոր Սահմանադրությունն ու Իրաքում սպանված 2000-րդ ամերիկացի զինվորը»[26]:

Հետաքրքիր է այն մանրազնին վերաբերմունքը որով ուղեկցվում է իրաքյան Սահմանադրությանը նվիրված հոդվածի յուրաքանչյուր նախադասությունը:

«Քվեների հաշվումն ու վերահաշվարկումը բավական երկար ժամանակ խլեցին, մինչև ի վերջո գտան ճիշտ պատասխանը, և հանրաքվեից 10 օր հետո՝ հոկտեմբերի 15-ին, Իրաքի ղեկավարները պաշտոնապես հայտարարեցին «ուրախ լուրը»[27]:

Երկրի 18 նահանգներից ընդամենը երկուսը՝ Անբարն ու Սալահեդդինն էին դեմ քվեարկել Սահմանադրությանը:

Այս առիթով, անգլիացի լրագրողը գրում է որոշակի հեգնանքով և տարակուսանքով՝ «եթե մի երրորդ նահանգ էլ նույն ձևով վարվեր, հանրաքվեն վստահաբար կձախողվեր, բայց ինչ-որ հրաշքով այդ երրորդ նահանգը, որ անպայման դեմ կքվեարկեր, չկատարեց այդ քայլը:

Այդ երրորդ նահանգը Նինվեն է, որտեղ սուննիներն են մեծամասնություն կազմում և, ինչպես հայտնի է, նրանք դեմ են դաշնային ամերիկամետ Սահմանադրությանը: Անբարում բնակչության 97%-ն է «ոչ» ասել, իսկ Նինվեում, որտեղ սուննիները 68% են կազմում, ընդամենը, ըստ քվեները հաշվարկողների, 55% էր «ոչ» ասել: Տարօրինակ երևույթ:

Տարօրինակ, որովհետև Նինվեի բնակչության մյուս մասը (24%) եզդիներ, թուրքմեններ, շաբաքներ և քրիստոնյա ասորիներ են, որոնք սուննիների պես կտրականապես դեմ են Սահմանադրությանը: Միայն 8%-ը կազմող քրդերն են կողմ դրան»[28]:

Շարունակելով իր դիտարկումները Իրաքի նոր Սահմանադրության օգտին քվեարկության արդյունքների շուրջ, Գուին Դայերը գալիս է հետևյալ եզրահանգման՝ «Բայց վերջին հաշվով գուցե այնքան էլ կարևոր չէ, որ Սահմանադրությունը որոշ «անպաշտոն» օժանդակությունների միջոցով է վավերացվել, քանի որ Իրաքում պետություն չկա, որ Սահմանադրության

կարիքը զգա: Կան նախարարություններ և որոշ իմաստով նաև բանակ, բայց պետություն չկա»[29]:

Մեջբերված նյութի տվյալները հաստատում են լուսաբանման առարկա դարձած և սույն հոդվածում առաջ քաշված այն իրողությունը, որ ՄԱԿ-ը իր որոշակի օժանդակությունն է ցուցաբերել Իրաքի ժողովրդին օրինաստեղծ գործընթացներում, և, իհարկե, նոր Սահմանադրության հանրաքվեի նախապատրաստական աշխատանքներում և վերջնական ընթացակարգում: «Անպաշտոն» օժանդակությունների շարքում է ՄԱԿ-ի ենթակազմակերպությունների մասնակցությունը և ցայտուն դերը:

Պարզվում է, որ Իրաքում նախարարություններն առանձին կուսակցությունների «ավատություններ են» և կենտրոնական կառավարությանը չեն ենթարկվում: Իսկ պաշտոնյաների մեծ մասը զինվորականներ են, որոնք գողանում են այն, ինչ կարող են, քանի որ գիտեն՝ մի քանի տարի անց իրենք այդ պաշտոններում չեն լինի, ժամանակավոր մարդիկ են այդ դիրքերում: Նրանց իրականացրած թալանն է պատճառը, որ Իրաքի միջին խավը զանգվածաբար լքում, հեռանում է երկրից և հաստատվում Հորդանանում[30]:

Իրաքի նոր Սահմանադրության հանրաքվեի շուրջ նույնպես կարծիքները տարբերվում են:

Ռոբերտ Դոյչը ամերիկյան դիվանագիտական տեսանկյունով հակադրվում է անգլիացի լրագրող Գուին Դայերի կարծիքին և հետևություններին նշված խնդրի պարագայում՝ «Սահմանադրության հանրաքվեն Իրաքում քաղաքական գործընթացներում հերթական քայլ հանդիսացավ, այդ երկրում դեմոկրատական և կայուն ներկայանալի կառավարություն ձևավորելու գործում: Հունվարյան ընտրությունների հետ եթե համեմատելու լինենք, այդ քվեարկությանը մասնակցելու նպատակով մեկ միլիոն ավելի իրաքցի է գրանցվել:

Հնարավոր է, որ ամենամեծ ձեռքբերումը անվտանգության միջոցների կազմակերպումն էր՝ իրաքյան օրինապահ մարմինները իրենց վրա վերցրին այդ խնդիրը[31]:

Այն հարցին, թե որքան է նստում ամերիկյան հարկատուների վրա ներկայությունը Իրաքում, նա պատասխանել է, որ մոտավորապես երեսուն երկրներ են մասնակցում բազմազգ ուժերի կազմում, որոնք իրենց ավանդն են ներդնում Իրաքում անվտանգության ապահովման գործում: Մեծ ջանքեր է գործադրում ՆԱՏՕ-ն իրաքյան զինվորականների պատրաստման գործում: Հյուսիսատլանտյան խորհուրդը «վերջերս Իրաքում բացեց սպաների պատրաստման դպրոց»:

Բազմաթիվ երկրներ իրենց լուման են ներդնում Իրաքի տնտեսության վերակառուցման գործում: 2006 թ. հունիսին Բրյուսելում հավաքվեցին ավելի քան 80 արտգործնախարարներ, որպեսզի քաղաքական աջակցություն ցույց տան երկրում իշխանության փոխանցմանը իրաքցիներին և հաստատեն իրենց շահագրգռվածությունը Իրաքի տնտեսության վերականգման խնդրում: Հենց այդ օրերին էլ Իրաքին խոստացել են տասներեք միլիարդ դոլար հատկացնել, չհաշված միջազգային ֆինանսական ինստիտուտների առաջարկները: Սակայն մեջ բերված թվերը նույնպես հակասական են, քանի որ Իրաքը ստացել է ընդամենը երեք միլիարդ դոլար[32]:

Եվ, եթե Իրաքի տնտեսության վերակառուցումը ցանկալի է երկրի բնակչության բոլոր խավերին, ապա օտարերկրյա ռազմական ներկայությունը դիտվում է բոլորովին այլ ասպեկտով: Սահմանադրական հանրաքվեի առիթով, Գուին Դայերը հետևյալ տվյալներն է ներկայացնում՝ «Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը տեղական որոշ ակադեմիական կազմակերպություններին վճարել է, որ հարցում կատարեն Իրաքի բնակչության շրջանում: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ Իրաքի բնակչության 45%-ը պաշտպանում է հարձակումները «կոալիցիայի զորքերի» (ամերիկացի, բրիտանացի) վրա: Մեկ տոկոսը միայն համոզված է եղել, որ օտար զինվորական միջամտությունը նպաստում է երկրում անվտանգության հաստատմանը»[33]:

Մեկ այլ աղբյուր նշում է՝ «Իրաքցիների 82 տոկոսը դեմ է կոալիցիոն ուժերի ներկայությանը, իրաքցիների մեծ մասը լիովին արդարացնում է բրիտանացի զինծառայողների դեմ

իրականացվող անձնասպան ահաբեկչությունները: Այս հետևությունն է արվում Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության պատվերով Իրաքի վերաբերյալ պատրաստած գաղտնի զեկուցագրում: Չինական Սինհուա գործակալությանը հայտնի են դարձել փաստաթղթի որոշ տվյալներ: Այսպես, Իրաքում օգոստոսին անցկացված հարցումները վկայում են, որ բնակչության 65 տոկոսը պաշտպանում է բրիտանացիների վրա հարձակվող ահաբեկիչներին:

Օկուպացիոն զորքերի ներկայության պատճառով իրաքցիների 67 տոկոսն իրեն անապահով է զգում: Բնակչության 72 տոկոսը չի վստահում այդ զորքերին, 43 տոկոսը կարծում է, որ երկրում իրավիճակը վատթարանում է»[34]:

«Մենք պատերազմական վիճակում ենք: Սպանված են 2025 ամերիկացի զինծառայողներ, պատերազմի վրա շաբաթական ծախսում ենք ավելի քան 2 մլրդ դոլար: Կարծում եմ, որ ամերիկացիները պետք է իմանան, թե ինչպես ենք հայտնվել նման վիճակում»,– ընդգծել է դեմոկրատ սենատորների առաջնորդ Հարրի Ռեյդը[35]:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը ճեպասուլիսի ժամանակ լրագրողներին ասել է, թե իրաքցի գրոհայիններն արժանի չեն կոչվելու «ապստամբներ», ինչպես նրանց հաճախ անվանում են լրագրողներն ու մեկնաբանները: «Երկար մտածելուց հետո ի վերջո հասկացա, որ «ապստամբ» կոչվելը նրանց տալիս է ավելի մեծ օրինականություն, քան իրենք արժանի են», ընդգծել է Պենտագոնի ղեկավարը:

Նրա կարծիքով, Իրաքում ամերիկյան զորքերի հակառակորդներին հարկավոր է անվանել «ահաբեկիչներ» և «հակակառավարական տարրեր»: Պարզվում է, որ որոշ դեպքերում օկուպացիոն ուժերի դեմ կռվող իրաքցի ապստամբներին հաճախ անվանում են նույնիսկ «հակաիրաքյան» կազմավորումներ:

Այս հայտարարությունների ֆոնի վրա պետք է դիտել իտալացի լրագրող Զիգֆրիդո Ռանուչչիի նկարահանած հետաքննական «Ֆալուջա, քողարկված ջարդ» ֆիլմը, որի որոշ հատվածներ 2005 թ. նոյեմբերի 7-ին լրագրողները դիտեցին

մամլո ասուլիսում, իսկ ամբողջությամբ ֆիլմը ցուցադրվեց հաջորդ օրը, իտալական արբանյակային RAI – News 24 հեռուստաալիքով:

Ժապավենում նկարահանված ամերիկացի նախկին զինծառայողներից մեկը պնդում է, որ ինքը լսել է «զգուշություն պաշտպանելու» հրամանը, քանի որ կիրառվելու էր «սպիտակ ֆոսֆոր»: «Հետո ես տեսա կանանց և երեխաների այրված մարմիններ»,– պատմում է այդ զինվորականը:

Մարտական գործողությունների ժամանակ ֆոսֆորի օգտագործումը թույլատրվում է միայն հակառակորդի դիրքերի վրա շաղ տալով, դրանք հայտնաբերելու նպատակով, նշում է իտալական AKI գործակալությունը:

Իտալացի լրագրողները նաև տեղեկություններ ունեն, որ Ֆալուջայի մոտ մղված մարտերում օգտագործվել է MK 77 տիպի նապալմ, որն արգելված է ՄԱԿ-ի միջազգագրով:

2005 թ. փետրվարին Իրաքում առևանգված և ապա ազատ արձակված լրագրողուհի Ջուլիանա Սգրենան ֆիլմի հեղինակներին տված հարցազրույցում հայտարարել է, «Ֆալուջայից փախած մարդիկ ինձ քանիցս ասել են, որ քաղաքի համար ծավալված մարտերի ժամանակ ամերիկացիները կիրառել են նապալմ և սպիտակ ֆոսֆոր: Ես ուզում էի այդ մասին պատմել աշխարհին, բայց առևանգիչներն ինձ զրկեցին այդ հնարավորությունից»[36]:

ԱՄՆ-ը մինչև օրս չի ստորագրել խաղաղ բնակչության դեմ որոշ զինատեսակների, այդ թվում ֆոսֆորային զենքի, կիրառումն արգելող ՄԱԿ-ի միջազգագիրը:

Ֆալուջայի գիշերային գրոհից հետո քաղաքի մոտ 300 բնակիչներ ստիպված եղան լքել տները: Գլխավորապես սուննիաբնակ այդ քաղաքում հիմնահատակ կործանվեցին բազմաթիվ շենքեր[37]:

Գալով ՄԱԿ-ի գործունեությանը, պետք է նշել, որ ամերիկա-իրաքյան զինված հակամարտությունը այս միջազգային կազմակերպությանը նույնպես որոշակի փործության դասեր մատուցեց:

BBC-ի տվյալներով, ՄԱԿ-ում ղեկավար պաշտոնների հավակնող բոլոր անձինք այսուհետև պարտավոր են լրացնել եկամուտների հայտագրեր՝ նշելով ոչ միայն իրենց, այլև մերձավոր ազգականների (կանանց և զավակների եկամուտները): Վերջին հանգամանքը հատկապես այժմեական է ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագրի մի շարք սկանդալների կապակցությամբ[38]: Ինչպես տեսնում ենք, ՄԱԿ-ը իր ներքին կանոնադրությունը խստացնում է:

ՄԱԿ-ի հատուկ հանձնախումբը հրապարակել է իրաքյան «Նավթ պարենի դիմաց» ծրագրի շրջանակներում կատարված չարաշահումներին նվիրված զեկուցագրի ամբողջական տեքստը: Անցկացված քննության ընթացքում պարզվել է, որ 66 երկրների 2200 ընկերություններ նպաստել են, որ Սադամ Հուսեյնի վարչակարգը 1,8 մլրդ դոլար ստանա՝ շրջանցելով միջազգային պատժամիջոցները: «Նավթ պարենի դիմաց» ծրագրի գոյության տարիներին դրան մասնակցել է ընդամենը 4700 ընկերություն: Հրապարակված ցանկում զգալի տեղ են գրավում ռուսական և ֆրանսիական ընկերությունները:

Հակաիրաքյան պատժամիջոցների հետևանքներն իրաքցիների համար մեղմացնող «Նավթ՝ պարենի դիմաց» ծրագրի ընդհանուր արժեքն ավելի քան 100 մլրդ դոլար էր, որից 64 միլիարդը նախատեսված էր իրաքյան նավթի վաճառքի և 39 միլիարդը՝ պարենի մատակարարումների դիմաց:

Հրապարակված զեկուցագրում ընդգծվում է, որ Հուսեյնի վարչակարգը 11 մլրդ դոլարի հասնող անօրինական եկամուտ է ստացել նավթի մաքսանենգությունից: Փոլ Վոլկերը հայտարարել է, որ ամեն երկիր ինքը պետք է որոշի, թե կոնկրետ ում է դատական հետապնդման ենթարկելու:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանն աշխարհի պետություններին կոչ է արել պատժամիջոցներ ձեռնարկել Հուսեյնի վարչակազմին կաշառքներ տված ընկերությունների դեմ: Իսկ ԱՄՆ-ը այդ առիթով հայտարարել է, որ Վոլկերի զեկուցագիրը ցուցադրում է ՄԱԿ-ի բարեփոխումներն արագացնելու անհրաժեշտությունը[39]:

2005 թ. նոյեմբերի 8-ին ՄԱԿ-ը մեկ տարով երկարաձգեց Իրաքում բազմազգ ուժերի ներկայությունը: Իրաքում ամերիկացիների հրամանատարությամբ գործող միջազգային կոալիցիոն ուժերի ներկայության վերջնաժամկետը սահմանված էր 2005 թ. դեկտեմբերի 31-ը: Դեկտեմբերի կեսերին խորհրդարանական ընտրություններով նախատեսված էր ավարտել քաղաքական անցումային գործընթացը Իրաքում: Այս առիթով, բազմազգ ուժերի ներկայությունը երկարաձգելու խնդրանքով ՄԱԿ-ին էր դիմել Իրաքի ժամանակավոր կառավարության վարչապետ Իբրահիմ ալ Ջաաֆարին: ՄԱԿ-ի ԱԽ-ի բոլոր 15 անդամները միաձայն ընդունեցին թիվ 1637 բանաձևը, որը կոալիցիոն ուժերի մանդատը երկարաձգեց մինչև 2006 թ. դեկտեմբերի 31-ը[40]:

ՄԱԿ-ի որոշման մեջ ասված է, որ «Իրաքի կառավարությունը հաստատեց նախորդ ընտրությունների արդյունքները, կազմելով ընտրողների ցուցակները, որոնք տեղ կգտնեն 2005 թ. դեկտեմբերի15-ին, խաղալով խիստ կարևոր դեր, շարունակելու առաջ տանել ազգային երկխոսությունը և համաձայնությունը, նախագծելով Իրաքի ժողովրդավարական ապագան, արժանանալով միջազգային հանրության հավանությանը՝ աշխատել Իրաքի կառավարության հետ մեկտեղ, սերտորեն օգնել նրան, հարգելով Իրաքի ժողովրդի ջանքերը»[41]:

Միաժամանակ ընդգծվեց, որ ահաբեկչական գործողությունները չպետք է կասեցնեն Իրաքի քաղաքական և տնտեսական վերափոխումների ընթացքը, և Անդամ պետությունների պարտավորվածությունը 1618 (2005) որոշման համաձայն՝ 2005 թ. 4 օգոստոսի, գործին վերաբերող այլ որոշումների և միջազգային պարտավորությունների հետ ուժի մեջ են մնում[42]: Գնահատելով ՄԱԿ-ի խաղաղասիրական և Իրաքի կայունության մասին նպատակաուղղված բոլոր քաղաքականությունը, նշենք, որ նախընտրական շրջանը երկրում հեշտ ու խաղաղ չանցավ: Բռնությունները շարունակվում էին: Իրաքցիների անձնասպան ահաբեկչություններից սարսափած ամերիկացիները մեկ անգամ չէ, որ կրակ են բացել խաղաղ բնակիչների վրա: Նոյեմբերի 21-ի առավոտյան Բաղդադում ժամանակավոր ուղեփակոցի մոտ

տեղադրված գնդացրի կրակից սպանվեցին Ալ-Սաուամրա ընտանիքի հինգ անդամներ: Փրկվել էր միայն ավտոմեքենայի 22-ամյա վարորդը, որը տեսել էր իր ընտանիքի անդամների՝ 2 տղամարդու և 3 մանուկների զոհվելը[43]: Իրաքի սոցիալ-քաղաքական իրադրությանը բնորոշ էին նաև արտասահմանցիների առևանգումները: «Իրաքի իսլամական բանակ» խմբավորումը հատուկ տեսաերիզ էր փոխանցել «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաընկերությանը, որը փաստում էր՝ «բանակն» առևանգել է ԱՄՆ-ի քաղաքացու, որը երկու օրից մահապատժի կենթարկվի, եթե ամերիկացիներն ազատ չարձակեն իրաքյան բանտերի կալանավորներին: Առևանգիչները ընդգծել էին, որ պատանդի անունը Ռոնալդ Շուլց է, և նա «անվտանգության գծով խորհրդատու» է և Իրաքի վերակառուցման նախարարության աշխատակից[44]: Վերջինս այդ օրերին Իրաքում առևանգված երկրորդ ամերիկացին էր: 2005 թ. նոյեմբերի 26-ին առևանգվել էին պատերազմի հակառակորդ քրիստոնյա ոչ կառավարական մի կազմակերպության չորս անդամներ՝ մեկ ամերիկացի, երկու կանադացի և մեկ բրիտանացի: Իր տնից առևանգվել էր ֆրանսիացի ճարտարագետ Բեռնար Պլանշը[44]:

Մամուլում տեղեկություններ երևացին նաև իրաքյան որոշ լրատվամիջոցներին ամերիկյան բանակի կաշառումների երևույթների մասին: Քարոզչական հոդվածները, որոնց հեղինակները ամերիկյան բանակի «տեղեկատվական գործողությունների» հատուկ ստորաբաժանումներն են, թարգմանվել են արաբերեն և «Լինքոլն գրուպ» փոքր ընկերության միջնորդությամբ հրապարակվել են իրաքյան թերթերում[45]:

2005 թ. դեկտեմբերի 6-ին սուննիների հոգևոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, հրապարակելով ամսի 15-ի խորհրդարանական ընտրություններին չմասնակցելու մասին իրենց ընդունած որոշումը՝ «Ուլեմայի (աստվածաբանների) խորհուրդը իշխանության ձգտումներ չի սնուցում, սակայն մերժում է զավթիչների ներկայությունն Իրաքում և նրանց քմահաճույքով առաջնորդվելու մտադրություն չունի»[46]:

Իրաքյան ահաբեկչական հինգ խմբավորումներ «Ալ-Ղաիդայի ղեկավարությամբ առաջին անգամ հանդես եկան

համատեղ հայտարարությամբ, դեկտեմբերի 15-ին Իրաքում նախատեսված խորհրդարանական ընտրությունները անվանելով «սատանայական»[47]: Նրանք կոչ էին անում շարունակել սրբազան պատերազմը և ինտերնետից չօգտվող իրաքցիների համար ծայրահեղականները տարածել էին թռուցիկներ, որոնցում նշվում էր, որ «անհավատների և նրանց կամակատարների դեմ պայքարը կշարունակվի»:

Ընտրություններից մեկ օր առաջ Իրաքում սկսվել էր նախնական քվեարկություն, որին մասնակցել էին զինվորականները, բանտարկյալները և հիվանդանոցների հիվանդները: RFI ռադիոկայանի տվյալներով Իրաքի նախկին նախագահ Սադամ Հուսեյնը հրաժարվել էր ընտրություններին մասնակցել[48]:

2005 թ. դեկտեմբերի 15-ին տեղական ժամանակով ժամը 7-ին սկսվեցին առաջին խորհրդարանական ընտրությունները, իսկ ընտրական տեղամասերի բացումից քիչ անց Ռամադի, Տիկրիտ քաղաքներում և այլուր որոտացին պայթյուններ: Տեղ-տեղ ընտրությունները ուղեկցվում էին ընտրական տեղամասերի գնդակոծությամբ:

BBC-ն տեղեկացնում էր, որ այդ առավոտյան անհայտ անձինք ականակոծել են Բաղդադի «կանաչ գոտին», որտեղ գտնվում են կառավարական հիմնարկները և օտար պետությունների ներկայացուցիչները:

Ռոյթեր գործակալության բնորոշմամբ, քվեարկությունը անցնում էր «լարված անվտանգության պայմաններում: Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին հույս է հայտնել, որ երկրի ժողովուրդը «կպահպանի միասնականությունը»: Իրաքի քաղաքների փողոցներում պարեկում էին մոտ 150 հազար իրաքցի զինվորներ: Երկրում դեռ գործում էր 2005 թ. հունվարին կազմավորված անցումային խորհրդարանը: Մշտական օրենսդիր մարմնի ընտրության հաջորդ քայլը կառավարություն ստեղծելն էր՝ չորս տարի ժամկետով:

Ընտրություններին մասնակցեց վեցուկես հազար թեկնածու՝ 275 պատգամավորական տեղերի համար, որից 1/4 կանանց մասնակցությամբ: Ընտրություններին մասնակցեցին 307

կուսակցություններ և 19 ընտրական դաշինքների ներկայացուցիչներ[49]:

Զոհերի մասին տեղեկությունները կցկտուր են: Ընտրություններից երկու օր առաջ սպանվել էր իրաքի ազատ առաջադիմական կուսակցության առաջնորդ Միգխար Դուլայմին: Բաղդադում պայթյունից սպանվեցին ամերիկացի չորս զինվորներ[50]:

Նոր «իրաքյան» բանակի 115 գումարտակներից միայն մեկն էր իր շարքերում ընդգրկել շիաների, սուննիների և քրդերի: Իրաքի իսլամական հեղափոխության գերագույն խորհուրդը՝ բաղկացած շիա կրոնական կուսակցության անդամներից, վերահսկում էր երկրի ներքին գործերը և 110 հազարանոց ոստիկանական համակարգը: Ընտրությունների առիթով հատուկ հայտարարված էր, որ ոչ մի արաբ, եթե իրաքցի չէ, չի կարող մուտք գործել Իրաք, մինչև ընտրությունները չավարտվեն:

«Իրաքում մի քանի խաբուսիկ «շրջադարձային իրադարձություններից» հետո վերջապես գալիս է իսկականը՝ դեկտեմբերի 15-ի ընտրությունը, որն ինչ-որ բան, երևի թե որոշելու էր: Դժբախտաբար այն հաստատելու է, որ 1918 թ.-ից գոյություն ունեցող իրաքյան պետությունը իր վախճանին է հասնում, և միայն Աստծուն է հայտնի, թե ինչով է փոխարինվելու», - գրում է Գուին Դայերը Իրաքի ընտրությունների մասին «Իրաք՝ 1918-2006» հոդվածում[51]:

Գալով սուննիների վերաբերմունքին օրենսդրական գործընթացներին, նա գրում է՝ «Բաաս կուսակցության բռնի «գաhընկեցությունը» օտար ներխուժման հետևանքով, անպայման առաջացնելու էր կատաղի դիմադրություն սուննիների շրջանում: Այս դիմադրությունն էլ առաջ է բերել աղանդավորական իրարանցումներ Իրաքում»[52]:

Դեկտեմբերի 15-ի խորհրդարանական ընտրությունների նախնական արդյունքները առաջինը մերժեցին սուննի իրաքցիները: Երկրի 18 նահանգներից 11-ում հաղթել էր շիաների «Միացյալ իրաքյան դաշինքը»: Շիաները չեն կարողանա կառավարություն կազմավորել, եթե չգործակցեն մյուս կուսակ-

ցությունների հետ, գտնում էին նրանք: Այսուհանդերձ հաղթանակը համոզիչ էր՝ Բաղդադում և մերձավոր շրջաններում քվեների 89% մշակումը հենց առաջին օրերից փաստեց դրա մասին: Շիաները ստացել էին ձայների 58%, սուննիները 18,6%: «Միացյալ իրաքյան դաշինքը» մրցակիցներին հաղթեց նաև Բասրայում և հարավի 8 այլ նահանգներում: «Քուրդիստանի դաշինքը» հաջողության հասավ Իրաքի հյուսիսային երեք նահանգներում[53]:

Այդ օրերին ամերիկյան իշխանությունները փորձեցին սիրաշահել սուննիներին: Ըստ ամերիկյան բանակի, ազատ արձակվեցին չորս սուննի գործիչներ: Մինչդեռ իրաքցի փաստաբաններից մեկի տվյալներով ազատության է շնորհվել 24 անձանց: Նրանցից երկուսը կին գիտնականներ են, որոնք անցյալում մասնակցել են Իրաքի կենսաբանական զենքի մշակման ծրագրերին: Ազատ են արձակվել նաև տրանսպորտի և բարձրագույն կրթության նախկին նախարարները, ձեռնարկատեր Սաբամ ալ Գաուդը, որը Հուսեյնի օգտին առևտուր էր արել, շրջանցելով հակաիրաքյան տնտեսական արգելքը: Խոսքը սանկցիաների մասին է: Ազատ արձակված որոշ անձանց տրվեցին անձնագրեր, երկրից հեռանալու համար:

## THE PARTICIPATION OF THE UNITED NATIONS IN LAW-BUILDING PROCESS IN IRAQ IN 2005

The article deals with the analyses of the law-building process in Iraq during the 2005 year: the direct elections of the Transitional National Assembly on 30 January 2005, the drafting of a new constitution for Iraq and the recent approval of the draft constitution by the people of Iraq on 15 October 2005, the election by 15 December 2005 of a government pursuant to a newly adopted Constitution.

The United Nations role in Iraq in this period – very important factor.

Welcoming the beginning of a new phase in Iraq's transition and looking forward to the completion of the political transition process the

United Nations should continue to play a leading role in assisting the Iraqi people and government with further political and economic development.

The participation of the United Nations contributing to coordination and delivery of reconstruction, development and humanitarian assistance, and promoting the protection of human rights, national reconciliation, as well as judical and legal reform in order to strengthen the rule of law in Iraq.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Կարինե Սամվելյան, Քաղաքական իրադրությունն Իրաքում և ՄԱԿ-ի դիրքորոշումը (2004 թ. հունիս – 2005 թ. օգոստոս). Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, պրակ. XXIV, Երևան, 2005, էջ 218-235:
2. United Nations Security Council, Press Release, Department of Public Information, News and Media Division, New York. SC/8627, 2 February 2006, Resolutions and Statements of the Security Council, S/PRST/2005/5 p. 138.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, էջ 139:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Террористическая паника в Ираке, "Независимая газета", 1. IX. 2005, № 185, с. 6.
11. «Ազգ», 8. X. 2005, էջ 5:
12. Նույն տեղում:
13. Георгий Мирский, Угроза от конституции, "Независимая газета", Дипкурьер № 12, 10. X. 2005, с. 13.
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:

16. "Независимая газета", Дипкурьер № 12, 10. X. 2005, с. 13.
17. Նույն տեղում:
18. "Независимая газета", Дипкурьер № 14, 14. XI. 2005, с. 14.
19. "Независимая газета", № 226, 19. X. 2005, с. 5.
20. «Ազգ», 19. X. 2005, էջ 5:
21. Նույն տեղում:
22. «Ազգ», 27, հոկտ., 2005, էջ 5:
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում:
25. "Независимая газета", Дипкурьер № 14, 14.XI. 2005, с. 14.
26. «Ազգ», 1. XI. 2005, էջ 5:
27. Նույն տեղում:
28. Նույն տեղում:
29. Նույն տեղում:
30. Նույն տեղում:
31. "Независимая газета", Дипкурьер № 14, 14. XI. 2005, с. 14.
32. Նույն տեղում:
33. «Ազգ», 1. XI. 2005, էջ 5:
34. «Ազգ», 25. X. 2005, էջ 5:
35. «Ազգ», 3. XI. 2005, էջ 5:
36. «Ազգ», 9. XI. 2005, էջ 5:
37. «Ազգ», 17. XI. 2005, էջ 5:
38. «Ազգ», 20. X. 2005, էջ 5:
39. «Ազգ», 29. X. 2005, էջ 5:
40. United Nations Security Council, Press Release... S/RES/ 1637, Extension of Mandate of Iraq Multinational Force, 8 November 2005, meeting: 5300, p. 106- 109, տես՝ նաև «Ազգ», 10. XI. 2005, էջ 5:
41. Նույն տեղում, էջ 106:
42. Նույն տեղում:
43. «Ազգ», 23. XI. 2005, էջ 5:
44. «Ազգ», 8. XII. 2005, էջ 5:
45. Նույն տեղում, 2. XII. 2005, էջ 5:
46. «Ազգ», 8. XII. 2005, էջ 5:
47. «Ազգ», 14. XII. 2005, էջ 5:

48. Նույն տեղում:
49. «Ազգ», 16. XII. 2005, էջ 5:
50. Նույն տեղում:
51. «Ազգ», 15.XII. 2005, էջ 5:
52. Նույն տեղում:
53. Նույն տեղում, 22. XII. 2005, էջ 5:

## ԻՐԱՔՈՒՄ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԱԿ-Ի ԲԱՆԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (2005-2007 ԹԹ.)

Միացյալ ազգերի կազմակերպության Իրաքին վերաբերող փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ են դրվում Իրաքի նորագույն պատմության վերջին երկու տասնամյակների քաղաքական իրադրության և սոցիալ-տնտեսական խնդիրների ուսումնասիրության նպատակով[1]:

ՄԱԿ-ի Իրաքին վերաբերող բանաձևերն ու որոշումները, այդ թվում պաշտոնական հաշվետվությունները, ընդունված են այդ կազմակերպության Անվտանգության խորհրդի կողմից և ունեն հստակ խորագրեր, որոնք բնորոշում են գլխավոր հարցը, ինչը առանցքային է և տարողունակ՝ ընդգրկումներով, պրակտիկ աշխատանքի հնարավորություններով:

«Իրաքի նկատմամբ սիտուացիան»՝ այսպես է կոչվում տվյալ հարցը, ուր «սիտուացիա» բառը ավելի շատ կացություն, դրություն կամ իրադրություն իմաստներն է արտահայտում: Այս հարցի շուրջ բանաձևեր և որոշումներ ընդունվել են նաև 2005 թ. հունվարի մեկից մինչև 2005 թ. հուլիսի 31-ը և շարունակվել են[2]:

Հետաքրքրություն է ներկայացնում 2005 թ. օգոստոսի 11-ին ընդունված թիվ 1619 բանաձևը, ուր նշված է, որ Անվտանգության խորհուրդը, հիմք ընդունելով Իրաքին վերաբերող բոլոր նախորդ համապատասխան բանաձևերը, (մասնավորապես 14 օգոստոսի 2003թ. թիվ 1500, 8 հունիսի 2004թ. թիվ 1546 և 12 օգոստոսի 2004թ. թիվ 1557), վերստին հաստատում է Իրաքի անկախության, սուվերենության, միասնության և տարածքային ամբողջականության սկզբունքները: Հիշեցվում է, որ Միացյալ ազգերի կազմակերպության 2003թ. օգոստոսի 14-ին հիմնադրած Իրաքին օժանդակող առաքելությունը, որի մանդատը երկարաձգվել էր մինչև 2004 թվականի օգոստոսի 12-ը, պետք է առաջատար դեր խաղա Իրաքի ժողովրդին և կառավարությանը սատարելով՝ օրինակելի կառավարության ինս-

տիտուտներ ստեղծելու և ազգային երկխոսությունը ու միասնությունը խրախուսելու գործում[3]:

Նշված բանաձևը ուշադրավ է նաև նրանով, որ համաձայն Անվտանգության խորհրդի նախագահին հասցեագրված գլխավոր քարտուղարի 2005թ. օգոստոսի 3-ի նամակի, որոշում է ընդունում Միացյալ ազգերի կազմակերպության Իրաքին օժանդակող առաքելության ժամկետը ևս տասներկու ամսով երկարաձգելու մասին: Բանաձևի հաջորդ կետով մտադրություն է արտահայտվում այդ առաքելության մանդատը տասներկու ամիս անց, կամ դրանից շուտ վերանայելու մասին, եթե նման ցանկություն հայտնելու լինի Իրաքի կառավարությունը[4]:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերի և որոշումների սույն փաթեթից դուրս չի մնացել նաև սոցիալ-տնտեսական ծրագիրը: 2005թ. օգոստոսի 19-ին Անվտանգության խորհրդի նախագահը գլխավոր քարտուղարին է հղել հետևյալ նամակը՝

«Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ այն մասին, որ 2005թ. օգոստոսի 8-ի նամակը, որը վերաբերում է Միացյալ ազգերի կազմակերպության իրաքյան հաշվին, հաշվարկագրային գործարքները դադարեցնելու մասին, հասցված է Անվտանգության խորհրդի անդամների ուշադրությանը: Նրանք ողջունում են Ձեր առաջարկած միջոցները՝ հավասարակշռելու եղած մտահոգությունները «Նավթ՝ պարենի դիմաց» ծրագրի ժամանակին դադարեցնելու առիթով և ինչպես վաճառողի, այնպես էլ գնորդի պահանջները կարգավորող քննարկման անհրաժեշտության առումով: Խորհրդի անդամները ընդգծում են այն կարևորությունը, որ մնացած կատարվելիք աշխատանքը իրականացվի Իրաքի կառավարության համապատասխան մարմինների հետ սերտ խորհրդատվությունների միջոցով: Ուշադրություն դարձնելով Ձեր նամակին կցված գրությամբ նախատեսված ժամկետներին, նրանք խնդրում են Ձեզ Անվտանգության խորհրդին ներկայացնել բանավոր զեկուցում վերոհիշյալ միջոցների իրականացման մասին 2005 թվականի հոկտեմբերի կեսերին, որպեսզի խորհրդի անդամները կարողանան գնահատական

տալ ձեռքբերված առաջընթացին և անցկացնել նշված միջոցների ամփոփում»[5]:

2005թ. օգոստոսի 25-ին Անվտանգության խորհրդի նախագահը գլխավոր քարտուղարին է ուղարկել հետևյալ նամակը՝

«Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ Ձեր նամակը՝ 23 օգոստոսի 2005թ., որը վերաբերում է պ-ն Լու Յունշոու-ին (Չինաստան) Միացյալ ազգերի կազմակերպության դիտորդական, հսկողության և տեսչությունների հանձնաժողովի լիազոր նշանակվելու մասին, Անվտանգության խորհրդի անդամներին է հասցված: Նրանք ընդունում են ի գիտություն այն մտադրությունը, ինչի մասին ասվում է Ձեր նամակում»[6]:

2005թ. սեպտեմբերի 7-ին կայացած 5256-րդ նիստում Խորհուրդը որոշեց հրավիրել Իրաքի ներկայացուցչին, առանց ձայնի իրավունքի, մասնակցելու համար «Իրաքի նկատմամբ իրավիճակը» հարցի քննարկմանը:

Այդ նույն նիստում ձեռքբերված համաձայնության համապատասխան, ինչը հնարավոր դարձավ նախկինում կայացած խորհրդատվությունների շնորհիվ, Խորհուրդը որոշեց նաև իր արարողակարգի ժամանակավոր 39 կանոնակարգի հիման վրա հրավեր ուղարկել պ-ն Պոլ Վոլկերին՝ «Նավթ՝ պարենի դիմաց» Միացյալ ազգերի կազմակերպության ծրագրի անցկացման անկախ հետաքննության կոմիտեի նախագահին[7]:

Խորհուրդը իր 2005թ. սեպտեմբերի 21-ի 5266-րդ նիստում որոշեց հրավիրել Իրաքի արտաքին գործերի նախարարին առանց ձայնի իրավունքի մասնակցելու «Իրաքի նկատմամբ իրավիճակը» հարցի քննարկմանը, ուր դրվելու էր գլխավոր քարտուղարի զեկուցումը «1546(2004) (S/2005/585) բանաձևի 30 կետի» կատարման ընթացքի վերաբերյալ[8]:

Ըստ այդ նույն նիստում ձեռքբերված համաձայնության, ինչը հնարավոր դարձավ նախկինում կայացած խորհրդատվությունների շնորհիվ, Խորհուրդը որոշեց նաև իր արարողակարգի ժամանակավոր 39 կանոնակարգի հիման վրա հրավեր ուղարկել Աշրաֆ Ջեհանգիր Կազիին՝ Իրաքի գծով գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին:

Նույն օրը, 2005թ. սեպտեմբերի 21-ին, կայացած հաջորդ 5267-րդ, արդեն փակ նիստում, Խորհուրդը որոշեց լիազորել իր ներկայացուցչին, Խորհրդի արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերից 55 կանոնակարգի համապատասխան, հրապարակել հետևյալ կոմյունիկեն (պաշտոնական կառավարական հայտարարությունը):

«2005թ. սեպտեմբերի 21-ին, իր 5267-րդ նիստում, որը կայացավ փակ դռների ետևում, Անվտանգության խորհուրդը քննարկեց «Իրաքի նկատմամբ իրավիճակը» վերնագրված կետը»:

Համաձայն 5266-րդ նիստի ընդունած որոշումների, նախագահը Խորհրդի արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերից 37 կանոնակարգի համաձայն հրավեր ուղարկեց պ-ն Խոշիյար Զիբարիին, Իրաքի արտաքին գործերի նախարարին, ինչպես նաև Խորհրդի կանոնակարգային ժամանակավոր 39 կանոնակարգի հիման վրա, հրավեր ուղարկեց պ-ն Աշրաֆ Ջեհանգիր Կազիին, Իրաքի գծով գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին:

Խորհրդի անդամները, պ-ն Զիբարին և պ-ն Կազին մտքեր փոխանակեցին»[9]:

Խորհուրդը իր 5300-րդ նիստում, 2005թ. նոյեմբերի 8-ին որոշեց հրավիրել Իրաքի ներկայացուցչին առանց ձայնի իրավունքի մասնակցելու «Իրաքի նկատմամբ իրավիճակը» կետի քննարկմանը[10]:

ՄԱԿ-ի ԱԽ-ի Իրաքին վերաբերող փաստաթղթերը հետաքրքիր են նաև ժամանակահատվածի պատմական որակումների առումով, երկրում գործընթացները գնահատելու ուղղությամբ:

2005թ. նոյեմբերի 8-ի թիվ 1637 բանաձևում Անվտանգության խորհուրդը ողջունում է. «... Իրաքի անցումային գործընթացում նոր շրջանի սկիզբը, անհամբերությամբ սպասելով քաղաքական բնագավառում անցումային գործընթացի ավարտին, ինչպես նաև այն պահին, երբ իրաքյան ուժերը իրենց վրա կվերցնեն ողջ պատասխանատվությունը իրենց երկրում անվտանգությունն ու կայունությունն ապահովելու համար, ինչը

հնարավորություն կտա բազմազգ ուժերի մանդատը համարել ավարտված [11]»:

* * *

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հատուկ նշում է, որ Իրաքի կառավարությունը կշարունակի գլխավոր դեր ստանձնել երկրին հատկացվող միջազգային օգնությունը համաչափ բաշխելու գործում և վերստին կհաստատի միջազգային օգնության կարևորությունը և իրաքյան տնտեսության զարգացման նշանակությունը և դոնորների օգնության բաշխման կարևորությունը:

Ընդունելով Իրաքի զարգացման հիմնադրամի և Միջազգային վերահսկիչ խորհրդակցական խորհրդի էական դերը Իրաքի կառավարությանը ցուցաբերվող օգնության գործում, ապահովելով Իրաքի ռեսուրսների օգտագործումը տրանսպարենտ և արդար հիմքի վրա, ի շահ Իրաքի ժողովրդի, որակելով, որ Իրաքում դրությունը միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը նախկինի նման սպառնալիք է հանդիսանում, գործելով Միացյալ ազգերի կազմակերպության Կանոնադրության VII գլխի համաձայն՝

1. Նշում է, որ Իրաքում բազմազգ ուժերի ներկայությունը իրականացվում է Իրաքի կառավարության խնդրանքով, և հաշվի առնելով տվյալ բանաձևին կցված նամակները, հաստատում է բազմազգ ուժերին 1546(2004) բանաձևով տրված սանկցիան, և որոշում է բազմազգ ուժերի մանդատի գործողության ժամկետը, ինչը նշված է այդ բանաձևում, երկարաձգել մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը;

2. որոշում է, որ բազմազգ ուժերի մանդատը կարող է վերանայվել Իրաքի կառավարության խնդրանքով, կամ ոչ ուշ, քան 2006 թվականի հունիսի 15-ը, և հայտարարում է, որ այդ մանդատի գործողությանը դիմի նման խնդրանքով;

3. որոշում է նաև մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգել 1483(2003) բանաձևի 20 կետով նախատեսված Իրաքի զարգացման հիմնադրամի մուտքերի ավանդագրումը

(հայտերի ներկայացումը, հայտագրումը), որոնք գոյանում են նավթի, նավթամթերքների և բնական գազի վաճառքից, ինչպես նաև 1483(2003) բանաձևի 12 կետում և 1546(2004) բանաձևի 24 կետում նշված գործողությունների միջոցները, որոնք վերաբերում են Իրաքի զարգացման հիմնադրամի հանդեպ Միջազգային վերահսկիչ խորհրդակցական խորհրդի կողմից իրականացվող վերահսկողությանը;

4. որոշում է, որ նշված 3 կետում այն դրույթները, որոնք վերաբերում են Իրաքի զարգացման հիմնադրամի մուտքերի ավանդագրմանը և Միջազգային վերահսկիչ-խորհրդակցական խորհրդին, կարող են վերանայվել Իրաքի կառավարության խնդրանքով կամ 2006 թվականի հունիսի 15-ից ոչ ուշ;

5. խնդրում է գլխավոր քարտուղարին շարունակել երեք ամիսը մեկ պարբերաբար Խորհրդին ներկայացնել Իրաքում Միացյալ ազգերի կազմակերպության առաքելության գործողությունների մասին զեկույցներ;

6. խնդրում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին շարունակել բազմազգ ուժերի անունից երեք ամիսը մեկ Խորհրդին ներկայացնել զեկույցներ այդ ուժերի ջանքերի և նրանց ձեռքբերած առաջընթացի մասին;

7. որոշում է շարունակել ակտիվորեն զբաղվել այդ հարցով:

Այդ բոլոր որոշումները թիվ 5300 նիստում ընդունված են միաձայն[12]:

Իրաքի այդ դժվար ժամանակահատվածի տնտեսության զարգացման համար նպաստավոր էր 2005թ. նոյեմբերի 9-ին կայացած 5301 նիստի ընդունած որոշումը: Այդ որոշումն ընդունելուց հետո Անվտանգության խորհրդի նախագահը նամակով տեղեկացնում է գլխավոր քարտուղարին, ուր նշված է՝

«Կցանկանայի տեղեկացնել Ձեզ, որ Խորհուրդը որոշեց հավանություն տալ Ձեր նամակում ներկայացված առաջարկին, որը վերաբերում է նպատակային ավանդային հաշվի փոխանցմանը, հաշիվը բացված է համապատասխան վերոհիշյալ բանաձևի, 2.182.168 ԱՄՆ դոլ. ավելացրած է 226.493 եվրո, որոնք կմուտքագրվեն Իրաքի կառավարության հաշվին՝ պար-

տադիր վճարումների ձևով ատոմային էներգիայի Միջազգային գործակալության բյուջե»[13]:

2005թ. նոյեմբերի 11-ի նամակում Անվտանգության խորհրդի նախագահը գլխավոր քարտուղարին տեղեկացնում է՝ «Օգտվելով եղած հնարավորությունից, Խորհրդի անդամները շնորհակալություն են հայտնում «Նավթ պարենի դիմաց» ծրագրի ժամանակին ավարտի վերաբերյալ՝ հավասարակշռված հաշվարկով չահագրգիռ, ինչպես նաև այդ ծրագրի շրջանակում սկսված նախագծերի հաջող իրագործման անհրաժեշտության օգտին Ձեր ջանքերի համար: Այդ առիթով նրանք ողջունում են 2005թ. հոկտեմբերի 3-ին Ամմանում կայացած հանդիպումը՝ Վերստուգողի և Իրաքի կառավարության պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Նրանք ի գիտություն են ընդունում իրադրության մասին նոր տեղեկատվությունը և նոր միջոցները, որոնք առաջարկված են գրության մեջ, ինչը կցված է Ձեր նամակին: Խորհրդի անդամները անհրաժեշտ են համարում Իրաքի կառավարության հետ սերտ խորհրդակցությունների անցկացումը:

Հաշվի առնելով Ձեր նամակում նախատեսված նոր ժամանակացույցը, նրանք խնդրում են տեղեկացնել Խորհրդին ձեռնարկված նոր միջոցների իրականացման մասին 2005թ. դեկտեմբերի կեսին, որպեսզի Խորհրդի անդամներին հնարավորություն տրվի գնահատել ձեռքբերված առաջընթացը»[14]:

Անվտանգության խորհուրդը 2005թ. դեկտեմբերի 14-ին, 5325 նիստով որոշեց հրավիրել Իրաքի ներկայացուցչին առանց ձայնի իրավունքի, մասնակցելու «Իրաքի նկատմամբ իրավիճակը» վերնագրված հարցի քննարկմանը, օրակարգում՝ գլխավոր քարտուղարի զեկուցումը, 1546 բանաձևի (2004) (S /2005/766) 30 կետի կատարման մասին»:

2005թ. դեկտեմբերի 30-ին Անվտանգության խորհրդի նախագահը գլխավոր քարտուղարին հետևյալ նամակով է դիմել՝

«Պատիվ ունեմ տեղեկացնելու, որ 2005թ. դեկտեմբերի 20-ի Ձեր նամակը և նրան կից գրությունը անկախ հետաքննության կոմիտեի գործունեությունը մինչև 2006թ. մարտի

վերջը շարունակելու Ձեր որոշման մասին հասցված է Անվտանգության խորհրդի անդամներին»:

Այդ նույն տեղում նշված է, որ «... Կոմիտեն իր հետաքննությունը լրիվ ավարտելուց հետո հետագայում որևէ հնարավորություններ կամ լիազորություններ չի ունենալու ընթացիկ հետաքննություններ վարելու համար: Գործունեության երկարաձգումը կոմիտեի տնօրեն-գործադրի նախագահությամբ կիրականացվի բացառապես գործի քննություն իրականացնող ազգային մարմիններին օգնություն ցուցաբերելու նպատակներին աջակցելով, իսկ մնացած ֆունկցիաները կկայանան նրանում, որպեսզի կանոնակարգվի անհրաժեշտ մատչելիությունը կոմիտեի արխիվին, և ապահովվի դրա անհրաժեշտ պահպանություն ու օգտագործումը»[15]:

2006թ. փետրվարի 10-ին Անվտանգության խորհրդի նախագահը գլխավոր քարտուղարին ուղարկած նամակում դարձյալ անդրադառնում է Իրաքի տնտեսությանը սատարելու, ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու կարևոր հարցին:

Այդ նամակում ասվում է՝ «Պատիվ ունեմ պատասխանելու 2006թ. փետրվարի 7-ի Ձեր նամակին, ուր Դուք հիմք եք ընդունում Անվտանգության խորհրդի 1284(1999) բանաձևը, որով Խորհուրդը հիմնադրել է Միացյալ ազգերի կազմակերպության դիտորդական, վերահսկողության և տեսչությունների կոմիտե և դրա հետ կապված 687(1991) և 706(1991) բանաձևերը:

Այդ առթիվ կցանկանայի տեղեկացնել Ձեզ այն մասին, որ Խորհուրդը որոշեց հավանություն տալ Ձեր նամակում նշված այն առաջարկին, որը վերաբերում է վերոհիշյալ բանաձևերին համապատասխան բացված նպատակային ավանդային հաշվին՝ 416.871 ԱՄՆ դոլ., ինչը կփոխանցվի հաշվեգրված անդամավճարներին՝ կապված Իրաքի կառավարության ստանձնած պարտավորությունների հետ՝ կանոնավոր բյուջեի տեսքով և կիատկացվի խաղաղության պահպանմանը, տրիբունալների գործունեությանը և կազմակերպության կապիտալ շինարարության գլխավոր ծրագրի իրականացմանը»[16]:

2006թ. փետրվարի 14-ի 5371-րդ նիստում խորհուրդը որոշեց հրավիրել Իրաքի ներկայացուցչին, առանց ձայնի իրավունքի, մասնակցելու «Իրաքի նկատմամբ իրավիճակը» հարցի կետի քննարկմանը[17]:

Այդ նույն նիստում ԱԽ-ի անդամների հետ խորհրդակցությունների արդյունքում նախագահը խորհրդի անունից հետևյալ հայտարարությունն արեց՝ «Անվտանգության խորհուրդը ողջունում է Իրաքի Անկախ ընտրական հանձնաժողովի փետրվարի 10-ին Իրաքի ներկայացուցիչների խորհրդի ընտրությունների ստուգված արդյունքների հրապարակումը: Անվտանգության խորհուրդը առանձնակի ոգևորությամբ նշում է, որ ընտրություններում մասնակցություն են ունեցել Իրաքի բոլոր համայնքները ներկայացնող քաղաքական կուսակցությունները, ինչը վկայում է Իրաքի ողջ տարածքում ընտրությունների բարձր ակտիվությունը: Խորհուրդը արժանին է հատուցում և Իրաքի բնակիչներին իր երախտագիտությունն է հայտնում նրանց ցուցաբերած կամքի խաղաղ, դեմոկրատական քաղաքական գործընթացի և բարդ և բռնության սպառնալիքի պայմաններում, քվեարկությանը մասնակցելու համար:

Խորհուրդը ընդգծում է բոլոր կողմերի մասնակցության կարևորությունը ազգային երկխոսությանն ու Իրաքի քաղաքական զարգացմանը միտված առաջընթացի միասնությանը: Խորհուրդը կոչ է անում Իրաքի քաղաքական առաջնորդներին վճռական քայլեր նախաձեռնել ձևավորելու լիովին օրինակելի կառավարություն, որը կձգտի կառուցել խաղաղ, բարգավաճ, դեմոկրատական և միասնական Իրաք: Խորհուրդը դիմում է բոլոր իրաքցիներին համառորեն կոչ անելով մասնակցել խաղաղ քաղաքական գործընթացին և կոչ է անում նրանց, ովքեր շարունակում են դիմել բռնությանը, վայր դնել զենքը: Խորհուրդը դատապարտում է Իրաքում ահաբեկչական գործողությունները: Չի կարելի հանդուրժել, որպեսզի այդպիսի գործողությունները ջլատեն երկրի առաջընթացը քաղաքական և տնտեսական բնագավառներում:

Խորհուրդը հատուկ երախտագիտություն է հայտնում Իրաքի Անկախ ընտրական հանձնաժողովին՝ ընտրությունների

անցկացման և կազմակերպման գործում նրա դերի համար: Խորհուրդը նաև իր երախտագիտությունն է հայտնում գլխավոր քարտուղարին և Միացյալ ազգերի կազմակերպությանը ընտրությունների նախապատրաստմանը հաջողությամբ աջակցելու համար և նշում է, մասնավորապես, Միացյալ ազգերի կազմակերպության առաքելության դերը Իրաքին սատարելու գործում: Անվտանգության խորհուրդը բարձր է գնահատում նաև այն աջակցությունը, որը ցուցաբերեցին մնացած միջազգային գործող անձինք, այդ թվում Եվրոպական խորհրդի ընտրությունների անցկացման գծով փորձագետները և Իրաքի ընտրությունների գծով Միջազգային առաքելությունը:

Խորհուրդը ընդգծում է միջազգային աջակցության պահպանման անհրաժեշտությունը և ընդլայնումը բոլոր պետությունների և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից Իրաքի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացմանը լայնածավալ աջակցություն ցուցաբերելու նպատակով: Խորհուրդը կոչ է անում Միացյալ ազգերի կազմակերպությանը Իրաքում որքան հնարավոր է մեծ դեր խաղալ: Նա նաև դիմում է բոլոր գործող պաշտոնական անձանց, հատկապես Իրաքի հարևաններին, կոչ անելով կատարել Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերը և դիտարկել նաև այն հարցը, թե ինչպես կարող են նրանք ընդլայնել իրենց ներդրումը այդ կարևոր էտապում: Այդ համատեքստում Խորհուրդը հույսեր է կապում նաև արաբական պետությունների Լիգայի ջանքերը շարունակելու հետ՝ աջակցելու քաղաքական գործընթացին, որը հավանության է արժանացել Անվտանգության խորհրդի 1546(2004) և 1637(2005) բանաձևերում:

Խորհուրդը վերստին իր աջակցությունն է հայտնում ֆեդերատիվ, դեմոկրատական, պլյուրալիստական և միասնական Իրաքի օգտին, ուր լիովին կպահպանվեն մարդու իրավունքները»[18]:

2006թ. մարտի 28-ին Անվտանգության խորհրդի նախագահը գլխավոր քարտուղարին նամակով հայտնում է՝

«Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ 2006թ. մարտի 24-ի Ձեր նամակը՝ Անկախ փորձաքննության կոմիտեի գրասենյակի աշխատանքի ժամկետը մինչև 2006թ. դեկտեմբերի 31-ը երկարաձգելու Ձեր որոշման մասին հասցված է Անվտանգության խորհրդի անդամներին: Նրանք ընդունել են Ձեր նամակի տեղեկությունն ու որոշումը ի գիտություն»[19]:

2006թ. մայիսի 24-ի 5444 նիստում Խորհուրդը որոշեց հրավիրել Իրաքի ներկայացուցչին, առանց ձայնի իրավունքի, քննարկելու «Իրաքի նկատմամբ իրավիճակը» անվանումով հարցի կետը:

Այդ նույն նիստի ընթացքում Նախագահը Անվտանգության խորհրդի անդամների հետ խորհրդատվությունների արդյունքում հետևյալ հայտարարությունն արեց՝

«Անվտանգության խորհուրդը ողջունում է մայիսի 20-ին կայացած սահմանադրական ճանապարհով Իրաքի ընտրված կառավարության ինաուգուրացիան և շնորհավորում է Իրաքի ժողովրդին այդ իրադարձության առիթով, ինչը երկրում ընթացող քաղաքական անցումային գործընթացի կարևոր փուլ է:

Առանձնակի լավատեսություն է հարուցում Խորհրդի մոտ այն հանգամանքը, որ այդ կառավարությունը ներկայացնում է Իրաքի բնակչության ամենատարբեր խմբերը, և նա հույս է հայտնում, որ պաշտպանության, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարները կնշանակվեն մաքսիմալ կարճ ժամկետում: Խորհուրդը կոչ է անում նոր կառավարությանը անդադրում ջանքեր գործադրել աջակցելու ազգային համաձայնությանը երկխոսության հիմքի վրա՝ ներգրավելով այդ գործընթացին հասարակության բոլոր խավերին, ստեղծելու այնպիսի մթնոլորտ, որը չի հանդուրժի նեղկլանային շահերով առաջնորդվել: Այդ նույն ժամանակ Խորհուրդը համառորեն կոչ է անում բոլոր իրաքցիներին հանգիստ մասնակցել քաղաքական գործընթացին և ծգտել նրան, որպեսզի ով դեռևս դիմում է բռնությանը, զենքը վայր դնի: Խորհուրդը վճռականորեն դատապարտում է Իրաքում ահաբեկչական գործողությունները, այդ թվում բոլորովին վերջերս տեղ գտած սարսափելի հարձակումները քաղաքացիական բնակչության և

կրոնական օբյեկտների վրա, դարանակալ նպատակ փայփայելով տարբեր համայնքների միջև լարվածություն սերմանելը:

Խորհուրդը ընդգծում է, որ նոր կառավարության հետ մեծ հույսեր են կապվում դրական տեղաշարժերի ապահովման առումով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են անվտանգությունն ու կայունությունը, մարդու իրավունքները և օրինականության պահպանումը, հիմնական ծառայությունների մատուցումը և տնտեսության հարաճուն զարգացումն ու բարգավաճումը: Խորհուրդը համառորեն կոչ է անում կառավարությանը գործադրել էֆեկտիվ և ակտիվ ջանքեր այդ նպատակի համար, Խորհուրդը նաև համառորեն դիմում է բոլոր պետություններին և համապատասխան միջազգային կազմակերպություններին շարունակելու ցուցաբերել և ընդլայնել իրենց օգնությունը Իրաքի սուվերեն կառավարությանը այդ վճռական էտապում: Խորհուրդը նշում է Իրաքին սահմանակից երկրների հատուկ դերը և կոչ է անում նրանց պաշտպանել Խորհրդի համապատասխան բանաձևերը և մեծացնել իրենց ներդրումը: Սրա հետ կապված Խորհուրդը նաև հույսեր է կապում Արաբական պետությունների լիգայի կողմից հետագա աջակցության հետ, ինչը այդ կազմակերպության կողմից հավանության է արժանացել քաղաքական գործընթացի առումով, այդ թվում նաև Բաղդադում 2006թ. նախատեսված կոնֆերանսը:

Խորհուրդը վերստին հայտարարում է, որ ինքը հանդես է գալիս, որպեսզի Իրաքը դառնա ֆեդերատիվ, դեմոկրատական, պլյուրալիստական և միասնական պետություն, որպես միջազգային հանրության պատասխանատու անդամ, ուր ապահովվում են կայունությունը, բարգավաճումը և մարդու իրավունքների բազմակողմանի հարգանքը, օրինականության ապահովումը:

Խորհուրդը նաև վերստին հաստատում է Իրաքի անկախությունը, սուվերենությունը, միասնությունը և տարածքային ամբողջականությունը»[20]:

2006թ. մայիսի 26-ին Անվտանգության խորհրդի նախագահը դիմել է գլխավոր քարտուղարին հետևյալ նամակով՝

«Պատիվ ունեմ Ձեզ հայտնել, որ 2006թ. մայիսի 23-ի նամակը, որով Դուք հայտնում եք Ձեր մտադրության մասին պ-ն Ֆրենսիս Կ.Ռեկորդին դիտորդության գծով Միացյալ ազգերի կազմակերպության հանձնաժողովին կից լիազորի պաշտոնում, հասցված է Անվտանգության խորհրդի անդամներին: Նրանք Ձեր նամակում արտահայտված մտադրությունը ընդունել են ի գիտություն:

2006թ. հունիսի 15-ի 5463 նիստում Խորհուրդը որոշեց Իրաքի արտգործնախարարին հրավիրել, առանց ձայնի իրավունքի, մասնակցելու «Իրաքի նկատմամբ իրավիճակը» վերնագրով հարցի կետի քննարկմանը՝ գլխավոր քարտուղարի զեկուցումը, 1546 (2006) (S/2006/360) բանաձևի 30 կետի կատարման մասին»[21]:

Այդ նույն նիստում, համապատասխան Խորհրդի նախկինում կայացած խորհրդատվությունների ձեռք բերված պայմանավորվածության, Խորհուրդը որոշեց նաև հրավեր ուղարկել գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերի գծով օգնական տիկին Անգելե Կեյնին, համաձայն արարողակարգի իր ժամանակավոր կանոնակարգերի 39 կանոնակարգի[22]:

2006թ. հունիսի 15-ի 5464-րդ փակ նիստով Խորհուրդը որոշեց լիազորել իր նախագահին հրապարակել հետևյալ կոմյունիկեն գլխավոր քարտուղարի միջոցով, համաձայն խորհրդի արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերից 55 կանոնակարգի՝

«Իր 5464-րդ նիստում, որը կայացավ փակ դռների ետևում, 2006թ. հունիսի 15-ին, Անվտանգության խորհուրդը դիտարկեց «Իրաքի նկատմամբ իրավիճակը» անվանումով հարցի կետը: Համաձայն նախկինում կայացած 5463-րդ նիստի ընդունած որոշման, նախագահը Խորհրդի արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերից 37 կանոնակարգի հրավեր ուղարկեց Իրաքի արտաքին գործերի նախարար պ-ն Խոշիյար Զիբարին[23]:

Համաձայն 5463-րդ նիստում ընդունված որոշման, համաձայն Խորհրդի արարողակարգի ժամանակավոր կանոնակարգերի 39 կանոնակարգի նախագահը հրավեր ուղարկեց

գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերի գծով օգնական Անգելե Կեյնին:

Խորհրդի անդամները, պ-ն Ջիբարին և տ-ն Կեյնը մտքեր փոխանակեցին»[24]:

Ինչպես երևում է վերը շարադրածից, 2005թ. օգոստոսի 11-ին ընդունված 1619 բանաձևի[25] ակնկալած Իրաքի ազգային երկխոսությունը՝ ՄԱԿ-ի Իրաքի գծով օժանդակության առաքելության հետ գնալով ավելի նոր զարգացումներ է գրանցում: Երկխոսությունը բնորոշ է նաև նշված ժամանակահատվածում ընդունված որոշ բանաձևերին ու որոշումներին, որոնց որպես հավելում ծառայում են պաշտոնական գրությունները ու նամակները:

## RESOLUTIONS AND STATEMENTS OF THE UNITED NATIONS SECURITY COUNCIL ABOUT THE SITUATION IN IRAQ (2005-2007)


The article deals with the analyses of the Resolutions and Statements of the Security Council about the Situation in Iraq's political transition process, new phase in this transition, calling upon the international community, particularly countries in the region and Iraq's neighbors to support the Iraqi people in their pursuit of peace, stability, security, democracy and prosperity.

The United Nations role in Iraq in this period of 2005-2007 is a very important, continual and historical factor.

The article deals with the analyses of the Security Council Resolutions: S/RES/ 1618, 4 August 2005, Condemnation of terrorist attacks in Iraq; S/RES/1619, 11 August 2005, Extension of UN Assistance Mission in Iraq; S/RES/1637, 8 November 2005, Extension of mandate of Iraq Multinational Force and Security Council Statements: /S/2006.

The vision and purpose of Iraq's democratic future can become a reality with the help of the international community.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Կ. Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 137-146; Կ. Սամվելյան, ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXII, Երևան, 2003, էջ 119-128; Կ. Սամվելյան, ՄԱԿ-ի գործունեությունը Իրաքում (2003 թ. մարտ – 2004 թ. հունիս) և հասարակական կարծիքի ձևավորումը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Երևան, 2004, էջ 242-253; Կ. Սամվելյան, Քաղաքական իրադրությունը Իրաքում և ՄԱԿ-ի դիրքորոշումը (2004 թ. հունիս – 2005 թ. օգոստոս), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Երևան, 2005, էջ 218-235; Կ. Սամվելյան, ՄԱԿ-ի մասնակցությունը Իրաքում օրինաստեղծ գործընթացներին 2005 թվականին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXV, Երևան, 2006, էջ 134-155:
2. Տե՛ս Организация Объединенных Наций, Резолюции и решения Совета Безопасности, 1 августа 2005 года – 31 июля 2006 года, с. 34.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 35; S/2005/509:
5. Նույն տեղում; S/2005/536:
6. Նույն տեղում; S/2005/541:
7. Նույն տեղում, էջ 35:
8. Նույն տեղում, էջ 36:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում: Տե՛ս United Nations Security Council, Press Release, Department of Public Information, News and Media division, New York. SC/8627, 2 February 2006, Resolutions and Statements of the Security Council, 2005, S/RES/1637/, p. 106-109; Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի մասնակցությունը Իրաքում օրինաստեղծ գործընթացներին 2005 թվականին, «Մեր-

ծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXV, էջ 134-155:
12. Организация Объединенных Наций, Резолюция и решения..., էջ 38:
13. Նույն տեղում, էջ 41; S/2005/703:
14. Նույն տեղում, S/2005/713:
15. Նույն տեղում, էջ 41-42; S/2005/848:
16. Նույն տեղում, էջ 42; S/2006/94:
17. Նույն տեղում, էջ 42:
18. Նույն տեղում, էջ 42-43; SPRST/2006/8:
19. Նույն տեղում, էջ 43; S/2006/195:
20. Նույն տեղում, էջ 43-44; S/PRST/2006/24:
21. Նույն տեղում, էջ 44:
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում, էջ 45:
24. Նույն տեղում:
25. Տե՛ս United Nations Security Council, Press Release..., 2005, S/RES/1619, p. 77.

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՔՈՒՄ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Առաջին հայացքից մեկ տարին ընդգծելը կամ առանձնացնելը կարող է թվալ ոչ բավարար՝ պատմական ժամանակահատվածն ընդհանրացնելու համար, սակայն Իրաքի պարագայում 2008 թվականը իրոք շրջադարձային էր:

Խնդրո առարկա հարցը պայմանավորված էր նրանով, որ 2008 թ. վերջին լրացավ Իրաքում միջազգային ուժերին Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ-ի)[1] տված մանդատի վերջնաժամկետը:

2007 թվականի սեպտեմբերին բրիտանական զորքն արդեն դուրս էր բերվել Իրաքի նավթով հարուստ քաղաքի՝ Բասրայի տարածքից, սակայն լիովին չէր լքել այդ շրջանը, տեղաբաշխելով իր ուժերը օդանավակայանում և դրա մոտակայքում[2]: Հակաիրաքյան կոալիցիայի կազմում Մեծ Բրիտանիան 2008 թվականին 41.000 զինծառայող էր կենտրոնացրել Իրաքի հարավում, հատկապես Բասրայում[3]:

Նախատեսվում էր մինչև 2009 թվականի կեսերը Բրիտանիայի բոլոր զինծառայողներին դուրս բերել Իրաքից: Բանակցությունները Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունի և Իրաքի ղեկավարության միջև, այդ ժամկետի մեջ տեղավորվելու առումով, շարունակվեցին մինչև 2008 թվականի ավարտը:

Սակայն կարևորը Իրաքից ամերիկյան զորքի դուրս բերման հարցն է: Դրա շուրջ բանակցությունները հանգեցրին անվտանգության համաձայնագիր կնքելու անհրաժեշտությանը: Իրաքի կողմից ԱՄՆ-ի ներկայացուցչի հետ բանակցում էր Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին: Շրջանառվում էր որպես վերջնական ժամկետ 2011 թվականը: Ենթադրվում էր, որ ամերիկյան զորքը վերջնականապես կհեռանա Իրաքից՝ այնտեղ թողնելով մի քանի ամերիկյան ռազմակայան[4]:

Ուշադրության արժանի է այն իրողությունը, որ կոալիցիոն զորքերի ներկայությունը Իրաքում ժողովրդին չբերեց խոստացված ազատությունների ու կարծեցյալ հանդարտության, խաղաղ պայմանների պատրանքն անգամ: Ահաբեկչությունների ալիքը ոչ միայն չթուլացավ, այլ դարձավ սովորական երևույթ, Իրաքում կոալիցիոն ուժերի ներկայության ողջ ընթացքում:

Թիրախ էին դառնում նաև մզկիթներն ու այնտեղ հավաքված անձինք:

Այսպես, 2008 թվականի հոկտեմբերի 2-ին Բաղդադում, շիաների երկու մզկիթների մոտ իրականացված ահաբեկչություններից զոհվեց 12 և վիրավորվեց 31 մարդ: Առաջին ահաբեկչությունը իրականացրել էր ականված ավտոմեքենայով մահապարտ ահաբեկիչը Զաֆրանիայի շրջանում: Այդ պայթյունից զոհվեց 7 և վիրավորվեց 21 մարդ:

Երկրորդ պայթյունը տեղի ունեցավ Նոր Բաղդադի տարածքում, դարձյալ մահապարտի իրականացրած ահաբեկչության հետևանքով:

Ակնառու է շիա և սուննի բնակչության միջև հակամարտության դրսևորումը: Նաև վերը նշվածի օրինակով, քանի որ այդ երկու շրջաններն էլ գտնվում են Բաղդադի արևելքում և հիմնականում բնակեցված են շիաներով: Այդ նույն օրը՝ հոկտեմբերի 2-ին, նրանք նշեցին Իդ ալ Ֆիթր տոնը, ինչը Ռամադանի ծոմապահության ավարտն է նշում: Սուննիների մոտ այդ նույն ծիսակատարությունը նույն՝ Իդ ալ Ֆիթր անվանումով, սկսվել էր մի քանի օր առաջ: Իշխանությունները նախազգուշացրել էին այդ օրը սպասվող հնարավոր ահաբեկչությունների մասին, սակայն դրանք կանխող միջոցառումներն ինչպես ցույց են տալիս իրադարձությունները, բավարար չէին[5]:

Այս և նման այլ իրադարձություններ ցույց են տալիս, որ ամերիկացիների Իրաքում սանձազերծած պատերազմը ոչ միայն չի նպաստել առանց այն էլ դեմոկրատիայի ինստիտուտներ չունեցող և այս հարցում սեփական պատկերացումն ունեցող իրաքյան ժողովրդի խաղաղ գոյակցության, ինչպես նաև կենսապայմանների բարելավմանը, այլ ճիշտ հակառակ

պատկերն է: Միջդավանական պայքարը մահմեդականների շրջանում ու միմյանց հանդեպ անհանդուրժողականությունը ահաբեկչությունների շղթա է կազմում, որի զոհն են դառնում խաղաղ բնակիչներ:

Ծայրահեղականների իրականացրած ահաբեկչությունների հետևանքով կան զոհեր նաև Իրաքի հայազգի բնակչության շրջանում:

Միայն 2008 թվականի հոկտեմբերին մեկ տասնյակից ավելի քրիստոնյաներ ահաբեկչություններից խուսափելով ստիպված են եղել լքել իրենց տները՝ պատսպարվելով հարևան գյուղերում բնակվող ազգականների մոտ կամ հավաքվելով իրենց բնակավայրերում գտնվող եկեղեցիներում:

Այդ նույն ժամանակահատվածում՝ հոկտեմբերի 12-ի ուշ երեկոյան Իրաքի Մոսուլ քաղաքում երաժշտական խանութի վրա սուննի ծայրահեղականների զինված հարձակման հետևանքով սպանվեց հայ գործարար Վարդգես Բաբուլը, որը այդ խանութի սեփականատերն էր: Նրան ճանաչում էին «Աբու Թամարա» մականունով: Նրա խնամքին էին գտնվում մայրը, կինը, դուստրը և մահացած եղբոր ողջ ընտանիքը[6]: Ինքնին հասկանալի է, որ տղամարդու կորուստը պատերազմական իրավիճակներում առավելապես, իսկ Իրաքի նման արաբական երկրի պարագայում հատկապես, նշանակում է ողջ ընտանիքի կերակրողի և ապավենի կորուստ: Սրան ավելացնենք նաև այն համզամանքը, որ ողջ մնացածները նույնպես ենթակա են տարբեր վտանգների և նման իրավիճակում պարզապես ապագա չեն տեսնում ո՛չ գործարարության և ո՛չ էլ իրենց ընտանիքի անդամների ապահովության համար:

2008 թվականի վերջին տվյալներով Իրաքից Հայաստան հայրենադարձվածների թիվը կազմում է մոտավորապես 900 մարդ[7]: Այդ ընտանիքները, հնարավորության սահմաններում, գտնվում են հասարակության հոգածության ներքո:

Իրաքի ներքաղաքական մթնոլորտը իր լարվածությամբ չի նպաստում բռնությունների և ահաբեկչությունների բուլացմանն ու մեղմացմանը: «Amnesty International» իրավապաշտպան կազմակերպության տվյալներով, Իրաքում բռնություն-

ների չափերը 2005 թվականից մինչև նշված ժամանակահատվածը, այսինքն բոլորովին վերջերս, զգալիորեն ավելացել են, վկայելով, որ մահապատիժը սպասված արդյունքին չի հանգեցնում:

Նկատելի փաստ է, որ 2003 թվականից արգելված մահապատիժը՝ որպես պատժի առավելագույն չափ, Իրաքում արգելված էր, սակայն արդեն 2004 թվականին իրաքյան ժամանակավոր կառավարությունը, երկրում կարգուկանոնի ապահովման պատճառաբանությամբ վերստին ընդունեց այն՝ որպես անհրաժեշտություն:

Կազմի կոչվող շրջանում, որտեղ և գտնվում է իր հայտնի դաժանություններով առանձնացող բանտը, ժամանակին կախաղան հանվեց Իրաքի նախկին նախագահ Սադամ Յուսեյնը:

Ժամանակը ցույց է տալիս, որ Իրաքի «ժողովրդավարական» կառավարության վարած քաղաքականության պայմաններում նրա ճակատագրին են արժանանում նաև ապստամբ բանտարկյալները, որոնց այստեղ, գաղտնիության պայմաններում կախաղան են հանում: «Այս մասին հաղորդում է բրիտանական «The Independent»-ը: Սպանվածների ճիշտ թիվը հայտնի չէ, բայց ենթադրվում է, որ Իրաքում ամերիկյան զինուժի ներկայությունից հետո մահապատժի են ենթարկվել հարյուրավոր անձինք: Պարբերականը փաստում է, որ այդ սպանությունների մասին տեղեկություններ չեն հրապարակվում, սակայն զոհերի մեծամասնությունը ապստամբներ են, ընդ որում նրանց մահվան դատավճիռը կայացվում է հապշտապ»[8]:

Իրաքյան բանտերի դաժանությունը հայտնի էր շատ վաղուց, անգամ 1958թ. հուլիսի 14-ի հեղափոխությունից առաջ, երբ երկիրը դեռևս անկախություն ձեռք չէր բերել: Եվ ամոթալի է, որ տասնամյակներ անց նման պատկերները կրկնվում են հանրապետական Իրաքում, այն էլ նման քաղաքական իրավիճակում, կեղծ կամ չակերտավոր ժողովրդավարության անվան տակ, ի հաշիվ երկրի ազգաբնակչության

նպատակների ու տարրական իրավունքների ապահովման ստանձնած սին խոստումների:

Բավական հետաքրքիր և խայտաբղետ պատկեր է ներկայացնում Իրաքի արտաքին հարաբերությունների տեսադաշտը: Եվ այս հարցում նույնպես տեսանելի է Վաշինգտոնի ձեռագիրը, ինչը պաշտոնական մակարդակով թելադրվում է Իրաքին. այն է՝ բարելավել հարաբերությունները իր անմիջական հարևանների հետ: Այդ հարևանների թվում են նաև Սիրիան և Իրանը, որի հետ 1980-1988 թթ., շուրջ ութ տարի տևած պատերազմում և՛ Իրաքը, և՛ Իրանը բազմաթիվ մարդկային կորուստներ կրեցին, էլ չհաշված տնտեսական վնասների չափը երկուստեք: Այդ ամենի արդյունքում բնական է, որ երկու երկրների հարաբերությունները թշնամական էին, իսկ մղված պատերազմն էլ՝ արյունալի և անարդյունավետ, պատերազմող կողմերի համար: 8-ը թիվը պարզվեց, որ պատմական ճակատագիր է նրանց համար:

Սակայն, քանի որ Իրաքը մինչև օրս կրում է սուննի և շիա մահմեդականների միջև անհանդուրժողականության ոչ միայն վտանգները, այլ բացահայտ դրսևորումները, զինված ահաբեկչությունների կրկնություններով ու սպառնալիքներով, ակնկալվում է, որ Թեհրանը ի վիճակի է Բաղդադի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել, հաշվի առնելով այն, որ Իրաքը ղեկավարում է շիա մեծամասնությունը: Այդ հանգամանքը դիվանագիտորեն օգտագործվում և ուշադրության շրջանակում է գտնվում ինչպես բուն Իրաքում և Իրանում, նաև արևմուտքի կողմից: Այսինքն այս հարցը եռակողմ հետաքրքրությունների դիվանագիտական դաշտում է:

Հարևան այդ երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորմամբ, խնդիր է դրված նպաստելու Իրաքի ներսում հասարակական-քաղաքական իրադրության կայունացմանը և բարելավմանը: Թեև Իրանի նախագահ Ահմադինեջադը այլ համոզման է՝ «Մեր պետությունների թշնամիները երբեք չէին ցանկանա, որպեսզի Իրանը և Իրաքը միասին լինեն և ամրապնդեն միմյանց»,– ասել է նա[9]:

Ինչևէ, 2008 թվականի մարտի 3-ին Իրանի նախագահի այցը Իրաք ավարտվեց: Ահմադինեջադի վրա փաստորեն դրված էր խաղաղասիրական առաքելություն: «Նա պետք է հանդես գար «հարազատի» կերպարով, իսկ Իսլամական հանրապետությունը՝ իրաքցիների համար «ավագ եղբոր» կերպարով: Թե որքանով է լուծված այդ խնդիրը, ցույց կտա ժամանակը, սակայն նախադրյալները, կարծես թե ստեղծված են հիմնավոր»[10]: Հոդվածները այս մասին կրում են հստակ և նպատակասլաց վերնագրեր, ինչպես այս մեջբերվող նյութինն է՝ «Ահմադինեջադը ձեռք բերեց երկրորդ տուն և նոր էջ բացեց իրանա-իրաքյան հարաբերությունների պատմության մեջ» կամ «ավագ եղբոր» հետ համեմատելը:

Հետաքրքիր է նաև նշված այցի հետ կապված հետևյալ դրվագը՝ Իրանի նախագահը անձամբ է ցանկություն հայտնել այցի ընթացքում մնալ Իրաքի նախագահի աթոռանիստ վայրում: Եվս մեկ պոպուլիստական առաջարկ, քանի որ Իրաքի նախագահ Թալաբանին ազգությամբ քուրդ է, և նրա հարկի տակ գիշերելը դիտվեց որպես քրդերի հետ միասնության արտահայտություն[11]:

Իրաքում ամերիկյան զորքերի հրամանատարը՝ գեներալ Ռեյմոնդ Օդիերնոն Իրանին մեղադրում էր իրաքա-ամերիկյան համաձայնությանը հակառակվելու մեջ:

«Ես կարծում եմ, որ իրանցիները օգտագործում են իրենց կապերը Իրաքում, որպեսզի ջանան ազդել նրանց պոտենցիալ քվեարկության արդյունքի վրա խորհրդարանում»,– ընդգծել է գեներալը Washington Post թերթին տված հարցազրույցում: Նա ավելացրել է նաև, թե ամուր հիմնավորված փաստեր չունի պատգամավորների կաշառվելու մասին, սակայն հարցախույզի զեկույցները ցույց են տալիս և հանգեցնում իրանցիների ջանքերին՝ «վճարել մարդկանց, որպեսզի նրանք դեմ քվեարկեն համաձայնությանը»: Իրաքի վարչապետ ալ Մալիքին նրա ասածը հերքեց[12]:

2008 թվականի հոկտեմբերի 22-ից-29-ը Իրանի Իսլամական Հանրապետություն այցելած Բարզանիին Թեհրանում ընդունել է Մահմուդ Ահմադինեջադը: Իրանի նախագահն ընդ-

գծել է, որ իր երկիրը խիստ կարևորում է Իրաքի միասնությունն ու անկախությունը՝ «եթե բոլոր խնդրավորումներն Իրաքում ծեռք ծեռքի տան, ապա կարող են ապահովել երկրի անվտանգությունը, արգելել օտարների միջամտությունը»[13]:

Այցի ընթացքում Իրանի նախագահին ուղեկցում էին մի շարք նախարարներ և բարձրաստիճան անձինք:

Սպասվող դրական տեղաշարժերն Իրաքի և Իրանի միջև հարաբերություններում, եթե գրանցվելու լինեն, ապա դրանք կնպաստեն նաև Իրաքի ներքաղաքական իրադրության կարգավորմանը[14]: Ուշադրության արժանի են նաև նախատեսված համատեղ ծրագրերը՝ զբոսաշրջության զարգացում, Բաղդադի ենթակառուցվածքային վերականգնում, համակարգող խորհրդի ստեղծում, ֆինանսավորման ապահովում, մշակութային կենտրոնի կառուցում Բաղդադում, ապահովելով համալիրների սպասարկման ոլորտը: Այցից մեկ շաբաթ առաջ Թեհրանի և Բաղդադի միջև Իրաքի այդ բնագավառների վերականգնման համաձայնություն էր կնքվել[15]:

Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանու և Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեջադի բանակցությունների հիմքում այն համոզմունքն էր, որ տարածաշրջանում ռազմական ճանապարհով խնդիրներ լուծելու տարբերակն իրեն սպառել է և անարդյունավետ է: Եվ սա այն պայմաններում, երբ ամերիկյան քաղաքականությունը Իրաքում ծախողված է, ամերիկա-իրաքյան ռազմական հակամարտության արդյունքում քայքայված, անհանգիստ ու ջլատված Իրաքն է:

Քանի որ 2008 թվականի դեկտեմբերի 31-ին լրանում էր ՄԱԿ-ի մանդատի գործողության ժամկետը Իրաքում, ամերիկյան զորքերի ներկայության մասին համաձայնության նախագծի շուրջ տարածայնությունները գնալով ավելի լուրջ բնույթ էին կրում: Կային լուրջ կասկածներ, թե իրաքյան կառավարությունն ու խորհրդարանը, ուր ուժեղ է Իրանի, ինչպես նաև ռադիկալ տրամադրված շիա խմբավորումների ազդեցությունը, հավանություն կտան նման նախագծի:

Վաշինգտոնում նույնպես Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքիի հետ դժվար հույսեր էին կապում ներկայացվող փաս-

տարքերի շուրջ: Անհրաժեշտ էր երկրի կառավարության և խորհրդարանի աջակցությունը, ուր առկա են Վաշինգտոնի հետ համագործակցության հակառակորդներ, որոնք ամերիկյան ռազմական ներկայությունը համարում են երկրի անկախությանը հակասող և ջլատիչ դրսևորում:

2008 թվականի հոկտեմբերի 15-ին Իրաքի փոխնախագահ ալ Մալիքին Իրաքում ամերիկյան զորքերի դուրսբերման ժամկետի մասին որոշման նախագիծը ներկայացրեց Իրաքի ազգային անվտանգության խորհրդի անդամներին, որոնք են՝ Նախագահ Ջալալ Թալաբանին, փոխնախագահները, ազգային ժողովի խոսնակը և տարբեր քաղաքական խմբավորումների ղեկավարներ: Այդ փաստաթուղթը պետք է արժանանար նախարարների կաբինետի քննարկմանը, հավանության դեպքում՝ ձայների երկու երրորդով հայտնվեր Իրաքի Ազգային ժողովում[16]:

Մինչ Պենտագոնն ու Սպիտակ տունը, ԱՄՆ-ի պետքարտուղարության հետ մեկտեղ Բաղդադի վարչակարգին կոչ էին անում կողմնորոշվել անվտանգության պայմանագրի ստորագրման հարցում, Իրաքի արտգործնախարար Խոշիար Զեբարին հայտարարեց՝ «Սկզբունքորեն դեմ չենք պայմանագրին, սակայն պետք է փոփոխության ենթարկել դրա որոշ դրույթները»: Իրաքում ընդլայնվում էին այդ պայմանագրին ընդդիմացողների շարքերը, այդ թվում նաև վարչապետ ալ Մալիքիի կաբինետում: Իրաքա-ամերիկյան այս պայմանագիրը Իրաքում ռազմաբազաներ տեղակայելու և երկրի տարածքը, այդ թվում նաև օդային և ջրային, հարձակման նպատակներով օգտագործելու հնարավորություն էր տալիս ԱՄՆ-ին[17]:

Սակայն, Իրաքում առանձնապես չէին շտապում, քանի որ ԱՄՆ-ի նախագահի դեմոկրատ թեկնածուն իր նախընտրական քարոզչության ընթացքում հաջողությամբ օգտագործեց ամերիկյան զորքերն Իրաքից դուրս բերելու պայմանը:

Սիրիան Իրաքի օկուպացումը ԱՄՆ-ի կողմից համարում է անկայունության աղբյուր:

Նկատի ունենալով Սիրիայի վերաբերմունքը նշված համաձայնագրի կնքմանը, այստեղ նույնպես լուրջ տարաձայ-

նությունների առիթ կար: Սիրիան սկզբունքորեն դեմ էր արտահայտվում դրան: Սիրիայի նախագահ Բաշար Ասադը գտնում էր, որ այդ համաձայնագիրը Իրաքը «սպառնալիքի մշտական աղբյուր կդարձնի հարևան պետությունների համար»:

«Աշխարհում ոչ մի տեղ չկա ավելի վատ պատկեր, քան այն, որը մենք տեսնում ենք Իրաքում ամերիկացիների ռազմական ներկայության պայմաններում»,– ընդգծել է Սիրիայի նախագահը:

«Սիրիայի սահմանամերձ շրջանի վրա օրերս ամերիկացի դեսանտայինների ձեռնարկած գրոհը ցույց տվեց, թե Իրաքի հարևաններին ինչ է սպասում Պենտագոնի հետ համաձայնագրի ստորագրման դեպքում»,– ասել է Բաշար Ասադը[18]:

Ինչ վերաբերում է իրաքյան կողմին, ապա նա պահանջում էր, որ ամերիկյան զորքը Իրաքի քաղաքներից դուրս բերվի մինչև 2009 թվականի հունիս, իսկ ամբողջ երկրի տարածքից՝ մինչև 2012 թվականը: Կարևոր հանգամանք էր, որ Բաղդադը անհրաժեշտ պայման է համարում տվյալ համաձայնագրում ամրագրելը Իրաքում ամերիկյան զորքի կարգավիճակի, այդ զորքի դուրսբերման ստույգ ժամկետները:

2008 թվականի հոկտեմբերին շրջանառվող փաստաթուղթը կոչված է փոխարինելու դեկտեմբերի 31-ին իր ժամկետը ավարտող ՄԱԿ-ի մանդատին: Այդ փաստաթղթի նախնական տարբերակում Բաղդադը պահանջել էր ամերիկյան զորքի լիակատար դուրսբերումն ավարտել 2012 թվականին, երկու կողմերի համաձայնության դեպքում՝ եթե այդ երկու կողմերը անհրաժեշտ չհամարեն ամերիկացիների հետագա ներկայությունը[19]:

2008 թվականի հոկտեմբերի 13-ին Իրաքի նախարարների խորհրդի նիստում Թուրքիայի վարչապետ Էրդողանի կառավարությունը ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում Իրաքի կենտրոնական կառավարության, ինչպես նաև Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի ղեկավարության հետ բանակցությունների մեջ մտնելու որոշում էր կայացրել:

2008 թվականի հոկտեմբերի 14-ին Բաղդադ գործուղվեց Իրաքում Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Մուրադ Օզչելիքի գլխավորած պատվիրակությունը: Նա հանդիպումներ է ունեցել Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանիի, վարչապետ Նուրի ալ Մալիքիի և Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի ղեկավար Մասուդ Բարզանիի հետ, համատեղ պայքարի կոչ անելով կողմերին[20]:

Նշենք, որ Իրաքի բնակչության թիվը, համաձայն վերջին տվյալների, կազմում է շուրջ 26 միլիոն մարդ: Երկրի հյուսիսում իրենց թվաքանակով գերակշռում են քրդերը, կենտրոնական շրջանում՝ սուննի արաբները, հարավում՝ բնակչության 60%-ը շիա արաբներ են: Յակաիրաքյան պատերազմից առաջ Իրաքում բնակվող քրիստոնյա ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 800 հազար մարդ: Իրաքի հյուսիսային շրջանում բնակվում են նաև թուրքմեններ: Նրանց մի զգալի մասը դավանանքով շիա է, ինչպես քրդերինը: Շիաները ի սկզբանե կողմնորոշվում էին դեպի Իրան[21]:

Իրաքի վարչապետ ալ Մալիքին այդ նույն հոկտեմբերի սկզբներին, հույս չունենալով հասնել համաձայնության, հայտարարում էր, որ եթե մինչև 2008 թվականի վերջը ԱՄՆ-ի հետ համաձայնություն չկնքվի ամերիկյան զորքի դուրսբերման շուրջ, ապա ինքը ստիպված կլինի դիմել ՄԱԿ-ին խնդրանքով՝ մանդատը երկարաձգելու համար: Այդ դեպքում ամերիկյան զորքերը կզրկվեն բազաների տարածքը լքելու հնարավորությունից և ստիպված կլինեն սկսել Իրաքից հեռանալ[22]:

«Իրաքյան կառավարությունը խորապես մտահոգված է ադմիրալ Մուլենի հայտարարությամբ»,– ասել է Բաղդադի կառավարության ներկայացուցիչ Ալի Դաբաղը: Նա նկատի ուներ նրա արտահայտած «անվտանգության ձախողման» հնարավոր զարգացումները, եթե Բաղդադը չստորագրի նոր համաձայնագիր այդ երկրում ամերիկյան զորքերի կարգավիճակի մասին: Իրաքյան զորքերը «պատրաստ չեն լինի իրենց անվտանգությունը ապահովել» մինչև ՄԱԿ-ի մանդատի ավարտը՝ դեկտեմբերի 31-ը, հայտարարեց նա:

«Այդպիսի հայտարարությունները չեն ողջունվում Իրաքի կողմից: Բոլոր իրաքցիները և նրանց քաղաքական կազմակերպությունները գիտակցում են իրենց պատասխանատվությունը և վերաբերում են համաձայնագրի ստորագրմանը իրենց շահերի տեսանկյունից», - ասել է իրաքյան կառավարության խոսնակը[23]:

Նախնական պայմանագրի պատրաստման փաստը հաստատել է ԱՄՆ-ի պետքարտուղարության իրավասուն, նշելով, որ դրա ստորագրման վերջնաժամկետը դեկտեմբերի 31-ին է: Հենց այդ օրն է լրանում հակաիրաքյան կոալիցիայի ուժերի տեղակայման ժամկետը Իրաքում:

Իրաքի կառավարության խոսնակ Ալի ալ Դաբաղը ընդգծել է, որ «Ամերիկյան զորքերի դուրսբերման ավարտը կիրականացվի առաջիկա երեք տարում»[24]:

Ամերիկյան զորքերի թվաքանակը նշվում է շուրջ 150 հազար, մեկ այլ աղբյուրի համաձայն` 158 հազար: Ինչպես խոստանում են Պենտագոնում, այդ զորախմբի թվաքանակը կկրճատվի մինչև 140 հազար, մեկ այլ աղբյուր շրջանառում է 150 հազար[25]: Թերևս, նշված ժամկետների մեջ հնարավոր է, որ տարբերություն լինի:

Այդուհանդերձ, ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարաք Օբաման մտադիր էր մինչև 2010-ի կեսերն Իրաքից ամերիկյան զորքը դուրս բերելու իր ծրագիրը իրագործել: Այդ մասին 2008 թվականի հոկտեմբերի 10-ին հայտարարել է նրա ձևավորած «անցումային» թիմի ղեկավարներից Ջոն Պոդեստան: Այդ թիմին էր իր «գործերը հանձնելու» Ջորջ Բուշի վարչակազմը:

Պոդեստայի խոսքերով, ԱՄՆ-ի 44-րդ նախագահը ձգտում է Իրաքից զորքը դուրս բերել ավելի վաղ, իր խոստացած ժամկետներում: CNN հեռուստատեսությանը տված իր հարցազրույցում Պոդեստան նշել է, որ այդ ժամկետները համապատասխանում են նաև Բաղդադի ցանկությանը: Ըստ նրա, ԱՄՆ-ը պետք է վերջ դնի Իրաքի պատերազմի վրա ամսական 10 մլն դոլար ծախսելուն:

«Մենք կարող ենք դրանից հրաժարվել, որպեսզի այնտեղ լինի կայունություն, և իրաքցիները իրենք պաշտպանեն իրենց երկիրը»[26]:

Պարզվում է, որ մի ողջ երկրի ավերը, կարծեցյալ մահաբեր մասսայական բնաջնջման զենքերի փնտրտուքը և այդպես էլ չհայտնաբերելը, քանի որ դատարկ ու անհիմն երևակայության արդյունք էր, Իրաքում ամերիկյան ձախողված քաղաքականության և կեղծ դեմոկրատիայի աղետաբեր հետևանքները, երկում ստեղծված անկառավարելի քաոսը, ահաբեկչությունների մբռնոլորտը կարող են դառնալ նաև կատակի աղբյուր և ծիծաղ հարուցել, թեև խորքային առումով այս և նման օրինակները ուղղված են հենց Ջորջ Բուշի վարչակարգի դեմ, նրա վարած քաղաքականության դեմ: «Նյու Յորքի մետրոյի մարդաշատ կայարաններից մեկում կատակասերները անվճար երեկ տարածում էին «Նյու Յորք թայմս» թերթի 2009 թ. հուլիսի 4-ի հազարավոր օրինակներ: Կեղծ համարի առաջին էջում կարելի էր կարդալ «Իրաքի պատերազմն ավարտված է» հոդվածը:

Տպագրված կեղծ համարի բովանդակությունը կրկնող կայքէջում կարելի է հոդվածներ կարդալ, թե ինչպես պետդեպարտամենտի ղեկավար Կոնդոլիզա Ռայսը զինվորականներից ներողություն է խնդրել նրանց Իրաք ուղարկելու համար, թեև գիտեր այնտեղ զանգվածային բնաջնջման զենքի բացակայության մասին: Հայտնում է «Ազգ»-ը «Կեղծ «Նյու Յորք թայմսը» ազդարարեց Իրաքի պատերազմի ավարտը» վերնագրով տեղեկատվական հոդվածում[27]:

Ինչպես որ սպասվում էր, միայն 2008 թվականի նոյեմբերի վերջին շաբաթում Իրաքի խորհրդարանը համաձայնություն տվեց 2011-ին ամերիկյան զորքի դուրսբերմանը: Այստեղ մնացող ամերիկացի զինծառայողները մասնավորապես պետք է զբաղվեն Իրաքյան ուժերի ձևավորման հարցերով: Իրաքի խորհրդարանը հավանություն է տվել ԱՄՆ-ի հետ կնքված անվտանգության երկկողմ համաձայնագրին, ըստ որի ամերիկյան զորքն Իրաքից վերջնականապես պետք է հեռանա 2011-ին: Խորհրդարանի 198 պատգամավորներից 144-ը քվեարկել են

այդ համաձայնագրի վավերացման օգտին: Իրաքի վարչապետի մամլո քարտուղար Ալի Դաբաղը քվեարկության արդյունքները բնութագրել է որպես ժողովրդավարության հաղթանակ:

Այդ պահի տվյալներով դարձյալ շրջանառվում է 150 հազարը, որպես Իրաքում ամերիկյան զինծառայողների թվաքանակ: Նշվում է նաև, որ նախատեսվում է որոշ զորամասերի տեղափոխումը Իրաքից Աֆղանստան, որտեղ ակտիվացել էր թալիբների գործունեությունը: Նշվում է նաև, որ չնայած Իրաքից ամերիկյան զորքի դուրսբերմանը, ամերիկացիները կմնան ամերիկյան ռազմակայաններում, որոնց ստույգ թիվը դեռևս որոշված չէ[28]:

2008 թվականի դեկտեմբերի 4-ին Իրաքի նախագահական խորհուրդը հաստատեց ԱՄՆ-ի հետ համաձայնագիր՝ ամերիկյան զորքերի կարգավիճակի և երկրի տարածքում տեղակայման ժամկետների մասին: Խոսքը Իրաքի Ազգային ժողովի հավանությանն արժանացած փաստաթղթի մասին է: Այն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից: Դրա հետ մեկտեղ, մինչև 2009 թվականի հուլիսի 30-ը իրաքցիները պետք է մասնակցեն հանրաքվեին, ինչը վերջնականորեն կդառնա որոշիչ այդ համաձայնագրի համար: Հավանության դեպքում, մինչև 2009 թվականի հունիսի 30-ը նախատեսվում է ամերիկյան զորքերի հեռացումը բնակելի տարածքներից, իսկ 2011 թվականի դեկտեմբերի 31-ին՝ զորքի լիակատար դուրսբերումը Իրաքից:

Ինչպես գրում է «Նյու Յորք թայմս»-ը, 2009 թվականի մարտին կսկսվի բրիտանական չորս հազարանոց զորախմբի դուրսբերումը Իրաքից: 2009 թվականի հունիսին երկրում կմնան 300-400 անգլիացի զինծառայողներ, որոնք կզբաղվեն միայն իրաքյան բանակի անձնակազմի նախապատրաստական աշխատանքներով: Բրիտանական զանգվածային լրատվամիջոցների հաշվարկներով իրաքյան գործողությունը իրենց երկրից խլել է 12 մլրդ դոլար և 177 զինծառայողի կյանք[29]:

2008 թվականի վերջում բրիտանական զորախումբը կենտրոնացած էր Բասրայի շրջակայքում: Նախատեսվում էր նրանց փոխարինել ամերիկացիներով, որոնք չէին ցանկանում կորցնել վերահսկողությունը ռազմավարական այդ կարևոր շրջանում, որի վրայով է անցնում ԱՄՆ-ի զորքերի ապահովման կարևոր գիծը: Այդ խնդիրը լուծելու համար Պենտագոնը պետք է երկրի հարավում կենտրոնացնի առնվազն մեկ զորախումբ:

Ընդհանուր առմամբ՝ 35 երկրների զինծառայողներ մասնակցեցին իրաքյան գործողություններին: 2008 թվականի ընթացքում Իրաքից դուրս եկան Լեհաստանի, Հայաստանի, Մոնղոլիայի, Վրաստանի, Լատվիայի, Մակեդոնիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Ղազախստանի և Կորեայի Հանրապետության զինծառայողները, 2008 թվականի վերջում՝ Ադրբեջանի, Տոնգոյի, Չեխիայի, Ճապոնիայի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Լիտվայի, Դանիայի, Մոլդավիայի և Ալբանիայի զինծառայողները՝ ընդհանուր թվով, ավելի քան 600 մարդ: Այդ հարցում հապաղեցին էստոնիայի, Ռումինիայի, Ավստրալիայի և Սալվադորի զորախմբերը, ընդհանուր թվով 750 մարդ: Սալվադորը այդ պատերազմում ԱՄՆ-ի դաշնակիցն էր: Այդ ընթացքում Իրաքում սպանվել են սալվադորցի 200 զինծառայողներ[30]:

Փաստորեն ամեն ինչ նախատեսվածի շրջանակում է: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 2008 թվականի դեկտեմբերի 23-ին պաշտոնապես հաստատել է Իրաքում 2008 թվականի դեկտեմբերի 31-ից միջազգային խաղաղարար զորքերի մանդատի դադարեցումը: ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ներկայացրած բանաձևի օգտին միաձայն քվեարկել են Ախ բոլոր 15 անդամները:

Փաստորեն, ընդունված այդ բանաձևը նշանակում է, որ Իրաքում կմնան միայն ամերիկյան զորքեր, որոնք 2008 թվականի հաշվարկներով կազմել են բոլոր միջազգային ուժերի 95 տոկոսը, իսկ դաշնակից երկրների զորքերը պետք է Իրաքից հեռանան մինչև 2009 թվականի հուլիսը:

Բանաձևը կազմվել էր Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքիի նախաձեռնությամբ, որն ավելի վաղ ՄԱԿ-ին խնդրել էր չերկարաձգել միջազգային ուժերի դեկտեմբերի 31-ին

ավարտվող մանդատը: Իր նամակում Մալիքին օտարերկրյա զորքերին շնորհակալություն էր հայտնել ցուցաբերած օգնության համար, սակայն ընդգծել էր դրանց շուտափույթ դուրսբերման անհրաժեշտությունը[31]:

2008 թվականի դեկտեմբերի 14-ին մամլո ասուլիսի ժամանակ եգիպտական «Ալ Բաղդադիա» հեռուստաալիքի իրաքցի թղթակից Մունթազեր ալ Զայդին իր երկու կոշիկները նետել էր Բուշի վրա, բղավելով՝ «Սա քեզ հրաժեշտի համբույր, շուն»: Իսկ երկրորդ կոշիկը նետելուց բղավել՝ «Սա քեզ այրիներից, որբերից և բոլոր նրանցից, ովքեր սպանվել են Իրաքում»:

Ալ Զայդին ձերբակալված է: Հաղորդվում է, որ միջադեպից հետո լրագրողին ծեծել են: Նրա դատը սկսվելու էր 2008 թվականի դեկտեմբերի 31-ին: Նրան սպառնում է 5-15 տարվա բանտարկություն:

Բուշի վրա նետված կոշիկների նմանօրինակների զանգվածային պատվերների քանակը ապահովելու նպատակով արտադրող ընկերությունը ստիպված էր 100 լրացուցիչ աշխատատեղ բացել: Վաճառքի գծով տնօրեն Սերնա Թյուրքը Ֆրանսպրեսի թղթակցին ասել է, որ պատվերները ստացվում են հիմնականում Իրաքից և մերձավորարևելյան այլ երկրներից: Նաև 19 հազար պատվեր է ստացվել ԱՄՆ-ից: Այդ կոշիկները անցյալում կոչվում էին «մոդել 271», բայց Բաղդադի միջադեպից հետո անվանակոչվեցին «Բուշի կոշիկներ»[32]: «Այդպիսի բաներ պատահում են, և դա նշան է ազատ հասարակության», - ասել է Բուշը:

Հայտնի է, որ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը 2008 թվականի դեկտեմբերի 14-ին չհայտարարված այցով ժամանել էր Իրաք: Նա հանդիպեց Իրաքի ղեկավարության հետ և նշեց նրանց հավանությանն արժանացած ԱՄՆ-ի հետ համատեղ նոր համաձայնագրի ընդունումը, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց ամերիկյան զինծառայողներին ծառայության համար: Դա Բուշի թվով չորրորդ և այդ պաշտոնում վերջին այցելությունն էր Իրաք[33]:

## THE SOCIAL-POLITICAL SITUATION IN IRAQ IN 2008 YEAR AND THE PROBLEM EVACUATION AMERICAN TROOPS FROM THE COUNTRY

The article deals with the analyses of the social-political factors in Iraq during the 2008 year. In that period the relations of Iraq with neighbouring countries and the national dialogues towards peace and stability are important for region on the whole.

The foreign policy of Iraq in 2008 year is interesting. After the Iran-Iraqi war (1980-1988 years), in March 2008 year – Ahmadinedjad's visit in Baghdad beginning of the new political phase for Iraq and Iran.

The last date of the Mandate of the United Nations Assistance Mission for Iraq was 31 December 2008 year.

The National Assembly of Iraq in November of 2008 year consents to final evacuation the american troops from the country in 2011 year.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Սամվելյան Կ., Իրաքում իրադրության շուրջ ընդունված ՄԱԿ-ի բանաձևերն ու որոշումները (2005-2007 թթ.), - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h. 26-րդ, Երևան, 2007, էջ 193-203:
2. «Ազգ», 8. XI. 2008:
3. Նույն տեղում, 15. X. 2008:
4. Նույն տեղում, 8. XI. 2008:
5. Նույն տեղում, 3. X. 2008:
6. Նույն տեղում, 15. X. 2008:
7. Տե՛ս «Երկիր», 16. I. 2009:
8. «Ազգ», 8. X. 2008:
9. Известия, 4. III. 2008:
10. Независимая газета, Дипкурьер № 4, 3. III. 2008:

11. Նույն տեղում:
12. Независимая газета, 15. X. 2008: Ազգ, 24. X. 2008:
13. «Ազգ», 25. X. 2008:
14. Տե՛ս Սամվելյան Կ., Իրանա-իրաքյան հարաբերությունները արդի փուլում, - Մերձավոր Արևելք և Կովկաս, Զեկուցումների թեզեր, Միջազգային գիտաժողով նվիրված ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին, նոյեմբ. 5-6, 2008, Երևան, էջ 45-47:
15. Տե՛ս Известия, 4. III. 2008:
16. Независимая газета, 16. X. 2008:
17. «Ազգ», 24. X. 2008:
18. Նույն տեղում, 11. X. 2008:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում, 15. X. 2008:
21. Նույն տեղում, 25. X. 2008:
22. Независимая газета, 15. X. 2008:
23. Նույն տեղում, 24. X. 2008:
24. «Ազգ», 18. X. 2008:
25. Նույն տեղում: Տե՛ս նաև Известия, 4. III. 2008:
26. «Ազգ», 11. X. 2008:
27. Նույն տեղում, 18. X. 2008:
28. Նույն տեղում, 29. XI. 2008:
29. Независимая газета, 12. XI. 2008:
30. Նույն տեղում: Տե՛ս նաև «Ազգ», 25. XII. 2008:
31. «Ազգ», 24. XII. 2008:
32. Նույն տեղում: Տե՛ս Независимая газета, 16. XII. 2008:
33. Независимая газета, 15. XII. 2008:

## ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ (2009-2010 թթ.)

Տնտեսական և ֆինանսական խնդիրների բնագավառի պատմության հայտնի մասնագետ, պատմաբան, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Նայալլ Ֆերգյուսոնը համարվում է ժամանակակից առավել հետաքրքիր հետազոտողներից մեկը, որի 2006 թ. հրատարակված «Աշխարհի պատերազմը» գրքում նկարագրվում և ամփոփվում են XX-րդ դարի պատմության ոչ միայն դրական տեղաշարժերը, այլ նաև հիմնականում՝ պատերազմների և զինված ընդհարումների, ռազմական հակամարտությունների դաժան հետևանքները, ավերը, մարդկային անդառնալի կորուստները: 2008 թ., նրա հետ հարցազրույցում, այն հարցին թե՝ որոնք են մոտակա երկու տասնամյակների ընթացքում մարդկության զարգացման «լավագույն» և «վատթարագույն» սցենարները, Նայալլ Ֆերգյուսոնը, նշել է, որ գոյություն չունի ապագայի միակ հնարավոր տարբերակ, քանի որ նման տարբերակները բազմաթիվ են, որոնցից պետք է ընտրություն կատարել: Նա առանձնացրել է հետևյալ «վատթարագույն» զարգացման հնարավոր սցենարը՝ «Մերձավոր Արևելքում հակամարտության սրում՝ Իրաքի սահմաններից դուրս և ողջ տարածաշրջանի ընդգրկումով, որին կմասնակցեն ոչ միայն ԱՄՆ-ը և Իրանը, այլ նաև Իսրայելը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, հնարավոր է նաև Եգիպտոսը և Թուրքիան: Այդ դեպքում դա կլինի նույնքան հակամարտություն իսլամի ճյուղերի՝ շիաների և սուննիների, որքան, ասենք, իսլամի և մնացած աշխարհի, կամ իսլամի և արևմուտքի միջև: Այստեղ կա ներուժ: Հսկա պայթյունի համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները առկա են: Եթե այդպիսի հակամարտությունը վերահսկողությունից դուրս գա, ապա դա կլինի իսկական աղետ: Մենք գիտենք, որ նման բաներ երբեմն տեղի են ունենում»[1]:

Որպես «վատթարագույն» տարբերակ ընդգծվում է հակամարտությունների լայնածավալ զարգացումն ու պայթյունը

Մերձավոր Արևելքում: Եվ քանի որ կանխատեսումները ամեն գնով խուսափելու և համապատասխան միտված, խաղաղասիրական նկատառումներով առաջնորդվող քաղաքականություն վարելու, որդեգրելու և զարգացնելու նպատակ ունեն, ուրեմն «լավագույն» տարբերակը պատմաբանի կարծիքով «Մերձավոր Արևելքի բոլոր ուժերին ներգրավելն է միասնական համաշխարհային տնտեսության ոլորտում, Մերձավոր Արևելքի երիտասարդությանը ուղղորդելու համար, որ ավելի լավ կլինի, եթե փող աշխատեն, ոչ թե մարտնչեն: 1960-ական թվականների հին կարգախոսը հնչում էր այսպես՝ «Զբաղվեք սիրով, ոչ թե պատերազմով»: Ես կարծում եմ, որ «զբաղվեք փող աշխատելով, ոչ թե պատերազմով» - ամենանպատակահարմարն է:

Ուշադրության արժանի են նաև այս տարբերակների հեղինակի մտավախությունները կապված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հնարավոր քայքայիչ հետևանքների հետ[2]:

Մերձավոր Արևելքի երկրների հասարակական-քաղաքական իրադրության ուսումնասիրությունը անհրաժեշտ է և կարևոր ոչ միայն տվյալ երկրի նորագույն պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Ավելի քան հրատապ է դառնում քաղաքական դաշտի հանդեպ հետաքրքրությունը տարածաշրջանային ազդեցությունների, հնարավոր զարգացումների առումով: Հետազոտությունների ուշադրության առանցքում են ոչ միայն քաղաքական զարգացումները Իրաքի ներսում, այլ նաև Իրաքի շուրջ:

Այս առումով հետաքրքիր է հետևյալ սցենարների մասին ծանուցում հրապարակումը արդեն 2010 թ.՝ կապված Պենտագոնի «Չորսամյա պաշտպանողական տեսության» հետ՝ «Ամերիկան երկու պատերազմ չի ծգի» վերնագրով[3]:

ԱՄՆ-ի առաջիկա «Չորսամյա պաշտպանողական տեսության» ծրագրերում առաջնահերթ են դառնում միաժամանակյա գործողությունների անցկացումը՝ հնարավոր ահաբեկչական ռազմական գործողություններին ի պատասխան, Աֆղանստանում, Իրաքում, ինչպես նաև երկրագնդի այլ մասերում:

2011 թվականի ռազմական ծախսերի համար նախատեսվող բյուջեի չափը, որը նոր «Չորսամյա պաշտպանողական տեսության» հրապարակման ֆոնի վրա, Պենտագոնը ամերիկյան Կոնգրեսին է ներկայացրել, նախկինից 44 մլրդ դոլար ավելի է և կկազմի ռեկորդային 708մլրդ: Այդ միջոցների զգալի մասը նախատեսված է Իրաքում և Աֆղանստանում պատերազմների ֆինանսավորման համար[4]:

Տեղին է հիշեցնել, որ Բարաք Օբամայի նախընտրական կամպանիայի շրջանում արդեն տիրում էր այն համոզումը, որ նրա ընտրվելով, Իրաքում ամերիկյան ներկայությունը կավարտվի: Միաժամանակ կար հետևյալ մտավախությունը, «Դա մեծ ռիսկի գործոն է, որովհետև ժամանակից շուտ իրաքյան նախագիծը թողնելով, Օբամայի ադմինիստրացիան Իրաքը կբողնի քաոսի մեջ: Այստեղ ամեն ինչ սկսել է ավել կամ պակաս կարգի ընկնել, կան իրադրության բարելավման նշաններ: Դա մեծ հույս է ներշնչում, սակայն այդ ամենը կարող է լրիվ խորտակվել, եթե նոյեմբեր ամսվա շրջանում պարզ դառնա, որ նոր ադմինիստրացիան Իրաքում իրադրությունը կայունացնելու ռեալ մտադրություններ չունի»[5]:

Իրաքում իրադրության կայունացումը միայն հօգուտ ԱՄՆ-ի չի դիտարկվում:

«Եվ նույնիսկ ոչ հանուն իրենց՝ Միացյալ Նահանգների, այլ հանուն բոլորի, որովհետև ձախողումը Իրաքում և նրա վերադարձը քաղաքացիական պատերազմի իրավիճակին, ինչպես էր 2006 թվականին, համաշխարհային տնտեսության վրա շատ բանկ կնստի»[6]: Փաստորեն պարզորոշ գծագրվում են ԱՄՆ-ի հետագա քաղաքականության նպատակները Իրաքի հետ առնչություններում, նաև համաշխարհային տնտեսական հանգույցներում:

Այդ նույն ժամանակահատվածում Ջոնս Հոպկինսի անվան համալսարանին կից Ֆունդամենտալ միջազգային հետազոտությունների դպրոցի պրոֆեսոր Զբիգնև Բժեզինսկու արտահայտած կարծիքի համաձայն՝ իրաքյան պատերազմը «հիվանդագին, չհաջողված ավանտյուրա էր», «պատերազմ սեփական ընտրությամբ», բացարձակապես անտեղի:

Նա նշել է, որ Իրաքից զորքերի դուրսբերումը խելամիտ գործ է: «ես արդեն համարյա երկու տարի է, ինչ համդես եմ գալիս համակարգված բանակցային գործընթացի օգտին Իրաքի առաջատար ղեկավարների հետ ողջ քաղաքական և կրոնաէթնիկ հատվածում՝ համատեղ որոշելու այդ երկրից մեր հեռանալու ժամկետը»[7]:

Դեռևս 2008 թ. դեկտեմբերին Բաղդադի հետ համաձայնեցված փաստաթուղթը օտարերկրյա զորքերին թույլատրում է Իրաքի տարածքում օրինական հիմունքով մնալ մինչև 2011 թվականը: Սակայն Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսը հայտարարել է, որ Իրաքում ԱՄՆ-ի ռազմական առաքելությունը ավարտվում է, և հիմնական զորամիավորումները Իրաքում այլևս անելիք չունենալով, կհեռանան[8]:

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ԶԼՄ-ների ներկայացուցիչներին պատմել է Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումը արագացնելու և ԱՄՆ-ի տնտեսությունը վերաշխուժացնելու մասին: ԱՄՆ-ի նախագահը 2009 թ. գարնանը խոստանում էր, որ Իրաքում տեղաբաշխված 140 հազ. ամերիկացի զինծառայողների մեծ մասը տուն կվերադառնա մեկ տարում[9]: Բարաք Օբաման այդ ժամանակ վերջնաժամկետ էր նշում 2010 թվականի օգոստոսը:

Եվ քանի որ կոալիցիոն զորամիավորումների շարքում էին նաև բրիտանացի զինծառայողներ, 2009 թ. մարտի վերջին Մեծ Բրիտանիան սկսեց Իրաքից պաշտոնապես դուրս բերել իր սեփական զորամիավորումները: Համաձայն հաղորդագրության՝ բրիտանացի 4 հազար զինծառայողների մեծ մասը Իրաքից դուրս կբերվի մինչև մայիսի 31-ը: Իրաքում մնացող 4 հարյուր բրիտանացի զինծառայողները կզբաղվեն իրաքցի զինվորների և նավաստիների վերապատրաստությամբ: Նույն տեղեկատու աղբյուրը նշում է, որ գեներալ-մայոր Անդրի Սելմոնը հրամանատարական իր լիազորությունները փոխանցել է Իրաքի հարավում տեղաբաշխված միջազգային ուժերի ամերիկացի գեներալ Մայքլ Օետսին[10]:

Նախատեսված էր, որ 2009 թ. առաջիկա վեց ամսում՝ մինչև նույն թվականի սեպտեմբեր, ամերիկացի 12 հազ. զին-

վորական Իրաքից կհեռանա: Մարտի վերջերին նախատեսվում էր Իրաքի կառավարությանը փոխանցել ամերիկացիների իրաքյան օբյեկտներից 74-ը[11]:

2009 թ. հուլիսի 3-ին ԱՄՆ-ի փոխնախագահ Ջո Բայդենը անսպասելիորեն մեկնեց Իրաք: Սա այդ պաշտոնում նրա առաջին այցելությունն է այդ երկիր, իսկ նախորդ այցելությունների ժամանակ նա զբաղեցնում էր ամերիկյան սենատի արտաքին քաղաքականության հանձնախմբի նախագահի պաշտոնը: Այս այցելության նպատակն էր պաշտոնապես հետևել Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման ընթացքին[12]: Օրակարգում էին այցելություններ, պաշտոնական հանդիպումներ Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանու, վարչապետ Նուրի ալ Մալիքիի և խորհրդարանի նախագահ Այադ ալ Սամարայիի հետ[13]:

Այս այցելությանը հետևեց Վաշինգտոնի և Բաղդադի միջև երկկողմանի համաձայնագիրը քվեարկության ներկայացնելու նախագիծը, ինչը հավանության արժանացրեց Իրաքի կառավարությունը: Այս համաձայնագիրը անվտանգության ոլորտին է վերաբերում: Համաձայնագիրը քվեարկությամբ անցկացնելը դիտվեց որպես կարևոր քայլ Իրաքից ամերկյան զորքերի դուրսբերման գործում, ինչը նախատեսվում է ավարտին հասցնել 2012 թ.: Միաժամանակ պարզ էր դառնում, որ Իրաքում համաժողովրդական համաձայնագրի մերժման դեպքում 130 հազ. ամերիկացի զինծառայողներ ստիպված կլինեն մեկ տարվա ընթացքում հեռանալ երկրից: Այդ օրենքի նախագիծը Իրաքի խորհրդարանում նախատեսվում էր վավերացնել 2009 թ. սեպտեմբերին[14]:

2010 թ. Քուվեյթի վրայով Իրաքից Աֆղանստան, ինչպես նաև ետ՝ Ամերիկա, արդեն 2,2 մլն միավոր զենք և սարքավորում դուրս է բերված, ինչը ընդհանուր ռազմատեխնիկայի ընդամենը 35%-ն է, որ պետք է Իրաքից դուրս բերվեր մինչև 2010 թ. օգոստոսը:

Ինչպես նշեցինք, Բարաք Օբամայի հրամանով, արդեն 2010 թ. օգոստոսի վերջին ամերիկյան զորամիավորումները պետք է դուրս բերվեին Իրաքից, բացառությամբ օժանդակ 35-

50 հազ., որոնք պետք է ժամանակավորապես մնային երկրում[15]:

Ամերիկացի գեներալ Ուիլյամ Վեբսթերի կարծիքով՝ այդ հոծ լոգիստիկ գործողությունը դարձել է երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող ժամանակահատվածում ամենախոշորագույնը[16]: Խոսքը վերաբերում է Իրաքից ամերկյան անձնակազմի հետ ռազմական տեխնիկայի դուրսբերմանը Քուվեյթի վրայով[17]: «Իրաքից ճողոպրում են Աֆղանստան: Ինչու՞» սա էլ մեկ այլ ուսումնասիրության խնդիր է, կապված տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության հետ արդեն Բարաք Օբամայի պաշտոնավարման ընթացքում: «Ինչու՞ նրանք չեն հեռանում մյուս հոշոտված մուսուլմանական երկրից՝ Աֆղանստանից, որն ի դեպ նավթ էլ չունի»: Այս և նման հարցադրումները կապված են աշխարհաքաղաքական հզոր և տեսանելի, հեռուն գնացող շարժառիթների հետ՝ պայքար ահաբեկչության դեմ, տարանցիկ ուղի դեպի Հնդկական օվկիանոս, ճնշում Պակիստանի վրա և այլն: Պարզվում է, որ այսքանը բավարար գնահատելու իրադրության ճշգրիտ պատկերը, քանի որ կան նաև ոչ պակաս կարևոր խթանիչ, ախորժաբեր գործոններ, հանուն որի ուժեղացվում է ամերիկյան ռազմական ներկայությունը Աֆղանստանում: Մամուլի ուշադրության կենտրոնից չեն վրիպում այս հարցադրումները, ինչպես նաև ամերիկա-իրաքյան ռազմական հակամարտությունը, դրա շարժառիթները՝ արդեն կատարված ավերածություններից տարիներ անց նույնպես: «Երբ ամերիկացիները ագրեսիա ձեռնարկեցին Իրաքի դեմ, ամեն ինչ գլխավորապես վերագրվեց նավթի վերահսկմանը (գումարած Իսրայելի անվտանգության ապահովումը)», իսկ ՄԱԿ-ի տվյալներով Աֆղանստանում արտադրվում է 18 հազ. տոննա թմրանյութ կամ հերոինի 93%-ը: Պարզվում է, որ Իրաքից Աֆղանստան ամերիկյան զորքերի տեղափոխման «Օբամայի պլանը» ունի նաև այլ «շահագրգռություն» և նպատակներ: «Ամերիկացիների կողմից Աֆղանստանի խաշխաշի պլանտացիաների և թմրանյութերի արտադրության վերահսկողությունը հանգեցրել է այն բանին, որ այդ «տնտեսության ճյուղը» օկուպացման տարիներին աճել

է 44 անգամ, իսկ այդ «մահաբեր արդյունաբերության» մեջ արդեն ներգրավված է 2 մլն-ից ավելի մարդ՝ երկրի յուրաքանչյուր յոթերորդ աշխատունակ անձը»[18]:

Եվ քանի որ զենք ու զինամթերքի, ռազմական տեխնիկայի տեղափոխումը Աֆղանստան իրականացվում է Քուվեյթի վրայով, ապա Քուվեյթի հանդեպ նույնպես ուշադրությունը ավելի սևեռուն է, ինչը քաղաքական դիտարկումների, մեկնաբանությունների դաշտից չի կարող անտեսվել: «Независимая газета»-ն գրում է՝ «1991 թ. Սադամ Հուսեյնի պարտությունից հետո այդ էմիրությունը մնում է ամերիկյան սվինների պաշտպանության ներքո: Սակայն Քուվեյթի կառավարությունը ջանում է իր միջազգային դիրքերը ամրապնդել, երկխոսություն զարգացնելով Ռուսաստանի հետ», միաժամանակ ավելացնելով, որ 1991 թ. Քուվեյթի դեմ իրաքյան ռազմական հակամարտության՝ պատերազմի հետևանքով, ավերածությունները արդեն վերացվել են, սակայն «Իրաքից դեռ մինչև օրս հայրենիք չեն վերադարձվել բոլոր ռազմագերիները, զոհվածների աճյունները վերահուղարկավորելու համար»[19]:

Իրաքում խաղաղ բնակիչների շրջանում զոհերի թիվը ավելանում է արդեն ոչ պատերազմական պայմաններում: 2009 թ. ապրիլին Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին ամերիկացիներին մեղադրեց անվտանգության համաձայնագրի խախտման մեջ: Այն ժամանակ ամերիկյան զորքը ալ Կուտ քաղաքում իրականացրել էր հատուկ գործողություն, որի ընթացքում զոհվել էր մի քանի խաղաղ բնակիչ: Բաղդադի հետ կնքված անվտանգության պայմանագրի համաձայն, մինչև 2009 թ. հունիսի 30-ը համաձայնեցված էր ամերկյան զինծառայողներին դուրս բերել Իրաքի քաղաքներից: Ինչպես նշել է Իրաքում ամերիկյան զորքի հրամանատար գեներալ Ռեյ Օդիերնոն, չնայած այդ որոշման ընդունվելը, իրաքյան որոշ բնակավայրերում շարունակվում է ահաբեկչական խմբավորումների ակտիվությունը: Այդ վտանգի առումով հատկապես նավթառատ Մոսուլ քաղաքն է ընդգծված, որտեղից ամերկյան զորքի դուրսբերումը հետաձգվեց:

Ըստ Օդիերնոյի, Իրաքի բանակի հնարավորությունները «զգալիորեն ընդլայնվել են»[20]:

Պենտագոնի ներկայացուցիչ գեներալ-մայոր Դեվիդ Պերկինսը Իրաքում իրադրությունը բնութագրել է «խիստ անկայունից» դառնալով «կայուն», և որ վերջին վեց տարում բռնարարքների ցուցանիշները ամենացածրն են: Չնայած այդ պնդումների իրական կյանքն Իրաքում հեռու է «կայուն» լինելուց:

2010 թ. մայիսի 10-ին մի շարք պայթյունների և փոխհրաձգությունների հետևանքով Իրաքում զոհերի թիվը անցել է հարյուրից, և մի քանի հարյուր մարդ վիրավորվել է: Հիլլայում ավելի քան քառասունհինգ մարդ է զոհվել մանածագործական ֆաբրիկայում տեղի ունեցած երեք պայթյունների հետևանքով: Բասրայում նույնպես պակաս չեն նման բռնարարքները: Այստեղ այդ նույն շաբաթվա ընթացքում յոթ մարդ է զոհվել պայթյունի հետևանքով:

Բաղդադում սպանվել է երկրի ազգային անվտանգության ծառայության յոթ աշխատակից: Զոհեր են եղել նաև Ֆալուջայում և Մոսուլում[21]:

Եվ քանի որ վերը նշված դեպքերը մարդկային անդառնալի կորուստներով, նաև խաղաղ բնակչության շրջանում, շղթայական անվերջանալի և դատապարտելի շարք են կազմում, իրավիճակը վկայում է, որ Իրաքը այդպես էլ չգտավ խոստացված խաղաղությունն ու ժողովրդավարությունը:

Հետաքրքրական է, որ Իրանի Նախագահ Ահմադինեջադը իր պարտքն է համարել դիմել օտարերկրյա զինվորականներին Իրաքից և Աֆղանստանից շուտափույթ հեռանալու հորդորով: 2009 թ. սեպտեմբերի 22-ին (երեքշաբթի օրը) նա հայտարարել է. «Ես ձեզ խորհուրդ եմ տալիս վերադառնալ ձեր երկրները և գումարներ ծախսել ոչ թե ռազմական հսկայական ծախսերի, այլ այն խնդիրների վրա, որ ծառացած են ձեր ժողովուրդների առաջ»:

Զինվորական շքերթի ժամանակ, դիմելով Արևմուտքի երկրներին, նա ավելացրել է, որ իր կարծիքով՝ իրաքցիներն ու աֆղանացիները «թշնամաբար են վերաբերվում օտարական-

ների ներկայությանը, և այդ պատճառով երկարաժամկետ հեռանկարներում օտարերկրացիները չեն կարող հուսալ տարածաշրջանում զինվորական ռազմակայաններ տեղադրելու մասին»[22]:

Իրաքում ստեղծված անկայուն վիճակը բացասաբար անդրադարձավ նաև տեղի հայ համայնքի կյանքին, քանի որ կրոնադավանական գործոնը չի կարելի անտեսել: Ինչպես նշում են Միացյալ Նահանգների կոնգրեսի դեմոկրատ անդամներ Թիմ Ուալզը և Բեթի Մըք Քոլումը պետքարտուղար Հիլարի Քլինթոնին մայիսի 14-ին հղած իրենց դիմում-առաջարկում՝ «իրաքահայերը քրիստոնյա են և հետապնդումների են ենթարկվում»: Նրանք առաջարկել են ստեղծել հիմնադրամ՝ օգնելու իրաքահայերին Հայաստան տեղափոխվելու գործում: Ինչպես գրում է «Հայաստանի Հանրապետություն» թերթը՝ «Օրենսդիրները նամակում նշում են, որ Հայաստանը նշանակալից քայլեր է կատարել փախստականներին ընդունելու համար, նրանց տրվում է քաղաքացիություն և ապրելու տեղ»[23]:

Այս առաջարկին միացել և նամակը ստորագրել են հինգ կոնգրեսականներ, այդ թվում Ադամ Շիֆը, Ֆրենկ Փալոնը: Հանրապետական կուսակցությունից Քոլին Փիթերսոնը ևս աջակցություն է հայտնել և միացել է այդ առաջարկին, թեև նրա ստորագրությունը չկա[24]:

Իրաքի քրիստոնյա ազգաբնակչության դժվար վիճակի, հատկապես հայերի Հայաստան հայրենադարձվելու խնդրին նախորդ աշխատության մեջ անդրադարձել ենք՝ կապված երկրում ստեղծված ընդհանուր իրադրության վերլուծության հետ[25]:

Թվացյալ ժողովրդավարության տիպիկ և համոզիչ օրինակ են ծառայում նաև իրաքյան բանտերը: Բազմազգ ուժերի ամենախոշոր կալանավայրերից ամերիկյան «Քեմփ-Բուքա» բանտը, որը գտնվում է Իրաքի հարավում՝ Բասրայի մոտակայքում, պետք է որ դադարեցներ իր գոյությունը՝ մեկընդմիշտ փակվեր 2009 թ. օգոստոսի կեսերին: Ամերիկացիները մտադրվել էին այստեղ պահվող 180 բանտարկյալներին հանձնել իրաքյան իշխանություններին, ներառյալ այդ

տարածքում գտնվող օբյեկտներն ու սարքավորումները՝ 50 միլիոն դոլար ընդհանուր արժեքով:

Իրաքցի բանտարկյալների նկատմամբ անմարդկային, զարհուրելի վերաբերմունքի, ամերիկացի զինծառայողների իրականացրած խոշտանգումների հետ կապված մի շարք հրապարակային բացահայտումներից հետո թվում էր, որ վերջապես փակվեց նաև «Աբու-Ղուրեյբ» սարսափազդու բանտը: 2006 թ. այն փոխանցվել էր Իրաքի իշխանություններին: Նախատեսվում էր, որ այն դառնալու էր պահեստային տարածք, այլև երբեք որպես կալանավայր չօգտագործվելու պայմանով: Այդուհանդերձ, 2009 թ. «Աբու Ղուրեյբը» վերանվանվեց՝ Բաղդադի կենտրոնական բանտ, նորից հանձնվելով շահագործման[26]:

Համաձայն մամուլում տեղ գտած հրապարակումների, հազարավոր կալանավորներ Իրաքում նշված ժամանակահատվածում հայտնվել ու պահվել են «առանց դատի ու քննության՝ լոկ ապստամբ կամ ահաբեկիչ լինելու կասկածանքով»: Ամերիկա-իրաքյան զինված հակամարտության՝ պատերազմի անցած «վեց տարիների ընթացքում ամերիկացիները Իրաքում ձերբակալել են մոտ 100 հազար մարդու, որոնցից 13 հազ. դեռ մնում է բանտերում»[27]: Ու թեև խոստացված էր, որ մինչև 2009 թ. ամառ ամերիկյան բանտերից ազատ կարձակվեն հազարավոր կալանավորներ, սակայն իրական պատկերը երկրում շատ ավելի մտահոգիչ էր:

2010 թ. փետրվարի 1-ի տվյալներով Բաղդադից հարավ-արևմուտք գտնվող Քերբելա շրջանում տեղի ունեցած հուժկու պայթյունից 41 շիա ուխտավոր է զոհվել, ևս 108-ը վիրավորվել է մահապարտ մի կնոջ կողմից պայթուցիկ սարքը գործողության մեջ դնելու հետևանքով: Քերբելան շիաների հոգևոր կենտրոնն է: Այս զազրելի ահաբեկչությունը տեղի է ունեցել Արբաին տոնի նախաշեմին, ընտրելով այն պահը, երբ ուխտագնացության նպատակով այստեղ հավաքված հազարավոր շիաներին ուտելիք և ջուր էր բաժանվում: Այս տոնի անվանումը արաբերենից թարգմանաբար նշանակում է քառասունք: Այն նշանավորում է Մուհամմեդ մարգարեի թոռան՝ իմամ Հուսեյնի

քառասունից` սզո արարողությունից դուրս գալու կրոնական հանդիսությունը, քանի որ շիաների շրջանում այդպես է ընդունված[28]: Զոհերի և վիրավորների թվում կային կանայք և երեխաներ[29]:

Նման մի պայթյուն էլ որոտացել էր 2010 թ. հունվարի 25-ին Բաղդադի հյուրանոցների մոտ: Միաժամանակյա ահաբեկչության հետևանքով զոհվել էին ավելի քան քառասուն և վիրավորվել տասնյակ մարդիկ[30]:

Դեռևս 2009 թ. սեպտեմբերին հանրությունը իրազեկվեց, որ «ԿՀՎ բժիշկները մասնակցել են Իրաքում բանտարկյալների հանդեպ իրականացված բոլոր կտտանքներին»: Փաստը պնդում են միջազգային իրավապաշտպանները:

«Բժիշկները հանուն մարդու իրավունքների» միջազգային կազմակերպության ենթադրությամբ՝ իրաքյան «Աբու Ղուրեյբում», ինչպես նաև Կուբայի Գուանտանամոյի և Աֆղանստանի Բաղամի ամերիկյան ռազմակայանների բանտերում և այլ կալանավայրերում ԿՀՅ մասնագետ բժիշկները, որոնք «ընդլայնված հարցաքննությունների» վերահսկման նպատակով մասնակից էին և ներգրավված էին այդ զարհուրելի տեսարաններին, փաստորեն մարդկանց վրա փորձեր են կատարել, ինչը միջազգային նորմերին հակասում է և դատապարտելի արարք է բժշկի կողմից: «Խոշտանգումներին և հարցաքննություններին բժիշկների մասնակցությունը հիմնարար բարոյական արժեքների խախտում է»,– նշվում է կազմակերպության հայտարարության մեջ: Փաստորեն ԿՀՅ բժիշկները կամայականորեն բանտարկյալներին նշված երկրներում օգտագործել են որպես փորձի համար կենդանիներ[31]:

Այսպիսի պայմաններում ալեբախումներից և պայթյուններից զերծ Իրաք ակնկալելը կնշանակի իրականությանը նայել ծուռ հայելիների մեջ, իրականությունից կտրված անտես աչքերով:

Իրաքի հյուսիսում սեպտեմբերի 10-ին գիշերը բեռնատարի պայթյունից զոհվեց 19 մարդ, նույնքանն էլ վիրավորվեց մահապարտի իրականացրած ահաբեկչության հետևանքով, Մոսուլից 30 կմ դեպի արևելք գտնվող քրդական Վարդեկ

գյուղում: Թեև քրդական «փեշմերգայի» զինված աշխարհազորայինների մարտիկներին հաջողվել է կասեցնել հաջորդ մահապարտի գործողությունը, սակայն շատ տներ այս գյուղում վերածվել են փլատակների, իսկ զոհվածների թվում կային կանայք և երեխաներ[32]:

Այդ նույն տարում՝ 2009 թ. մարտին Բաղդադում իրականացված խոշորագույն ահաբեկչությունը տեղի ոստիկանական ակադեմիայի բակում էր: Այստեղ հավաքված ակադեմիայի սաների և ոստիկանների խմբի մեջ հայտնված մահապարտ ահաբեկիչը իր գործողություններով խլեց 28 մարդու կյանք, 60 մարդ էլ վիրավորվեց: Ինչպես նշված է մամուլում, «մահապարտ ահաբեկչի մասնակցությունը սուննի ծայրահեղականների ձեռագիրն է»[33]:

2009 թ. մարտի 26-ին պայթուցիկով բեռնված ավտոմեքենան Բաղդադի հյուսիս-արևելքում, ավտոբուսի կայարանում օդում պայթել է շիաների աշ-Շաաբ շրջանում: Դարձյալ նույն ձեռագիրն է և անդառնալի կորուստներ՝ նաև կանանց ու երեխաների թվով: Ըստ պաշտոնական տվյալների՝ 20 մարդ զոհվել է, 35 իրաքցի ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ[34]:

Եվ եթե նշված ահաբեկչությունները ցայտուն կերպով կրոնադավանական երկու ճյուղերի՝ շիաների և սուննիների միջև փոխադարձ «հաշվեհարդարներով» են ներկայացվում, ապա արդեն 2010 թ. մայիսի 25-ին Բաղդադի ոսկեղենի շուկայի գնդակոծումը Իրաքում ստեղծված քաոսային իրավիճակի պատկերն է դրսևորում: Հրաձգությունը տեղի է ունեցել Բաղդադի Բայա շրջանում, մարդաշատ շուկայում, որը սովորաբար հսկվում է ոստիկանության աշխատակիցների կողմից:

Գրոհայինները հինգ ավտոմեքենաներով և քաղաքացիական հագուստով, դեմքերը ծածկած արաբական գլխաշորերով հարձակման են ենթարկել տասնմեկ խանութ ոսկու շուկայում, պայթեցրել դրանք և թալանել, սպանելով այստեղ մնացած աշխատողներին: Զոհվել է 14 մարդ, մեծամասնությամբ շուկայի տարածքում գործող խանութների աշխատակիցներ[35]:

Այսպիսի իրավիճակը, բնական է, որ հավատ չի ներշնչում Իրաքում համատեղ տնտեսական ծրագրերի իրականացման համար: Խիստ սակավ են նման համագործակցության մասին տեղեկությունները, սակայն այնուամենայնիվ Իրաքը շարունակում է մնալ տնտեսական շահագրգռությունների դաշտում, քանի որ նավթի պաշարներ ունի: 2010 թ. հունվարին «Լուկօյլ»-ի նախագահությունը Բաղդադում ստորագրեց ծառայություններ մատուցելու պայմանագիր Արևմտյան Կուռնա - 2 նավթահորը մշակելու, փորելու և նավթահանման մասին: Աշխատանքները կսկսվեն 2011 թ., իսկ նավթի հանույթը 2012 թ.[36]:

Իրաքի ներսում վաղուց հասունացող մյուս ոչ կարևոր հարցն էլ քրդական հարցն է, քանի որ դեռևս 1984 թ.-ից զինված պայքար է ընթանում Թուրքիայի հարավ-արևելքում, հանուն քրդական պետության ստեղծման:

Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին 2009 թ. մարտի 23-ին Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) անջատականներին, որոնք հյուսիսային շրջաններից դեպի Թուրքիայի տարածք հարձակումներ են գործում, վերջնագիր է ներկայացրել:

Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի հետ Բաղդադում հանդիպումից հետո, Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին նշեց, որ Իրաքի Սահմանադրությունը արգելում է երկրի տարածքում զինված կազմավորումների, այդ թվում ՔԲԿ-ի գոյությունը: Նա հայտարարեց, որ «ՔԲԿ գրոհայինները ունեն ընդամենը երկու հնարավորություն՝ կամ զենքը վայր դնել, կամ էլ հեռանալ Իրաքի»:

Դեռևս 2008 թ. փետրվար-մարտին թուրքական բանակը լայնածավալ գործողություն իրականացրեց Հյուսիսային Իրաքի քրդաբնակ շրջաններում՝ հարուցելով Իրաքի իշխանության իրավացի բողոքը, «որոնք հարձակումը բնութագրեցին որպես ոտնձգություն Իրաքի իշխանության դեմ»: 2008 թ. նոյեմբերին ԱՄՆ-ը, Իրաքը և Թուրքիան համատեղ հանձնախումբ ստեղծեցին Իրաքի հյուսիսում քուրդ անջատականների դեմ պայքարելու համար[37]:

Քաղաքականության մեջ մեկուսի խնդիրներ չկան և այնպիսի մի իրադարձություն, ինչպիսին համընդհանուր ընտրություններն են, շատ ավելի խտացված գույներով և արտահայտված շաղկապում է երևույթներն ու իրադրությունը երկրում ու նրա շուրջը: Ահա այդպիսին էր իրավիճակն Իրաքում 2010 թ. հունվարի 30-ին ծրագրված ընտրությունների նախաշեմին և ընտրություններից հետո: Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին հենց սկզբից չէր թաքցնում նոր ժամկետով վերընտրվելու իր հավակնությունը: Սպասվող ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը «կանխատեսելի» սցենարով, թելադրում էր նաև ուժային աջակցություն՝ «անհրաժեշտության դեպքում օգնություն, օժանդակություն ցուցաբերել իրաքյան բանակին ընտրությունների ժամանակահատվածում»[38]: Որ Իրաքի վարչապետը կտրուկ գործողությունների էր անցել, դրա հաստատումն են նաև ընտրությունների ողջ ընթացքն ու դրան հաջորդող շրջանը:

Այս ընտրությունները կազմակերպչական առումով, ձգձգվելով հասան մինչև 2010 թ. մարտի սկիզբը: Մարտի 7-ին Իրաքում կայացած համընդհանուր ընտրություններում Ալաուիի խումբը սայթաքող հաղթանակ տարավ, կարողանալով ապահովել 91 տեղ ներկայացուցիչների խորհրդում՝ Ազգային ժողովում: Նա «բազմիցս հայտարարել էր, որ «ալ-Իրաքիյա»-ն վեր է կրոնական տարածայնություններից, ինչը իրեն բերեց սուննիների ձայներ, որոնք դժգոհ են ազգային ժողովում շիա կուսակցությունների գերակշռությունից»: Սակայն Ալաուիի խմբակցությունը ինքնուրույն կառավարություն ձևավորել չի կարող, քանի որ 325 տեղանոց ներկայացուցիչների խորհրդում պահանջվում է առնվազն 163 տեղ, ինչը ինքը չունի: Ուրեմն սպասվում էին դժվարին բանակցություններ խումբ-խմբակցությունների հետ:

Միջազգային դիտորդները և ՄԱԿ-ի ներկայացուցիչները ընդգծեցին, որ քվեարկության ընթացքում զանգվածային խախտումներ չեն գրանցվել: Սակայն, չնայած դրան, վարչապետ ալ-Մալիքին, որի խումբը ստացել է ընդամենը երկու

մանդատով պակաս «ալ-Իրաքիա» խմբի համեմատ, հրաժարվեց ընդունել հաշված ձայների արդյունքը:

Երրորդ տեղում շիա կրոնական կուսակցությունների միավորումն է՝ 68 պատգամավորական մանդատով: Այս միավորումը կոչվում է «Իրաքյան ազգային ալյանս», ուր գլխավոր դերը իրականացնողը Մուքթադա աս Սադր ռադիկալ իմամի շարժումն է: Այս և «Օրենքի պետություն»-ը կկարողանան ազգային ժողովում վերահսկել 159 տեղ՝ ապահովելով ձայների կեսից մի քիչ պակասը: «Քուրդիստանիյա» խումբը չորրորդ տեղում է և միավորում է Իրաքյան Քուրդիստանի երկու հիմնական քաղաքական կուսակցությունները: Նրանց աջակցությանը հասնելու դեպքում Ալաուիի խումբը ընդամենը 43 լրացուցիչ ձայն կստանա, ընդհանուր թվով 134, ինչը բավարար չէ և հարցականի տակ է[39]:

Այստեղ ստացվում է շատ լարված և բարդ իրավիճակով սցենար, ինչը և փաստորեն կյանքի կոչվեց Իրաքում: Նոր կառավարություն ձևավորելու նպատակով Այադ Ալաուին ջանում էր համագործակցել բոլոր կուսակցությունների, խմբախմբակցությունների հետ՝ կառավարական կոալիցիա ստեղծելու առաջարկով: Իրաքյան ընտրությունների մասին ընդունված օրենքի համաձայն, ժամկետը 30 օր է, հաշված ընտրությունների ավարտից, որի ընթացքում չտեղավորվելու, այսինքն նախարարների խորհուրդ՝ նոր կառավարություն չձևավորելու դեպքում, այդ պաշտոնում գործում է նախկին վարչապետը:

Սրա հետ մեկտեղ իրաքյան այս ընտրությունների դիտորդները ծանոթ են անցյալի փորձին, երբ 2003 թ. Իրաք ամերիկյան ներխուժման հետևանքով սուննիները հայտնվեցին իրենց իրավունքները ոտնահարված փոքրամասնության տեղում և «ալ-Իրաքիյա» խմբի հետ հույսեր են կապում: Միաժամանակ նախորդ ընտրություններում՝ 2005 թ., շիաների հաղթանակը հանգեցրեց երկրում քաղաքացիական պատերազմի, ինչը տևեց մինչև 2007 թ., խլելով հազարավոր իրաքցիների կյանք: Հետևաբար հորդորները նախազգուշական բնույթի էին, քանի որ Ալաուիի խումբը փաստորեն շատ ավելի

հաստատուն դիրք գրավեց ընտրություններում, չնայած բավարար ձայների բացակայությանը:

Իրադարձություններն Իրաքում անկանխատեսելի բնույթ հաճախ են ստանում: 2010 թ. ապրիլին Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին մամլո հատուկ ասուլիսում հայտարարեց, որ Իրաքի անվտանգության ուժերը ամերիկյան զինվորականների հետ Իրաքում ոչնչացրել են «ալ Կաիդա»-ի երկու ղեկավարների՝ Աբու Այուբա ալ Մասրին և Աբու Օմար Բաղդադիին: Կարծիք կար, որ ալ Մասրին է օգնել «ալ Կաիդա»ի ղեկավարներից մեկին՝ Աբու Մուսաբ ալ Զարկաուին Իրաքում ձևավորելու այդ խմբավորման առաջին քայլը, 2003 թ. ամերիկյան զորքերի այդ երկիրը ներխուժումից անմիջապես հետո: Բավական է նշել, որ 2007 թ. ապրիլին ալ Մասրին հայտարարված էր «պատերազմի նախարար»՝ մի քանի մարտական խմբավորումների գլխավոր կազմակերպության ներսում[40]:

Այստեղ գլխավորապես առանձնանում է Իրաքում ամերիկյան հրամանատարության խանդավառությունը: «Ամերիկյան հրամանատարությունը հույս է հայտնում, որ մարտիկների ղեկավարների ոչնչացումը կնպաստի Իրաքում կայունության ամրապնդմանը, որը հայտնվել է հարցականի տակ, երբ մարտին կայացած համընդհանուր ընտրությունները անվիճելի, բացարձակ հաղթանակ չբերեցին քաղաքական ուժերից և ոչ մեկին: Առավելևս, անցյալ երկուշաբթի իշխանությունները որոշում կայացրին վերահաշվելու Բաղդադում ձայները, ինչը կարող է հանգեցնել ընտրությունների արդյունքների վերանայմանը, առաջ բերելով շիաների ու սուննիների միջև քաղաքացիական պատերազմի վերսկսում»[41]:

2010 թ. ապրիլի 19-ին Իրաքի իշխանությունների որոշումը՝ համընդհանուր ընտրությունների ձայների վերահաշվարկի մասին, երկրում ընդունվեց ոչ միանշանակ, քանի որ կողմերից յուրաքանչյուրն ուներ իր «հաշվարկները»: Փաստորեն այս ընտրությունները երկրում ուժերի հարաբերակցության պատկերն են վկայում:

Իրաքի հասարակական-քաղաքական կյանքը երկրի ներսում, ամերիկացիների ռազմական ներխուժումից հետո, որքան

որ պայմանավորված է ներքին ազդակներով, ուժերի հարաբերակցությամբ, տապալված ռեժիմի վարած քաղաքականության հետևանքներով, նույնքան և շատ ավելի՝ արտաքին ճնշումներով, Իրաքում ամերիկյան ներկայությամբ և Իրաքի շուրջ քաղաքական զարգացումներով:

## THE SOCIAL-POLITICAL SITUATION IN AND AROUND IRAQ IN 2009-2010


The article deals with the analyses of the social-political factors in Iraq during the 2009-2010.

This period included the continuation of final evacuation of American troops from the country. The last date of this process was 2011 year, but it prolonged until 2012.

The social-political situation in Iraq was also restless, without stability: especially in beginning 2010. For Iraq the elections National Assembly in 7 March 2010 was very important and complicated. These elections discovered the correlation of the political forces and the social moods, included the contradictions and confrontation between the various religious tendencies and trends.

The foreign policy of Iraq in this period is many-sided and complicated, included the relations with neighbouring countries: Iran, Turkey, Kuwait.

The people of Iraq strived for the democracy and the stability in country.


## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Տե՛ս Неопределенное будущее мира, "Деловой экспресс", № 35, сентябрь, 2008, с. 22.
2. Նույն տեղում:
3. Америка не потянет две войны, "Независимая газета", 2.02.2010, с. 1, 6.

4. Նույն տեղում:
5. Տե՛ս Неопределенное будущее мира, "Деловой экспресс", № 35, сентябрь, 2008, с. 22.
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում, էջ 23:
8. «Ազգ», 3.03.2009, էջ 5:
9. Նույն տեղում:
10. «Ազգ», 1.04.2009, էջ 5:
11. «Ազգ», 10.03.2009, էջ 5:
12. «Ազգ», 4.07.2009, էջ 5:
13. Նույն տեղում:
14. "Независимая газета", 19.08.2009, էջ 8:
15. Նույն տեղում, 28.04.2010, էջ 8:
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում:
18. «Ազգ», 12.03.2009, էջ 5:
19. США вывозят военную технику из Ирака, "Независимая газета", 28.04.2010, էջ 8:
20. «Ազգ», 4. 04. 2009, էջ 5:
21. "Независимая газета", 12. 05. 2010, էջ 8:
22. «Հայաստանի Հանրապետություն», 24.09. 2009, էջ 3:
23. «Հայաստանի Հանրապետություն», 20.05.2010, էջ 1:
24. Նույն տեղում:
25. Տե՛ս Կարինե Սամվելյան, Հասարակական-քաղաքական իրադրությունն Իրաքում 2008 թվականին և ամերիկյան զորքերի երկրից դուրսբերման խնդիրը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ XXVII, Երևան, 2009, էջ 123-134:
26. «Ազատամտություն», 18.09.2009, էջ 2:
27. «Ազգ», 21. 03, 2009, էջ 5:
28. «Առավոտ», 02, 2010, էջ 11:
29. "Независимая газета", 4.02.2010, էջ 11:
30. «Առավոտ», 2.02.2010, էջ 11:
31. «Ազգ», 5.09.2009, էջ 5:
32. «Ազատամտություն», 11.09.2009, էջ 2:

33. «Ազատամտություն», 10.03.2009, էջ 5:
34. "Независимая газета", 27.03.2009, էջ 7:
35. «Առավոտ», 26.05.2010, էջ 11:
36. "Независимая газета", 1.02.2010, էջ 4:
37. «Ազգ», 25.03.2009, էջ 5:
38. "Независимая газета", 19.05.2009, էջ 7:
39. "Независимая газета", 29.03.2010, էջ 6:
40. "Независимая газета", 21.04.2010, էջ 8:
41. Նույն տեղում:

# ԱՄՓՈՓՈՒՄ

Ավելի քան կես դար է անցել Իրաքում 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությունից: Մինչ օրս առաջնային պահանջ է մնում դեմոկրատական ազատությունների ապահովման վիճակը երկրում:

Շրջադարձային պատմական իրադարձությունները և փորձությունների շարքը լուրջ վտանգ դարձան երկրի կայունության և ազգաբնակչության անվտանգության ապահովման համար:

Իրանա-իրաքյան պատերազմը (1980-1988 թթ.), Իրաք-Քուվեյթ ռազմական հակամարտությունը 1990 թ. և հետագա իրադարձությունները հանգեցրին նրան, որ շեղեցին երկիրը իր բնականոն, ռիթմիկ զարգացման ուղուց:

Սադամ Հուսեյնի բռնապետական, անհեռանկար վարչակարգը տապալվեց դրսից, արտաքին ուժերի կողմից, ամերիկա-իրաքյան պատերազմի արդյունքում երկրում ստեղծելով ծայրաստիճան քաոսային իրավիճակ:

Ամերիկա-իրաքյան պատերազմը, կոալիցիոն զորքերի ներկայությունը Իրաքում, այդ զորքերի դուրսբերումը, օրինաստեղծ գործընթացների բարդությունը ավերված երկրում պահանջում էին համապատասխան արիություն և հետևողականություն, ինչը և ցուցաբերեց Իրաքի ժողովուրդը:

Այդ իրադրության մեջ տեղի հայկական համայնքը՝ ի թիվս երկրի քրիստոնյա ազգաբնակչության, կանգնեց հետագա գոյատևմանը և կենսապահովմանը սպառնացող վտանգի առջև:

1990-2010 թթ. Իրաքում նկատելիորեն ակտիվացրեց իր գործունեությունը ՄԱԿ-ը: ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերն ու որոշումները նպատակաուղղված էին վերահսկելու և կարգավորելու իրադրությունը երկրում:

ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Իրաքում պարտություն կրեց: Այդպես էլ Իրաքում չհայտնաբերվեց մարդկությանը սպառնացող մահաբեր զենքը: Դա հնարովի մեղադրանք էր, միջոց՝ իրաքյան ժողովրդին զրկելու սեփական երկրի տերը

լինելու իրավունքից. միաժամանակ այն ծառայում էր թիրախ Իրաքին արհեստականորեն մեկուսացնելու համաշխարհային հանրությունից, այդ երկրում ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը ապահովելու նպատակով:

Կարևոր է նշել, որ 2000-ական թթ. սկզբին առավել ակնառու է Իրաքի, ինչպես նաև տարածաշրջանի այլ երկրների շուրջ արտաքին գործոնների դրսևորումների ակտիվացող դերը:

# ЗАКЛЮЧЕНИЕ

После революции 14 июля 1958 года в Ираке прошло более чем полвека. По сей день проблема демократии была и есть первоочередное требование.

Поворотные исторические события и серия испытаний стали серьезными угрозами для внутренней стабильности страны и обеспечения безопасности населения.

Ирано-иракская война (1980-1988 гг.), военное противоборство Ирак-Кувейт в 1990 г., тяжелые последствия войны и дальнейшие события привели к повороту страны от линии динамичного ритмичного развития.

Деспотическое, бесперспективное правление Садама Хусейна было свергнуто извне, в результате американо-иракской войны, в чрезвычайно хаотичной обстановке в стране.

Американо-иракская война, присутствие коалиционных войск в Ираке, вывод этих войск из страны, сложность законотворческих процессов в разрушенной стране требовали соответствующей стойкости и последовательности, что и продемонстрировало население Ирака.

В такой ситуации местная армянская диаспора, в числе христианского населения страны, оказалась перед лицом реальной опасности для дальнейшего выживания и жизнеобеспечения.

За период 1990-2010 гг. в Ираке заметно активизировала свою деятельность ООН. Принятые Советом безопасности ООН резолюции и решения об Ираке были нацелены на упорядочение обстановки в стране.

Политика США в Ираке потерпела крах. В Ираке так и не было обнаружено страшное смертоносное оружие грозящее человечеству. Это было надуманное обвинение, способ чтобы лишать иракский народ самому быть хозяином своей страны; одновременно оно служило мишенью

для искусственной изоляции Ирака от мирового сообщества и для военного присутствия в этой стране.

Важно отметить, что в начале 2000-х годов более наглядна активизация роли внешних факторов вокруг Ирака в числе других стран региона.

# CONCLUSION

After the revolution in 14 July 1958 year passed of more the half century. Hitherto the problem of democracy was and is the priority demand.

The turning historical events and the series of trials were the serious threats for the internal stability and the security of the population.

The Iran-Iraq war and the dangerous consequences, the military opposition Iraq – Quwait in 1990 and the further events are the cause of the turning the country from the dynamic, ritmic development.

The despotic, antidemocratic government of Sadam Husain was fallen from outside in result of the Americano-Iraqien war, in the situation of the chaos in the country.

The Americano-Iraqien war the presence the troops of the coalition, the evacuation those troops from the country, the complicated process of the lawbuilding in the destruction Iraq demanded from the population accordingly steady and persistence.

In that situation, in the group of the Christian population, the Armenian diasphere were face to face in front of the reality danger for the futher life and vital conditions.

During the 1990-2010 years in Iraq comed into notice the activity of the United Nations.

The resolutions and statements of the security council of the United Nations about Iraq were directed in order that to control the situation in the country.

The politics of Armenia in Iraq was crashed, since was not founded the terrible, menacing weapon threaten to the humanity. That charge was the occasion in order to deprive the Iraq's people himself to be owner of their country. That occusation at the same time was the target for the artificial isolation Iraq's people from the world population and for the military presence in this country. It is important, that in beginning 2000 years was graphically the activity role of the external real facts around Iraq, as around other countries of the region.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ՀՀ ԳԱԱ, Երևան 1996-2011 թթ.:
2. Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, h. 3 III, Երևան, 2006:
3. К.Х.Самвелян, "Рабочий класс Ирака в борьбе за упрочение республиканского строя и демократию", Ереван, 1979.
4. Карине Хачиковна Самвелян, "Рабочее и профсоюзное движение в Ираке (1945-1958гг.)", Ереван, 1983.
5. Каринэ Хачиковна Самвелян, Арабский регион, проблемы демократии: Ирак, Сирия, Египет (1960-1970-ые годы), Ереван, 2009.
6. Курс Международного права, Москва, 1989.
7. Р. Дж. Фельтхем, Настольная книга дипломата, пер. с англ., Минск, 2000.
8. Робин Дж. Апдейк, "Саддам Хусейн", полит.биогр., Ростов на Дону, 1999,

* * *

1. Արա Խաչատուր, Մին թաջարիբ շախսիյա ֆիլ ամալ ալհիկղարի ալումմալ ֆիլ Իրաք, Բաղդադ, 1984 (արաբերեն):
2. Հադիս ալ սեիդ ալրաիս Սադամ Հուսեյն իլա ռիջալ ալ սահաֆա ալֆրանսիին ֆի 1982, 4, I, Բաղդադ, 1982 (արաբերեն):
3. Интервью президента Саддама Хусейна с французскими журналистами, 1.IV,1982. Дар ал-Мамун, Багдад.
4. Խիտաբ ալ սեիդ ալրաիս Սադամ Հուսեյն Ֆի ալ գիքրա ալ-ռաբիա աշարա ալսավրա, թամուզ ալմաջիդա, Բաղդադ, 1982, էջ 33-34 (արաբերեն):
5. Վակղաաքի ալմութամար ալ խիլամի, 1985 (արաբերեն):
6. Президент Саддам Хусейн в Национальный день по случаю 14-ой годовщины июльской революции, 1982, Багдад, Дар ал-Мамун.

**Իրաքի մասին ՄԱԿ-ի ընդունած բանաձևերն ու որոշումները**

1. Published by the United Nations Department of Public Information DPI / 1999–98–93337– September 1998–5 M).
2. Организация Объединенных Наций. Генеральная Ассамблея. Russian Original, 2004.
3. Организация Объединенных Наций, Резолюции и решения Совета Безопасности, 1 августа 2005 года – 31 июля 2006 года.
4. Press Release, Security Council, Resolutions and Statements of the Security Council, 1994-2008.

**Պարբերական մամուլ**

1. «Ազատամտություն», Երևան:
2. «Ազգ», Երևան:
3. «Առավոտ», Երևան:
4. «Երկիր», Երևան:
5. «Հայաստանի Հանրապետություն», Երևան:
6. «Հայկական ժամանակ», Երևան:
7. "Деловой экспресс", Москва.
8. "Известия", Москва.
9. "Независимая газета", Москва.
10. "Новое время", Ереван.
11. "Blätter für Deutsche und International Politik".
12. "The Hindustar Times", Deli.
13. "Neue Züricher Zeitung", Zürich.
14. "The Times", London.
15. "Humanite".
16. "Indian Express", Deli.
17. "Monde", Paris.
18. "Premiere".
19. "The Washington Post", Washington.

## ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

### ԳՐՔԵՐ

1. Каринэ Хачиковна Самвелян, "Рабочий класс Ирака в борьбе за упрочение республиканского строя и демократию", Изд. АН АрмССР, Ереван, 1979, 97 с.
2. Каринэ Хачиковна Самвелян, "Рабочее и профсоюзное движение в Ираке (1945-1958гг.)", Изд. "Айастан", Ереван, 1983, 110 с.
3. Каринэ Хачиковна Самвелян, Арабский регион, проблемы демократии: Ирак, Сирия, Египет (1960-1970-ые годы), Ереван, 2009, 193 с.
4. "Рабочий класс Азии", Справочник, Изд. "наука", Москва, 1985, 288 с., (отв. редактор А.С.Кауфман), часть "Ирак" — соавтор С.Г.Гришин.
5. "Закономерности и специфика развития революционного процесса в странах Африки и Азии", Изд. "Мецниереба", Тбилиси, 1984, коллектив авторов, 232 с., (отв. редактор Ан.А.Громыко).

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Рабочее и профсоюзное движение в Ираке (1945-1958гг.), "Страны Ближнего и Среднего Востока", сборник статей, Изд. "Наука", Москва, 1972, стр. 156-163.
2. Участие женщин Ирака в общественно-политической жизни страны (1945-1975гг.), "Страны и Народы Ближнего и Среднего Востока", 9 том, Арабские страны, Изд. АН АрмССР, Ереван, 1978, стр. 132-147.
3. Роль рабочего класса Ирака в социально-экономических преобразованиях республики, "Характерные черты социально-политического развития арабских стран в 50-70-ые годы", Изд. АН АрмССР, Ереван, 1980, стр. 91-97.
4. Солидарность и интернационализм в рабочем движении

арабских стран, в кн. "Советский опыт решения национального вопроса и его значение для народов Африки и Азии", Изд. АН АрмССР, Ереван, 1982, стр. 83-88, (ответственный редактор Ан.А.Громыко).

5. Իրաքի կոմկուսը և առաջադիմական ուժերը կանանց ազատագրության համար պայքարում (1970-ական թթ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», ՀայկՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989, պրակ. XV, էջ 38-54:
6. Իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա պատերազմի առաջին տարիներին (1980-1984թթ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1996, պրակ. XVI, էջ 66-73:
7. Իրանա-իրաքյան պատերազմի հասարակական-քաղաքական արձագանքները, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Զանգակ-97», Երևան, 1999, պրակ. XVIII, էջ 55-64:
8. ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Զանգակ-97», Երևան, 2002, պրակ. XXI, էջ 137-146:
9. ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Զանգակ-97», Երևան, 2003, պրակ. XXII, էջ 119-128:
10. ՄԱԿ-ի գործունեությունը Իրաքում (2003թ. մարտ – 2004թ. հունիս) և հասարակական կարծիքի ձևավորումը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Զանգակ-97», Երևան, 2004, պրակ. XXIII, էջ 242-253:
11. Քաղաքական իրադրությունը Իրաքում և ՄԱԿ-ի դիրքորոշումը (2004թ. հունիս – 2005թ. օգոստոս), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Զանգակ-97», Երևան, 2005, պրակ. XXIV, էջ 218-235:
12. ՄԱԿ-ի մասնակցությունը Իրաքում օրինաստեղծ գործընթացներին 2005 թվականին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Զանգակ-97», Երևան, 2006, պրակ. XXV, էջ 134-155:

13. Իրաքում իրադրության շուրջ ընդունված ՄԱԿ-ի բանաձևերն ու որոշումները (2005-2007 թթ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Ասողիկ», Երևան, 2007, պրակ. XXVI, էջ 193-203:
14. Հասարակական-քաղաքական իրադրությունն Իրաքում 2008 թվականին և ամերիկյան զորքերի երկրից դուրսբերման խնդիրը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Էդիթ Պրինտ», Երևան, 2009, պրակ. XXVII, էջ 123-134:
15. Հասարակական-քաղաքական իրադրությունն Իրաքում և նրա շուրջ (2009-2010 թթ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Զանգակ-97», Երևան, 2011, պրակ. XXVIII, էջ 218-234:
16. К.Х.Самвелян, Армяно-африканские культурные связи, "История культуры народов Африки. Проблемы культурного и научного строительства в Африке на современном этапе", АН СССР, Москва, 1986, стр. 125-129, (ответственный редактор Ан.А.Громыко).
17. Սոցիալ-տնտեսական վերափոխումների ուղիով, «Ավանգարդ», 1975, 14 VII.
18. Արաբական աշխարհը Հայկական սովետական հանրագիտարանի էջերում, «Հայրենիքի ձայն», 23. V.1979:
19. Կարևոր և հետաքրքիր միջոցառում՝ «Համշեն և համշենահայեր, պատմություն և մշակույթ», «Գիտություն», XII.2008:

## ԹԵԶԻՍՆԵՐ

1. Развитие профсоюзного движения в Ираке (1945-1958гг.), Конференция аспирантов и молодых научных сотрудников, май, 1970, Изд "Наука", Москва, 1970, стр. 129-130.
2. Рабочие профсоюзы в Ираке до Второй мировой войны, Конференция молодых научных сотрудников и аспирантов, Тезисы докладов, Изд "Наука", Москва, 1972, стр. 133-134.

3. Борьба иракского рабочего класса в первые послевоенные годы (1945-1948гг.), Конференция молодых научных сотрудников и аспирантов, Тезисы докладов, Изд "Наука", Москва, 1971, стр. 62-63.
4. Изменения численности, состава, структуры пролетариата Иракской республики, "Социальные процессы в Арабских странах", Чтения памяти В.Б.Луцкого, 23-24 июня, 1977, Москва, Институт востоковедения АН СССР, 1977, стр. 36.
5. Роль рабочего класса Ирака в социально-экономических преобразованиях Республики. Всесоюзная конференция арабистов, "Характерные черты социально-политического развития арабских стран в 50-70-ые годы", (Тезисы выступлений), Ереван, 16-18 мая, 1979, Ереван, 1979, стр. 28-29.
6. Իրանա-իրաքյան հարաբերությունները արդի փուլում, Մերձավոր Արևելք և Կովկաս, միջազգային գիտաժողով նվիրված արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին, զեկուցումների թեզեր, Երևան, 2008, էջ 45-47.

## ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. О.Герасимов, "Иракская нефть", "Народы Азии и Африки", Москва, 1970, № 6, стр: 179.
2. А.М.Ментешашвили, "Ирак в годы английского мандата", "Азия и Африка сегодня", Москва, 1971, № 3, стр. 55.
3. Կ.Սամվելյան, Ուշագրավ ժողովածու, «Լենինյան ուղիով», Երևան, 1982, N 10, էջ 95-96, "Советский опыт решения национального вопроса и его значение для народов Африки и Азии", Изд. АН АрмССР, Ереван, 1982.
4. Ուշագրավ աշխատություն՝ հօգուտ հայ-իրանական մշակութային կապերի, «Գիտություն», 2011, N 3, III:
5.

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ


1. Ф.Б.Даллакян, Реферативный сборник АН АрмССР, Центр Научной информации по общественным наукам, 1987, стр. 33-37, Самвелян Карине, Рабочее и профсоюзное движение в Ираке 1945-1958гг., Ереван, Изд. "Айастан", 1983.
2. Ա.Գևորգյան, Երեք աշխատություն միջազգային թեմաներով, «Սովետական Հայաստան», 29 մարտի, 1984:
3. Մ.Գասպարյան, Աշխատություն՝ նվիրված Իրաքի բանվորական և արհմիութենական շարժմանը, «Լենինյան ուղիով», մարտ, N 3, 1985, էջ 94-96, Каринэ Хачиковна Самвелян, "Рабочее и профсоюзное движение в Ираке (1945-1958гг.)", Изд. "Айастан", Ереван, 1983.
4. Արաբերեն կարծիք «աս-Սակաֆա ալ-ջադիդա» ամսագրում, 1979-1980թթ.:
5. ալ-Արման շաաբ վա կդադիա, ալ-դոկթոր Սալեհ Զահր ալ-Դին, ալ մարքազ ալ վատանի, ալ-դար ալ-մատումաթ վա ալ-դիրասաթ ալ դար ալ թակադդումիյա, 1988, էջ 305: (Կարինե Սամվելյանի հրատարակած երկու գրքերի մասին):
6. Գրիգոր Ղարիբյան, Կարևոր և սպասված մենագրություն, «Գիտություն», N 7-8, հունիս, 2009, էջ 2:
7. Арабский регион, проблемы демократии: Ирак, Сирия, Египет (1960-1970-ые годы), "Голос Армении", 27 августа 2009, с. 4.
8. Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ III, Երևան, 2006, էջ 811:
9. Nikolay Hovhannisyan, Arabic studies in Armenia: main directions and trend: Armenian-Egyptian historical cultural ties, Library Alexandria, February 9, 2006.
10. Արևելագիտության ինստիտուտի հրատարակություններ, 1960-2006, մատենագիտություն, Երևան, 2006, էջ 17, 20:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ... 5

ԳԼՈՒԽ I

ԻՐԱՆԱ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԻՐԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1980-1984 ԹԹ.) ... 15

ԳԼՈՒԽ II

ԻՐԱՆԱ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ... 24

ԳԼՈՒԽ III

ՄԱԿ-ի ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ ԻՐԱՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ... 37

ԳԼՈՒԽ IV

ՄԱԿ-ը ԵՎ ԻՐԱՔԻ ԴԵՄ ԱՄՆ-ի ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՀԱՐՑԸ ... 50

ԳԼՈՒԽ V

ՄԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ (2003թ. ՄԱՐՏ – 2004թ. ՀՈՒՆԻՍ) ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ... 63

ԳԼՈՒԽ VI

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՄԱԿ-Ի ԴԻՐՔՈՐՈ-ՇՈՒՄԸ (2004Թ. ՀՈՒՆԻՍ – 2005Թ. ՕԳՈՍՏՈՍ) ... 80

ԳԼՈՒԽ VII

ՄԱԿ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ՕՐԻՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ 2005 ԹՎԱԿԱՆԻՆ ... 104

ԳԼՈՒԽ VIII

ԻՐԱՔՈՒՄ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԱԿ-Ի ԲԱՆԱ-ՁԵՎԵՐՆ ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (2005-2007 ԹԹ.) ... 133

ԳԼՈՒԽ IX

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՔՈՒՄ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ... 149

ԳԼՈՒԽ X

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ (2009-2010ԹԹ.) ... 166

ԱՄՓՈՓՈՒՄ ... 185

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ... 190

ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ... 192

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ ... 196

## СОДЕРЖАНИЕ

ВВЕДЕНИЕ ....................5
ГЛАВА I
ВЛИЯНИЕ ИРАНО-ИРАКСКОЙ ВОЙНЫ НА СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ ИРАКА В ПЕРВЫЕ ГОДЫ ВОЙНЫ (1980 – 1984 гг.) ....................15
ГЛАВА II
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ОТГОЛОСКИ ИРАНО-ИРАКСКОЙ ВОЙНЫ ....................24
ГЛАВА III
САНКЦИИ ООН В ОТНОШЕНИИ ИРАКА ....................37
ГЛАВА IV
ООН И ПРОБЛЕМА ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ США ПРОТИВ ИРАКА ....................50
ГЛАВА V
ДЕЯТЕЛЬНОСТЬ ООН В ИРАКЕ (МАРТ 2003 – ИЮНЬ 2004 ГГ.) И ФОРМИРОВАНИЕ ОБЩЕСТВЕННОГО МНЕНИЯ ....................63
ГЛАВА VI
ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ИРАКЕ (ИЮНЬ 2004 Г. – АВГУСТ 2005 Г.) И ПОЗИЦИЯ ООН ....................80
ГЛАВА VII
УЧАСТИЕ ООН В ЗАКОНОТВОРЧЕСКИХ ПРОЦЕССАХ В ИРАКЕ В 2005 ГОДУ ....................104
ГЛАВА VIII
РЕЗОЛЮЦИИ И РЕШЕНИЯ ООН ПО ВОПРОСУ: СИТУАЦИЯ В ИРАКЕ (2005-2007 ГГ.) ....................133
ГЛАВА IX
СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ИРАКЕ В 2008 Г. И ПРОБЛЕМА ВЫВОДА АМЕРИКАНСКИХ ВОЙСК ИЗ СТРАНЫ .149
ГЛАВА X
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ИРАКЕ И ВОКРУГ СТРАНЫ (2009-2010 ГГ.) ....................166
ЗАКЛЮЧЕНИЕ ....................185
СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ ....................190
СПИСОК НАУЧНЫХ ПУБЛИКАЦИЙ КАРИНЭ ХАЧИКОВНЫ САМВЕЛЯН ....................192
РЕЦЕНЗИИ И ЗАМЕТКИ О НАУЧНЫХ ПУБЛИКАЦИЯХ КАРИНЭ ХАЧИКОВНЫ САМВЕЛЯН ....................196

CONTENTS

CHAPTER I
THE IMPACT OF THE IRAN-IRAQI WAR ON THE SOCIAL-ECONOMIC LIFE OF IRAQ DURING THE FIRST YEARS OF THE WAR (1980-1984) ....15
CHAPTER II
THE SOCIAL-POLITICAL RESPONSES OF THE IRAN-IRAQI WAR ...24
CHAPTER III
THE SANCTIONS OF UNITED NATIONS AGAINST IRAQ ....37
CHAPTER IV
THE UNITED NATIONS AND THE PROBLEM OF MILITARY OPERATIONS BY THE USA AGAINST IRAQ ....50
CHAPTER V
THE ACTIONS OF THE UNITED NATIONS IN IRAQ (MARCH 2003-JUNE 2004) AND THE FORMATION OF THE PUBLIC OPINION .......63
CHAPTER VI
THE POLITICAL SITUATION IN IRAQ (JUNE 2004 – AUGUST 2005) AND THE POSITION OF THE UNITED NATIONS ....80
CHAPTER VII
THE PARTICIPATION OF THE UNITED NATIONS IN LAW-BUILDING PROCESS IN IRAQ IN 2005 ....104
CHAPTER VIII
RESOLUTIONS AND STATEMENTS OF THE UNITED NATIONS SECURITY COUNCIL ABOUT THE SITUATION IN IRAQ (2005-2007) 133
CHAPTER IX
THE SOCIAL-POLITICAL SITUATION IN IRAQ IN 2008 YEAR AND THE PROBLEM EVACUATION AMERICAN TROOPS FROM THE COUNTRY ....149
CHAPTER X
THE SOCIAL-POLITICAL SITUATION IN AND AROUND IRAQ IN 2009-2010 ....166
CONCLUSION ....185
BASIC LITERATURE ....190
THE LIST OF THE SCIENTIFIC PUBLICATIONS OF THE KARINE SAMVELYAN ....192
THE REVIEWES AND THE NOTES ABOUT THE SCIENTIFIC PUBLICATIONS OF THE KARINE SAMVELYAN ....196

[2000 դր.]

ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՎԵԼՅԱՆ

# ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ (1980-2010 թթ.)

Հրատ. խմբագիր Ա. Հովակիմյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 384
Հանձնված է արտադրության՝ 05.09.2012թ.:
Չափսը՝ 60 x 84 $^{1}/_{16}$, 12,5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0224690



A II 98306

**КАРИНЭ ХА**

Автор м... Ирака в борь... канского строя и демократию", Ереван, 1979; "Рабочее и профсоюзное движение в Ираке", Ереван, 1983, "Арабский регион, проблемы демократии: Ирак, Сирия, Египет (1960-1970-ые годы)", Ереван, 2009.

Является соавтором справочника "Рабочий класс Азии", Москва, 1985; книги "Революционный процесс в странах Африки и Азии", Тбилиси, 1984. Автор более 200 научных, публицистических статей и выступлений. Участвовала во многих международных научных конференциях.

Долгие годы вела передачи по Государственному радиовещанию Армении, для слушателей стран Ближнего и Среднего Востока.

Преподавала в Ергосуте, ф-т экономики, ф-т истории, в Русско-армянском, славянском университете, ф-т политологии, в Ереванском филиале Московского Государственного университета экономики, статистики и информатики (МЭСИ), ф-т экономики, по сертификатам.

Каринэ Хачиковна Самвелян родилась 25 марта 1943г. в городе Ереване, в семье биологов. В 1965 году с отличием окончила полный курс Ергосунта, по специальности "восточные языки и литература". С августа 1965г. по февраль 1966г. работала с иракскими специалистами преподавателем-переводчиком в Ереване, в Армэлектрозаводе.

15 января 1968г. поступила и 15 января 1971г. окончила аспирантуру при Институте востоковедения Академии Наук СССР, в Москве по специальности "история арабских стран", где 12 мая 1972г. единогласно защитила кандидатскую диссертацию "История рабочего движения в Ираке (1945-1958гг.".

В 2008г. удостоена Почетной грамоты Национальной Академии наук Армении, в связи с 50-летием Института востоковедения. С июня 1971г. по сей день работает в Отделе арабских стран Института востоковедения НАН РА – ведущий научный сотрудник.

Член Союза журналистов Армении и Союза художников Армении.